ISSN 1829-4804

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պրակ Ա

2

Երևան – 2019

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պրակ Ա

2

**(Հումանիտար և հասարակական գիտություններ,
դրանց դասավանդման մեթոդիկա)**

Երևան – 2019
«Միսմա» ՍՊԸ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ

ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Выпуск А

2

**(Гуманитарные и общественные науки,
методика их преподавания)**

Ереван – 2019
ООО «Мисма»

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TOUMANYAN

SCIENTIFIC PROCEEDINGS OF

VANADZOR STATE UNIVERSITY

Issue A

2

(Humanities and Social Sciences, Their Teaching Methodology)

Yerevan – 2019
"Misma" LTD

Տպագրվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Գ.Կ. Խաչատրյան, բ. գ. դ. (խմբագրական խորհրդի նախագահ, գլխավոր խմբագիր)
Ա.Մ. Սանթոյան, բ. գ. թ. (խմբագրական խորհրդի նախագահի տեղակալ)
Ա.Ժ. Պողոսյան, բ. գ. թ. (պատասխանատու քարտուղար)

Խմբագրական խորհրդի անդամներ

Հ. Հ. Այվազյան, բ. գ. դ., **Վ. Վ. Բաղդասարյան**, տնտ. գ. դ., **Պ. Հ. Գևորգյան**, մ. գ. դ., **Գ. Լ. Եթիմյան**, պ. գ. դ., **Ս. Ա. Զաքարյան**, փ. գ. դ., **Ա. Ե. Մկրտիչյան**, փ. գ. դ., **Մ. Պ. Մկրտումյան**, հ. գ. դ., **Ֆ. Վ. Մովսիսյան**, պ. գ. դ., **Ա. Գ. Վաղարշյան**, իր. գ. դ., **Գ. Մ. Քեռյան**, քաղ. գ. դ., **Կ.Ս. Առուստամյան**, բ. գ. թ., **Ռ. Ա. Ավագիմյան**, հ. գ. թ., **Թ. Վ. Թադևոսյան**, բ. գ. թ., **Ս. Մ. Թումանյան**, բ. գ. թ., **Հ. Պ. Հարությունյան**, բ. գ. թ., **Լ. Յու. Վարդանյան**, բ. գ. թ., **Վ. Ա. Փիլոյան**, բ. գ. թ.:

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ,
Ա ՊՐԱԿ, № 2 / հումանիտար և հասարակական գիտություններ, դրանց դասավանդման մեթոդիկա // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վանաձորի պետական համալսարան/: Խմբ. խորհուրդ՝ Գ. Խաչատրյան և այլք. – Երևան: «Միսմա» ՍՊԸ, 2019. –240 էջ:

Ժողովածուն ամփոփում է հումանիտար և հասարակական գիտությունների տարաբնույթ հարցերին, ինչպես նաև դրանց դասավանդման մեթոդիկային վերաբերող գիտական հոդվածներ, որոնք խմբագրական խորհրդի անդամների կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISSN 1829-4804

© Հեղինակային խումբ, 2019
© Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան, 2019

Печатается по решению ученого совета
Ванадзорского государственного университета имени О. Туманяна

Редакционный совет

Г. К. Хачатрян, д. ф. н. (председатель редакционного совета, главный редактор)
А. М. Сантоян, к. ф. н. (заместитель председателя редакционного совета)
А. Ж. Погосян, к. ф. н. (ответственный секретарь)

Члены редакционного совета

О. О. Айвазян, д. ф. н., **В. В. Багдасарян**, д. э. н., **П. О. Геворкян**, д. пед. н., **Г.Л. Етимян**, д. и. н., **С. А. Закарян**, д. филос. н., **А. Е. Мкртичян**, д. филос. н., **М. П. Мкртумян**, д. псих. н., **Ф. В. Мовсисян,** д. и. н., **А. Г. Вагаршян**, д. ю. н., **Г. М. Керян**, д. пол. н., **К. С. Арустамян**, к. ф. н., **Р. А. Авагимян**, к. псих. н., **Т. В. Тадевосян**, к. ф. н., **С. М. Туманян**, к. ф. н., **А. П. Арутюнян**, к. ф. н., **Л. Ю. Варданян**, к. ф. н., **В. А. Пилоян**, к. ф. н.

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА, ВЫПУСК А, № 2 / гуманитарные и общественные науки, методика их преподавания// Министерство образования, науки, культуры и спорта РА, Ванадзорский государственный университет/ Ред. совет – Г. Хачатрян и др. – Ереван, ООО «Мисма», 2019.– 240 с.

В сборнике представлены статьи, относящиеся к вопросам гуманитарных и общественных наук, а также методике их преподавания, которые после рецензирования и редактирования были рекомендованы к печати по решению редакционного совета.

ISSN 1829-4804

© Авторская группа, 2019
© Ванадзорский государственный университет имени О. Туманяна, 2019

Printed by the Resolution of the Academic Council of
Vanadzor State University named after H. Toumanyan

Editorial Board

G. K. Khachatryan, Doctor of Philological Sciences (Chairman of the Editorial Board, Chief Editor)
A. M. Santoyan, Candidate of Philological Sciences (Deputy Chairman of the Editorial Board)
A. Zh. Poghosyan, Candidate of Philological Sciences (Secretary-in-Charge)

Editorial Board Members

H. H. Ayvazyan, Doctor of Philological Sciences, **V. V. Baghdasaryan,** Doctor of Economic Sciences, **P. H. Gevorgyan**, Doctor of Pedagogical Sciences, **G. L. Yetimyan**, Doctor of Historical Sciences, **S. A. Zakaryan**, Doctor of Philosophical Sciences, **A. E. Mkrtichyan,** Doctor of Philosophical Sciences, **M. P. Mkrtumyan**, Doctor of Psychological Sciences, **F. V. Movsisyan**, Doctor of Historical Sciences, **A. G. Vagharshyan,** Doctor of Law (Jurisprudence), **G. M. Keryan**, Doctor of Political Sciences, **K. S. Arustamyan**, Candidate of Philological Sciences, **R. A. Avagimyan**, Candidate of Psychological Sciences, **T. V. Tadevosyan,** Candidate of Philological Sciences, **S. M. Toumanyan**, Candidate of Philological Sciences, **H. P. Harutyunyan**, Candidate of Philological Sciences, **L. Yu. Vardanyan**, Candidate of Philological Sciences, **V. A. Piloyan,** Candidate of Philological Sciences.

SCIENTIFIC PROCEEDINGS OF VANADZOR STATE UNIVERSITY, ISSUE "A", № 2 / Humanities and Social Sciences and their teaching methodology // RA Ministry of Education, Science, Culture and Sport, Vanadzor State University/. Editorial Board: G. Khachatryan, etc. – Yerevan. "Misma" LTD, 2019. – 240 p.

The collection summarizes scientific articles on various issues of Humanities and Social Sciences, as well as scientific articles referring to their teaching methodology, which have been reviewed, edited and recommended for publication by the members of the Editorial Board.

ISSN 1829-4804

© Authors' group, 2019
© Vanadzor State University
named after H. Toumanyan, 2019

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫКОЗНАНИЕ

LINGUISTICS

Նվազափաղաքշական ձևույթներով կազմությունները հայրեններում

Խաչատրյան Գուրգեն

Հանգուցային բառեր *՝ բառային միավոր, համանիշ, հոմանիշ, -ակ, -եկ, -իկ, -ուկ նվազափաղաքշական ձևույթներ, կրկնակի ձևույթներ, միջին հայերեն, գոյական, զուգաձևություն, հնչյունափոխություն, հատկանուն, անձնանիշ, իրանիշ, կենդանանիշ, բուսանուն, վերլուծական բարդություն*

Նվազափաղաքշական ձևույթները[1]՝ որպես «զգացական, փաղաքշական, նվազական, արհամարհական, ոճական և այլ իմաստային երանգներ»[2] արտահայտող բառակազմական միջոցներ, հայերենին հատուկ են նախագրային շրջանից: Ասվածի լավագույն վկայությունները դեռևս հին գրական հայերենից ավանդված մի շարք բառերն են, ինչպես՝ *աստղիկ* (ՆՀԲ, Ա. 320), *այծեմնիկ* (ՍԳ), *բարձիկ* (ՍԳ), *գաղտուկ* (ՓԲ), *թալուկ* (ՆՀԲ, Ա, 791), *մանկիկ* (ԱԳ), *մանրիկ* (ՍԳ), *նաւակ* (Ն), *վայրիկ* (ՓԲ), *փոքրիկ* (ՄԽ) և այլն, մասնավորապես հատկանունները (*Եզնիկ, Զուիկ, Աստղիկ* և այլն) և այն բառերը, որոնք տեղ են գտել, այսպես կոչված, վիպասանական հայերենից մեզ հասած հայտնի պատառիկներում՝ *աչիկ, եղեգնիկ, կարմրիկ, տեղեկիկ* և այլն (վերջիններս, բնականաբար, 5-րդ դարին նախորդող շրջանի լեզվական իրողություններ են[3])[4]:

Միջին հայերենում նվազափաղաքշական ձևույթների գործածությունն ավելի է հաճախանում, ինչն առանձնապես նկատելի է ժողովրդական բանահյուսության մաս կազմող չափածո ստեղծագործություններում, մասնավորապես՝ հայրեններում:

---

[1] Հայտնի են նաև *նվազափաղաքշական մասնիկներ* կամ *ածանցներ, երանգավորող ածանցներ* և այլ անուններով:

[2] *Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Մ.Էլոյան*, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Երևան, 1979, էջ 385:

[3] Նշվ. աշխ., էջ 386:

[4] Դրաց մի մասը վկայված է նաև միջին հայերենում՝ *աչկունք, կարմրիկ, պատանեկիկ* և այլն:

Նշված բառակազմական ձևույթները միջին հայերենին այնքան են բնորոշ, որ լայնորեն կիրառվում են ոչ միայն բնիկ, այլև փոխառյալ բառերի կազմում: Հմմտ. *լուսնակ* (338), *ծոցիկ* (59), *հարսնուկ* (641), *մարիկ* (594), *որդեկ* (744) և այլն և *եարուկ* (261), *թարկիկ* (114), *յօմրիկ* (262), *պօյիկ* (253), *ջուխտակ* (260) և այլն:

Հիշյալ ձևույթներին ժամանակակից հայերենի կտրվածքով առանձին-առանձին անդրադարձել է Մ.Աբեղյանը, դիտարկել նրանց կապակցելիական հնարավորությունները գոյականների, ածականների, թվականների, դերանունների, բայաբների ու բայարմատների հետ՝ ընդհանուր առմամբ նշելով, որ նրանք գոյականին հաղորդում են նվազական, փաղաքշական կամ նվաստական նշանակություն, ածականների նշանակությունը սաստկացնում են, թուլացնում կամ ձևափոխում, երբեմն էլ՝ փաղաքշական նշանակություն տալիս[5]: Անհրաժեշտության դեպքում Մ.Աբեղյանը խոսում է նաև հիշյալ ձևույթների բարբառային և ժողովրդախոսակցական դրսևորումների մասին[6], նկատում նվազափաղաքշական նշանակությամբ այլ ձևույթներ նույնպես[7]: Ժամանակակից հայերենի նվազափաղաքշական ձևույթներն ուսումնասիրել են նաև

[5] *Մ.Աբեղյան*, Հայոց Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 238, 257-258, 268-269: Ի դեպ, միջին հայերենի, մասնավորապես հայրենների՝ մեր կողմից ուսումնասիրված բառային միավորների ստվար մասը ավանդվել է ժամանակակից արևելահայերենին՝ տեղ գտնելով կա՛մ գրական, կա՛մ ժողովրդախոսակցական կա՛մ էլ բարբառային շերտերում: Ասվածի մասին վկայում է Մ.Աբեղյանի հիշյալ աշխատությունը, որտեղ վերը նշված էջերում հանդիպում են նվազափաղաքշական ձևույթներով այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *նավակ, գետակ, ձկնակ, դռնակ, լեզվակ, որդյակ, օրինակ, նվիրակ, փոխանակ, գիտակ, եղնիկ, ոտիկ, աստղիկ, ձկնիկ, քաղաքիկ, կնիկ, պապիկ, ինձիկ, կարմրիկ, ողորմիկ, մեկիկ, մոտիկ, անուշիկ, ճնճղուկ, մանչուկ, ողորմուկ, գաղտուկ, պատուկ, սևուկ, տաքուկ, կտրուկ, հարցուկ, նորելուկ, դանկեկ, չախվեկ, ճամբեկ, ակնեկ, այգեկ, գոտեկ* և այլն:

[6] Անդ՝ էջ 257, 258, 259, 261, 269 և այլն:

[7] Անդ՝ էջ 259, 261, 265 և այլն:

Ա.Մուրվալյանը[8], Ս.Էլոյանը[9] և ուրիշներ:

Միջին հայերենի նվազափաղաքշական ձևույթներին անդրադարձել է Մ.Մուրադյանը՝ նրանց կենսունակ ածանցների շարքում տեղ տալով և բերելով մասնակի օրինակներ[10]:

Մեր հոդվածը վերաբերում է հայրեններում տեղ գտած այն գոյականներին[11], որոնք կազմվել են *-ակ, -եկ*[12], *-իկ*[13], *-ուկ* նվազափա-

---

[8] *Ա.Մուրվալյան*, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, էջ 305-315:

[9] *Վ.Առաքելյան, Ա.Խաչատրյան, Ս.Էլոյան*, նշվ. աշխ., էջ 385-389: Ի դեպ, Ս.Էլոյանը ժամանակակից հայերենի համար նշում է նաև *-լիկ, -ուշ, -լուկ, -ուլ* և այլ նվազափաղաքշական ձևույթներ (էջ 387):

[10] Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 254-256:

[11] Որոշ բառեր այդպիսիք ենք համարվել պայմանականորեն, ինչպես՝ *քիլակ*, որը կարող է գրաբարյան *քիլ* [«բթամատից մինչև ցուցամատի ծայրը եղած բացվածքը») Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1976, էջ 578] չափի միավորի փաղաքշական տարբերակը լինել՝ Բերեն զքո ամէն չարիքն Ու չափեն կապիճ՝ ւ ի *քիլակ* (868):

[12] *-Եկ* ձևույթը միջին հայերենում ավելանում է ոչ միայն ձայնավորահանգ, այլև բաղաձայնահանգ բառերի, ինչպես՝ *ակն – ակնեկ* (642), *ահ – ահեկ* (684), *չուխա(յ) – չուխեկ* (621), *չախու – չախուեկ* (644), *որդեկ* (741) և այլն, ինչը վկայում է, որ *-եկ* նվազափաղաքշական՝

ա) մի դեպքում *հ*-ով վերջացող բառերի բառավերջի *հ* ձայնավորի և *-ակ* ձևույթի պատմական հնչյունափոխության հետևանք է (*-եակ > -եկ*), ինչպես՝ *գօտի՝ գօտեակ > գօտեկ* (650), *եզի՝ եզեակ > եզեկ (*659), *որդի՝ որդեակ > որդեկ* (741), *տարի՝ տարեակ > տարեկ* (116) և այլն:

բ) Մյուս դեպքում՝ բաղաձայնով վերջացող բառերին ավելացած *-իկ* ձևույթի հնչյունային տարբերակ (*-իկ > -եկ//-էկ*): Միջին հայերենի *հ-ե* փոփոխության մասին նշում է Մ.Մուրադյանը՝ բերելով մի շարք բառեր, որոնցում այդ փոփոխությունը հանդիպում է տարբեր դիրքերում *լուսահղձ//լուսաեղձ, պիղծ//պեղծ, Մագիստրոս//Մագեստրոս, ուղիղ//ուղեղ* (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 81): Սրանց կարելի է ավելացնել նաև *հ* լծորդության հնչյունափոխությունը *ե*-ի՝ *ունիմ – ունեմ, խօսիմ – խօսեմ, կամիմ – կամեմ* (հմմտ. նաև Ես յետի նէֆէս *եմ եկել* (45) և Քու սիրուն ես հոս *իմ եկեր* (640) և այլն: Վերոնշյալ *-իկ > -եկ* փոփոխությունը միջին հայերենում ավարտուն երևույթ չէ. զուգահեռաբար պահպանվել են բազմաթիվ սկզբնաձևեր

ղաքշական ձևույթներով[14]:

Լեզվական նյութը քաղել ենք Ա.Մնացականյանի «Հայրեններ» մենագրությունից (Երևան, 1985)՝[15] ուսումնասիրելով համադրության, համեմատության և նկարագրական մեթոդներով: Ծանոթագրությունների բաժնում տեղ ենք տվել նաև ուսումնասիրվող լեզվական միավորների՝ սկզբնաղբյուրներում տեղ գտած տարբերակներին:

Լեզվական փաստերը վկայում են, որ հայրեններում նվազափաղաքշական ձևույթները գերազանցապես կարող են կապակցվել միջին հայերենի ակտիվ բառաշերտը ներկայացնող թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական իմաստ արտահայտող բառերի

նույնպես, ինչը տվյալ հնչյունափոխության տեղայնացված լինելու մասին է վկայում, ինչպես՝ *ահիկ* (82)//*ահեկ* (684), *բընիկ* (82)//*բունեկ* (663), *դանկիկ* (743)//*դանկեկ* (659), *երեսիկ* (235)//*երեսեկ* (242), *կոճկիկ* (73)//*կոճկեկ* (129), *շապկիկ* (256)//*շապկեկ* (661), *ոտնիկ (*776)//*ոտնեկ (*290), այլև *ոտեկ (*290), *սրտիկ* (54)//*սրտեկ* (189), *տօշկիկ* (92)//*տոշկէկ* (91), *օրիկ (*46)//*օրեկ* (150) և այլն:

Թերևս բացառություն են *ա(յ)* և *ու* ձայնավորահանգ բառերը, որոնցում նույնպես կատարվել է *-իկ > -եկ* հնչյունափոխություն, ինչպես՝ ճամփա(յ) – *ճանփիկ (*83)//*ճանփեկ* (147), *չուխա(յ) – չուխեկ* (621), *չախու – չախուեկ* (644), (147):

[13] Այլ աղբյուրներում *-իկ* ձևույթը հանդիպում է *-իգ* հնչյունափոխության ենթարկված: Հմմտ. *սարկաւագիգ//սարկաւագիկ*՝ ԶՍտեփանոս *սարկաւագիգս* յիշեցէք ի Քևիստոս: .... զԹորոսիկ *սարկաւագիկս* պահեա խաղաղութեամբ (ՄՀԲ, 690):

[14] Միջին հայերենում, *-ակ, -իկ, -ուկ, -եկ* ձևույթներից բացի՝ կան հոմանիշ այլ միավորներ նույնպես, որոնցից են՝ *-եակ, -նակ* և այլն, սակայն հաշվի առնելով դրանց տարածվածության սահմանափակ ոլորտը և նույնպիսի էլ գործածության հաճախականությունը՝ սույն հոդվածում դրանցով կազմությունները քննության չենք առնում: Բավարարվենք մեկ-երկու օրինակով՝ *դրացնակ* (755) (հմմտ. *վրացնակ* – Մ.Աբեղյան, նշվ. աշխ., էջ 248), *ջրնակ* (766), *աղջրնակ* (760), *արեգեակ* (782), *լուսնէակ* (232):

[15] Հիշյալ երկից քաղված լեզվական նյութը տրվում է փակագծերում զետեղված էջանշումով:

հետ[16], բնական է, ի հայտ բերելով կապակցելիության տարբեր հնարավորություններ:

Առանձնապես աչքի են ընկնում գոյականների հետ կապակցելիության լայն հնարավորությամբ՝ ավելանալով գոյականների իմաստային տարբեր շերտեր ներկայացնող բառախմբերի:

Առաջին հերթին պետք է նշել *-իկ* ձևույթի ակտիվությունը և՛ տարբեր խոսքի մասերի հետ կապակցվելու, և՛ հաճախակի գործածության առումներով: *-Իկ* ձևույթն առավելապես կապակցվում է իմաստային տարբեր խմբեր ներկայացնող հատուկ և հասարակ գոյականների, մասնավորապես՝

1.1. Անձնանիշ հատկանունների, որպիսիք հայրեններում հաճախադեպ չեն՝ *Գագիկ* (50), *Գորգիկ* (909), Յակովիկ > *Յակովկա* (602)[17]:

1.2. անձնանիշ հասարակ գոյականների, ինչպիսիք են՝ *աղջկունք* (939)[18], *դստրիկ* (57), *եարիկ* (69), *երիկ* (347), *կնիկ* (425) [19], *հարիկ* (672), *մանկիկ (*80), *մանկտիկ* (531), *մարիկ* (152), *մորկան*

---

[16] Ահավասիկ մեկական օրինակ՝ ասվածը հիմնավորելու համար՝ գոյականով՝ *գրկիկ* (79), ածականով՝ *աղկիկ* (297), թվականով՝ *էօթնիկ* (776), դերանունով՝ *ինձիկ* (124) և մակբայով՝ *տարպիկ* (83), կապով՝ *դէմիկ* (43), շաղկապով՝ *հինչուկ* (99), վերաբերականով՝ *իսկիկ* (924) և ձայնարկությամբ՝ *էրնէկ* (395//*էրնէկ* (253//*իրնիկ* (118): Ի դեպ, *էրանի* բառից բացի՝ ՆՀԲ-ն ունի *էրանիկ* բառահոդվածը (ածական)՝ «էրանեակ» բացատրությամբ:

Փաստորեն նվազափաղաքշական ձևույթները չեն կապակցվում միայն բայերի հետ: Դրա փոխարեն՝ նրանք կապակցվում են բայաբների ու բայարմատների հետ (*Մ.Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 257), որոնք անկախ գործածությունից զուրկ ձևույթներ են (*գէտ – գիտակ* – 448) կամ բաղադրյալ կազմություններ (*կանկուն – կանկնուկ* – 265):

[17] Անձնանուններից բացի՝ գոյություն ունեն նաև տեղանուններ, ինչպիսիք են մերօրյա մի շարք լեռնագագաթների անունները՝ *Արմիշակ, Արորակ, Բերդակ, Գանձակ, Գետիկ, Դարանակ, Երնջակ, Լորտնուկ, Հացիկ, Մարմարիկ* և այլն, որոնցից մի քանիսը վկայվում են վաղ շրջաններից:

[18] Հմմտ. *աշխիկ* (675):

[19] Հմմտ. *կնկեան* (778):

(764)[20], *պապիկ* (716), որոնց մեծ մասն անվանում է ազգակցակա-նություն:

-*Իկ* ձևույթից բացի՝ անձնանիշ հասարակ գոյականների հետ կապակցվել են նաև՝

ա) -*եկ* ձևույթը՝ *որդեկ* (741),

բ) -*ուկ* ձևույթը՝ *եարուկ* (53)[21], *հարսնուկ* (85), *մանուկ* (58), *մանչուկ* (147), *մարդուկ* («ամուսին» իմաստով) (693), *մարդուկ* («մարդ» իմաստով) (336), *պապուկ* (704), *պառուկ* («սկեսուր» իմաստով) (729)[22], *քուրուկ* (751),

գ) -*ակ* ձևույթը՝ *կեսրակ* (642)[23]:

1.3. բուսանունների՝ *ուռիկ* (678), *վարդիկ* (730), որոնց շարքում հաճախակի գործածություն ունի գրաբարից ավանդված *ծաղիկ* բառը՝ *ծաղիկ* (67): Վերջինիս հոգնակին հայրեններում արտա-հայտվում է ոչ միայն գրաբարին բնորոշ *ծաղկունք* (70) – *ծաղկանց* (209), այլև միջինհայերենյան *ծաղկունաց* (71) ձևերով[24]:

-*Իկ* ձևույթից բացի՝ բուսանուն է կազմել նաև -*ակ* նվազափա-ղաքշականը՝ *ըռահնակ* (684):

---

[20] Հմմտ. *տղական* /«երեխայի»/՝ Թէ *տղական* բերանն ցաւի՝ օծես, օգտի (ԱԱ):

[21] Հմմտ. *յարուկ* (299):

[22] Մ.Աբեղյանը *պառվուկ* բառն ուսումնասիրում է ոչ բարբառային բառերի շարքում (նշվ. աշխ., էջ 268):

[23] Հմմտ. *կիրսակ* (719):

[24] Մի շարք բառերում նվազափաղաքշական ձևույթների իմաստը ժա-մանակին մթագնել է, և նրանք սկսել են գործածվել միայն ածանցավոր ձևով՝ դեռևս գրաբարից սկսած, ինչպես՝ *եղուկ, ծաղիկ* և այլն: Սրան հա-կառակ՝ *ուշ* բառը, օրինակ, գրաբարում գործածվում էր ինքնուրույն, մինչդեռ միջին հայերենում գործածվում է *ուշիկ* (342) ածանցավոր ձևով: Անհրաժեշտության դեպքում այդ բառերը կարող են ստանալ նոր նվազա-փաղաքշական ձևույթ՝ զուգահեռաբար պահպանելով նաև սկզբնաձևերը: Հմմտ. – Ո՛չ քուկն եմ՝ ի վար գալու, Ո՛չ օտար *ծաղիկ*՝ գընալու (44) և – Ո՛ւչ մարդ եմ՝ վար գնալու, Ո՛ւչ շուշան եմ *ծաղկէկ*՝ գնալու (670): Սոխախովդ ի վար կու գի, Լուկ մէկ մի *ուշիկ* ձայն էած (342) և Զուխախովն ի վայր կու գի, Ու մէկ մի *ուշկիկ* ձայն էած (375):

1.4. ժամանականիշ գոյականների՝ *ամսիկ* (663), *ժամիկ* (132), *պահիկ (*64), *օրիկ* (61):

-Իկ ձևույթից բացի՝ ժամանականիշ գոյականի հետ կապակցվել է նաև *-ակ* ձևույթը՝ կազմելով *տարեկ* (116) գոյականը:

1.5. Կենդանանիշ գոյականների՝ *եղնիկ* (319), *ճուտիկ* (736), *մըրտմիկ* (167)[25], *որսիկ* (79)[26], *պուլպուլիկ* (122), *օձիկ* (326):

Սրանից բացի՝ հանդիպում են նաև *-ուկ* և *-ակ* ձևույթներով կազմված, համապատասխանաբար, *ձագուկ (*269)[27] և *վարճինակ* (327) կենդանանիշ գոյականները:

1.6. Ազգություն ցույց տվող սակավաթիվ գոյականների՝ *արապիկ* (514), *հնտիկ (*514), *տաճիկ* (567):

1.7. Շնչավոր (անձնանիշ կամ կենդանանիշ) առարկաների մաս անվանող գոյականների՝ աչիկ – *աչկունք* (308), *ափիկ* (778), *բազկիկ* (651), *դնչիկ* (56)[28], *թևիկ* (53)[29], ձեռիկ – *ձեռկունք* (57), *ճակտիկ* (686), *մազիկ* (63), ոտիկ – *ոտկաց* (689), *ոտնիկ* (776), *տոտիկ* (775), *տոտկիկ* (599):

Սրանցից բացի՝ մարմնի մաս անվանող *գլուխ* բառից նոր գոյական է կերտվել *-ակ* ձևույթով՝ *գլխակ* (65):

1.8. Իրանիշ թանձրացական գոյականների՝ *ամպիկ* (682), *անձնիկ* (131)[30], *անտոնիկ* (763)[31], *արիւնիկ* (152), *արևիկ* (672), *արտիկ* (800), *բամպկիկ* (208), *բաղարիկ* (249)[32], *բարձիկ (*92),

---

[25] ՄՀԲ-ն ունի *մրտեմնիկ* «Բաղի նման ջրային փոքր թռչուն. մրտիմ» (էջ 541):

[26] Հմմտ. *օրսիկ* (303)

[27] Հմմտ. *ծագուկ* (107):

[28] Հմմտ. *տնչիկ* (197), *դընջիկ* (242):

[29] Մարմնի մաս ասելով՝ նկատի ունենք շնչավոր (անձնանիշ և կենդանանիշ) գոյականներին առնչվող գոյականները: Հմմտ. Թևիկն ի շըլնին ձգէ Ու *գանգտիկ* անեն հին ու նոր (53) և *Թևիկ* շահէնի առի, Լուկ հասա ի յեզր ծովուն (71): Կերթար, ճոճկտէր *վզիկն*, Կու շողէր շամամն ի ծոցին (89) և Պիւլպիւլն ի վարդին սիրուն Ջիւր *վզիկն* ի դէմ կու բերէ (272):

[30] Հմմտ. *անձկանց* (125):

[31] Իմա՛ *անտունիկ*:

[32] Ենթադրում ենք, որ *բաղարջիկ* («անթթխմոր հացիկ») բառն է:

բերդիկ (333), *բունիկ* (671), *բռնիկ (*627), *գըրիկ (*681), *գըրկիկ* (56), *դեղիկ* (514), *եղիկ* (673), *երդիկ* (44), *ընտիկ* (297)[33], *թելիկ* (279), *թէպրիկ* (55)[34], *թխտիկ* (54), *թրփիկ* (343), *ժամիկ* (237), *լէշիկ* (780), *ծնրիկ* (86), *ծովիկ (*801), *ծոցիկ* (57), *կաթիկ* (66), *կածիկ* (212), *կաւիկ* (273), *կտիկ* (743), *հայրենիկ* (295), *հատիկ* (67)[35], *հացիկ (*661), *հովիկ* (641), *դումաշիկ* (764), *ճոթիկ* (619), *մանիկ* (795)[36], *մոմիկ* (88), *մրճիկ* (150), *մրսիկ (*152), *նաշիկ* (780), *նաւիկ* (801), *նետիկ* (190), *շաղիկ (*98), *պաշրիկ* (58), *պտիկ* (217), *ջրիկ* (647), *տալիկ (*340), *տակիկ (*253), *տօշկիկ* (92), *ցանկիկ* (661), *ցօղիկ* (464), *փարչիկ* (226), *փետրիկ* (599), *փերթիկ* (617), *փնճիկ* (106), *փշիկ (*649), *քաղքիկ* (801), *քարիկ* (424), *քոքիկ (*636)[37]:

Սրանցից բացի՝

ա) *-եկ* ձևույթով կազմվում են *չուխեկ* (621)[38], *ակնեկ* (642), *չախուեկ (*644), *գօտեկ* (650), *եգեկ* (659)[39], *մատնեկ* (375)[40],

բ) *-ուկ* ձևույթով[41]՝ *կարմունճուկ* (648), *իրքուկ (*621), *պլպլուկ (*208)[42],

գ) *-ակ* ձևույթով՝ *գետակ* (642), գ) *-ակ* ձևույթով՝ *գնդակ* (823), *լեզւակ* (235)[43], *լեռնակ* (709)[44], *զանկակ* (213), *էղբղնակ (*749), *կթխակ* (185), *ձորակ (*742), *նուիրակ* (869), *շրջանակ* (823),

---

[33] Փոքր հունդ:

[34] Հմմտ. *թպրիկ* (242):

[35] Հմմտ. *խատիկ* (793):

[36] ՄՀԲ-ն չունի:

[37] Հանդիպում են սրանց հոգնակի կազմությունները նույնպես՝ *լեռկունք* (548), *փողոցկունք* (261):

[38] Հմմտ. *չուխէկ* (627):

[39] Փոքրիկ այգի:

[40] ՄՀԲ-ն ունի *մատնիկ*:

[41] Մ.Աբեղյանը նշում է, որ *-ուկ* ձևույթով կազմվում են նաև հիվանդության անուններ՝ *գորտնուկ, ջրջրուկ* և այլն (*Մ.Աբեղյան*, նշվ. աշխ, էջ 269):

[42] *Պլպլուկ*՝ կոկոն:

[43] Հմմտ. *լեզուակ* (255):

[44] Հմմտ. *լեռնակ-լեռնակ* (654):

*տապլակ (*918)[45], *տնակ* (212) իրանիշ թանձրացական գոյականները:

1.9. Իրանիշ վերացական գոյականների հետ՝ *ահիկ* (99)[46], *առիկ* (750)[47], *բանիկ* (56), *գանգտիկ* (53), *դատրիկ* (55), *թարկիկ* (109), *ժամանկիկ* (262), *խաբրիկ* (123)[48], *խաթրիկ* (95), *հաւատիկ* (276), *հոտիկ* (341), *ձայնիկ* (182), մ*ահիկ* (250), *մտքիկ* (583)[49], *յօմրիկ* (262), *պագիկ (*79)[50], *պոյիկ* (56), *տեղիկ* (223), *փայիկ (*635), *քնիկ (*635)[51]:

Սրանցից բացի՝ իրանիշ վերացական գոյականներից բառեր են կազմվել նաև՝

ա) -*եկ* ձևույթով՝ *ահեկ (*684),

բ) -*ուկ* ձևույթով՝ *թալուկ (*147), *խելքուկ* (518), *խօսքուկ* (763), *տեղուկ* (657), *ցաւուկ (*719),

Նվազափաղաքշական ձևույթներով կազմված որոշ գոյականներ, որոնք ներկայացնում են իմաստային տարբեր դաշտեր, հանդես են եկել ոչ թե առանձին, այլ իբրև վերլուծական բարդության բաղադրիչ, մասնավորապես՝ իբրև հարադիր: Դրանցից են՝ *գանգտիկ, գրկիկ, թարկիկ, խուշկիկ, ծնրիկ, հարցուկ, մտիկ, վարձկունք, տօտիկ, քնիկ* և այլն: Նշված բառերի մի մասը մասնակցել է վերլուծական բայերի կազմությանը, մի մասն էլ հանդիպում է դարձվածքային միավորների կազմում: Օրինակ՝ *զարևուն թարկիկն* է տվեր (109), *գանգտիկ* անեն (53), *գըրկիկ* ածեր (56), *խուշկիկ* առնէ (387), *ծնրիկ* դնես (86), *հարցուկ* լինի (514)[52]// *հարցուկս* ելան (388), *մտիկ* արա (501), *ի մտիկ* բերիր (220), *մըտիկ*

---

[45] Կոստանդին Երզնկացին գործածում է *տապլ* (արաբ. «թմբուկ») ձևով:

[46] Համմտ. *ախիկ* (649), *ահեկ* (766):

[47] ՄՀԲ-ն չունի:

[48] Համմտ. *խապրիկ* (744):

[49] Համմտ. *մտիկ* (900):

[50] Համմտ. *պաքիկ* (166):

[51] Համմտ. *քնակ* (710):

[52] Համմտ. Խելօք մի *հարցուկս եղայ*, Թէ ունիմ ես առ քեզ կարիք (856) և *Կիրսակն* ալ *հարսմունք ըրեր*. – Հարսնո՛ւկ, քու ո՞րտեղն է ցաւեր (719):

դըրէք (900)[53], *վարձկունք* արայ (298), *տօտիկ* անեմ (775), *քնիկն* է տարեր (635) և այլն[54]:

Նվազափաղաքշական ձևույթներ են ստացել նաև միջինհայերենյան որոշ անվանական վերլուծական բարդությունների բաղադրիչները, ինչպես՝ *եղիկ մեղրիկ* (673), *ձնիկ ’ւ եղեմիկ* (197): Մինչդեռ որոշ վերլուծական բարդությունների բաղադրիչները (*հող* և//ու *մոխիր, նետ* և//ու *աղեղ* և այլն), գործածվելով նվազափաղքշական ձևույթներով՝ ածանցմամբ, հանդես են եկել որպես բառային անկախ միավորներ, ինչպես՝ Տիլպէ՛ր, քո *հողիկդ* եմ ես, Քո *մոխրիկն* որտեղ կու կոխես (94): *Նետիկ* մը գոգուն ունէր, *Էղրդնակ* մը թևտրկերուն (749):

Վերը բերված լեզվական փաստերի մեծագույն մասը վկայում է, որ նվազափաղաքշական ձևույթ ստանում են գերազանցապես բաղաձայնով վերջացող բառերը: Դա առաջին հերթին կարող է պայմանավորված լինել հայերենի արտասանական բազայով. կից ձայնավորների գործածությունը հայերենի խիստ բնորոշ բառակազմական յուրահատկություններից չէ դեռևս գրական հայերենի առաջին շրջանից:

Ձայնավորահանգ բառերի առումով նկատելի է հետևյալ օրինաչափությունը. եթե ձայնավորահանգ բառին ավելանում է միևնույն կամ տարբեր ձայնավորով սկսվող նվազափաղաքշական ձևույթ, ապա սովորաբար բառավերջի ձայնավորն ընկնում է, ինչպես՝ *կթդա/յ/ + -ակ =կթխակ* (185), *հոգի + -իկ = հոգիկ* (212), *ճամփա/յ/ + -իկ//-եկ//-ուկ = ճանփիկ (*83)//*ճանփեկ* (147)//*ճամբուկ* (801), մանի[55] + *-իկ = մանիկ* (795), *չախու + -ուկ = չախուկ* (721),

---

[53] Խոսելով *նայել* հասկացության մասին՝ Մ.Մուրադյանը նրա արտահայտման միջոցների շարքում նշում է նաև *մտիկ անել* և *մտիկ դնել* վերլուծական բայերը (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 257):

[54] Երբեմն վերլուծական բարդության բաղադրիչները հանդես են գալիս ընդմիջարկված՝ *Հարցուկ* դու ընդէ՞ր *լինիս*, Ու ասես, թէ բան կու գիտէ (619): *Մըտիկ* լեռներուն *արէք*, Խելօքի ասած մասալ է (221): *Գրկիկ* իւր վզին *ածի*, Թէ պագնեմ իւր սրտի կամով (79):

[55] Հմմտ. Ավետիք Իսահակյան, «Ալագյազի *մանիներ*», որի ընդգծված

պզտի (58) + *-իկ* = *պզտիկ* (82), *տղա(յ)* + *-ակ* = *տղակ* (ՄՀԲ, 762):

Նվազափաղաքշական ձևույթները բազմիմաստ են գրական հայերենի բոլոր (այդ թվում նաև միջինհայերենյան) շրջաններում: Ավելանալով բառերին՝ նրանք կազմում են նոր բառ, սակայն չեն փոխում բառային հիմնական իմաստները[56], այլ հաղորդում են որևէ երանգ, մինչդեռ ավելանալով անկախ գործածությունից զուրկ ձևույթներին՝ կազմում են նոր իմաստակիր միավորներ: Ասվածը ներկայացնենք *-ուկ* ձևույթի դրսևորած իմաստային առանձնահատկություններով, որը՝

ա) Մի դեպքում ավելանում է բառային միավորների՝ նրանց հաղորդելով նվազական իմաստ, որով, ըստ էության, կազմում է՝

– կա՛մ կայուն հատկանիշի նոր աստիճան ցույց տվող նոր ածական, ինչպես՝ *բարակ + ուկ = բարկուկ* (375)՝ «շատ բարակ»,

– կա՛մ նոր չափի առարկա ցույց տվող նոր գոյական, ինչպես՝ *կարմունճ + ուկ = կարմունճուկ* (711)]՝ «փոքր կամուրջ»:

Վերը նշված երկու դեպքում էլ *-ուկ* ձևույթի միջոցով կազմվում են իրենց սկզբնաձևերի հետ հոմանշային հարաբերության մեջ գտնվող նոր բառային միավորներ:

բ) Մյուս դեպքում ավելանում է բառային միավորների՝ նրանց հաղորդելով ընդամենը փաղաքշական լրացուցիչ երանգ: Այսպես՝ *կարմիր* ածականը *արիւն* առարկայի կայուն հատկանիշներից (տվյալ դեպքում արտաքին հատկանիշ) մեկն է, հետևաբար *-ուկ* ձևույթով կազմված *կարմրուկ*-ը նոր իմաստակիր միավոր չէ. *կարմիր* բառին ընդամենը հաղորդվում է փաղաքշական երանգ՝ Ու զայս իմ *կարմրուկ* արիւնս Ատ ճերմակ շլինքդ մի՛ առնուլ (173: Զայս իմ *կարմրուկ* արիւնս Ի գետինն ի վայր վաթեցին (605):

անդամը ևս վկայում է *մանիկ* բառի (Ա՛յ եար, կանչեմ խայերէն *մանիկ* մի - 795) ածանցավոր լինելու մասին:

[56] *Ս.Էլոյան*, նշվ. աշխ., էջ 385:

Փաստորեն այս դեպքում *-ուկ* ձևույթի միջոցով կազմվում են համանշային նոր միավորներ:

գ) Երրորդ դեպքում ավելանում է կա՛մ բառային միավորների, կա՛մ անկախ գործածությունից զուրկ հիմնական ձևույթների՝ նրանց հետ միասին ցույց տալով քերականական իմաստ (գերազանցապես՝ առարկայի դրություն, վիճակ՝ որպես ավարտված գործողության հետևանք)՝ *-ած* ձևույթին զուգահեռ դառնալով հարակատար (երբեմն՝ ենթակայական) դերբայի արտահայտման միջոց[57]: Այսպես՝ *կանգուն* բառին և *կտուր* ձևույթին ավելանալով՝ *-ուկ* ձևույթը նրանց հաղորդում է դերբայական նշանակություն[58]: Օրինակ՝ Զիմ եարն այլ *կանկնուկ* («կանգնած») տեսայ (265): Իմ եարն ալ *պառկուկ* («պառկած») տեսայ (708): .... Զէտ սրած *կտրուկ* («կտրող»)[59] դանակ՝ Անողորմ ի սըրտիկս էած (199)[60]:

Այս դեպքում ձևավորվում են քերականական նոր միավորներ:

դ) Մեկ այլ դեպքում ունի սոսկ բառակազմական դեր. ավելանում է ոչ թե անկախ գործածություն ունեցող որևէ բառի, այլ անկախ գործածությունից զուրկ որևէ հիմնական ձևույթի՝ վերջինիս հետ կազմելով նոր բառ, ինչպես՝ *ծածուկ, փափուկ, մնացուկ* և այլն:

---

[57] Հմմտ. *Մ.Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 269:

[58] Ս.Անթոսյանը նշում է, որ *-ուկ* վերջավորությամբ հարակատարը միջին հայերենում սահմանափակ կիրառություն ունի. առավելապես գործածվում է Մշո, Վանի, Մոկաց և մի շարք այլ բարբառներում ու խոսվածքներում, մասամբ և արևմտահայերենում (Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ 310):

[59] Հմմտ. *Մ.Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 269:

[60] Դիժար *հիւրնդուկ* եմ ես (266) նախադասության ընդգծված անդամը, որը հանդիպում է նաև *հիւնդուկ* (659), *հիւրնստուկ* (682) տարբերակներով, տվյալ համատեքստում կարող է նշանակել և՛ «հիվանդիկ», և՛ «հիվանդացած»:

Հայրեններում ընդունված է նվազափաղաքշական ձևույթների կրկնակի գործածությունը[61] նույնպես, որը գալիս է դեռևս խոսակցական գրաբարից (օրինակ՝ *պատանեկիկ, տեղեկիկ, նաւակիկ*)[62]: Նկատենք, որ հայրեններում առանձին գործածվում են և՛ ածանցավոր սկզբնաձևերը, և՛ դրանցից կրկնակի ածանցվածները: Ընդ որում, մի քանի բառերում կրկնվել է միևնույն նվազափաղաքշական ձևույթը (տվյալ դեպքում՝ *-իկ*): Օրինակ՝ *տօտիկ*[63] (775)//*տօտկիկ* (599), *փոքրիկ* (47)//*փոքըրկիկ* (271): Մինչդեռ բազմաթիվ դեպքերում սկզբնաձևերի և նրանցից ածանցված նոր բառերի նվազափաղաքշական ձևույթները տարբեր են: Հանդիպում են *-ակ + -ուկ, -ակ + -իկ, -իկ + -ուկ* համադրություններ, ինչպես՝ *մէկ* (342)//*մէկիկ* (908), *պզտիկ* (82)//*պզտիկուկ* (107), *ջուխտակ* (208)//*ջըխտըկուկ* (764), *օղակ* (312)//*օղկիկ*[64] (218):

Միևնույն տրամաբանությամբ են կատարվում այն ածանցումները, որոնցում նվազափաղաքշական ձևույթներն ավելանում են ոչ թե ածանցավոր կազմություններին, այլ *-ակ, -ուկ* կամ *-իկ* վերջնահանգով սկզբնաձևերին, որոնցում հիշյալ հնչակապակցություններն ածանցներ չեն: Այսպես՝

ա) Մի դեպքում սկզբնաձևի վերջնահանգը և ավելացող ձևույթը նույն կազմությունն ունեն՝ *-իկ + -իկ*, ինչպես՝ *շապիկ* (256)//*շապկիկ* (256)[65]:

բ) Մյուս դեպքում սկզբնաձևի վերջնահանգը և ավելացող ձևույթը կազմությամբ տարբեր են՝ *-ակ + -իկ, -ուկ + -իկ* և

---

[61] Մ.Աբեղյանը սրանք անվանում է «կրկնակ նվազականներ» (*Մ.Աբեղյան*, նշվ. աշխ., էջ 269), Ա.Մուվալյանը՝ «կրկնակի նվազափաղաքշական մասնիկներ» (*Ա.Մուրվալյան*, նշվ. աշխ., էջ 315):

[62] Միանգամայն ճիշտ է նկատվել, որ նվազափաղաքշական ձևույթներն «առավել բնորոշ են լեզվի խոսքային մակարդակին» և գեղարվեստական գրականությանը (*Ա.Էլոյան*, նշվ. աշխ., էջ 385, 387):

[63] Լոռու խոսվածքում առայսօր գործածական է *տոտիկ* ածանցավորի *տոտտո* սկզբնաձևը:

[64] Հմմտ. Աստղերն այլ կոճակ արէք, Ջիս ի ներս *ողկիկ* շարեցէք (268), որտեղ բերված զուգաձևը նշանակում է «կոճակի օղակիկ» (ՄՀԲ, 607):

[65] Հմմտ. *շապկեկ* (661):

այլն: Օրինակ՝ *լաչակ, բայց՝ լաչկիկ (*228), *դանակ,* բայց՝ *դանկիկ (*302)[66], *շալակ,* բայց՝ *շալկիկ* (525), *պռուկ,* բայց՝ *պռկիկ (*208), *բազուկ,* բայց՝ *բազկիկ* (213) և այլն:

Նշված բոլոր դեպքերում նկատելի է մի ընդհանրություն. կատարվում է վերջնահանգ *ի, ա, ու* ձայնավորների սղում[67]:

Ուսումնասիրողների կողմից միանգամայն տեղին է նկատվել, որ միջին հայերենին հատուկ են լեզվական միավորների անմիօրինակությունը, զուգաձևերի առատությունը[68]. աչքի են ընկնում հատկապես թեքույթները և հոգնակերտ ձևույթները, ինչը գերազանցապես պայմանավորված է դրանց համանշությամբ: Եվ քանի որ համանիշ (հոմանիշ) են նաև նվազափաղաքշական ձևույթները, ապա հայրեններում առկա է դրանց զուգահեռ գործածության միտում ոչ միայն միևնույն և տարբեր խոսքի մասերի սահմաններում, այլև միևնույն բառի կազմության առումով: Օրինակ՝ *-ուկ* ձևույթով կարելի է կազմել և՛ գոյականներ (*ճամբուկ* /801/, *հարուկ* /53/[69], *հարսնուկ* /85/), և՛ ածականներ (*տաքուկ* /661/, *նորուկ* /661/, *ճահիճուկ* /668/), և՛ մակբայներ (*զաղտուկ* /123/, *հեռուկ* /658/, *տկուկ-տկուկ* /248/):

Ասվածին հակառակ՝ որոշ դեպքերում նկատելի են կապակցելիության սահմանափակություններ: Օրինակ՝ միջին հայերենում ընդունված չէ դերանունների կազմությունը *-ակ* և *-էկ* ձևույթներով, ժամանականիշ գոյականների կազմությունը՝ *-ակ* և *-ուկ* ձևույթներով: *-Ակ* ձևույթով, որը սահմանափակ կիրառություն ունի, գերազանցապես կազմվում են գոյականներ և այլն:

---

[66] Համմտ. *դանկէկ* (659):

[67] Այս ճանապարհով են առաջացել *-կէկ, -կիկ, -կուկ, -կակ* նվազափաղաքշականները այն բառերում, որոնցում վերջնահանգ *-ակ, -իկ, -ուկ, -էկ, -էկ* հնչյունակապակցությունները արմատի բաղադրիչներ չեն: Օրինակ՝ մեծիկ – *մեծկէկ,* սևուկ – *սևկակ*, ջուխտակ – *ջրխտրկուկ*, օղակ – *օղկիկ*:

[68] Առանձնանում են մի շարք համանշային և հոմանշային զույգեր, ինչպես՝ *տօտկիկ* (599)//*ոտնիկ* (776)//*տօտիկ* (775), *թխտիկ* (54)//*գըրիկ* (681), *փերթիկ* (617), *ճոթիկ* (619), *քոքիկ* (636)//*տակիկ* (253), *հացիկ* (661)//*բաղարջիկ* (249) և այլն:

[69] Համմտ. *յարուկ* (299):

Առավել հաճախադեպ են երկու տարբերակով զուգաձևությունները: Այսպես՝ որոշ բառեր զուգահեռաբար կազմվել են՝

1. թե՛ *-իկ* և *-ակ* ձևույթներով՝ *բերնիկ* (56)//*բերնակ* (242)[70], *լուսնիկ* (173), *լուսնակ* (338)[71], *ծիծեռնիկ* (47)//*ծիծեռնակ* (780), *ակնիկ* (157)//*ակնակ* (339), *տնիկ* (776)//*տնակ* (257), *քնիկ* (635)//*քնակ* (710),
2. թե՛ *-իկ* և *-ուկ* ձևույթներով՝ *գառնիկ (*655)//*գառնուկ* (741), *ծառիկ* (654)//*ծառուկ* (613), *կաքիկ (*804)//*կաքուկ* (208)[72], *հաւիկ* (89)//*հաւուկ* (61), *ճնճղիկ* (611)//*ճնճղուկ (*193), *մորճիկ* (76)[73]//*մորճուկ* (56), *ողորմիկ* (114)//*ողորմուկ* (49)[74], *տեղիկ* (223)//*տեղուկ* (657),
3. թե՛ *-իկ* և *-եկ* ձևույթներով՝ *բընիկ*[75] (82)//*բունեկ* (663), *երեսիկ* (56)//*երեսեկ* (242), *կոճկիկ* (73)//*կոճկեկ* (129), *հոգիկ* (212)//*հոգեկ (*156)[76], *ոտնիկ* (776)//*ոտնեկ* (290), *սրտիկ* (54)//*սրտեկ* (189), *օրիկ* (46)//*օրեկ* (150),
4. թե՛ *-ուկ* և *-ակ* ձևույթներով՝ *դղմակ (*644)//*թթմուկ* (705)[77]:

Զուգաձևություններ են նկատվում նաև կրկնակի ածանցման

---

[70] Համմտ. *բէրնակ* (253):

[71] Համմտ. նաև *լուսնէակ* (232), *լուսինկայ* (666), *լիւսնակ* (783):

[72] Համմտ. *կազվուկ* (261):

[73] Միջինհայերենյան աղբյուրներում՝ մասնավորապես հայրեններում, *մորճ* («նոր բուսած՝ նորատունկ դալար ծառ» (ՄՀԲ, 528)) գոյականը և նրա՝ նվազափաղաքշական ձևույթներով հոմանիշները գերազանցապես գործածվում են փոխաբերաբար: Համմտ. Հա՛յ իմ մազտ ուռի *մուրճիկ*, Չորանա՛ս, թէ զիս մոռանաս (153): *Մորճիկ* մի էրետ ինձ բարև, Իմ ամէն խոցըս նորեցաւ (190): Եկին ու խապար բերին «Քո սիրած *մորճն* զքեզ մոռցաւ» (76):

[74] Եթե *ողորմիկ*-ը բացառիկ գործածություն ունի, ապա *ողորմուկ*-ը գործածվել է և՛ մակբայաբար, և՛ ածականաբար, և՛ իբրև փոխանուն: Համմտ., համապատասխանաբար, Կու լայ, *ողորմուկ* կու լայ (83): *Ողորմուկ* ձանիկ մի կու գայ (660) և Եկեք *զողորմուկս* տեսէք (196):

[75] Համմտ. *բունիկ* (766), *պոնիկ* (776):

[76] Համմտ. *հոգւոյս հոգեկ* (239):

[77] ՄՀԲ-ն չունի:

դեպքում: Այսպես՝ *-իկ* ձևույթով ածանցված *պզտիկ* (82) բառին մի դեպքում ավելանում է նույն *-իկ* ձևույթը (*-իկ* + *-իկ*), մյուս դեպքում ձևույթները տարբեր են (*-իկ* + *-ուկ*): Հմմտ. *պզտիկիկ* (495) և *պզտիկուկ* (107):

Հազվադեպ են երեք տարբերակով զուգաձևությունները՝ տարբեր լուծումներով՝ *-իկ*//*-եկ*//*-ուկ, -իկ*//*-ակ*//*-ուկ, -իկ*//*-եկ*//*-եակ,* ինչպես՝ *ճանփիկ* (83)[78]//*ճանփեկ* (147)//*ճամբուկ* (801), *դռնիկ* (776)//*դռնակ* (49)//*դռնուկ* (720), *որդիկ* (662)//*որդեկ* (641)//*որդեակ* (596):

Ինչպես նկատելի է, զուգաձևությունների մեջ նույնպես ավելի հաճախադեպ է *-իկ* ձևույթը, որը ներունակ է համադրվելու մնացած բոլոր նվազափաղաքշականների հետ:

Ամփոփենք: Միջին հայերենում, մասնավորապես հայրեննեբրում նվազափաղաքշական ձևույթների (*-ակ, -եկ, -իկ, -ուկ* և այլն) գործածությունն ավելի է հաճախանում, ինչը պայմանավորված է նրանով, որ դրանք առավել տիպական են հայերենի խոսակցական մակարդակին և չափածո ստեղծագործություններին: Հիշյալ ձևույթները հիմնականում կապակցվում են ակտիվ բառաշերտի թե՛ բնիկ, թե՛ փոխառյալ բառերի հետ՝ ավելանալով բոլոր խոսքի մասերին (բացառություն են բայերը), ինչպես նաև բայարմատների ու բայաբների: Տարբեր խոսքի մասերի հետ կապակցվելու և հաճախակի գործածության առումներով առանձնանում է *-իկ*-ը, որն առավելապես կապակցվում է իմաստային տարբեր խմբեր ներկայացնող և՛ հատուկ ու հասարակ, և՛ անձնանիշ ու իրանիշ, և՛ շնչավոր ու ոչ շնչավոր բազմաթիվ գոյականների հետ:

Նվազափաղաքշական ձևույթ գերազանցապես ստանում են բաղաձայնահանգ լեզվական միավորները, ինչն առաջին հերթին պայմանավորված է հայերենի արտասանական բայով (կից ձայնավորների գործածությունը խորթ է հայերենին): Ասվածի օգտին է նաև այն փաստը, որ ձայնավորահանգ բառերի վերջին ձայնավորը սովորաբար ընկնում է:

Ավելանալով բառերի՝ հիշյալ ձևույթները կազմում են նոր

[78] Հմմտ. *ճամբիկ* (767):

բառեր, սակայն գերազանցապես չեն փոխում նրանց բառային հիմնական իմաստները, այլ հաղորդում են որևէ երանգ, մինչդեռ ավելանալով անկախ գործածությունից զուրկ ձևույթների՝ կազմում են նոր իմաստակիր միավորներ (բառեր կամ բառաձևեր): Այդ ձևույթներով կազմված մի շարք բառեր իրենց սկզբնաձևերի հետ կազմում են հոմանշային կամ համանշային զույգեր (*կարմիր – կարմրուկ, չախու – չախուկ*): Հայրեններում ընդունված է նաև նույն կամ տարբեր նվազափաղաքշական ձևույթների կրկնակի գործածությունը, որի շնորհիվ հոմանշային և համանշային դաշտերը ծավալվում են (*օղ – օղակ – օղկիկ, փոքր – փոքրիկ – փոքրըրկիկ*):

Լեզվական միավորների՝ միջին հայերենին հատուկ անմիօրինակությունն առկա է նվազափաղաքշական ձևույթների առումով ևս. տարածված են երկու (հազվադեպ՝ երեք) տարբերակով (*-իկ//-ակ, -իկ//-ուկ, -իկ//-ակ//-ուկ* և այլն) զուգաձևությունները, որոնցում կապակցելիական ակտիվությամբ դարձյալ առանձնանում է *-իկ* ձևույթը:

Զուգաձևություններ են առկա նաև կրկնակի ածանցման դեպքում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱ – Ամիրդովլաթ Ամասիացի
ԱԳ – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց
ՄԽ – Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց
ՄՀԲ – *Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան,* Միջին հայերենի բառարան
Ն – Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան
ՆՀԲ – *Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան,* Նոր բառգիրք հայկազեան լեզուի
ՍԳ – Գիրք Աստուածաշունչ Հին և Նոր կտակարանաց
ՓԲ – Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց

Уменьшительно-ласкательные морфемы в айренах

Хачатрян Гурген

Резюме

Ключевые слова: *лексические единицы, омоним, синоним, уменьшительно-ласкательные морфемы -ակ [-ак], -էկ [-ек], -իկ [-ик], -ուկ [-ук], двойные морфемы, среднеармянский язык, существительное, корреляты, фонетические чередования, оним, антропоним, зооним, фитоним, составные сложные слова*

Использование уменьшительно-ласкательных морфем *-ակ [-ак], -էկ [-ек], -իկ [-ик], -ուկ [-ук]* в среднеармянском языке, в частности, в айренах, особенно активизируется, что обусловлено типичностью этих форм для народно-разговорного языка. Указанные морфемы, присоединяясь к лексемам разных частей речи (за исключением глаголов), а также к глагольным корням и основам, прежде всего, связываются с наиболее употребительным пластом как исконно армянской, так и заимствованной лексики.

С точки зрения частотности присоединения к разным частям речи и употребительности, особо выделяется морфема *-իկ [-ик]*, который примыкает к лексемам из различных лексико-семантических разрядов существительных – имен собственных и нарицательных, со значением лица или предмета, одушевленных и неодушевленных.

Уменьшительно-ласкательные морфемы получают преимущественно те лексемы, которые заканчиваются на согласный, что, прежде всего, обусловлено фонологической системой армянского языка – два следующих друг за другом гласных не особенно свойственны армянскому языку. В пользу последнего утверждения говорит тот факт, что в подобных случаях конечный гласный звук перед данными морфемами обычно выпадает.

Несмотря на то, что с помощью этих морфем образуются новые слова, однако в своем большинстве эти морфемы не меняют основного значения этих лексем, но привносят добавочный оттенок. Уменьшительно-ласкательные морфемы, присоединяясь к корням, лишенным независимого употребления, образуют новые семантические единицы.

Целый ряд слов, образованных с помощью данных морфем, со своей начальной формой составляют синонимическую или омонимическую пары: *կարմիր – կարմրուկ [кармир – кармрук], չախու – չախուկ [чаху – чахук].*

В айренах встречается также присоединение к одному и тому же слову двух одинаковых или разных уменьшительно-ласкательных морфем, благодаря чему расширяется поле синонимов и омонимов (*օդ – օդակ – օդկիկ [од – одак – одкик], փոքր – փոքրիկ – փոքրկիկ [покр – покрик – покркик]*).

Неоднотипность языковых форм среднеармянского языка присуща также системе уменьшительно-ласкательных морфем; наибольшее распространение получили двувариантные, реже – трехвариантные параллельные формы: *-իկ//-ակ, -իկ//-ուկ, -իկ//-ակ//-ուկ [-ик//-ак,-ик//-ук, -ик//-ак//-ук]* и другие варианты, среди которых особой активностью вновь выделяется морфема *-իկ [-ик].*

Diminutive-Morpheme Formations in "Hayrenner"

Khachatryan Gourgen

Summary

Key words: *word unit, synonym, homonym, morphemes -ակ, -էկ, -իկ -ուկ, (double) diminutive morphemes, Middle Armenian, noun, comparability, sound interchange, person, non-person, botanical name, analytical complexity*

In Middle Armenian, more specifically in "Hayrenner", the diminutive morphemes (*-ակ*, *-էկ*, *-իկ*, *-ուկ*, etc.) are used more frequently because they are more characteristic of spoken Armenian and verse. The abovementioned morphemes are mainly combined with both native and borrowed words of the active vocabulary and are added to all parts of speech (except for verbs), including verb-roots and verb-stems. The diminutive morpheme "իկ" stands out for its combinability with different parts of speech and its frequency of use. This morpheme is primarily added to different semantic categories of nouns representing different classes: proper / common; animate / inanimate; person / non-person.

Diminutive morphemes are predominantly added to consonant-rhyming units; this is first and foremost conditioned by the pronunciation specificity of the Armenian language (the use of vowels in close succession is not characteristic of Armenian). Another fact worth mentioning is that the final vowel in vowel-rhyming words is usually dropped.

Being attached to words, the abovementioned morphemes form new words but, in most cases, they do not change the primary meanings of those words; they simply add connotative meanings. However, when added to bound morphemes they form new meaningful units: words (free morphemes) and bound morphemes.

A considerable number of words formed with the help of those morphemes together with their base-forms make synonym and homonym pairs (*կարմիր – կարմրուկ, չախու – չախուկ*): In "Hayrenner" the repetition of the same or different diminutive words is a common occurrence due to which the synonym and homonym pairs are extended (*օդ – օդակ – օդկիկ, փոքր – փոքրիկ – փոքըրկիկ*).

The non-uniformity of linguistic units characteristic of Middle Armenian holds true for diminutive morphemes as well. Two – variant (rarely three) comparability patterns (*-իկ//-ակ, -իկ//-ուկ, -իկ//-ակ//-ուկ, etc.*) have frequent occurrences of which the morpheme "*-իկ"* stands out for its marked combinability.

Ներկայացվել է 02.10.2019 թ.
Տպագրության է երաշխավորել բ. գ. դ., պրոֆեսոր Լ. Շ. Հովհաննիսյանը
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Գրաբարի խոնարհման համակարգի զարգացումները 10-րդ դարի գրականության մեջ

Ղուկասյան Շողիկ

Հանգուցային բառեր. *քերականական ժամանակաձևեր, ներկա, անցյալ, 1-ին ապառնի, 2-րդ ապառնի, բաղադրյալ ապառնի, ներգործական սեռ, կրավորական սեռ, խոնարհման շեղումներ*

Հայագիտությունը զգալի աշխատանք է կատարել հայոց լեզվի պատմական զարգացման քննության ուղղությամբ: Հայերենի զարգացման տարբեր փուլերի լեզվական առանձնահատկությունների (հնչյունական համակարգ, քերականական կառուցվածք և բառապաշար) ուսումնասիրությանը նվիրված են բազմաթիվ աշխատություններ[1]: Փաստական հարուստ նյութի հիման վրա քննության են առնվել հին հայերենի դասական և ետդասական ժամանակաշրջանների լեզվավիճակները: Նախամիջին շրջանի (8-11-րդ դարեր) ուսումնասիրությանը ևս նվիրված են առանձին աշխատություններ, սակայն այդ շրջանն ամբողջությամբ դեռևս ուսումնասիրված չէ: Պատմական զարգացման ընթացքում լեզվի մեջ կատարվել են լեզվական բոլոր իրողություններն ընդգրկող զանազան տեղաշարժեր, որոնց արդյունքում 8-11-րդ դարերի լեզուն զգալիորեն տարբերվում է նախորդ դարերի լեզվից: Ինչպես իրավամբ նշում է Լ.Հովհաննիսյանը, գրաբարի լեզվաքերականական իրողությունների բացահայտումը նպաստում է ոչ միայն գրաբարի, այլև մեր լեզվի զարգացման տարբեր փուլերի խոր և բազմակողմանի ուսումնասիրությանը: Առավել հետաքրքրական և գիտական հետազոտության անսպառ նյութ ունի գրաբարի բայական համա-

[1] Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն (Նախագրային ժամանակաշրջան), Եր., 1987, Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա-Բ, Եր., 1972-1975, Վ.Առաքելյան, Գրաբարի հոլովումը և խոնարհումը, Եր., 1945, Լ.Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, Լեզվի և ոճի հարցեր, Եր., 1975, Մ.Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. Զ, Եր, 1974 և այլն:

կարգը [7, 252]: Աշխատանքում փորձում ենք նկարագրել 10-րդ դարից ավանդված երկերի խոնարհման առանձնահատկությունները, համեմատական քննությամբ բացահայտել դրանց զարգացման օրինաչափությունները: Աշխատանքը գերազանցապես կատարվել է նկարագրական-վերլուծական մեթոդով, որին զուգահեռ կիրառվել են լեզվական փաստերի համադրման համաժամանակյա և տարժամանակյա եղանակները:

10-րդ դ. պատմագրության մեջ հիմնականում պահպանված են դասական գրաբարի խոնարհման համակարգի առանձնահատկությունները: Արձանագրված փոփոխությունների մեծ մասը լեզվի բնական զարգացման արդյունք են: Այսպես՝

1. *Ի* խոնարհման բայերի անորոշ դերբայում արդեն ընդհանրացած ենք գտնում *-իլ* վերջավորությունը, ինչպես՝ «Իբրև մտին ի խորանն բռնադատէր զնա թագաւորն *բազմիլ* ի թագաւորական գահոյսն» (Մեսր., 100), «.... զի ոչ կարէ *թաքչիլ*՝ որ զանիրաւսն գործեաց» (Մեսր., 100): «Այլ ինձ աստանօր ոչ արդեօք այլ ինչ է բանս սիրելի քան *դեգերիլ* ի բանս գովեստից» (Դրասխ., 140): «.... թէ զի՛արդ նա կարէր *խորհիլ* առ ի փլուզանել զուղիղ հաւատոյ շինուածս» (Դրասխ., 82):

Ի տարբերություն Մեսրոպ Վայոցձորցու և Հովհաննես Դրասխանակերտցու՝ Ուխտանեսը, Թովմա Արծրունին և Անանունը *ի* խոնարհման բայերի անորոշ դերբայը դասական շրջանի հեղինակների նմանողությամբ գործածում են *-ել* վերջավորությամբ, ինչպես՝ «Քանզի սուրբ նահապետացն տասանց բնաւ ոչ երբէք ումեք երևի ասել ի Մէջերկրայս *ունել* բնակութիւն» (Արծր., 30): «.... այլ և ընդհանուր մարդկութեյան *լինել* օրինակ արդարութեյան և ժուժկալութեյան» (Արծր., 26): «.... եւ ամբարձեալ զաչս իւր արածէր զնա և չափէր զկայս նորա ի *նստել* և ի *յառնել*» (Անան., 438): «Անօթ ընտրութեան արժանի իւրոցն *լինել* շնորհաց» (Անան., 420) և այլն: Արծրունու երկում միայն երկու անգամ ենք գտնում *ի* խոնարհման բայերի *-իլ* վերջավորությամբ անորոշ դերբայ՝ «.... թէ և Յոնքն համարին Պտղոմէիւ *պարծիլ*» (Արծր., 18): «Ոչ զարհուրեցաւ

վերադարձիլ արտասուօք ի ջնջումն մեղացն» (Արծր., 24): Ընդ որում, այս երկրորդը *վերադառնալ* բայի բոլորովին նոր տարբերակն է, որը գոյություն ունեցող ձևից տարբերվում է ոչ միայն լծորդությամբ, այլև՝ բայահիմքով. *վերադարձիլ* ձևը Արծրունին կազմել է ոչ թե ներկայի, այլ կատարյալի հիմքից: Անանունը և Ուխտանեսը ոչ մի անգամ *ի* խոնարհման բայերի անորոշ դերբայը *-իլ* վերջավորությամբ չեն գործածում:

2. 10-րդ դ. պատմագրության մեջ *-իլ* վերջավորությամբ ենք գտնում նաև *է* խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորական տարբերակների անորոշ դերբայը, այսպես՝ «Եւ յԱդամայ .... մինչև ի ծնանիլ բանին Աստուծոյ *ի* Կուսէն, և զթլպատելն, և զընծայելն ի տաճարին .... աստուածային մարմնովն *զքարկոծիլն*, և *զմատնիլն*, և *զբևեռիլն* ի խաչին, և զմեռանելն, և *զթաղիլն* ....» (Ուխտ., Ա-95): «Հայցէր ի «Տեառնէ յօգնութիւն զաղօթս Սրբոյն Ներսեսի ի ժամուն յայնմիկ *ապրիլ* ի մեծ պատերազմին» (Մեսր., 90): «Զի Տէր ետ հրաման.... *շարժիլ* ի վերայ երկրի» (Մեսր., 107): «Եւ Հարմայի հրաման տայ յԱրմաւիր *բնակիլ* և միապետել, զտուն հայրենի» (Դրասխ., 20): «....ոչ բնաւին իսկ ընդ նոսա *միաբանիլ* .... ի տուրևառիկ վաճառս ընդ նոսա *բերիլ*» (Դրասխ., 74): «Որ և յառաջ քան *զփոխիլն* ծանոյց զհամաջինջ բարկութիւն» (Արծր., 26), «Եւ փոխանակ սուրբ մկրտութեանն՝ հանապազ *ողողանիլ* ջրով» (Արծր., 164): «....ուր պատրաստեալ են *դատիլ* ըստ գործս իւրեանց» (Անան., 434): «....միշտ փառաց ի փառս *վերածիլ* գնացելում եղբօրն յանվախճանն յայն և յանսպառ յաւիտենին» (Անան., 446):

3. Եթե դասական գրաբարում *է* խոնարհման կրավորական սեռի բայերի անցյալ անկատար ժամանակի եզակի 3-րդ դեմքը հազվադեպ էր հանդես գալիս *-իւր* վերջավորությամբ, ապա 10-րդ դ. այս վերջավորությունը գտնում ենք ընդհանրացած, ինչպես՝ «....եւ *պատրաստիւր* ի պատերազմ ընդ դէմ Շապհոյ» (Մեսր., 87): «....իբրև *ծածկիւր* նշանն Մուշեղայ զօրավարին ի փոշւոյ ամբակացն» (Մեսր., 93): «....որում անուն Պողքէր *կոչիւր*» (Ուխտ., Բ-30): «....վայելչապէս գերակայութեամբ բազում ընծայիւք բարե-

մասնաբար լնոյր և *յուղարկիւր* յիւրական աշխարհս» (Դրասխ., 10): «....ի սադրելոյ սպրդող չար լեզուաց հակամէտ ի չարն *բերիւր*» (Դրասխ., 206): Այս հարցում, սակայն, Դրասխանակերտցին հետևողական չէ. *և* խոնարհման կրավորական սեռի բայերի եզակի 3-րդ դեմքը անցյալ անկատար ժամանակում երբեմն գործածում է *-էր* վերջավորությամբ: Համմտ՝ «....որ ըստ ուժեղականութեան Ցլիկ ի բազմաց *յորջորջէր*» (Դրասխ., 320) և «....եւ ի դերև ելանէր նորայն խոկացեալ դաւաճանութիւն և թիկունս Աշոտոյ դարձուցանէր, որ Շահանշահն *անուանիւր*» (Դրասխ., 316): Այս հարցում ևս Թովմա Արծրունին տարբերվում է մյուս հեղինակներից. նա ոչ մի անգամ *և* խոնարհման բայերի կրավորականը անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքում չի գործածում *-իւր* վերջավորությամբ, այսպես՝ «....որում անուն Աշխէթ *ճանաչէր*» (Արծր., 270): Անանունի պատմության մեջ ևս տարբերակված ենք գտնում *և* խոնարհման բայերի ներգործական և կրավորական սեռերը, ինչպես՝ «....որոյ և իւր իսկ *տօնախմբիւր* յիշատակ յամսեանն սահմի» (Անան., 466): «....իբրև զփեսայ յառագաստէ *ծագիւր* ըստ նմանութեանն արուսեկին» (Անան., 470): «....որոյ անուն *ճանաչիւր* առաջնոյն Սափի» (Անան., 426) և այլն:

4. Առանձին բայերի խոնարհման մեջ հանդիպում են հետևյալ շեղումները: *Լինուլ* բայը Մեսրոպի երկում մեկ անգամ գտնում ենք *լնանել* ձևով՝ «....այլ իբրև *լնանիցին* ժամանակք» (Մեսր., 111): Ուխտանեսը նախ՝ վերլուծական *երկիր պագանել* ձևը գործածել է իբրև համադրական կազմություն, *ապա՝ երկիրպագանել* ձևին զուգահեռ գործածել է նաև *երկրպագել* ածանցազուրկ տարբերակը, այսպես՝ «Քանզի յառաջագույն ուսեալ էին յօրինաց անտի և ի մարգարէից՝ սիրել զՏէր Աստուած՝ և մի՛ *երկիրպագանել* Աստուծոյ օտարի» (Ուխտ., Ա-6), բայց նաև՝ «....որ ոչ՛ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ» (Ուխտ., Ա-54): *Արթնանալ*, *մերձենալ* և *փոքրանալ* բայերի անցյալ դերբայները կազմել է ոչ թե ցոյական, այլ արմատական հիմքից՝ *մերձեալ*, *արթնեալ*, *փոքրեալ*: Այսպես՝ «Եւ կանխաւ առաջնորդեալ զքեզ ինքն յանդաստանս հոգևորս ընդ *արթնեալ* և

ընդ զգուշացեալ մշակս սպասես գալստեան Տեառն» (Ուխտ., Ա-8): «Գիտասցէ՛ք եղբարք, զի ի վերջին ժամանակս եմք, և չար գազանին հրապոյրք *մերձեալ* են» (Ուխտ., Բ-32): «Յայնժամ լի և ընդարձակ մայրաքաղաք մեծ և հռչակաւոր, իսկ այժմ *փոքրեալ* և չափաւորեալ քաղաքագեղ յեզր գետոյն» (Ուխտ., Բ-39): *Մերձեալ* ձևը գտնում ենք նաև Մեսրոպ Վայոցձորցու պատմության մեջ, ինչպես՝ «....և *մերձեալ* է ժամանակ գալոյ նորա» (Մեսր., 122): Թովմա Արծրունին *իշխել* բայի ենթակայական դերբայը կազմել է ոչ թե ներկայի, այլ կատարյալի հիմքից (*ե* և *ի* խոնարհումների պարզ բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքից [2, 160]), ինչպես՝ «Յայնժամ Սմբատ Բագրատունի, զոր վերագոյնն յիշեցաք, Մոկաց *իշխեցող*....հառաչէր յոգի իւր» (Արծր., 216): *Բերել* բայի անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքի *երեր* ձևի փոխարեն Ուխտանեսի երկում հանդիպում ենք *բերեաւ* ձևը, որը կազմված է *ի* բաղադրիչ ունեցող բայերի նմանողությամբ. «Իսկ նա գտեալ զահնամակն *բերեաւ* (առ) Վաղարշակ արքայն Հայոց» (Ուխտ., Ա-40):

Առաջին ապառնին գրաբարում անցյալի ձևեր չուներ: Հետագա դարերում այդ բացը լրացնելու համար գրաբարի որոշ քերականներ արհեստականորեն ստեղծում են անցյալի ձևեր, որոնք տարածում չեն գտնում: Մեսրոպի երկում մեկ անգամ գտնում ենք *եմ* բայի ստորադասական անցյալի վկայություն. «....զի եթէ առ քեզ արարեալ *իցէր*» (Մեսր., 77):

Դրասխանակերտցին *լցուցանել* բայի երկրորդ ապառնին կազմել է ոչ թե անցյալի, այլ ներկայի հիմքից. «....*լցուցանիջիք* սփիւռ ծախիւք զտաճար մեծավայելչութեան Աստուծոյ բարձրելոյ» (Դրասխ., 282):

Թովմա Արծրունին *իշխել* բայի ենթակայական դերբայը կազմել է ոչ թե ներկայի, այլ կատարյալի հիմքից. «Եւ գովութեան ի մեծ արքայէն և ի մեր իշխեցող հրամանակատար թագաւորին հնազանդութենէ» (Արծր., 204):

5. Ուսումնասիրվող հեղինակները տարբերվում են նաև բայական ժամանակաձևերի կիրառությունների յուրահատկություններով:

Մեսրոպ Վայոցձորցու պատմության մեջ հստակ չեն տարբեր ժամանակաձևերի կիրառությունների սահմանները: Ի տարբերություն մյուս հեղինակների՝ Վայոցձորցին ընդհանրապես չի առանձնացնում անցյալ կատարյալը և անցյալ անկատարը: Միևնույն նախադասության մեջ միաժամանակ նույն իմաստով գործածում է երկուսն էլ. «Նաև զօրքն Հայոց՝ որք էին ընդ Սրբոյն Ներսէսի, զի *տեսին* ուր պատարագէր նա, և *լսէին* զձայն երկնաւոր զօրացն» (Մեսր., 62): «Եւ *հրամայէր* ի զերծ տեղիս.... շինել զպանդոկս.... նաև *բաշխեաց* յեղբայրանոցս զգեստս և դաստակերտս» (Մեսր., 65): «Եւ *կատարեցաւ* բանն առն Աստուծոյ Սրբոյն Ներսէսի և ամենեքեան *զարմանային* ընդ արագահաս կործանումն նորա» (Մեսր., 66) և այլն: Մյուս հեղինակների երկերում համեմատաբար հստակ են տարբեր ժամանակաձևերի կիրառությունների սահմանները: Ուխտանեսը մեկ անգամ անցյալ անկատարը գործածել է ներկայի իմաստով. «Բէլ կործանեալ.... փչէ զհոգին: Իսկ ամբոխն Բէլայէ.... փախատեայ *լինէին*» (Ուխտ., Ա-27): Մեսրոպ Վայոցձորցին երբեմն ապառնու իմաստն արտահայտում է անցյալ դերբայի միջոցով, ինչպես՝ «Իսկ ես Արշակ եմ, եթէ երթայցեմ յիմ աշխարհն, ես ոչ միայն *փախուցեալ* զքեզ՝ այլ *բարձեալ* զգլուխ քո՝ և զյիշատակ քո ի տանէն Պարսից» (Մեսր., 85): «....եւ ուրացօղք ի հաւատոցն կոծեսցին անմխիթար սգով .... գետք հրեղէն *յորդեալք*՝ մաքրելով զերկիր յանմաքուր գործոց մարդկան» (Մեսր., 123):

6. Ինչպես դասական շրջանում, այնպես էլ 10-րդ դ. ապառնի ժամանակի իմաստն արտահայտվել է առաջին և երկրորդ ապառնիների, ապառնի դերբայով արտահայտված ապակատար ապառնու, ներկայի, երբեմն նաև մյուս ժամանակաձևերի միջոցով: Սակայն ապառնի ժամանակի հիմնական արտահայտիչները առաջին և երկրորդ ապառնիներն են: Նույնիսկ 5-րդ դարում առաջին ապառնին գործածության հաճախականությամբ զիջում էր երկրորդ ապառնուն, իսկ 10-րդ դ. այդ տարբերությունն ավելի ակներև է: Այսպես՝ Ղուկասի Ավետարանում առաջին ապառնին գործածվել է 229 անգամ, երկրորդ ապառնին՝ 342 անգամ, իսկ 10-րդ դ.

գործածվել են հետևյալ հաճախականությամբ. Մեսրոպ Վայոցձորցու պատմությունը ծավալով ամենափոքրն է, բայց ապառնիների գործածության հաճախականությունը ամենամեծն է: Նա 564 անգամ գործածել է երկրորդ ապառնի, 95 անգամ՝ առաջին ապառնի: Հովհաննես Դրասխանակերտցին առաջին ապառնին գործածել է 51 անգամ, երկրորդ ապառնին՝ 361 անգամ: Ուխտանեսը առաջին ապառնին գործածել է 53 անգամ, երկրորդ ապառնին՝ 403 անգամ: Ակնհայտ է, որ առաջին ապառնու գործածությունը անհամեմատ պակասել է դասական շրջանի համեմատությամբ: 10-րդ դ. հեղինակներից միայն Թովմա Արծրունին և Անանունն են, որ համեմատաբար ավելի հաճախ են գործածել առաջին ապառնի: Այսպես՝ Թովմա Արծրունին առաջին ապառնին գործածել է 254 անգամ, երկրորդ ապառնին՝ 511 անգամ, Անանունը առաջին ապառնին գործածել է 25 անգամ, երկրորդ ապառնին՝ 52 անգամ: Ինչպես դասական գրաբարում, այնպես էլ 10-րդ դ. այս երկու ապառնիների կիրառության ոլորտները չեն սահմանազատվում: Բոլոր կառույցներում, որտեղ կիրառվել է երկրորդ ապառնին, հավասարապես գործածվել է նաև առաջին ապառնին: Այսպես՝ «Եւ յորժամ դարձեալ *պակասիցէ* զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն, և արեգակն ի վայր կոյս զընթացսն *առնիցէ*» (Արծր., 260): «Արդ յորժամ *տացի* նմա թագաւորութեան ժամանակն, նա իւրով ամպարշտութեամբն *արասցէ* նշանս դիւրութեամբ» (Մեսր., 119): Առաջին նախադասության մեջ յորժամ շաղկապից հետո գործածվել է առաջին ապառնի, երկրորդ նախադասության մեջ՝ երկրորդ ապառնի:

Առաջին և երկրորդ ապառնիները հիմնականում գործածվել են ըղձական, ենթադրական և հարկադրական ապառնիների իմաստով: Այսպես՝ Մեսրոպ Վայոցձորցու գործածած 95 առաջին ապառնիներից 35-ը գործածվել են ըղձական, 7-ը՝ ենթադրական, 47-ը հարկադրական ապառնիների իմաստով: 564 երկրորդ ապառնիներից 142-ը կիրառվել են ըղձական, 44-ը՝ ենթադրական, 378-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Հովհաննես

Դրասխանակերտցին առաջին ապառնի գործածել է 51 անգամ, որից 41-ը գործածել է ըղձական, 6-ը՝ ենթադրական, 1-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: 361 երկրորդ ապառնիներից 255-ը գործածվել է ըղձական, 75-ը՝ ենթադրական, 26-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Ուխտանեսը առաջին ապառնին գործածել է 53 անգամ: Դրանցից 30-ը գործածվել է ըղձական, 11-ը՝ ենթադրական, 6-ը՝ հարկադրական: Երկրորդ ապառնին գործածել է 403 անգամ, որից 230-ը ըղձական, 52-ը՝ ենթադրական, 90-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Թովմա Արծրունին առաջին ապառնին կիրառել է 254 անգամ: Դրանցից 126-ը կիրառել է ըղձական, 62-ը՝ ենթադրական, 24-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Երկրորդ ապառնին կիրառել է 511 անգամ, որից 247-ը կիրառել է ըղձական, 167-ը՝ ենթադրական, 95-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Անանունի պատմության մեջ առաջին ապառնին հանդես է եկել 25 անգամ, որից 8-ը ըղձական, 4-ը՝ ենթադրական, 7-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Երկրորդ ապառնին հանդես է եկել 52 անգամ, որից 31-ը կիրառվել է ըղձական, 11-ը՝ ենթադրական, 8-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով:

Բացի ըղձական, ենթադրական և հարկադրական ապառնիների իմաստներից՝ առաջին ապառնին հաճախ հանդես է եկել ներկայի իմաստով: Այսպես՝ Մեսրոպ Վայոցձորցին ներկայի իմաստով գործածել է 6 առաջին ապառնիով արտահայտված բայ, Հովհաննես Դրասխանակերտցին՝ 3 բայ, Ուխտանեսը՝ 5 բայ, Թովմա Արծրունին՝ 40 բայ, Անանունը՝ 12 բայ: Անանունը առաջին ապառնին ավելի հաճախ ներկայի իմաստով է գործածել, քան ապառնու: Ներկա ժամանակի փոխարեն առաջին ապառնին ավելի հաճախ հանդես է եկել՝

1. հետևյալ ստորադասական շաղկապով կապակցված բարդ ստորադասական կառույցների երկրորդական նախադասություններում.

1.1. *թէ, թէ*, ինչպես՝ «Եւ ասէ ցնա Աբգար, եթէ դո՞ւ *իցես*

աշակերտ օրհնելոյն Յիսուսի» (Ուխտ., Ա-48): «Իսկ գիտացեալ՝ եթէ վասն բարեխօսութեան *գայցէ* պատանեկին Գնելոյ, զի մի՛ սպանցեն զնա» (Մեսր., 69): «....որպէսզի ոչ ոք ի նոցանէն երևեալ լինէր՝ թէ որ տիկինն *իցէ* և ո՛ր նաժիշտն» (Դրասխ., 242): «Իսկ եթէ Բէլ հրամանատու Արամազդայ *իցէ*» (Արծր., 32): «Եւ եթէ մաքուր յօդոյ *լինիցի*՝ զամենեցուն այս գրաւէ զիւրն տեսանել ծաւալումն» (Անան., 452):

1.2. *Որ* շաղկապից հետո, ինչպես՝ «.... որ ի բնաւին արդարադատութիւն բնաւորեալ՝ և ողորմութեան ընդ նմին *լինիցի* լծակից» (Արծր., 24), «Յետ այսր առեալ Սմբատայ զԱրտաշէս ըստ ձևոյ տառապելոյ միոյ, որ *շրջեցի խնդրիցէ* օր ըստ օրէ զբաւականութիւն աւուրն՝ երթալ տուայտի ի դրան Մարաց Դարեհի» (Արծր., 84): «Եւ ո՛չ օգտի նմա, և այլ ոչինչ. որպէս օձի՝ որ զականջն *խցիցէ*, զի մի լուիցէ նա զձայն թովչի ճարտարի» (Մեսր., 70):

1.3. *Թէպէտ, թէև,* ինչպես՝ «Արդ՝ թէպէտ և իցէ անօրէնութիւն յաշխարհիս յասմիկ, դու կարօղ ես խրատել յիւրաքանչիւր տեղիս» (Մեսր., 94): «Չիւանդացեալքն, ասէ՝ ի մարդկանէ թէև ի մահ *աշխատիցին*, սակայն առողջութեանն թասով թեթևանան» (Դրասխ., 344): «Որ թէպէտ և մերս պատմութեանց *իցեն* բանք՝ սակայն թագաւորն ոչ վրիպի ի խնդրեալ պարգևացն» (Անան., 462):

1.4. *Զի*, օրինակ՝ «Միանգամայն և միահեղոյն որոշել զՊարս և զՄարս ի Բաբելացւոց, զի ուսմամբ և անուամբ մի ևս *ասիցի* ունել հաղորդութիւն ընդ Ասորեստանեայս» (Արծր., 46): «Զի աներևոյթքն աստուածայինք յարարածոց աստի, ասէ, իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն և զօրութիւն և աստուածութիւն նորա, զի ոչ *գտանիցին* ամենևին տալ պատասխանի» (Արծր., 54):

1.5. *Յորժամ,* ինչպես՝ «Եւ յորժամ դարձեալ *պակասիցէ* զօրութիւն ջերմ օդոյ հարաւային հողմոյն, և արեգակն ի

վայր կոյս զընթացսն *առնիցէ*, և ձմեռնային եղանակն առ դուրս հասեալ *կայցէ*, և հիւսիսային օդն շնչեալ *սաստկացուցանէ* զզօրութիւն ցրտոյն, և հասեալ ի վերայ ծառոց ի բարձրաբերձ գագաթունս տերևաթափ *առնիցէ*» (Արծր., 262):

2. Անկախ գործածվող կամ կազմությամբ պարզ հարցական նախադասություններում, օրինակ՝ «Միթէ զծով իբրև զցամա՞ք *համարիցիք*» (Արծր., 144): «Բայց և զի՞նչ իսկ *խնդրիցէ* թագաւորն ձեր յինէն» (Արծր., 144): «Թէ զիա՞րդ *կորուսանիցէ* զարդարն ընդ ամբարշտին» (Դրասխ., 168):

3. Համադասական նախադասություններում, ինչպես՝ «…. և կամ որչափ թիւք աղեղնաւորացն են, և կամ քանի՛ պարագլուխք *իցեն* զօրուն, և կամ քանի՛ սաղարք միայնամարտիկք ախոյեանք *իցեն*, և կամ քանի ըմբշամարտիկք, և կամ թէ քանի՛ գունդասաղարք *իցեն*, և քանի՛ սաղարք սուրհանդակաց *իցեն*» (Արծր., 198): «Եւ արդ մեր բաղձալի սիրով բուռն հարեալ զգեղեցիկ պատմութեանց՝ զբազմօք զանց արարաք զրուցատրութեամբք, մանաւանդ որ անհուն շարաբանութեամբք *իցեն* լի» (Անան., 454)[2]:

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, հաճախ նախադասություններում բայերից մեկն արտահայտված է առաջին ապառնիով, մյուսը՝ ներկա ժամանակով, և երկուսն էլ արտահայտում են նույն ժամանակային իմաստը: Նկատելի է, որ առավել հաճախ ներկայի իմաստով հանդես են եկել *եմ* բայի ապառնի ժամանակաձևերը:

Ոչ միայն առաջին ապառնին է հանդես եկել ներկա ժամանակի իմաստով, այլև շատ հաճախ ներկան է գործածվել առաջին ապառնու փոխարեն: Այսպես՝ Ուխտանեսը 41 անգամ ներկայի բայաձևով արտահայտել է ապառնու իմաստ, Հովհաննես Դրասխանակերտցին՝ 8 անգամ, Մեսրոպ Վայոցձորցին՝ 122 անգամ, Թովմա Արծրունին՝ 7 անգամ, Անանունը՝ 2 անգամ: Ներկան ապառնու իմաստով գործածել են ինչպես համադասական, այն-

[2] *Իցէ* բայը ներկայի իմաստով դեռևս 5-րդ դարում էր գործածվում: Տե՛ս, օրինակ, Ե.Կողբացի, Եղծ աղանդոց Ե., 1970:

պես էլ նախաստորադասական նախադասություններում՝ *եթէ, որպէսզի, զի, թէ, յորժամ, որ* շաղկապներից հետո: Օրինակ՝ «…. որպէսզի ըստ Տեառն բանին՝ *տեսանեն* զգործս ձեր բարիս» (Ուխտ., Ա-10): «…. զի կա մօտ առ սահմանօքդ, այդ վիշապ մի չար և մեծ յոյժ, և վնաս *առնէ* քեզ և երիվարիդ» (Ուխտ., Ա-66): «Արդ՝ երանելիք են, որք յայնմ ժամանակի *նահատակին*, և *առնուն* զհաղթութեան պսակն ի Քրիստոսէ» (Մեսր.,121): «Բայց եթէ ի դէպ լինիցի և ի հայրապետութիւն կոչել յորդորիք և դուք՝ *չկինի* խոստովանութիւն մեղացն» (Դրասխ., 156): «Զի՞նչ օգուտ յայնմանէ որդւոց բերցի՝ եթէ ի նաւաբեկութեան *կորնչին* (Դրասխ., 364): «Իսկ ասելն՝ ամենայն որ *սպանանէ* զԿայէն՝ եօթն վրէժս լուծցէ» (Արծր., 22): «…. գուցէ կատարիցեն չարիս ի վերայ քո, և *կորզեն* յընքեանս զթագաւորութիւն Նինուէի» (Արծր., 82): «…. և եթէ աղբիւր ակնավճիտ տեսանիցէ՝ «Խնդրէմք ի քէն թագաւոր թագաւորաց, և Տէր Տերանց, յորժամ *գաս*՝ և *երևիս* մեծութեամբ քով և գունդք հրեշտակաց, և զօրութիւնք առաջի քո առնու ընթանան *գաս* հիացմամբ մեծաւ, և ձայնիւ փողոյ *զարթուցանես* զննջեցեալսն. *բժշկես* զվիրաւորեալսն: *Գաս* բոցով, և *դատես* անշէջ հրով, *ծագիս* ի վերուստ յարևելից կողմանէ…. յայտնեալ երևիս յերկրի, և հատուցանես յիւրաքանչիւր՝ ըստ գործոց իւրոց» (Մեսր., 128):

Շատ հաճախ միևնույն կիրառությամբ պատմիչները զուգահեռաբար գործածել են ներկայի և առաջին ապառնու, ներկայի և երկրորդ ապառնու բայաձևերը: Սա նշանակում է, որ ոչ միայն հստակ չէին տարբերվում ներկան և առաջին ապառնին, այլ նաև՝ ներկան և երկրորդ ապառնին: Այսպես՝ «Առցեն քրիստոնեայքն զսահմանսն զայնոսիկ. լցցի երկիր իրաւամբք և ամենայն գործովք բարեաց որպէս զծով՝ որ ծածկէ զջուրս բազումս, *զօրանան* Հռոմայացիք զբազում ժամանակս» (Մեսր., 121): Իր հերթին՝ երկրորդ ապառնին էլ երբեմն հանդես է գալիս ներկայի իմաստով, ինչպես՝ «Մինչ ցայս վայր՝ ասէին, զօրավարաց մերոց հանդիսացաք հաճոյանալ ի կեանս կենցաղօգուտս. իսկ այժմ զբարւոք զինաւորս վշտակիցք *լիցուք* Քրիստոսի և հաւատացեալ ժողովրդեան նորա»

(Դրասխ., 342): «Ասէ, ընդէ՞ր ոչ ինձ *բացցի* դուռնդ» (Դրասխ., 318): «Եւ ես աւասիկ *արձակեցից* թագաւորին ձերում պատարագս և հրեշտակս հրովարտակօք» (Արծր., 144): «Եւ եթէ վասն չարութեան գործոց նոցա տաղտկացաւ Աստուած և ետ ի ձեռս ձեր՝ բաւական *լիցի* ձեզ այդչափ որչափ կալէքդ» (Արծր., 160): «Եթէ *շարժեսցի* ծով յուզեալ ի հողմոց՝ ծաղկաձև ալիքն զբօսացուցանողք և վայելուչք երեւին» (Անան., 412): «Եւ հրամանաւ վերին կառավարութեանն մաքրեալ զօդոցն դաժանութիւն՝ զուտ զլուսոյն յերկիր *ծաւալեսցէ* ճառագայթս» (Անան., 430):

Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, գրաբարյան ներկան հաճախ է հանդես գալիս իբրև ապառնի, իսկ ապառնին՝ իբրև ներկա, որը և հիմք է հանդիսանում հետագայում ներկայի և ապառնու նոր ձևերի առաջացման համար:

Թե՛ դասական շրջանում, թե՛ 10-րդ դ. ապառնի ժամանակի իմաստն արտահայտվել է ոչ միայն պարզ, այլ նաև բաղադրյալ ժամանակաձևով՝ կազմված ապառնի դերբայով և օժանդակ բայով: Այս ժամանակաձևը 10-րդ դ. պատմիչները շատ քիչ են կիրառել: Այսպես՝ Անանունը այն 3 անգամ է գործածել, Թովմա Արծրունին գործածել է 20 անգամ, Հովհաննես Դրասխանակերտցին՝ 13 անգամ, Մեսրոպ Վայոցձորցին՝ 10 անգամ, Ուխտանեսը՝ 12 անգամ:

Ապակատար ապառնին երկրորդական կիրառությամբ հանդես չի եկել: Բերենք մի քանի օրինակ. «Պատմեցից ձեզ վասն նեղութեան, դառն և չար ժամանակին, որ *գալոց է*» (Մեսր., 104): «Վասն զի և ոչ իսկ պիտոյ է այժմու ճառիս, այլ՝ այլում տեղւոյ և ժամանակի *թողլի է*» (Դրասխ., 12): «Եւ գիտելով զնա թէ այսպիսի *լինելոց է* ետ նմա հոգի զօրութեան և իմաստութեան» (Անան., 420): «Խոտան և ի բաց *ընկնելի է* և օտար ի սրբոյ առաքելական եկեղեցւոյ» (Արծր., 258): «Քանզի տակաւին ևս տեսանեմք զգուշութիւն նուիրական առաքելոց, եթէ հերձուածք *լինելոց են* ի ձեզ» (Ուխտ., Բ-27):

Ամփոփելով՝ նշենք, որ ապառնիության գաղափարի արտահայտման այս բոլոր միջոցները հատուկ են եղել նաև դասական

գրաբարին: Պարզապես եթե 5-րդ դարում գործածության հաճախականությամբ երկրորդ ապառնին համարյա կրկնակի էր գերազանցում առաջին ապառնուն, ապա արդեն 10-րդ դ. առաջին ապառնու գործածությունը կրճատվել էր մոտ տասն անգամ:

Լեզվի հետագա զարգացման ընթացքում նախ գործածությունից դուրս է գալիս առաջին, ապա՝ երկրորդ ապառնին [7, 313]:

Օգտագործված աղբյուրների և նրանց համառոտագրությունների ցանկ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
2. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976:
3. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ 1-2, Ե., 1972-1975:
4. Անանուն, Պատմութիւն Անանուան, Ե., 1985 – Անան.:
5. Առաքելյան Վ., Գրաբարի հոլովումը և խոնարհումը, Ե., 1945:
6. Թովմա Արծրունի, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ե., 1985 – Արծր.:
7. Հովհաննիսյան Լ., Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցերե, հ. 3, Ե., 1975:
8. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց, Ե., 1996 – Դրասխ.:
9. Մեսրոպ Վայոցձորցի, Պատմութիւն Հայոց, Մադրաս, 1775 – Մեսր.:
10. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Ե., 1987:
11. Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871 – Ուխտ:

Развитие системы спряжения в грабаре в литературе X века

Гукасян Шогик

Резюме

Ключевые слова: *грамматические времена, настоящее время, прошедшее время, будущее время 1, будущее время 2, сложное будущее время, действительный залог, пассивный залог, отклонения спряжения*

В неопределенном причастии глаголов спряжения «h» присутствует обобщенное окончание «-իլ». Обобщенное окончание «-իլ» также обнаруживается в неопределенном причастии пассивных глаголов спряжения «ե». Если в классическом грабаре единственное число, третье лицо несовершенного времени пассивных глаголов спряжения «ե» редко имеют окончание «–իւր», это окончание встречается в обобщенной форме в историографии 10-го века. Отклонения обнаруживаются в спряжении отдельных глаголов (լնուլ, երկիրպագանել, արթնանալ, մերձենալ, փոքրանալ и т. д.). Исследуемые авторы различаются особенностями применения времен глаголов. В грабаре настоящее время часто используется в качестве будущего времени и наоборот, что привело к появлению новых форм настоящего и прошедшего времени. По сравнению с классическим грабаром использование будущего времени 1 было сокращено примерно в десять раз. В дальнейшем развитии языка будущее времия 1, а позже и будущее время 2 вышли из употребления.

Development of Declension in Grabar in the 10th Century Literature

Ghukasyan Shoghik

Summary

Key words: *grammatical tenses, present, past, future 1, future 2, future composite, active voice, passive voice, declension deviations*

In the indefinite participle of verbs of *"ի"* declension, we can find the generalized ending *"-իլ"*. The generalized ending "-իլ" is similarly found in the indefinite participle of passive voice verbs of "է" declension. If the third person singular form of the imperfect tense of *"է"* declension passive verbs rarely had the ending "*–իւր"* in Classical Grabar, this ending is found in a generalized form in the 10th century historiography. Deviations are found in the declension of individual verbs (լնուլ, երկիրպագանել, արթնանալ, մերձենալ, փոքրանալ, etc.). The authors studied were characterized by differences in the application of verbal tenses. In Grabar, the present tense is often used to convey future and vise versa, which led to the emergence of new forms of present and past tenses. Compared to Classical Grabar, the use of future 1 has been reduced about ten times. In the further development of the language, future 1 and, later, future 2 came out of use.

Ներկայացվել է 30.09.2019 թ.
Գրախոսվել է 21.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

LITERARY STUDIES

Գովազդի և գովազդային գործունեության քննադատությունը «Մշակ» լրագրում (1893-1918 թթ.)

Դանիելյան Տարոն

Հանգուցային բառեր. *Կովկաս, Թիֆլիս, պարբերական մամուլ, հայտարարություն*

19-րդ դարավերջին 20-րդ դարասկզբին Ռուսական կայսրության տարածքում գովազդային գործունեությանը վերաբերող հրապարակումները և քննարկումները ստանում են պարբերական բնույթ. թերթերում և ամսագրերում հաճախ են լույս տեսնում ոլորտին վերաբերող տեղեկատվական նորություններ և վերլուծական հոդվածներ, հրատարակվում են գրքեր, որոնց մի մասը ընթերցողին ներկայացնում է գովազդի պատմությունը և զարգացման առանձնահատկությունները տարբեր երկրներում, մյուս մասը դառնում է խորհրդատվական ուղեցույց ոլորտի մասնագետների համար, երրորդ մասն էլ ընթերցողին է ներկայացնում գովազդի և գովազդային գործունեության ազդեցության հնարավորությունները, վտանգները, բացահայտում այն կեղծիքները, որոնք միտումնավոր կատարվում են սպառողներին մոլորեցնելու համար, և առանձնահատուկ շեշտում է գովազդային գործունեության բացասական ներգործությունը պարբերական մամուլի համակարգի վրա:

Այս իրողություններն արտացոլվում են նաև հայ պարբերական մամուլի էջերում: Առաջատար դիրքեր զբաղեցնող «Մշակ» պարբերականը, որի հրատարակումը վերսկսվեց 1893թ., նույնպես արձագանքում էր տարածաշրջանում գովազդային գործունեության անցուդարձին:

Ի տարբերություն արծրունյան շրջանի, երբ գովազդային գործունեությանը վերաբերող հոդվածներ նկատելիորեն քիչ էին լույս տեսնում՝ մրցակից «Նոր-Դար» և «Արձագանք» պարբերականների համեմատ[1], «Մշակ»-ն սկսեց ավելի հաճախ անդրադառնալ

[1] Այս մասին մանրամասն տե՛ս Դանիելյան Տ., Գովազդային գործունեության քննադատությունը «Արձագանք» պարբերականում: ՎՊՀ

լրագրային աշխարհում տեղի ունեցող առևտրայնացման գործընթացներին, գովազդային գործունեության կարևորությանը և հնարավոր վտանգներին:

Գովազդային դաշտը վերլուծող հեղինակներն արձանագրում էին, որ Եվրոպայում ամենահարուստ լրագրերը ոչ թե շատ բաժանորդ ունեցող կամ հատավաճառով սպառվող պարբերականներն են, այլ այն հրատարակությունները, որոնք ունեն մեծ թվով հայտարարություններ և գովազդներ, որոնք ոչ թե շռայլություն են դիտարկվում, այլ իրականում անհրաժեշտություն են: Իսկ Կովկասում անհատ ձեռնարկատերերը և մասնավոր անձինք նախապատվությունը տալիս են բանավոր հաղորդակցմանը՝ որպես տեղեկատվության փոխանցման ձևի, և ոչ լրագրին կամ ամսագրին (եթե նույնիսկ տպագրում էին, ապա նախընտրում էին ռուսալեզու պարբերականները): Օրինակ, եթե ընտանիքը որոնում է աղախին, խոհարար, «յայտարարութիւն չեն տպում, այլ դիմում են որ և իցէ մի մամիդային[2] և ասում են, որ գնայ իր ծանօթների կամ հարևանների մոտ և յարմար մարդ գտնի» [1]:

Մասնավոր հայտարարությունների բաժնում այս առումով բացառություն էին մահազդերը. միջանձնային հաղորդակցության միջոցով մահվան մասին տեղեկատվության փոխանցումը անհարմար էր տեղեկատվության դանդաղ տարածման և «լրաբերների» բարձր վարձատրության պատճառով, իսկ «մեծ հուղարկավորութիւն միշտ ցանկալի էր» [1]:

Նույն խնդիրն արդիական էր մնում նաև 20-րդ դարի 10-ական թվականներին, երբ նույն լրագրում խոստովանում են, որ հայ թերթը զրկված է միակ նշանավոր աղբյուրից՝ հայտարարություններից, «որով պահպանվում, ծաղկում, բարգաւաճում են բոլոր

գիտական տեղեկագիր, պրակ Ա, Երևան, 2017, էջ 84-92 և Դանիելյան Տ., Գովազդի և գովազդային գործունեության քննադատությունը «Նոր-Դար» պարբերականում: «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» V միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2018, էջ 207-216:

[2] Մամիդա – Վրաց. *მამიდა*՝ հորաքույր:

երկիրներում լրագիրները» [11], քանի որ հայ թերթին հայտարարություն չեն տալիս, և դա այն դեպքում, երբ Թիֆլիսի և Բաքվի ռուսերեն պարբերականները լի են թանկ հայտարարություններով՝ «հայկական բանկային, առևտրական, արդիւնաբերական հաստատութիւնների մասին, իսկ հայ լրագիրը չունի այդ յայտարարութիւնները, որովհետև հայ հարուստը, հայ առևտրականները հարիւրներ, հազարներ ծախսելով յայտարարութիւնների վրա, խնայում են մի քանի րուբլի ևս տալ հայ լրագրում նոյն յայտարարութիւնը տպելու» [3]:

Այս գործոնով էլ պայմանավորված՝ հայ պարբերական մամուլը դժվար է զարգանում, և վարձատրության բացակայության պատճառով երևան չեն գալիս արհեստավարժ գրողներ և աշխատակիցներ: Մշակականների եզրակացությունը խնդրի վերաբերյալ հոռետեսական է. «Հայաբնակ Կովկասի մայրաքաղաքը կարծես մի անապատ է հայութեան համար և չէ կարող ապահովել ոչ հայ լրագիր, ոչ հայ գրող: Շատ հայ և այնքան քիչ հայութիւն» [14]:

«Մշակ»-ի աշխատակիցները տարօրինակ են համարում նաև հայկական բարեգործական ընկերությունների մոտեցումը հայկական լրագրերի նկատմամբ: Դրանք իրենց հայտարարությունները ցանկանում են տպագրել անվճար կամ էլ ամենամեծ՝ մինչև 75 տոկոս զեղչով: Ընդ որում, երբեմն հայտարարության փոխարեն գրում են նամակ խմբագրությանը՝ որպես լուր հայտնելով իրենց կատարելիք միջոցառումների և գործունեության մասին:

Խնդրի կապակցությամբ Հ. Առաքելյանը հետաքրքիր դիտարկում է կատարում. հայկական բարեգործական, մշակութային, դպրոցական հիմնարկությունները, երբ կազմակերպում են զբոսանք, երեկույթ, ներկայացում, վիճակախաղ, մեծ գումարներ են ծախսում բուֆետի, ծաղիկների, զարդարանքի և այլ պարագաների վրա, սակայն դժվարանում և խուսափում են 5-20 ռուբլի վճարել հայտարարության տպագրության համար: Հեղինակը արձանագրում է՝ «քաղցրաւենիների, կարկանդակների, ծաղկեփունջների վրա հարիւրները ծախսվում են շռայլաբար, բայց երբ խնդիրը հասնում է հայ լրագրին, ժլատութեան և խնայողութեան ամենամեծ ճիգեր են թափվում» [4]:

Ի դեպ, հենց այս հանգամանքներն են ազդել հայ պարբերական մամուլի գործիչների այն համոզմունքի վրա, որ խրախուսանքի արժանի է վաճառականի կողմից թերթին դրամական օգնություն ցուցաբերելը: Պատահական չէ, որ լրագրի նամակագիրներից Գ. Ենգիբարյանը՝ «Մշակ»-ի 40-ամյակի կապակցությամբ կազմակերպված դրամահավաքի վերաբերյալ հնչեցված քննադատությանը փոխադարձում էր, որ մրցակից պարբերականները նույնպես չեն հրաժարվում տարբեր մարդկանց ֆինանսական օգնությունից, չնայած շատ հաճախ թաքցնում են այդ փաստը. «Որևէ յօբելեանի կամ գրագէտի համար փող ժողովելը ես մուրացկանութիւն չեմ համարում, որովհետև մեր ժողովրդի մտաւոր զարգացման աստիճանը այնքան ցածր է, որ մեր դառն իրականութեան պայմաններն են ստեղծել այս միջոցները» [5]:

«Մշակ»-ի էջերում դիպուկ վերլուծականներ են հանդիպում գովազդային հաղորդագրությունների տեքստային վերլուծությունների վերաբերյալ: Հոդվածագիրներից Ա. Նազարեթյանը նկատում է, որ նախկինում լրագրային հայտարարությունները հիմնականում «չոր ու ցամաք ծանուցումներ» էին առևտրային գործարքների մասին, սակայն արդեն 20-րդ դարասկզբին գովազդը գրական ստեղծագործությունների հավաքածու է՝ ստեղծված արձակի և չափածոյի կանոններով, ներկայացված իբր գիտականորեն մշակված դասախոսություններով, զարդարված պատկերներով ու խորհրդավոր շրջանակներով: Ըստ հեղինակի՝ այդ ամենի նպատակն է, ինչպես և նախկինում, ունենալ մեծ թվով սպառողներ ու գնորդներ: Եվ վերջիններիս որսալու տենչն է կուրացնում առևտրականներին, արդյունաբերողներին, բժիշկներին, իրավաբաններին, մանկավարժներին, հրատարակչական ընկերություններին, որոնցից շատերը ոչ մի միջոց չեն խնայում, ոչ մի բանի առաջ չեն կանգնում ու «ամեն տեսակ հնարներ են գործ դնում, ջանք թափում, որպէսզի որևէ կերպ հրապուրեն լրագրի ընթերցողին և շահագործեն նրա հաւատն ու միամտութիւնը» [12]:

Գովազդային գործունեության վերլուծաբանն առանձնացնում է ընթերցողների երեք խումբ. առաջին խումբը, խաբվելով գովազդային հաղորդագրությունից, այլևս երբեք չի հավատում գովազ-

դային տեղեկատվությանը և չի գնում գովազդվող ապրանքը: Երկրորդ՝ գովազդամոլների խումբը բաց չի թողնում ոչ մի գովազդ, շարունակ փոստով պատվերներ է տալիս, ստանում է բազմաթիվ ծրարներ ու փաթեթներ և նույնիսկ խաբվելուց հետո չի ընդհատում այդ զբաղմունքը, որը «դարձել է մի տեսակ ախտ կամ սպօրտ» [13]: Երրորդ խմբի ընթերցողները խաբվելու դեպքում սկսում են մեղադրել խմբագրություններին սուտ տեղեկատվություն տարածելու համար: Սակայն հոդվածի հեղինակը նշում է, որ ոչ մի խմբագրություն հնարավորություն չունի ճշտելու «հայտարարութեան բովանդակութիւնը, ըստ էութեան կատարելու խուզարկուի, էկսպերտի և կամ հասարակ գնահատողի դեր» [13]:

Միևնույն ժամանակ «Մշակ»-ն անընդունելի է համարում այն հրատարակությունների գործելաոճը, որոնք չնայած քննադատում են ինչ-որ ապրանքի կամ ծառայության տեսակ, սակայն տպագրում են քննադատվող օբյեկտի գովազդը: Այսպես, «Լրագրական բարոյախոսներին» հոդվածում ներկայացնելով Բաքվի երեք թերթերի քննադատությունը քաղաքում բացված «Բուֆֆ» անունով այգու վերաբերյալ՝ միևնույն ժամանակ շեշտում է, որ քննադատող թերթերը նաև առաջին էջում խոշոր տառերով տպագրում են իրենց իսկ պարբերականում քննադատած այգու գովազդը: «Մշակ»-ը հորդորում է չվերցնել այն փողը, որ ստացվում է մարդկանց ապականող այգու գովազդի դիմաց. «Եթե անառականոցը չի համարձակվի դիմել լրագրի օգնութեան՝ իր զզուելի գոյութիւնը րէկլամ անելու համար, այնպէս արէք, որ մի և նոյն կերպով չը համարձակվի դիմել ձեզ ոսկէզօծած, դիմակաւորած անառականոցը» [7]:

Իհարկե, հոդվածի հեղինակը գիտակցում է, որ հայտարարության և լրագրային նյութի միջև բովանդակային տարբերությունները մեծ են. հայտարարությունը առևտուր է, տնտեսական գործ, իսկ լրագրի բովանդակությունը՝ դրոշակ, սրբություն, պաշտամունք: Ըստ հոդվածագրի՝ գրականության և գաղափարական գործի մեջ անհամաձայնությունը և շահամոլության ներխուժումը անընդունելի են, քանի որ դրամի միջոցով անբարոյականությունը «այրող ու գրգռող խոստումներով յաղթանակում է լրագրի ճակա-

տին, իսկ երրորդ կամ չորրորդ երեսում, մանր տառերով բարոյախօսներից մէկը արտասունք կը թափէ այդ իսկ յաղթանակող անբարոյականութեան վրա» [7]:

Նկատելով, որ շահը խեղդող է և կլանող, հոդվածագիրը կարծում է, որ լրագրերի բարոյախոսները դրանով ծիծաղելի են դառնում: Նույն հոդվածում հեղինակը ևս մեկ ուշագրավ դրվագ է ներկայացնում՝ կապված Վ. Վելիչկոյին վերագրվող «Վիշապօձ» վեպի հետ[3], որն ուղղված էր հայերի դեմ, և որի հայտարարությունը տպագրել էին կովկասյան բազմաթիվ թերթեր: Ըստ «Մշակ»-ի՝ տպագրեցին, «այսինքն նպաստեցին այդ կեղտոտութեան տարածման: Շահ է, ի՞նչ արած: Շահը հայր ու մայր չէ ճանաչում: Коммерція» [7]:

«Մշակ»-ի խմբագրությունը բավականին հաճախ քննադատության էր ենթարկում այն պարբերականներին, որոնք գովազդային տարբեր հնարքների միջոցով փորձում էին նոր բաժանորդներ գրավել: Ընդ որում հարցը դիտարկվում էր ոչ միայն տեղական շուկայի մակարդակով, այլև ռուսաստանյան, իսկ երբեմն էլ՝ միջազգային փորձի օրինակներով: Այսպես, ներկայացնելով ռուսական «Практическая жизнь» շաբաթաթերթի հոդվածը, որտեղ քննադատվում է Վոլֆի հրատարակչական ընկերության և «Живописное обозрение» պատկերազարդ հրատարակության խմբագրության շրջաբերականները, որոնցով հիմնարկություններին առաջարկ-

[3] Վասիլի Վելիչկոն (1860-1904 թթ.) ռուս բանաստեղծ, հրապարակախոս և հասարակական գործիչ է: Ռուսական կայսրությունում հայատյաց քաղաքականության ջատագովն էր: 1897-1899 թթ. եղել է Թիֆլիսում հրատարակվող ռուսական «Кавказ» թերթի խմբագիրը: 1903 թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակվում է ոմն Գեորգի Բորցովի «Վիշապօձեր» երկմասանի վեպը՝ Վ. Վելիչկոյի առաջաբանով: Նա հայերին համեմատում է վիշապօձերի հետ, որոնց պատճառով Կովկասը մատնված է անհաջողությունների (Վեպի մասին տեղեկատվությունը վերցրել ենք Л. С., Библиография, «Сибирская жизнь», Томск, 30. 05. 1903): Իր ազգայնական և ռասիստական ծայրահեղական մոտեցումների համար Վ. Վելիչկոն քննադատվել է ինչպես հայ, այնպես էլ ռուս առաջադեմ մտավորականների կողմից:

վում էր աջակցել «Новь» և «Задушевное слово» ամսագրերի բաժանորդագրությանը, դրա դիմաց խոստանալով ամեն մի նոր գտած բաժանորդի համար վճարել գտնողին 50-60 կոպեկ, մեջբերում է այն միտքը, որ «այսպիսի յայտարարութիւնները անբարոյականացնող ազդեցութիւն են անում հասարակութեան և նոյն իսկ մամուլի վրա» [8]:

Ըստ մշակականների՝ հայոց մամուլը նույնպես զերծ չէ անբարոյականացնող ազդեցությունից. «հայ խմբագիրը իր թերթը զօռով ուղարկում է և այնպիսի մարդկանց, որոնք բաժանորդ գրվել չեն ուզում» [8]: Խմբագրության կարծիքով՝ ռուսաց մամուլի գովազդային գործիչները դեռ այնքան մեծ չարիք չեն, քանի որ «րէկլամներով խաբող ռուսերէն հրատարակութիւնները չեն համարձակվում պատասխանել իրանց պատիւը հասկացող օրգանների մերկացումներին և յարձակումներին, մինչդեռ մեզ մօտ րէկլամների հերոսները անամօթ յանդգնութեամբ դեռ իրանց ինչ որ բարերարներ, ինչ որ գաղափարական գործիչներ են հրատարակում» [8]:

«Մշակ»-ի աշխատակիցները նկատում են, որ գովազդային հնարքներն օգտագործվում են ոչ միայն տարբեր ընկերությունների և կազմակերպությունների կողմից, այլ նաև անհատների. «յուրաքանչիւր գործիչ որ փոքր ի շատէ ընդունակութիւն է ցոյց տուել որ և է ճիւղի մէջ սաստիկ ատում է այդ «համեստութիւն» բառը և արդէն դափնիներ, արձաններ է պահանջում իր համար» [9]: Օրինակ, ըստ մշակականների, նմանապես են վարվում նաև բազմաթիվ արվեստագետներ, որոնք իրենց փառասիրությունը բավարարելու համար դիմում են գովազդային զանազան միջոցների: Այս երևույթն ազդում է գրականության որակի և զարգացման մակարդակի վրա, քանի որ չկա արդար և անկողմնակալ քննադատություն, իսկ դրա փոխարեն «թագաւորում է կամ անամօթութեան հասնող րէկլամ կամ անզուսպ հայհոյանք» [10]:

Սակայն լրագրի աշխատակիցները հասկանում էին, որ պարբերական մամուլի շուկայական օրենքները շրջանցել հնարավոր չէ, և ցավով արձանագրում էին, որ առևտրայնացումը խարխլում է մամուլի հիմքերը, և ինքնագովությունը հասնում է զագաթնա-

կետին, դրանով իսկ «միջակութիւններին հասցնում է համարեա հանճարների աստիճանին» [10]:

Գովազդին առնչվող նմանօրինակ հարցերը քննելիս ընդգծվում է այն միտքը, որ գովազդային հաղորդակցության արդյունավետության համար անհրաժեշտ է հաշվի առնել ազգային մտածելակերպի և արժեհամակարգի առանձնահատկությունները: Ու առաջ է քաշվում այն թեզը, որ «ամերիկական րեկլամն ու ասիական իրականութիւնը իրարից բաւական տարբեր են եղել <…> Ամերիկեան րեկլամը Ասիայում դժբաղդութիւն է, երբ քաղաքակրթված ձևերը երեսանց իւրացնում են տգէտ ասիացիները» [2]:

«Մշակ»-ի խմբագրակազմը, ինչպես և ժամանակի բազմաթիվ պարբերականներ, մերժում էին առևտրային օրենքների գոյությունը պարբերական մամուլի համակարգում՝ նշելով, որ շատ դեպքերում առևտրային օրենքները մոլորեցնում են հանրությանը, ինչպես, օրինակ, ապրանքների կեղծումը, ապրանքի դեֆիցիտի ստեղծումն ու թանկ վաճառքը և գովազդներով մոլորեցումը: Շեշտվում էր նաև այն հանգամանքը, որ մրցակցությանը դիմակայելու համար վաճառականները հաճախ ստիպված են լինում գովազդել իրենց ապրանքը, զանազան կենտրոններում գործակալներ վարձել, շքեղացնել վաճառատունը և այլն: Սակայն այդ ծախսերը թանկացնում են ապրանքը, իսկ արդյունքում «տուժում է սպառող հասարակութիւնը» [6]:

«Մշակ»-ն ընթերցողին պարզաբանում էր, որ, այսպես կոչված, «մեծ մամուլը» առավել հավատարմորեն է ծառայում շուկային. «նա «պատւաւոր և դիրքաւոր» պարոնների ինքնասիրութիւնն է շոյում, որ «յարմար» դեպքում խոսում ու ճառում է, իսկ «անյարմար» դեպքում լռում ու պապանձվում…» [16]: Այս ձևակերպումը արձագանքն է 19-20-րդ դարերի սահմանագծին ձևավորված առօրեական մշակույթին, որն արդյունաբերական և տեխնոլոգիական միջոցների զարգացման հետևանքով առաջ էր քաշել ապրելակերպի նոր փիլիսոփայություն և բուրժուազիայի մեծ հատվածի համար դարձել էր սկզբունք, այն է՝ «կոմֆորտ և անհատական վայելքներ» [15]:

Ընդունելով հանդերձ, որ բազմաքանակ հայտարարություններ

ստանալու համար անհրաժեշտ է հրատարակչական գործում ներդնել «առևտրային երակ», մշակականները շեշտում են, որ դա չի ազդելու գաղափարական հիմքի վրա: Եվ հատկապես այս առումով հարցի քննողները դրականորեն արձանագրում են, որ հայ պարբերականները, անկախ իրենց քաղաքական դավանանքից, տուրք չեն տվել առևտրային մեթոդներին և հայ լրագրերի մեջ «չեն զետեղվել պօրնօգրաֆիական և այլ անբարոյական ու կասկածելի իմաստ և բովանդակութիւն ունեցող յայտարարութիւններ: Այդ կողմից հայ մամուլը անհամեմատ աւելի բարձր է եղել կանգնած և է, քան ուրիշ ազգերի մամուլը» [4]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ «Մշակ» լրագրում պարբերաբար քննարկման առարկա է եղել գովազդային գործունեության ոլորտը, վերլուծվել են գովազդի և պարբերական մամուլի դրական և բացասական փոխառնչությունները, մեկնաբանվել են առևտրայնացման հետևանքով պարբերական մամուլի համակարգում տեղի ունեցող իրողությունները: Մշտապես ընդգծվել է այն բացասական հանգամանքը, որ հայ ձեռնարկատերերը և մասնավոր անձինք իրենց հայտարարությունները և գովազդները տպագրել են մեծ մասամբ ռուսալեզու պարբերականներում, որի արդյունքում Կովկասում նյութապես ապահովված են եղել հենց վերջիններս, նույն հանգամանքով էլ պայմանավորված՝ բացատրվում էր հայ լրագրության և գրականության բնագավառում արհեստավարժ գրողների սակավությունը: Հայ «ստեղծագործական արդյունաբերությունը» զարգացել է հիմնականում նվիրատվությունների և բարեգործությունների շնորհիվ: Մշակականները առանձնահատուկ ուշադրություն են դարձրել գովազդի տպագրման և տարածման էթիկական խնդիրներին: Ընդունելով, որ գովազդային բաժինը պարբերականի գաղափարական ուղղվածության հետ որևէ առնչություն չունի և ընդհանրություններ չի էլ ունենալու, այդուհանդերձ մշակականները քննադատում էին այն խմբագրությունների գործունեությունը, որոնք լրացուցիչ դրամ վաստակելու նկրտումով տպագրում էին հանրությանը մոլորեցնող, վնասակար ապրանքների կամ ծառայությունների մասին գովազդներ:

Գրականություն

1. X, Նամակ Գերմանիայից, «Մշակ», Թիֆլիս, 1898, №28:
2. Ամերիկական րեկլամը Ասիայում, «Մշակ», Թիֆլիս, 1904, №50:
3. Առաքելեան Հ., Հայ գրականութիւնը և հայ ժողովուրդը, «Մշակ», Թիֆլիս, 1910, №222:
4. Առաքելեան Հ., Հայ լրագրի մարտիրոսագրութիւնը, «Մշակ», Թիֆլիս, 1914, №71:
5. Ենգիբարեան Գ., «Հորիզօն»-ի չարակամութիւնը և սուտը, «Մշակ», 1912, №114:
6. Թոփչեան Ե.,Սպառող ընկերութիւններ, «Մշակ», Թիֆլիս, 1903, №35:
7. Լ., Լրագրական բարոյախոսներին, «Մշակ», Թիֆլիս, 1903, №127:
8. Մամուլ, «Մշակ», Թիֆլիս, 1899, №19:
9. Մամուլ, «Մշակ», Թիֆլիս, 1899, №86:
10. Մամուլ, «Մշակ», Թիֆլիս, 1899, №184:
11. Մշակը և հայ ժողովուրդը, «Մշակ», Թիֆլիս, 1912, №91:
12. Նազարեթեան Ա., Լրագրական հայտարարութիւնների առթիւ, «Մշակ», Թիֆլիս, 1911, №169:
13. Նազարեթեան Ա., Լրագրական հայտարարութիւնների առթիւ, «Մշակ», Թիֆլիս, 1911, №170:
14. Չալխուշեան Գր., Մեծամիտ Թիֆլիսի անհամ վեճերը, «Մշակ», 1913, №113:
15. Սարգսեան Լ., Զարմանալի չէ, «Մշակ», Թիֆլիս, 1901, №68:
16. Սուրխաթեան, «Փոքր» և «մեծ» մամուլ, «Մշակ», Թիֆլիս, 1911, №34:

Критика рекламы и рекламной деятельности в газете «Мшак» (1893-1918 гг.)

Даниелян Тарон

Резюме

Ключевые слова: *Кавказ, Тифлис, периодическая печать, объявление*

Публикации и обсуждения рекламной деятельности в конце 19 – начале 20 вв. на территории Российской империи встречались довольно часто. На страницах периодической печати и в специальной литературе реклама и рекламная деятельность подвергались всестороннему анализу. В газете «Мшак», издававшейся в Тифлисе, также широко обсуждается сфера рекламной деятельности, анализируются позитивные и негативные взаимоотношения между рекламой и периодической печатью, комментируются последствия коммерциализации системы периодической печати. Постоянно подчеркивалось то негативное обстоятельство, что армянские предприниматели и частные лица свои объявления и рекламу публиковали, как правило, в русскоязычных изданиях, в результате чего последние были наиболее материально обеспеченными на Кавказе; тем же обстоятельством объясняется тот факт, что в области армянской журналистики и литературы было мало профессиональных писателей. Армянская «творческая индустрия» развивалась, в основном, благодаря пожертвованиям и благотворительности. Сотрудники «Мшака» особое внимание уделяли этическим проблемам публикации и распространения рекламы. Признавая, что отдел рекламы не имеет и не будет иметь никакого отношения к идеологической направленности издания, сотрудники «Мшака», тем не менее, осуждали деятельность тех редакций, которые в целях наживы публиковали рекламу, вводящую в заблуждение общественность и пропагандирующую вредные товары или услуги.

The Criticism of Advertising and Advertising Activity in the Newspaper "Mshak" (1893 – 1918)

Danielyan Taron

Summary

Key words: *Caucasus, Tiflis; periodicals, announcement*

In late 19th and early 20th century publications and discussions referring to advertising and advertising activity become frequent on the territory of Russian Empire. In the pages of the periodical press and in professional books advertising and advertising activity become subject to comprehensive analysis. The field of advertising activity has been subject for discussion in the newspaper "Mshak" published in Tiflis: here the positive and negative interrelations between periodical press and advertising were analyzed and the realities taking place in periodicals due to commercialization were also commented on. The negative fact of the Armenian entrepreneurs and individuals mostly publishing their announcements and advertisements in Russian-language periodicals as a result of which the latters were financially secured in Caucasus was particularly highlighted: this very fact explained also the scarcity of professional writers in the field of Armenian journalism and literature. The Armenian "creative industry" has developed mainly due to donations and charities. The staff of "Mshak" has paid special attention to the ethical issues of publishing and spreading the advertisement. By admitting that the advertising section has nothing to do with the ideological orientation of the journal, does not have any similarities and can have none, however, the staff of "Mshak" criticized the activities of those editors who for the purpose of earning extra money were advertising for the public misleading and harmful products or services.

Ներկայացվել է 21.06.2019 թ.
Գրախոսվել է 02.07.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Մուշեղ Իշխանը արձակագիր և դրամատուրգ

Համբարձումյան Նաիրա

Հանգուցային բառեր՝ *գեղագիտություն, պոետիկա, մեկնություն, թեմատիկա, էթնոս, հուշագրություն, վեպ, թատերգություն, դրամատուրգիա*

XX դարասկիզբը բնորոշվեց հայ գրական և գիտական մտքի վերելքով, նոր ու թարմ մտածողությամբ: Հայագիր գրականությունը Լիբանանում սկսեց զարգանալ 1920-ական թվականներին, և լիբանանահայ գաղութում իրենց տեղը գտան փորձ ու կշիռ ունեցող գրական գործիչներ: Լիբանանահայ գրողների առաջին սերնդի գեղագիտությունն ամփոփում էր տարագրության, կորուսյալ հայրենիքի, կարոտի, նոր ձևավորվող սփյուռքի, նաև՝ սփյուռք-հայրենիք կապերն ու խնդիրները: Այս համատեքստում՝ լիբանանահայ գրականությունը ստեղծագործական վերելք ապրեց, և գրական բարձրարժեք երկեր ստեղծեցին Մուշեղ Իշխանը, Անդրանիկ Ծառուկյանը, Էդուարդ Բոյաջյանը, Արմեն Դարյանը, Վեհանույշ Թեքյանը, Զարեհ Մելքոնյանը, Հայկ Նագգաշյանը, Սիմոն Սիմոնյանը, Վահե Վահյանը, Էդուարդ Տարոնյանը, Սմբատ Փանոսյանը, Վահե Օշականը՝ ապրեցնելով հայոց ոգին ու լեզուն, լուծելով ազգապահպանության մի շարք խնդիրներ: Լիբանանահայ գաղութի ձևավորմանն ու զարգացմանը նպաստեց հատկապես Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը: Ազգապահպան առաքելության ու քաղաքականության խնդրում մեծ էր նաև Լիբանանում տպագրվող պարբերականների ու թերթերի դերակատարումը՝ «Հայկազեան հայագիտական հանդէս», «Զարթօնք», «Անի», «Արարատ», «Ազդակ», «Բագին», «Յառաջ», «Կանչ», «Նաիրի», «Շիրակ» ևն, թեպետ լիբանանահայ գաղութը հայ քաղաքական կյանքի ներքին դրսևորումներով տարանջատ էր (ՀՅԴ, ՀՌԱԿ, Սոցիալ-դեմոկրատ, Հնչակյան, Համայնավար): Տիրապետողը, սակայն, համազգային շահն էր: Հարուստ ավանդներ ունեցող կյանքը թեև դժվարությամբ, սակայն շարունակվում էր, և ստեղծագործողների հին սերնդին միացան նորերը՝ Անդրանիկ Ծառուկյան, Շահանդուխտ, Վարդան Զորենց, Հայկ Նագգաշյան, Զարեհ Մելքոնյան, Արմեն Դարյան, ովքեր հե-

տաքրքրված էին ոչ միայն Լիբանանով, այլև՝ արաբական աշխարհը հուզող խնդիրներով, միջազգային հնչեղության հարցերով ու թեմաներով: Այս ենթատեքստում՝ տարաշխարհիկ էր նաև հայ գրականությունը, քանի որ տարագրված հայ գրողը մշակութային օջախներ էր ստեղծում օտար երկինքների ներքո: Թեմատիկայի՝ կարոտի, ազատասիրական գաղափարների, հոգևորի ու հերոսականության դրսևորումները հավասարապես բնորոշում էին ինչպես նախորդ, այնպես էլ այս սերնդի ներկայացուցիչներին: Սույնից բխում է, թե հայ գրականության գերխնդիրը էթնոսի պահպանման ու ցեղափրկության խնդիրն է դարերով, հետևաբար՝ XX դարասկզբի իրողությունների ու անցյալ դարերի գրականությունների ներտիրույթներում անմիջական ու էական տարբերություններ չեն արձանագրվում: Սյս համատեքստում՝ Մուշեղ Իշխանը՝ գրողը, ամփոփում է սփյուռքահայ գրականության տարեգրությունը՝ ամբողջացնելով լիբանանահայ գաղութի գոյության գեղարվեստական ընթացքը: 1951 թվականին լույս են տեսնում նրա «Հացի եւ լոյսի համար» (գրվել է 1948-1950), 1956-ին՝ «Հացի եւ սիրոյ համար» վեպերը, 1974-ին՝ «Մնաս բարո՛վ, մանկութիւն» իր բնութագրումով՝ հուշագրական վեպը, 1977 թվականին՝ «Սպասում» ընդհանուր խորագրով վիպակը, որը ներառում է «Սպասում սիրո» (1956), «Սպասում բախտի» (1951) և «Սպասում փառքի» (թվականը նշված չէ) խորագրերով գործերը: Առանձին գրքերով տպագրվում են նաև «Արդի հայ գրականութիւն» (1973-1975) եռահատոր դասագիրքը, «Իշխանիկն ու Մեխակը» (հեքիաթ), «Մուշեղ Մամիկոնեան» (1951) մանկական-պատանեկան երկը ևն: Սփյուռքահայ վիպագրության մեջ Իշխանը բացահայտում է նոր հատկանիշներ՝ իր երկերում խորացնելով հատկապես պատկերների հոգեբանական վերլուծությունը: Նա կարևորում է ոչ թե կերպարների արտաքին նկարագրությունն ու վիպական գործողությունները, այլ՝ հերոսի ներքին հոգեկան ապրումները: Իշխանի գրականությունը իրապաշտական շեշտեր ունի: Կյանքի թաքուն տառապանքներն ու ըմբոստացումները գրողը վերլուծում է հոգեբանական ներթափանցումներով՝ պատկերելով զգայական ու գաղտնագրված խուսափուկ վիճակներ: Արվեստի ու գրականության նրա ճաշակը զարգացած

է: Նուրբ խառնվածքի տեր է Մուշեղ Իշխանը: Իր վեպերում ու թատերգություններում Իշխանը կերտել է կենդանի կերպարներ, որոնք իրականի ու բնականի տպավորությամբ անմիջապես գրավում են ընթերցողի ուշադրությունը: Իշխանի երկերից շատերը ինքնակենսագրական բնույթ ունեն: Ու թեև դրանք զուգորդվում են միմյանց, սակայն հոգեբանության, զգայականության ու աշխարհայեցողականության տեսանկյուններից ներքին միասնականության տիրույթում են՝ տարածության ու ժամանակի (այստեղ՝ ապրածի), ներքին հոսքով ձգվող երազի ու տեսիլքի միջակայքերում: Այսպես՝ «Հացի եւ լոյսի համար»[1] վեպի գլխավոր հերոսի՝ Սեդրակի, հոգեկան, բարոյական ու ֆիզիկական նկարագիրը այդպես էլ չի ամբողջանում, քանի որ նրա՝ հոգեկանից արտածվող կյանքը «անցյալը վերապրելու» խոհն է, իսկ լավագույն «պատմությունը» կամ «վեպը»՝ անձնական կյանքը: Մանկության ու պատանեկության հուշերը Սեդրակը պահում է հոգում, ապրում դրանցով՝ «իմ հասակի տղոց ոչ ճարպիկութիւնը ունիմ, ոչ ալ կրակն ու բոցը: Նազի՞կ ծնած եմ, թէ նազիկ մեծցած՝ դժուար է որոշել: Մէկ տարեկան գրկի երեխայ՝ ելած ենք աքսոր: Այսուհետեւ յայտնի են պայմանները. ամբողջ եղեռնը՝ իր հայաջինջ սարսափներով: Մօրս կաթը կը քաշուի. դեղ ու սնունդ անգտանելի կը դառնան: Չոր գետիններու պաղը մարմնիս եւ հոգիիս մէջ կը թափանցէ: …Հոգեպէս աւելի կը տառապիմ, քան թէ ֆիզիքապէս: Ամէն խաղի մէջ ետ կը մնամ ընկերներէս: Պարտադիր զգուշաւորութիւն մը կը կաշկանդէ շարժումներս» կամ՝ «Հալածանք, փախուստ, ցաւ ու մահ բաւարար չեն՝ կեանքին վրայ նոր բացուող զոյգ մը աչքերէն խլելու ստեղծագործութեան հրաշալիքները»: Այսուհանդերձ՝ «Մեսքեն, Գաթմա, Տէր Զօր… դժոխային անուններ /են/, որոնք փուչ-փուչ կ՛ընեն մարմինս: Բաց աչքերով կը տեսնիմ կարծես դէպի մահ գացող հայ կարաւաններու ճամբան: Կը տեսնիմ վիշապանման Եփրատ գետը, որուն ջուրերը կարմրած են մորթուած հայերու արեամբ եւ որուն ալիքներուն մէջ հայ կոյսեր

[1] Իշխան Մուշեղ, Հացի եւ լոյսի համար, Պէյրութ, Վահէ Սէթեան, 2007, 243 էջ:

կը խեղդուին»[2]: Նույն շնչով Իշխանը կերտում է նաև մեկ այլ հերոսի՝ Վահանի կերպարը, ով տեսել է արյուն ու աքսոր, մահ ու սարսափ, ողբ ու կոծ: Սա է հոգու և զգայության, մտքի ու իմացականության խորքը, որով նա հաճախ հեռանում է իրականությունից՝ հաղորդվելով մեծ խորհրդի անպատմելի ոլորտներին: Իշխանը հոգեկան բարդ աշխարհից ներս թափանցելու տաղանդ ունի: Իշխանի հերոսներն օժտված են զգացմունքների առատությամբ ու զորությամբ: Նրանց հոգեկան ներքին անտեսանելի ու նուրբ տեղաշարժերը Իշխանը պատկերում է՝ արտաքին գործողությունների պակասը փոխարինելով հոգեկան ներքին հույզերով: Հոգեբանական բախումներն ու վիճակները գրողը նկարագրում է հանդարտ վերլուծումով, մանրամասնություններով և խորքով: Գլխավոր և լուսանցքային կերպարների ներանձնական տառապանքները Իշխանը սերտորեն զուգադրում է իրական կյանքին՝ հաճախ նաև դուրս թողնելով նրանց ընդհանուր գործողություններից: Ներքին ապրումի տիրույթում նրա կերպարները հանդուգն գաղափարներ որդեգրած գործող ու պայքարող հոգիներ են, քանի որ Մուշեղ Իշխանի համար դատապարտելի են տնտեսական, կրոնական ու բարոյական կեղծիքները, որոնք հանդուրժում են մարդիկ տարբեր պատճառներով: «Հացի եւ լոյսի Համար» վեպի կերպարների շարքում տեսանելի է նաև Զարուհին, ով ըստ Սեդրակի՝ «Աննման աղջիկ է…: …Քրոջ պէս կը սիրէի զինք… անոր ունեցած սիրտը ոչ մեկը ունէր… դո՛ւն ըսէ, իր արժէքով, իրեն նման մէկը կա՞յ դպրոցին մէջ»[3]: Ուշագրավ է նաև Սեդրակի մոր կերպարը՝ «պճեղ մը անոյշ սիրտ», ով տառապանքի ու վշտի ճանապարհներին մնացել է ՄԱՅՐ: «Հացի եւ լոյսի համար» վեպում քողարկված ձևն ու հոգեբանական իրարամերժ տրամադրությունները ամբողջացնում են նաև Իշխանի ազգային գաղափարախոսական ու ազատական հայացքները: Դրանց միջոցով էլ երևութանում են հեղինակի գեղարվեստական հղումները, վեպի հոգեբանական խորքն ու գեղարվեստականությունը: Վեպն ամփոփում է ըմբոս-

[2] Նույն տեղում, էջ 15:

[3] Նույնը, էջ 32:

տացումի զգացողությունը, որը ծնվում է հայրենիքը կորցրած հեղինակի (այստեղ՝ տարագիր հայի) վշտից ու ապրումներից, վրիժառության ոգուց ու հերոսական խոյանքներից, ձգտումից և աշխարհն ավելի լուսավոր ու բարի դարձնելու նրա փորձերից, առանց որոնց չկա ազատագրում, չկա ապագա: «Հացի եւ լոյսի համար» երկի գաղափարական շարունակությունն է «Հացի եւ սիրոյ համար»[4] վեպը, որը գլխավոր հերոսի՝ Սեդրակի առավել հասուն կյանքի մասնաբաժինն է, երբ Սեդրակը, «պոյաճիությամբ» օրվա հացի փող աշխատելու հանգամանքը փոխարինում է ուսման և ազգափրկության կարևոր գաղափարներով՝ «ազգը շատ բան կը սպասե ձեզմէ, ազգը պետք ունի կրթական նուիրեալ մշակներու: Ես վստահ եմ, որ մեյ մեկ լուսատու ջահեր պիտի ըլլաք ձեր ժողովուրդին մէջ…»[5]: Սեդրակը վերադառնում է իր իսկությանը, իր կոչումին, իր ճակատագրին՝ «Ազգը կը սպասեր իրեն եւ ինք ազնիւ դեր մը ունէր կատարելիք… »[6]: Երկու երկերն էլ Մուշեղ Իշխան գրողի, ազգասերի, մտավորականի ապրածի ու վաստակածի, նրա մեծ նվիրումի, առողջ մտքի ու գաղափարների արտահայտությունն են: Իշխանի արձակը հագեցած է վիպական շնչով ու զգացումներով, հարուստ է պատկերներով ու բառապաշարով, ինչպես հուշագրական երկու գրքերում՝ «Երեք մեծ հայեր» (1952) և «Իմ ուսուցիչներս» (1984), որոնց միջոցով Իշխանը բնութագրում ու կերպավորում է նշանավոր մտավորականներին (Հակոբ Օշական, Նիկողայոս Ադոնց, Նիկոլ Աղբալյան, Լևոն Շանթ, Սիմոն Վրացյան, Կոստան Զարյան, Վահան Թեքեյան), քան թե հուշեր պատմում: Իշխանի՝ «Արդի հայ գրականություն» խորագրով (Հտ. Ա «Զարթօնքի շրջան» (1850-1885, (1973), Հտ. Բ «Իրապաշտ շրջան» (1885-1900, (1974)), Հտ. Գ «Գեղապաշտ շրջան» (1900-1915, (1975)) եռահատոր դասագիրքը տպագրվում է Լիբանանի թեմի ուսումնական

[4] Իշխան Մուշեղ, Հացի եւ սիրոյ համար, Պէյրութ, Համազգային, 1956, 258 էջ:

[5] Իշխան Մուշեղ, Հացի եւ սիրոյ համար, Պէյրութ, Համազգային, 1956, էջ 9-10:

[6] Նույն տեղում, էջ 10:

խորհրդի և համազգային մշակութային ու կրթական ընկերակցության հովանավորությամբ: Դրանք ընդգրկում են գրողի բանագիտական-բանասիրական ժառանգությունը՝ ուսումնասիրություններ, գրախոսություններ: Եռահատոր այդ դասագրքի «Գրական հատկանիշներ» խորագրի ներքո, Իշխանը ներկայացնում է գրողների ու նրանց ստեղծագործությունների համառոտ բնութագրությունները: Իշխանի գրիչը բեղուն է նաև հրապարակախոսության մեջ: Սփյուռքի տարբեր գաղթօջախների թերթերում Իշխանը տպագրել է հոդվածներ, բանաստեղծություններ, թատերգություններ, հրապարակախոսություններ:

Թատերախաղերը

1960-ական թվականներից հետո սփյուռքում թատերգության ժանրում տպագրվում են՝ Խորեն Այվազյանի «Ավարայրի դյուցազնամարտը» (1968), Միքայել Թավրիզյանի «Գաճաճ մեսիաները» (1974), Հակոբ Թորոսյանի «Թատերգություններ» եռհատորյակը (1966-1971), Անդրանիկ Վրդ. Կոանյանի «Նուարդը» (1965), «Եվ միայն լույսով կայ հայոց փրկությունը» (1977), Զարեհ Մելքոնյանի «Սիրոյ ցանցին մէջը» (1962), «Անգոյ հետքերը» (1963), Հակոբ Նորունիի «Երջանկության ճամբան» (1966), Էդուարդ Չափրաստի «Մեծն Տիգրանը» (1962), Մովսես Պչագճյանի «Անկարելի կարելին» (1973), Գեորգ Սազճյան «Բժշկապետը» (1969), «Դատավճիռը» (1968), «Դերձակի վկայականը» (1969), «Ինքնազարգացում» (1968), «Հավատքի ճամբան» (1966), Անուշավան Սիմոնյանի «Շփոթահար քառյակը» (1978), Սարգիս Վահագնի «Նահիյան մորմոքը» (1982) ևն: Սակայն լիբանանահայ թատրոնի և գրականության պատմության մեջ արդիապաշտ առաջին թատերախաղը Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքա՛ն դժվար է»[7] երկն է, որը գրվում և տպագրվում է 1971 թվականին: Իշխանի թատերախաղերից երկուսը՝ «Մեռնիլը որքա՛ն դժվար է» և «Կիլիկիո արքան»[8], բեմադրվում և հաջողու-

[7] Իշխան Մուշեղ, Երկեր //Մեռնիլը որքա՛ն դժվար է, Եր., Նաիրի, 1990, էջ 406-473:

[8] Իշխան Մուշեղ, Թատերախաղեր //Կիլիկիո արքան, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1980, 262 էջ:

թյուն են գտնում Բեյրութում (Համազգային «Զավարյան» թատրոն), Լոս-Անջելեսում, Թեհրանում: Այնուհետև՝ «Մեռնիլը…», ինչպես նաև Իշխանի այլ գործեր՝ «Կիլիկիո արքան» («Նորք» երիտասարդական թատրոն, 1989), «Սառնարանէն ելած մարդը» (1979)[9], բեմադրվում են հայրենիքում (1992), նախ՝ Պատանի հանդիսատեսի՝ բեմադրիչ Տիգրան Գրիգորյանի և գրողի քրոջ՝ Հուշիկ Ճենտերեճյանի նախաձեռնությամբ, այնուհետև՝ Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոններում՝ Խորեն Աբրահամյանի նախաձեռնությամբ: Մուշեղ Իշխանի թատերգությունները կառուցման սկզբունքներով և հոգեմտավոր որակներով նոր են: Դրանցում արծարծվում են ազգային-պատմական, բարոյաբանական, սոցիալ-հոգեբանական արդիականություն և կարևորություն ունեցող հարցեր: Այս համատեքստում՝ սփյուռքի հոգեբանությանը առավել բնորոշ է «Կիլիկիո արքան» թատերգությունը: Մուշեղ Իշխանի դրամատուրգիական բոլոր գործերը գրվել են 1970-ական թվականներին: 1979 թվականին առանձին գրքով լույս է տեսնում նրա «Սառնարանեն ելած մարդը» թատերգությունը: Իր վեց թատերախաղերը՝ «Կիլիկիո արքան» (1975), «Մարդորսը» (Չարխուտյանի «Կյանքի մի գինը» պատմվածքի հիմքով), «Ժամադրություն» (1976), «Փոստալ» (1975, Գրիգոր Զոհրապի համանուն պատմվածքի հիմքով) «Պարույր Հայկազն և Մովսես Խորենացի» (1978), «Յուցափեղկին աղջիկը» (1980) գրողը տպագրում է 1980 թվականին՝ մեկ հատորով[10]: Թեպետ՝ Իշխանի «Մեռնիլը որքա՛ն դժվար է» պիեսը կյանքի ու մահվան փիլիսոփայական միջակայքերում գիտական ու գերերևակայական մեծ փորձ է, և գրողը հղում է հատկապես իրականության այդ սահմանում՝ «մնացողներուն վիշտը հաճախ ավելի մեծ է, քան մեկնողներուն»[11], այնուամենայնիվ, նա մինչև վերջ չի թափանցում կյանքի ու մահվան տիրույթները, չի պատաս-

[9] Իշխան Մուշեղ, Սառնարանէն ելած մարդը, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1979, 64 էջ:

[10] Իշխան Մուշեղ, Թատերախաղեր, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1980, 262 էջ:

[11] Իշխան Մուշեղ, Երկեր //Մեռնիլը որքա՛ն դժվար է, Եր., Նաիրի, 1990, էջ 423:

խանում «ասդինը» ու «անդինը» (բառերը հեղինակինն են) ընդգրկող, ընդհանրացնող կարևորագույն հարցերի: Պիեսում ողբերգականի ու կատակերգականի սահմանները Իշխանը ընդգծում է արվեստով: Հերոսը՝ Ջեյմս Արամյանը մնում է «անկայան ու թափառական՝ անծանոթ ուղիներու վրա… // Ճ. ԱՐԱՄՅԱՆ.– Դուրսը մութ է, հոգիս կը վախնա, դուրսը ցուրտ է, հոգիս կը մսի: // ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔ.– Եթե հավատք ունենաս՝ հոգիդ խավարեն չի վախնար և ցուրտեն չի մրսիր»[12]: Ընթերցողը տեղափոխվում է «ասդինի» աշխարհ, ուր հայ ժողովրդի ճակատագիրն է, նրա ցավն ու տառապանքը, պայքարը, հաղթանակներն ու պարտությունները: Այս համատեքստում գրողը լուծում է նաև հայոց պատմության՝ հեռավոր անցյալից արդիականություն ձգվող ժամանակի խնդիրը: Գրոտեսկային է Սամի և Ջեյմս Արամյանի հանդիպումը դրախտի դռների մոտ՝ «ՍԱՄ.– Քեզի բան մը ըսեմ, դիմե սուրբերու բարեխոսության: Սուրբ չե՞ս ճանչնար: // ԱՐԱՄՅԱՆ.– Կը ճանչնամ. Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ, Սուրբ Վարդան… // ՍԱՄ.– Ատոնք շատ հայտնի չեն, ես չեմ լսած… Ավելի՛, ավելի՛ զորավոր, սանկ՝ միջազգային համբավի տեր սուրբեր չե՞ս գիտեր: // ԱՐԱՄՅԱՆ.– Սուրբ Ստեփանոս, Սուրբ Անտոնիոս, Սուրբ Օգոստինոս… // ՍԱՄ.– Մի՛ ամչնար, դիմե բոլորին ալ: Ամեն տեղ նույնն է. կռնակ պետք է ունենալ»[13]: Կյանքի ու մահվան, հավիտենության ու հավերժության միջև մարդու էության, մարդ-ֆենոմենի մեծագույն որոնում է «Մեռնիլը որքա՛ն դժվար է» պիեսը, որում արծարծվող հարցերը այդպես էլ մնում են առկախ: Մուշեղ Իշխանի հերոսները ապրելու ուժ են աղերսում, սակայն չեն գտնում, երկնքի ու երկրի միջև դառնալով թափառական՝ «Երկնքի Թագավորության քաղաքացի» են ուզում դառնալ, քանի որ գերին են իրենց ճակատագրի, անազատ են ու անխաղաղ՝ հոգով՝ «Ճ. ԱՐԱՄՅԱՆ.– Կը փափաքիմ Երկնքի Թագավորության քաղաքացի դառնալ// ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔ.– Այս դռնեն ներս մտնելու հիմնական պայմանը մեռած ըլլալն է: Բայց դուն դեռ մահվան համ-

[12] Նույն տեղում, էջ 431:

[13] Նույնը, էջ 450:

բույրը չունես ճակտիդ: Դուն ողջ մեռել կ՝երևիս: // Ճ. ԱՐԱՄՅԱՆ.– Ես իսկապես կենդանի մեռել մըն եմ: Վարը անկողնիս մեջ ապրածս կյանք չէ, ոչ իսկ շան կյանք (Պետրոս Առաքյալը հոնքերը կը պռստե դժգոհ): Ավելի մեռյալ եմ, քան կենդանի»[14]: Ուշագրավ են թատերախաղում առկա ուղղահայաց շեշտադրումները ու հաղորդագրությունները, որոնք ուղղվում են ընթերցողի ենթագիտակցությանը՝ «Ամբողջ Ամերիկան հայու ուղեղով պետք է պատվաստես, որպեսզի ամեն մարդ սկսի քեզի պես մտածել»[15]: Երկրում իր անձնական ողբերգությունն է ապրում նաև հայի փոխպատվաստված ուղեղով Ջոն Հելլերը, ով դարձել է անճանաչելի նույնիսկ սիրած աղջկա համար, քանի որ խոսում է հայերի ցեղասպանությունից, հիշում իր՝ գաղթական ընտանիքի զավակ լինելու, կարևորագույն փաստը: Իշխանին անհանգստացնող անլուծելի նման տագնապները փոխանցվում են նաև նրա հերոսներին (այստեղ՝ Ջոն Հելլերին)՝ «ՀԵԼԼՐ.– Աշխարհիս տագնապները չեն լուծվի, եթե փոքր ազգերու դատին լուծում չգտնվի… Գիտե՞ս ի՞նչ կը նշանակե ցեղասպանություն: Ամբողջ ժողովուրդ մը կոտորել ծրագրված ձևով և գազանային վայրագությամբ, բռնագրավել անոր հողերը, թաղել անոր դատը, արյունով խեղդել անոր ձայնը…»[16], ապա՝ ընթերցողին: Նա՝ Ջոն Հելլերը՝ հայի փոխպատվաստված ուղեղով այլազգին, լավ գիտի՝ ի՛նչ է հայոց ցեղասպանությունը: Ընդհանրապես, յուրաքանչյուր թատերագրի համար կարևոր են թատերական ժամանակը, տարածությունը ու լեզուն: Հում նյութը պիես դարձնելիս, անհրաժեշտ է, որ թատերագիրը տեսնի կերպարը, ժամանակը, բեմական տարածությունը ու զգա լեզուն: Այս առումով՝ թեպետ Իշխանը հեռու է հայերենի անսպառ գանձարանը գործածելուց, սակայն գաղափարաբանական հարցադրումները լուծում և հասցնում է ընթերցողին: Նրա պիեսների լեզուն պարզ է, ամենաբարդ հոգեվիճակներն ու հոգեբանական իրադրու-

[14] Իշխան Մուշեղ, Երկեր //«Մեռնիլը որքա՛ն դժվար է, Եր., Նաիրի, 1990, էջ 408:

[15] Նույնը, էջ 463:

[16] Նույնը, էջ 462:

թյունները դրանցում մատուցվում են ամենապարզ հայերեն բառապաշարով: Տարածության ու ժամանակի փոխհարաբերության տիրույթում առաջնությունը տրվում է ոչ թե տարածությանը, այլ՝ ժամանակին: Այսպես՝ անցյալի ու ապագայի միջակայքում ընթացող գործողություն է «Սառնարանէն ելած մարդը»[17] (գրվել է 1973 թվականի հուլիսի 23-ին, Բեյրութում) պիեսը՝ երևակայական կյանքով, երևակայական գործողություններով ապրող «ապագայապաշտներու ակումբի» այցելուները: Պիեսի գլխավոր հերոսը Թոմ Սմիթն է՝ ծնունդով անցյալ դարից, կյանքով՝ արդի ժամանակներում: Ըստ Իշխանի՝ «Անցյալէն մեզի եկած բացառիկ նմոյշ մը, որ թռչող դարերը իրարու կը կամարէ»[18]: Թոմը դեգերում է ճշմարտության, ներկայի ու սեփական էության որոնումների միջև: Իրապես դժվար է նրան՝ իրականությունը ու ճշմարտությունը ողջ մերկությամբ ընդունելը: «Սառնարանէն….» պիեսով Իշխանը պատկերում է քաղաքակրթության ու կառավարող բազմաթիվ ուժերի ծնունդը, այլ կերպ՝ խամաճիկ մարդուն:

«Կիլիկիո արքան» (1975) պիեսը մեկ ընդհանրական որոնում ու վերադարձ է դեպի հայրենի հողը, դեպի Կիլիկիա, դեպի կորուսյալ անցյալը, դեպի արմատները: Պիեսի գլխավոր հերոսը՝ Լևոնը՝ «Լեւոն Եօթներորդ, Վեհափառ Արքայ Մեծի Տանն Կիլիկիոյ…»[19] ստրուկն է անգո մի երազի, որի՝ իրականություն դառնալու սահմանը սոսկ զգայությունների տիրույթում է՝ «Կը կարծէք, թէ ես միայն կ՝երազե՞մ, սխա՛լ, ես կ՝աշխատիմ գիշերցերեկ, նամակներ եւ հեռագիրներ կը խմբագրեմ՝ ուղղուած Միացյալ Ազգերու Կազմակերպութեան, մեծ տէրութեանց նախագահներուն: Փաստաթուղթեր պատրաստած եմ, որոնք անհերքելի կերպով ցույց կու տան, թե ե՛ս եմ ժառանգորդը Ռուբինեանց Հարստութեան: ՄԱԿը եւ մեծ տէրութիւնները շատ նեղ կացու-

[17] Իշխան Մուշեղ, Սառնարանէն ելած մարդը, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1979, 64 էջ:

[18] Նույն տեղում, էջ 11:

[19] Իշխան Մուշեղ, Թատերախաղեր //Կիլիկիո արքան, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1980, էջ 15:

թեան մատնուած են եւ չեն գիտեր, թե ի՛նչ պատասխանեն»[20]: Արևմտահայ դասական գրականությանն առավել հարազատ մնաց Մերձավոր Արևելքի հայկական գաղութը: Ուստի՝ Մուշեղ Իշխանի ստեղծագործությունը դիտարկելի է արևմտահայ գրական ավանդույթները կրողի ու շարունակողի հատկանիշով: Հետևաբար՝ գրող, մանկավարժ Մուշեղ Իշխանի ստեղծագործության հոգեբանական որակներն ամբողջացնելիս, պետք է սահմանենք, թե նրա կյանքը հետեղեռնյան հայ իրականության գերխիտ ընդհանրացումն է, հայոց Սփյուռքի ներաշխարհի պատմությունը:

Հ. Գ. Գրականությունը իրականության ճանաչողությունն է, ու ամեն գրող այդ իրականությանը մասնակից է իր ներքին աշխարհի ու հոգևոր հնարավորությունների տիրույթում:

Գրականություն

1. Իշխան Մուշեղ, Հացի եւ լոյսի համար, Պէյրութ, Վահէ Սէթեան, 2007, 243 էջ:
2. Իշխան Մուշեղ, Հացի եւ սիրոյ համար, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1956, 258 էջ:
3. Իշխան Մուշեղ, Թատերախաղեր, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1980, 262 էջ:
4. Իշխան Մուշեղ, Երկեր, Ե, Նաիրի, 1990, 592 էջ:
5. Իշխան Մուշեղ, Սառնարանէն ելած մարդը, Պէյրութ, Վահէ Սէթեան, 1979, 64 էջ:

[20] Նույն տեղում, էջ 19-20:

Мушег Ишхан – прозаик и драматург

Амбарцумян Наира

Резюме

Ключевые слова: *эстетика, поэтика, интерпретация, тематика, этнос, мемуары, роман, драма, драматургия*

Работа включает интерпретацию прозы писателя и педагога Мушега Ишхана в контексте национально-исторических, социально-психологических и этических проблем литературы, когда главной проблемой армянской литературы является проблема сохранения и выживания этноса на протяжении веков. Это также важно для тематики в контексте тоски, свободолюбивых идей, духовности и проявлений героизма, и одинаково типично как для прошлой, так и для современной литературы армянской диаспоры.

В контексте событий, имевших место в начале двадцатого века, писатель Мушег Ишхан суммировал хронику литературы армянской диаспоры, одновременно завершив художественный процесс ливано-армянской колонны. Его кредо – это осознание личности, истории и вечного существования. Творчество Мушега Ишхана особенно рассматривается в характере носителя и продолжателя западноармянских литературных традиций. Поэтому, суммируя основные черты творчества Мушега Ишхана, мы должны определить его жизнь как сверхобобщение армянской постгеноцидной реальности и как историю внутреннего мира армянской диаспоры.

Musheg Ishkhan as a Novelist and Playwright

Hambardzumyan Naira

Summary

Key words: *aesthetics, poetics, interpretation, thematic, ethnicity, memorandum, novel, drama, dramaturgy*

This work includes interpretation of Mushegh Ishkhan's (writer and pedagogue) novel in the area of such emerging issues as national-historical, social-physiological and ethical literature, as for centuries the biggest problem of the Armenian literature was to keep the ethnic and national identity.

The importance of themes such as homesickness, freedom, spiritual and heroism are typical for the past and current literature produced in Armenian Diaspora. In the context of the events that took place at the beginning of the 20th century, Mushegh Ishkhan summarized the chronicle of Diaspora Armenian literature telling about the existence of Armenian community in Lebanon. The consciousness of his identity, history and endless existence are among his strongest beliefs. Mushegh Ishkhan's works are prominant as he is continues carrier of Western Armenian literary traditions. Hence, while summarizing the main characteristics of Mushegh Ishkhan's works, we need to define that his life is the overview of post-genocide Armenian reality and the inner history of Armenian Diaspora.

Ներկայացվել է 19.06.2019 թ.
Գրախոսվել է 09.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Ֆանտաստիկ հոգեբանություն

Հովիվյան Գայանե

Հանգուցային բառեր *՝ մելանխոլիա, բնություն, ախտ, տրամադրություն, էներգիա, ինքնաապաքինում*

20-րդ դարի ամենահետաքրքիր գրողներից մեկը՝ Ռեյ Բրեդբերին, իր ստեղծագործական ժանրը անվանել է ֆանտաստիկա. ոչ թե գիտական ֆանտաստիկա (որի դրսևորում նա համարում է միայն իր «451 աստիճան ըստ Ֆարենհայթի» վեպը), որը մարդկության ապագան է՝ երևակայական պատկերացումների մեջ, և գուշակում է այդ ապագայի հնարավորությունները՝ ելնելով գիտության զարգացման ժամանակակից սրընթացությունից, այլ պարզապես ֆանտաստիկա, որը մարդկային երևակայությունն է՝ ֆանտազիան, ինչն էլ ենթադրում է ոչ սովորականը, արտասովորը, այն երևույթները, որոնք դուրս են գալիս ռեալության սահմաններից:

Իր «Ֆանտաստիկ գրականություն» էսսեի մեջ Հ. Էդոյանը ֆանտաստիկ երևույթ անվանում է գրականությունը. «…միակ ֆանտաստիկը ինքը՝ գրականությունն է. այն, ինչը ամենաառողջ դատողության տեսանկյունից դիտած, ամենաանհնարինն է, այսինքն՝ ամենաֆանտաստիկականը»[1]:

Դա իսկապես այդպես է բոլոր նրանց համար, ովքեր սիրում են գրականությունը, բայց միևնույն ժամանակ դա էմոցիոնալ բնութագրություն է, և պետք է ընդունել, որ գոյություն ունի ֆանտաստիկայի ժանր, բացի այն, որ գրականության և արվեստի անբաժանելի տարրը երևակայությունն է՝ ֆանտազիան: Չէ՞ որ մարդը ապրում է նաև իր ֆանտազիաների մեջ:

Բրեդբերիի ստեղծագործությունը շատ ուրույն է և յուրօրինակ. այն դժվար է դնել ժամանակակից որևէ ուղղության մեջ: Նրա ստեղծագործության թեմատիկան լայն է՝ արվեստ, սեր, Երկիր մոլորակ, ժամանակակից տագնապներ, այլմոլորակայիններ, սարսափ, ապագայի անորոշություններ: Եվ այդ ֆոնի վրա՝ մարդը՝

[1] Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, «Սարգիս Խաչենց. Փրինթինֆո», 2009, էջ 355:

ամենազարմանալի, ամենաանսպասելի իրավիճակների մեջ, մարդու հոգեբանությունը և հոգեկան աշխարհը, որի բացահայտումների մեջ Բրեդբերին հանգում է հետաքրքիր եզրակացությունների: Նրա գեղարվեստի մեջ շատ է հոգեբանականը, որը մեծ չափով թափանցել է ժամանակակից գրականության մեջ: Բրեդբերիի ստեղծագործության նրբերանգները հուշում են, որ նրա ժանրը ավելին է, քան զուտ ֆանտաստիկան. այն թերևս կարելի է անվանել հոգեբանական ֆանտաստիկա, իսկ հոգեբանությունը գիտություն է, այնպես որ գիտական ֆանտաստիկա տերմինը ևս կարող է արդարացված լինել:

Բրեդբերին իր ստեղծագործությունների մեջ դրսևորել է իր էսթետիկական վերաբերմունքը մարդկային հոգեբանության նկատմամբ: Իսկ մարդու հոգեբանությունը միայն տրամաբանությամբ և զուտ բանականությամբ չես բացատրի: Բրեդբերիի գրականությունը իր հոգեբանությամբ լրացնում է գիտությանը:

Բրեդբերին գրել է մոտ 400 պատմվածք, 10 վեպ, 6 վիպակ և 13 էսսե:

1959թ. նա հրատարակում է իր «Մելանխոլիայի դեղը» պատմվածաշարը, որի մեջ ընդգրկված էին 19 պատմվածքներ: Դրանցից մեկը՝ համանուն վերնագրով, մեծ ստեղծագործություն չէ, սակայն դրա մեջ անդրադարձ է կատարված մի երևույթի, որը շատ այժմեական է, և այդ պատմվածքի մեկնաբանությունն էլ այս հոդվածի առարկան է:

Պատմվածքի մեջ երևակայական, ֆանտազիայից ծնված մի իրադարձություն է, որն իրականում ունի լուրջ հիմք: Բրեդբերին նուրբ գեղարվեստով ստեղծել է պատկերացում ժամանակակից ախտի և դրա ապաքինման մասին: Նա բանաստեղծականացրել է մելանխոլիան, մելամաղձոտ տրամադրությունը, ընկճախտը և ցույց է տվել մարդկային հոգեբանության ֆանտաստիկ հնարավորությունները:

Պատմվածքի հենց սկզբից հերոսուհու՝ Կամիլլայի ընդհանուր վիճակի տագնապալի նկարագրությամբ սկսում է ձևավորվել «մելանխոլիա» կոչված ախտի պատկերը. Կամիլլան հանգչում է, ինչպես մոմը, հալվում է ինչպես սառույցը, արյուն չի մնացել

երակներում, շատ գունատ է, չի կարողանում ոտքի վրա կանգնել: Այնպիսի մի ընդարմություն է տիրել նրան, որ թվում է, վիճակն անհուսալի է: Ցավում են ձեռքերը, ոտքերը, գլուխը, ոչինչ չի ուզում, խնդրում է թույլ տալ՝ հանգիստ հեռանալ այս աշխարհից: Խախտված է հերոսի հոգեկան ներդաշնակությունը, որի հետևանքով նրա ֆիզիկական վիճակը բարդացած է, թվում է օրհասական: Կամիլլան չի ուզում տեսնել բժիշկներին, դեղագործներին ու հոգևորականներին, մնում է միայն դիմել սատանային և բերել աղբահավաքին: Սատանային հիշատակելը արդեն այս հիվանդությունը դուրս է բերում ռեալության սահմաններից, կանխագուշակում է դրա ոչ սովորական բնույթը և տանում է դեպի տրանսցենդենտալը: Իսկ աղբահավաքին դիմելը ավելի քան մոտեցնում է ռեալ իրականությանը և թվում է ամենաանսպասելի, ամենաանհավանական և ամենատարօրինակ բժշկությունը, ուղղակի հոգեբանական սանիտարիա: Դա հաստատում է նաև ախտի երկվությունը՝ իրական և ոչ իրական, ֆիզիկական և մետաֆիզիկական:

Բայց չէ՞ որ տարօրինակ է նաև հոգեկան ախտը, որը սահմանափակել է մարդկային մարմնի, նրա ֆիզիկական օրգանիզմի գրեթե բոլոր հնարավորությունները: «Ինչպիսի սարսափելի, ինչպիսի խորհրդավոր հիվանդություն»[2],– այդպես է բնութագրում միսիս Ուիլկեսը Կամիլլայի մելանխոլիան:

Վերը նշված բոլոր կլինիկական ախտանշանները տրված են հոգեբանական գիտության մեջ: «Մելանխոլիա»-ն գիտական տերմին է: Այն շրջանառվել է դեռ անտիկ ժամանակներից և թարգմանվել է սև մաղձ (melaina kole), նշանակել է սև մաղձի ավելցուկը օրգանիզմում, և որն էլ ձևավորել է Հիպոկրատի դասակարգման մեջ մարդկային խառնվածքի մելանխոլիկ տիպը: Այսինքն շեշտադրվել են դրա ֆիզիկական բնույթը և ֆիզիկական ազդեցությունը մարդու հոգեկան աշխարհի վրա: Դա առկա է նաև անգլիացի հոգևորական Ռ. Բյորտոնի՝ 1621թ. գրած «Մելանխոլիայի անատոմիան» ծավալուն ուսումնասիրության մեջ, որտեղ նա մելանխոլիայի պատճառները դասակարգում է բնականի (ծերություն, ժառանգական հատ-

[2] Брэдбери Р., Лекарство от меланхолии, Москва, 2017, с. 22.

կանիշներ) և գերբնականի (տրված վերուստ՝ Աստծուց կամ Սատանայից): Բայց այդ տերմինը ըմբռնվում է ոչ միայն որպես խառնվածք, որն «անուղղելի» է, այլև որպես տրամադրության չափազանց անկում, որին ենթակա են բոլոր խառնվածքներն ունեցող մարդիկ, որպես հոգեկան հիվանդություն, որի առումով «մելանխոլիա» տերմինը ինչ-որ չափով հնացած է, և այժմ օգտագործվում է մելանխոլիա-դեպրեսիա կամ դեպրեսիա ձևը, որն էլ նշանակում է ճնշում, ճնշվածություն, պրես և թարգմանվում է ընկճախտ: Այդպես է վերնագրված ֆրանսիացի հոգեվերլուծաբան, փիլիսոփա Յ. Կրիստևայի արժեքավոր ուսումնասիրությունը՝ «Սև արև: Դեպրեսիա և մելանխոլիա», որի մեջ մելանխոլիան՝ դարի հիվանդությունը, դիտված է որպես լուրջ պրոբլեմ, որն ընդգրկում է ժամանակակից քաղաքակիրթ մարդկության մի ստվար մասը՝ միայնակ, մեկուսացած և ինքնամփոփ: Կրիստևան ախտը բնորոշում է որպես «անհատակ թախիծ», «անհաղորդելի ցավ, որը երբեմն կլանում է մեզ և հաճախ երկար ժամանակով, ստիպելով կորցնել ամեն խոսքի համը, ամեն գործողության, նույնիսկ կյանքի համը»[3]: Անձը կենտրոնացած է թախծի վրա: «Նա աֆեկտի գերին է». «Աֆեկտը նրա առարկան է»[4],– գրում է Կրիստևան: Այդ պասիվ վիճակը իր «Էթիկայի» մեջ Սպինոզան ևս անվանում է աֆեկտ (հոգու շարժում) և բնութագրում է այն որպես «վատ»: Բրեդբերին մելանխոլիան դիտում է որպես անձի՝ հանգամանքների հետևանքով առաջացած ժամանակավոր արգելակում և պատկերում է դրա հնարավոր, գրեթե հեքիաթային, ֆանտաստիկ ապաքինումը մեկ գիշերվա ընթացքում:

Հեղինակը պատմվածքում ճշգրիտ նշում է գործողության տեղաժամանակային տվյալները՝ քրոնոտոպը. գործողությունները կատարվում են հյուսիսային Լոնդոն քաղաքում, մի անձրևոտ, խոնավ առավոտ, 1762 թվականին: Ճշգրիտ թվականը հավանաբար ինքնանպատակ չէ, քանի որ Ռ. Բյորտոնի «Մելանխոլիայի

[3] Кристева Ю., Черное солнце. Депрессия и меланхолия, М., Когито-Центр, Библиотека психоанализа, 2010, стр. 3:

[4] Նույն տեղում, էջ 3:

անատոմիան» գրվել էր 1621թ. և պատմվածքի մեջ Ջեյմիի ու մի քանի գործող անձերի տեղեկացվածությունը ախտի կլինիկական նշանների ու դրա բուժման հնարավոր ձևերի մասին ոչ թե անձնական փորձի արդյունք է, այլ կարող է նշանակել, որ ինչ-որ չափով առկա է ինֆորմացիա՝ թեկուզ ոչ պրոֆեսիոնալ գիտելիքի մակարդակով: Նաև հյուսիսը պատահական չէ:

Մելանխոլիան սկիզբ է առել որպես հյուսիսային երևույթ, ըմբռնվել է որպես հյուսիսային ժողովուրդներին հատուկ հիվանդություն: Իսկապես, հյուսիսում իրավիճակը ավելի էքստրեմալ է՝ կապված եղանակային բարդությունների հետ. կարճ ցերեկները, արևի բացակայությունը, ցուրտը, մութը մարդկանց վրա ունենում են ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական ճնշող ազդեցություն և ձևավորում են ամենատագնապալի երևույթներից մեկը, որը կոչվում է մելանխոլիա: «Հյուսիսային մելանխոլիա» արտահայտությունը բերում է նաև Ֆ. Շլեգելը իր աշխատությունների մեջ: Ժամանակակից ֆինն կոմպոզիտոր և երգահան Վիլլե Վալոն ևս իրենց՝ հյուսիսային ազգերին անվանում է մելանխոլիկներ: Իսկապես, մելանխոլիան, նոր տերմինաբանությամբ՝ դեպրեսիան՝ ընկճախտը, քաղաքակրթության այս փուլում ունի իր մի շարք հիմնավոր պատճառները և գնալով ահագնանում է, դառնում գրեթե համատարած ախտ, որովհետև կլիմայական պայմաններին զումարվում են նաև մարդկանց օտարացումը, թախիծը, միայնությունը, կորսվածության ու ճնշվածության զգացողությունները, հոգեբանական այն երևույթները, որոնք էլ իրենց ազդեցությունն են ունենում մարդու ֆիզիկական էության վրա: Բացի այդ՝ այն ավելի շատ ըմբռնվում է որպես կանացի հիվանդություն, որովհետև դրան ավելի շատ տրվում են կանայք, որոնք ավելի էմոցիոնալ են: Բրեդբերիի հերոսը ևս կին է՝ տասնիննամյա Կամիլլան: Նրա կրտսեր եղբայրը՝ Ջեյմին, որը պատմվածքի մեջ մելանխոլիայի «տեսաբանն» է ու գործողությունը առաջ մղող գլխավոր ուժը, խորհուրդ է տալիս Կամիլլային մահճակալով դուրս բերել բաց օդ՝ տան մուտքի մոտ, որպեսզի դրսևորվի ինտենսիվ ու արդյունավետ շփում մարդկանց հետ. չէ՞ որ հենց հիմա հազարավոր ինքնակոչ բժիշկներ անցնում են իրենց տան մոտով, և «նրանց իմաստու-

թյունը կորչում է իզուր»: Կամիլլային դուրս են բերում մահճակալով՝ տան մուտքի մոտ: Միանգամից բեկում է տեղի ունենում պատմվածքի գործողության և տրամադրության մեջ: Փոխվում է նաև Լոնդոնի մռայլ եղանակը: Փոքր-ինչ հույսը հարուցում է պայծառություն, լույս, խինդ և արև: Հույժ անսպասելի սկսում է փայլել կապույտ երկինքը. ամբողջ քաղաքն է զարմանում. կարծեք գործի է դրվում ուրախության մեխանիզմը:

Հեղինակը Կամիլլայի տրամադրության փոքր փոփոխությունն անգամ կապում է ամբողջ քաղաքի ու նրա ողջ օրգանական մասի հետ: Դա բնության երևույթների սերտ կապի արտահայտությունն է, աշխարհի հավասարակշռության ու ներդաշնակության պատկերը, որը արտացոլել է նաև Պասկալը իր «Մտքերի» մեջ. «Ցանկացած շարժում արձագանք է գտնում ամբողջ բնության մեջ. ծովը փոխում է դեմքը մեն-միակ քարի պատճառով»[5]: Դա նաև մարդ և բնություն անխզելի կապն է. աղջկա տրամադրության ամենաթեթև փոփոխությունը արձագանք է գտնում ամբողջ բնության, քաղաքի ու աշխարհի մեջ: Պատահական չէ, որ չգիտես որտեղից հայտնված մսագործը, տեսնելով Կամիլլային, ասում է, թե այդպիսի արտահայտությամբ կովեր է տեսել ինքը: Իսկապես, ինչպես գրում է Բալզակը, «Կա միայն մի կենդանի էություն»[6], ամբողջ օրգանական աշխարհը միասնական է, և բնության համար բոլոր կենդանի արարածները հավասարապես կարևոր են ու ենթարկվում են նույն օրենքներին:

Այսպես ամբողջանում, ձևավորվում է հերոսի հիվանդության ավարտուն սահմանումը՝ արտահայտված մի քանի գործող անձերի կողմից, շրջապատի արձագանքի և ամբոխի եզրակացությունների մեջ:

Պարզվում է, որ Կամիլլան մենակ չէ. այն հսկայական ամբոխի

---

[5] Франсуа де Ларошфуко, Максимы. Блез Паскаль, Мысли. Жан де Лабрюер, Характеры, БВЛ, Москва, изд. «Художественная литература», 1974, с. 185.

[6] Բալզակ Օնորե դը, Երկերի ժողովածու 10 հատորով, հտ. 1, Երևան, 1956, էջ 50:

մեջ, որն անցնում էր Ուիլկեսների տան մոտով, շատերը կային, որ նույնքան միայնակ էին, նույնքան շփոթված և աղջկա մեջ տեսնում էին իրենց: Դուրս են հորդում մարդկանց մեջ թաքնված կյանքի փորձը, իմաստության էներգիան և վերածվում են բուժման համակարգի: Մի երիտասարդ աղջիկ, ինչպես երևում է նրա շփոթված արձագանքից, գուշակում է ախտի նշանները, որոնք այնքան պարզ ու հասկանալի էին իրեն, որ նա նույնիսկ դադարում է շնչել ու անհետանում է ամբոխի մեջ: Հայտնվում է մի կին՝ բարձրահասակ, նիհար, ինչպես գերեզմանից դուրս եկած ուրվական և, ինչպես հայելու մեջ, տեսնում է իրեն, իր հիվանդությունը. նա արտասանում է ախտորոշումը՝ մելանխոլիա, ապա դա անվանում է մագնիսական խանգարումներ:

«Մագնիսական խանգարումներ» կոչվածը էզոթերիկա է, ըստ որի՝ բոլոր կենդանի օրգանիզմներն ունեն իրենց մագնիսական դաշտը, որից էներգիա է ճառագում, որը կարող է արտահայտվել տարբեր կերպ՝ գեղեցկության ցնցող տպավորությամբ, մեծ զգացմունքի բռնկումով կամ չարակնությամբ և պատկերվել, օրինակ, սրբապատկերի վրա լուսապսակի տեսքով: Եթե մարդու էներգիան ուժեղ է, բարձր և դրական, մարդը կարող է ինֆորմացիայով հաղորդակցվել ուրիշ կենդանի օրգանիզմների հետ: Դա շատ լավ արտացոլված է հին էպոսներում ու հեքիաթներում, որոնց մեջ կան հերոսներ, որոնք հասկանում են կենդանիների ու թռչունների լեզուն, ինչպես, օրինակ, Զիգֆրիդը «Նիբելունգների երգի» մեջ: Մարդու մեջ առկա կենսական ուժը, նրա էներգիան մարդուն մղում է բարի կամ չար արարքների և այդ կերպ ձևավորում նրա կերպարը, նրա վարքը և նրա կյանքը: Մագնիսական դաշտի ազդեցությունը մեծ է նյարդային համակարգի վրա, որը մեր ժամանակներում դարձել է ավելի խոցելի, որովհետև մարդը հեռացել է բնությունից, և պատմվածքում պատկերված տրամադրության անկումը վերածվել է հոգեկան պրոբլեմի, որը լուրջ բուժման կարիք ունի:

Իհարկե, խոսքը այստեղ 18-րդ դարի մասին է, սակայն դա չունի ճշգրիտ օրացուցային նշանակություն. հեղինակի հայացքը ավելի շուտ ուղղված է մեր ժամանակներին և ակնարկում է դրա տեղաժամանակային մեծ ընդգրկումը:

Պատմվածքի ամենասքանչելի մասն այն է, երբ պատահական անցորդները սկսում են վճարել, որպեսզի խորհուրդներ տան և առաջարկեն իրենց դեղամիջոցները: Բոլոր մարդիկ իրենց ինչ-որ չափով բժիշկ են երևակայում: Ահա սեփական դեղամիջոցների ուժի համոզվածությամբ լցված այդ «բժիշկների» գրոհը կասեցնելու համար դարձյալ Ջեյմիի խորհրդով նրանք սկսում են վճարել: Ինչպես ասում է Կամիլլայի մայրը՝ միսիս Ուիլկեսը, «Կանայք, ամուսինները և երեխաները չեն կարողանում լսել իրար: Դրա համար էլ մարդիկ սիրով վճարում են, որպեսզի թեկուզ ինչ-որ մեկը իրենց վրա ուշադրություն դարձնի»[7]: Դա մարդկանց շփվելու մոլուցքն է, միայնակ մարդկանց, ամբոխի, որոնց խորհուրդների շարանը ծավալվում է բազմաթիվ ու բազմանշանակ ձևերով՝ կովերի համար նախատեսված սեփական արտադրության էլեքսիրից սկսած մինչև ավելի բարենպաստ կլիմա ունեցող երկրներ տեղափոխվելու խորհուրդը: Կամիլլայի նոսրացող էներգիան դեպի իրեն է ձգում մարդկանց, որոնք նույնքան խոցելի են, նույնքան միայնակ: Դա այդպես է եղել միշտ, և մարդը միշտ կարիք ունի ֆիզիկական և հոգեկան շփումների: Դա 18-րդ դարի նշան չէ, ոչ էլ 20-րդ կամ 21-րդ դարերի, դա հավերժական է և համամարդկային, պարզապես նոր ժամանակներում ահագնացել է: Եվ եթե պատմվածքում դա փոքր-ինչ հեքիաթային բնույթ ունի, ապա իրականում այն լուրջ հիվանդություն է:

Շուտով պարզ է դառնում, որ Կամիլլան չի մեռնի, ինչպես համոզված էին միստր Ուիլկեսը, Ջեյմին, մսագործը և աղբահավաք-տրուբադուրը, այն գործող անձինք, որոնց նյարդային համակարգը ավելի ամուր է, և նրանց համար ինչ-որ չափով անհասկանալի է այդ երևույթը, որի մեջ նրանք ուռճացվածության մաս են տեսնում: Բորխեսը, իր «Նաթանիել Հոթորն» հետազոտության մեջ վկայակոչելով Շոպենհաուերին, գրում է. «Շոպենհաուերը, ինչպես լավ հայտնի է, գրել է, որ արարք չկա, միտք չկա, հիվանդություն

[7] Брэдбери Р., Лекарство от меланхолии, Москва, изд. «Э», 2017, с. 30.

չկա, որ կամավոր չլինի…»[8]: Կամիլլան էլ ասում է. «Նշանակում է, ես ինքս իմ հիվանդությունն եմ»[9]: Ուրեմն, կամավոր կարող է լինել նաև ապաքինումը: Եվ, իսկապես, անգամ այդպիսի բարդ հիվանդության դեպքում ինքնաապաքինման, ինքնաբժշկման հնարավորությունը ևս յուրաքանչյուր կենդանի օրգանիզմի հատկությունն է: Բացի այն, որ «մարդը մարդուն դեղ է», նաև մարդու ֆիզիկական օրգանիզմը, նրա հոգեկան աշխարհը ունեն իրենց թաքնված հնարավորությունները, որոնք մոբիլիզացնելով կարող են ինքնաապաքինվել: Կամիլլայի մագնետիզմին գումարվում է մարդկանց մագնետիզմը, և նա մոտենում է իր նախաստեղծ բնությանը: Սկիզբ է առնում մարդ-բնություն ներդաշնակությունը, և քանի մոտենում ենք ստեղծագործության ավարտին, այնքան ներդաշնությունը դառնում է հեքիաթային: Դրական սկզբունքի հաստատումը դառնում է գերիշխող:

Տեղի է ունենում հաջորդ շրջադարձը: Պատմվածքի սկզբում իմիջիայլոց հիշատակված աղբահավաքը մղվում է առաջին պլան, հայտնվում է և խորհուրդ է տալիս՝ Կամիլլային գիշերը թողնել բաց երկնքի տակ՝ ծագող լիալուսնի լույսի ներքո, որովհետև «Լիալուսինը սփոփում է բոլորին, ովքեր հիվանդ են՝ մարդկանց և վայրի կենդանիներին: Լիալուսնի փայլի մեջ կա անխռովություն, նրա ճառագայթների հպման մեջ՝ հանգստություն, խաղաղեցնող ազդեցություն մտքի ու մարմնի վրա»[10]:

Ապա աղբահավաքը կերպարանափոխվում է միջնադարյան տրուբադուրի, նվագում է իր վինը, տաքացնում և ջերմացնում է Կամիլլային: Հնչում, տարածվում է օդի մեջ մի հեքիաթային մեղեդի. միջնադարյան տրուբադուրը երգում է գարնանային գիշերների, ցավի ու հիվանդությունների մասին, որոնք անուն չունեն: Այս մասից արդեն «մելանխոլիա» տերմինը պատմվածում այլևս չի շրջա-

[8] Բորխես Խորխե Լուիս, Հավերժության պատմություն. Ինքնակենսագրություն, էսսեներ, դասախոսություններ, Երևան, 2016, էջ 280:

[9] Брэдбери Р., Лекарство от меланхолии, Москва, изд. «Э», 2017, с. 36.

[10] Брэдбери Р., Лекарство от меланхолии, Москва, изд. «Э», 2017, с. 32.

նառվում: Կամիլլայի ախտը կորցնում է իր կարևորությունը, որովհետև տրուբադուրը երիտասարդ աղջկա՝ արդեն կասկածելի հիվանդության նշանների մեջ տեսնում է մի պարզ պատճառ՝ մարդկային շփման և սիրո պակասը: Դեպրեսիան փոխվում է հիացմունքի, քանզի «…հոգեկան իրադարձությունների ընթացքը կառավարվում է բացարձակապես հաճույքի ձգտումով»[11],– ինչպես գրում է Կրիստևան՝ վկայակոչելով Զ. Ֆրոյդին: Դա գրեթե կրկնում է Սպինոզան իր «Էթիկայի» մեջ. «Ցանկությունը մարդու էությունն է»[12]:

Հիվանդության լուրջ բնույթը մեղմանում է բնության, մարդու, սիրո և արվեստի ապաքինող ուժի ներքո: Կամիլլայի հոգեկան տագնապները ցրվում են աղբահավաքի ջերմությամբ, որն էլ մարմնավորում է տրուբադուրին՝ երգչին, արվեստի մարդուն և սերը:

Եվ այդ ամենի վերևում և ամենից վեր լիալուսինն է, հավերժական բնության անխռովությունը և խաղաղեցնող հանգստությունը մարդու մարմնի և մտքի վրա, բնության, որն իր աչքը միշտ պահում է մարդկանց վրա: Լիալուսինը կարծեք նաև վերացնում է հեռավորությունը ժամանակների ու տարածությունների միջև և պոեզիա է մտցնում այս ապաքինման հեքիաթային պատմության մեջ:

Լիալուսինը, շրջանը այստեղ նաև խորհրդանիշ է: Բորխեսը իր «Պասկալ» հետազոտության մեջ վկայակոչում է Քսենոփանեսին և բանաստեղծ Պարմինիդեսին, ըստ որոնց՝ «Աստված շրջանաձև է», որովհետև այդ ձևը լավագույնն է «աստվածությունը սահմանելու համար»[13]:

Ուրեմն, Աստված, հավերժական բնությունը, սերը, արվեստը, մարդը այն ուժերն են, որոնք կարող են օգնել մարդուն՝ ինքնաապաքինել իր հոգին և իր մարմինը: Մելանխոլիայի դեղը սա է՝ մարդկային հոգու ինքնաապաքինման ուժը, որը ինքնահիվանդա-

[11] Кристева Ю., Черное солнце. Депресия и меланхолия, М., Когито-Центр, Библиотека психоанализа 2010, стр. 3:

[12] Спиноза Б., Этика, Санкт-Пртербург, изд. Азбука, 2016, стр. 202.

[13] Բորխես Խորխե Լուիս, Հավերժության պատմություն. Ինքնակենսագրություն, էսսեներ, դասախոսություններ, Երևան, 2016, էջ 322:

ցել է, բայց կարող է ինքնաապաքինվել նաև սեփական ֆանտաստիկ հոգեկան ուժի շնորհիվ:

Առավոտյան Կամիլլան ոչ միայն չէր մահացել, այլև փայլում էր կաթնագույն սպիտակությամբ, վարդագույն այտերով՝ ողջ և առողջ. մեկ գիշերը նրան դարձրել էր նախկինը: Աղջկա ժպիտը երջանիկ էր:

«Հրաշալի միջոց»[14],– ասաց Կամիլլան, և բոլորը սկսեցին պարել:

Սա է մարդկային ֆանտաստիկ հոգեբանությունը:

Գրականություն

1. Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, 2009:
2. Брэдбери Р., Лекарство от меланхолии, изд. «Э», Москва, 2017.
3. Кристева Ю., Черное солнце. Депрессия и меланхолия, Когито-Центр, Библиотека психоанализа, М., 2010.
4. Франсуа де Ларошфуко, Максимы. Блез Паскаль, Мысли. Жан де Лабрюер, Характеры, БВЛ, Художественная литература, Москва, 1974.
5. Բալզակ Օնորե դը, Երկերի ժողովածու 10 հատորով, հտ. 1, Հայպետհրատ, Երևան, 1956:
6. Բորխես Խորխե Լուիս, Հավերժության պատմություն. Ինքնակենսագրություն, էսսեներ, դասախոսություններ, Երևան, 2016, էջ 280:
7. Спиноза Б., Этика, Санкт-Пртербург, изд. «Азбука». 2016, с. 202.

[14] Брэдбери Р., Лекарство от меланхолии, Москва, 2017, с. 38.

Фантастическая психология

Овивян Гаяне

Резюме

Ключевые слова: меланхолия, природа, недуг, настроение, энергия, самовосстановление

Предметом данного исследования является рассказ Рэя Брэдбери «Лекарство от меланхолии». Произведение небольшое по объему, однако, в нем автор обращается к явлению, которое до сих пор остается крайне актуальным. Речь идет о «болезни века» – меланхолии, которую в современной действительности принято называть депрессией или ипохондрией. Именно это заболевание опоэтизировал Р. Брэдбери в своем произведении и с тонкой художественной проницательностью изобразил сложные перепады настроения в психологии человека. В рассказе меланхолия изображается с помощью тревожного душевного состояния героини, которое в последних частях произведения приобретает определенный сказочный характер, напряжение спадает, и девушка исцеляется за одну ночь, благодаря любви, искусству, природе и внутреннему потенциалу собственного организма. Это и есть фантастическая психология человека. При написании данной статьи нами был проанализирован ряд работ, относящихся к проблеме «меланхолия-депрессия».

Fantastic Psychology

Hovivyan Gayane

Summary

Key words: *melancholy, nature, disease, mood, energy, self-recovery*

The subject matter of the given article is to observe "A Medicine for Melancholy" by Ray Bradbury, which is not a large story, but at the same time touches upon a problematic issue-quite actual nowadays. Melancholy is undoubtedly considered to be "the disease of the 21st century", which is called depression. Ray Bradbury tried to make the concept more poetic in his narration gently and artistically depicting complicated "ascends and descends" of human psychology. Melancholy in the story is depicted through the alarming state of mind of the personage, i.e. the young lady. The story becomes somehow miraculous in the end, the tension relieved and the girl recovered within the night owing to love, arts, nature, and her own self-recovery. That is human fantastic psychology! During our analysis, we've studied a number of works and papers on melancholy-depression.

Ներկայացվել է 09.10.2019 թ.
Գրախոսվել է 11.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ

HISTORY

Հայոց Մեծ եղեռնի և հույների ցեղասպանության համեմատական վերլուծությունը հունական պատմագրությունում

Բրուտյան Մարիա

Հանգուցային բառեր՝ *Պոնտոս, Օսմանյան կայսրություն, Ֆոտիադիս, ցեղասպանագիտություն, հատուցում, կոտորածներ, նմանություններ, տարբերություններ*

Հայոց Մեծ եղեռնը մի քանի տասնամյակ շարունակ գտվում է հայ և օտարազգի ցեղասպանագետների և պատմաբանների հետաքրքրության շրջանակներում: Դժվար է գտնել ցեղասպանության վերաբերյալ որևէ ուսումնասիրություն, որտեղ Հայեց Մեծ եղեռնը ներկայացված չլինի ցեղասպանագիտության համատեքստում:

Ժամանակի ընթացքում հայերի և Օսմանյան կայսրության ազգային մյուս փոքրամասնությունների կոտորածների և տեղահանությունների վերաբերյալ ուսումնասիրություններն աստիճանաբար ավելի են ընդլայնվել՝ տեղ գտնելով Առաջին աշխարհամարտի, Մերձավոր Արևելքի, Օսմանան կայսրության 20-րդ դարի պատմությանը վերաբերվող ուսումնասիրություններում: Ցեղասպանության լուսաբանմանը նվիրված օտարազգի և հայ հետազոտողների աշխատանքների բազմաշերտությունը անհրաժեշտություն է առաջացրել ուսումնասիրել հայոց ցեղասպանությունը հարակից ժողովուրդների ցեղասպանության պատմության համատեքստում՝ հենվելով համեմատական ցեղասպանագիտության վրա: Համեմատական վերլուծությունը շեշտում է տարբերակիչ առանձնահատկությունները՝ թույլ տալով ավելի խորը հասկանալ ցեղասպանությունների կազմակերպման և իրականացման ձևերը, նպատակը:

20-րդ դարում հույների նկատմամբ թուրքական իշխանության կիրառած գործողությունների և կայսրության հայաջինջ քաղաքականության մեջ առկա կապերի ելակետը թուրքական թուրանա-

կանությունն է: Թե՛ Հայոց Մեծ եղեռնը, թե՛ Հույների ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություններից են, որոնք մինչ այժմ մնում են անպատիժ, քանզի երկու ժողովուրդների զգալի հատված կոտորածների զոհ է դարձել, բռնի հավատափոխվել կամ սփռվել ողջ աշխարհով մեկ:

Համեմատական ցեղասպանագիտությունը մի կողմից հնարավորություն է տալիս ապացուցել, որ թուրքերի կողմից իրականացված ոչ մահմեդական ազգային փոքրամասնությունների ցեղասպանությունների նպատակը մեկն է՝ «ոչնչացնել նրանց»[1], մյուս կողմից նկատելի է դարձնում առկա տարբերությունները, վերհանում դրանց հիմնավորումները: Հայոց Մեծ եղեռնի և հույների ցեղասպանության համեմատական վերլուծությունը կօգնի հիմնահարցը առավել խորքային ուսումնասիրել, կարևորել առկա պատճառները և մատնանշել այն իրողությունները, որոնք հանգեցնում են ինչպես միտումնավորության, այնպես էլ դիտավորյալ կեղծման:

Նպատակ ունենալով ցույց տալ Հայոց Մեծ եղեռնի և հույների ցեղասպանության համեմատական վերլուծությունը հունական պատմագրությունում՝ պետք է ասել, որ մինչև օրս հայ պատմագիտության մեջ Հայոց Մեծ եղեռնի և հույների ցեղասպանության վերաբերյալ հունական պատմագիտութան դիրքորոշումը մեծ չափով ուսումնասիրված չէ: Մինչդեռ դա կարևոր է հատկապես այն առումով, որ հույն պատմաբաններ Թ. Մալկիդեսի, Ի Ասպրոպոտամիտիսի, Ի Խասիոտիսի, Կ. Ֆոտիադիսի, Ն. Հլամիդիսի, Վ. Աղձիդիսի և այլոց աշխատություններում զուգահեռներ են տարվում երկու

[1] Ինչպես նշում էր Հալեպի և Կոնյայի քաղաքապետը՝ «Նպատակը նրանց ոչնչացնելն էր, և նրանք ոչնչացվեցին: Անհնար է թաքցնել և քողարկել İttihat ve Terakki-ի կողմից իրականացնած քաղաքականությունը, որը մշակվել էր կուսակցության ղեկավարների և ի վերջո ընդունվել հանրության լայն շերտի կողմից», տե՛ս Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, ժողովածու, կազմ.՝ Վ. Քոչարյան, Ե., 2008, էջ 185:

ժողովուրդների ցեղասպանությունների միջև, շեշտվում են դրանց նմանություններն ու տարբերությունները: Այդ վերլուծությունն ավելի լիարժեք կդարձնի հայ պատմագիտության կողմից մինչև օրս արված համեմատությունները, հնարավորություն կտա հարցին մոտենալ ոչ հայազգի պատմաբանների վերլուծության տեսանկյունից: Մանավանդ, որ արդի հայ պատմագիտության մեջ Օսմանյան կայսրության հույների ցեղասպանությանը նվիրված եզակի ուսումնասիրություններից մեկում ցույց է տրված հայերի և հույների ցեղասպանությունների պատճառների և իրականացման մեխանիզմների միջև առկա մի շարք նմանություններ և տարբերություններ[2]:

Հույների ցեղասպանության հետ կապված որոշ հարցերում հույն պատմաբանները միակարծիք չեն: Տարակարծություններից մեկը առկա վեճն է «Պոնտական գենոցիդ» և «Հունա-հելլենական գենոցիդ» հասկացությունների շուրջ: Հույն պատմաբաններից Կ. Ֆոտիադիսը, Ն. Հլամիդեսը առաջարկում են հույն ժողովուրդների երկու հատվածների ցեղասպանությունը ճանաչել տարբեր համատեքստերում: Ն. Հլամիդեսի պնդմամբ՝ ի տարբերություն Պոնտոսի՝ Փոքր Ասիայի արևմտյան տարածքները պատերազմական գոտիներ էին և հույն-թուրքական պատերազմի համատեքստում իրականացված կոտորածները չի կարելի համարել ցեղասպանություն[3]: Այս հեղինակը նաև նշում է, որ պետք է ուսումնասիրել Պոնտոսի հույների ցեղասպանության և հույն ժողովրդի ցեղասպանության պատմությունները տարբեր համատեքստերում, քանի որ՝

1. Պոնտոսի հույները տարբերվում են կայսրության մյուս մասերի հույներից իրենց յուրահատուկ մշակույթով, բարբառով:

[2] Տե՛ս Վարդանյան Գ., Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը, Ե., 2012, էջ 168-173:

[3] Χλαμίδης Ν., Πόντιοι και η Γενοκτονία των Ελλήνων, http://mikrasiatis.gr/?p=2416

2. Պոնտոսի հույները, ի տարբերություն կայսրության իրենց մյուս ազգակիցների, ազատագրական պայքարի զենք են բարձրացրել իրենց հալածողների դեմ և այդ հալածանքների պատմությունը արժանի է ուշադրության:
3. Պոնտոսի հույն սփյուռքը ջանք չի խնայել ցեղասպանության ճանաչման ուղղությամբ:

Ն. Հլամիդեսի կարծիքով կայսրության համար հենց Պոնտոսի հույն բնակչությունն էր առավել վտանգավոր[4]:

Վերը նշված հույն պատմաբանները ընդունում են Հայոց Մեծ Եղեռնը՝ որպես անհերքելի իրողություն, մինչդեռ տարակարծություններ ունեն հույների ցեղասպանության հարցում: Լ. Բալցիոտիսի պնդմամբ հնարավոր չէ Պոնտոսում և Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձությունները նույնացնել արևմտահայության կոտորածների հետ: Նրա կարծիքով Պոնտոսի հակահունական գործողությունները չունեն նույն մասշտաբները, տևողությունն ու ինտենսիվությունը, ինչպես հայերի պարագայում է եղել: «Այս ամենի հիման վրա համեմատության մեջ դնելով հայերի հետ,– գրում է նա,– կարող ենք ասել, որ Պոնտոսում և Փոքր Ասիայում ցեղասպանություն չի եղել»[5]:

Համեմատելով, թե որքանով են ուսումնասիրված հունական և հայկական ցեղասպանությունները՝ Վ. Աղվիդիսը գտնում է, որ հայոց Մեծ եղեռնը, ի տարբերություն Օսմանյան կայսրության հույն բնակչության ցեղասպանության, մանրամասն ուսումնասիրության է ենթարկվել թե՛ միջազգային մակարդակով, թե՛ հայ պատմաբանների կողմից: Ըստ նրա՝ «Դեռևս Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի ցեղասպանությունը հայտնի դարձավ Ա. Թոյնբիի, Յ. Լեփսիուսի և այլոց կողմից, իսկ 20-րդ դարի 70-

[4] Φωτιάδης Κ., Η Γενοκτονία των Ελλήνων του Πόντου, t. 3, Θεσσαλονίκη, 2004, σελ. 4.

[5] Μπαλτσιώτης Λ., Ποιον ωφελεί η αναδιάταξη της θέσης των Ποντίων, Χρόνος, 06.10, 2013, http://www.chronosmag.eu/index.php/lplss-p-fl-ex-ths-p.html

ական թթ. մեծ թափով ուսումնասիրվեց Սփյուռքի կողմից»[6]: Միջազգային հանրության ուշադրությունը այս ոճրագործությունների վրա գրավող վրիժառուական շարժումների, Սփյուռքի հայության միասնական պայքարի արդյունքում սկսվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Հունական պատմագիտությունը, ի տարբերություն հայկականի, հույների ցեղասպանության ուսումնասիրությամբ սկսել է զբաղվել 20-րդ դարի 80-ական թվականներից: Վ. Աղձիդիսը, վերլուծելով երկու ցեղասպանությունների միջազգային ճանաչման գործընթացները, բարձր է գնահատում հայկական Սփյուռքի դերը, որպես ոչ միայն ուսումնասիրող, այլ նաև պահանջատեր և գտնում, որ այն անհամամեմատ ակտիվ է եղել հունականից:

Կ. Ֆոտիադիսը ևս գտնում է, որ տարբեր են եղել նաև հույն և հայ ժողովուրդների՝ ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի մասնակցությունը: Պոնտոսի հույների ցեղասպանությունը, լինելով երկար ժամանակ չուսումնասիրված, սկսել է ուսումնասիրվել առաջին հերթին պոնտական հույների կողմից և համեմատաբար ավելի ուշ: Ցեղասպանություն տեսած առաջին սերունդը դեռևս չէր կարող պահանջատեր լինել, քանի որ ստիպված էր դիմակայել առկա մարտահրավերներին, խուսափել թուրքերի շարունակական հալածանքներից, բնակավայրից բնակավայր տեղափոխվել: Երկրորդ սերունդը միայն կարողացավ հարստացնել փաստերը և երրորդ սերնդին տվեց իրավունք՝ հիշելու, ճանաչելու ցեղասպանությունը[7]: Միայն վերջին մի քանի տասնամյակների ընթացքում հույների ցեղասպանության թեման քննարկվեց տարբեր հարթակներում, լույս տեսան թեմայի վերաբերյալ գիտական աշխատություններ:

Կ. Ֆոտիադիսի կարծիքով Հայոց Մեծ եղեռնը առավել նկատելի դարձրեցին ականատես միսիոներները: Նրանք Հայոց ցեղա-

[6] Αγτζίδης Β., Στο μικροσκόπιο της Ιστορίας η Αρμενική Γενοκτονία, https://slpress.gr

[7] Φωτιάδης Κ., ο. π., σελ. 20.

սպանության նախօրեին, ընթացքում և հետո ավելի շատ աշխատել են հայերի շրջանում, քան օրինակ, հույների կամ ասորիների մեջ: Նրանք գործում էին այն վայրերում, որտեղ տեղի էին ունենում արևմտահայության կոտորածները[8]:

Ի հավելումն Ն. Աղձիդիսի՝ Լ. Բալցիոտիսը ցեղասպանության ուսումնասիրման գործում կարևոր է համարում նաև «արխիվների ճակատամարտը». հայերի ցեղասպանության վերաբերյալ արխիվային վավերագրերը անհամեմատ շատ են[9]: Բացի այդ, Պոնտոսի հույների ցեղասպանությունը երկար ժամանակ չի ուսումնասիրվել Հունաստանի պատմության համատեքստում: Հունական պատմագիտության մեջ նկատվել է ուշադրության կենտրոնացում բուն հունական պետության ներքին և արտաքին կյանքի վրա: Կ. Ֆոտիադիսը երևույթը բացատրում է 20-րդ դարի սկզբին հունական պետության գոյությամբ ու նրա վրա ունեցած արտաքին ազդակներով, Թուրքիայի ունեցած դերով, որոնք կաշկանդել են հունական պետությանը[10]:

Որոշ հույն պատմաբաններ հայոց Մեծ եղեռնը և Հույների ցեղասպանությունը դիտարկում են որպես միևնույն հանցագործության անբաժանելի մաս: Ի. Խասիոտիսը կարծում է, որ տարօրինակ կլիներ, եթե հույն և հայ պատմաբանները 1913-1914թթ. հույների նկատմամբ կիրառած հալածանքները և 1915 թվականի Հայոց ցեղասպանությանը դիտարկեին որպես առանձին երևույթներ[11]: Նա նշում է, որ կրոնական և էթնիկական ատելության համատեքստում կազմակերպված հակահունական և հակահայկական միջոցառումների շատ նմանություններ կարելի է տեսնել և՛ հույն, և՛ հայ գիտնականների աշխատություններում:

[8] Φωτιάδης Κ., ο. π., σελ. 17.

[9] Μπαλτσιώτης Λ., Χρόνος, XI, 2013.

[10] Φωτιάδης Κ., ο. π., σελ.19.

[11] Hassiotis I, The Armenian genocide and the Greeks: response and records (1915–1923), ined., The Armenian Genocide: History, Politics, Ethics, N. Y., 1992, p. 135.

Իշխող քաղաքական կուսակցության գրառումները քրիստոնյաների՝ որպես թշնամիների ընկալումը հակադարձվում էր երիտթուրքերի որդեգրած «հավասարություն», «եղբայրություն» կարգախոսների հետ, որոնց տակ հայերի և հույների նկատմամբ անթաքույց ատելություն կար: Դրա մասին են վկայում 1911 թ. Սալոնիկի ժողովում Բեհաեդդին Շաքիրի հետևյալ խոսքերը. «Այն ազգերը, որոնք մնացել են հին դարերից մեր կայսրությունում, նման են օտար և վնասակար մոլախոտերի, որոնց պետք է արմատախիլ անել»[12]:

Վերլուծելով երկու ժողովուրդների ցեղասպանությունների իրականացման քայլերը՝ հույն պատմաբանները հանգել են այն եզրակացության, որ դրանք ընդհանուր առմամբ, նման են եղել. տնտեսական հալածանքներ, 16-60 տարեկան տղամարդկանց զորակոչ, բնակչության զանգվածային աքսոր, մահմեդականացում: Այս մասին Թ. Մալկիդիսը գրում է. «Կիրառվում էին նույն մեթոդները՝ ջարդեր, գազանություններ, զանգվածային բռնություններ, կանանց և երեխաների գերեվարում, բռնի իսլամացում, մահվան քարավաններ»[13]:

Օսմանյան կայսրությունում, ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի վկայությամբ, թուրքերը գրեթե նույն վերաբերմունքն ունեին հայերի և հույների նկատմամբ: Ինչպես հայերն էին մեղադրվում կայսրության դեմ «ապստամբություններ բարձրացնելու», այնպես էլ հույներն էին մեղադրվում Օսմանյան կառավարության նկատմամբ անհավատարմության մեջ [14]: Թ. Մալկիդեսի կարծքիով Մորգենթաուի ցանկանցած վկայություն, որ վերաբերվում է հայերին, կարելի է վերագրել նաև հույներին[15]:

[12] The Salonika Congress,The Young Turks and their Programme, The Times, London, 3. X. 1911.

[13]Malkidis T., The parallel crime, The Armenia Genocide and The Greek Genocide, Հայագիտության հարցեր, Ե., 2015, N 1, էջ 66:

[14] Ambassador Morgenthau's Story by H. Morgenthau, NY 1919, p. 323-324.

[15] Malkidis T., The parallel crime, p. 67.

Հայերի և հույների տեղահանությունների և կոտորածների իրագործման մեխանիզմների համեմատությանը նվիրված Գ. Վարդանյանի մենագրությունում որպես կարևոր տարբերություն՝ մատնանշում է հույն մտավորականության նկատմամբ միասնական հաշվեհարդարի, ազգին «գլխատելու» օրվա բացակայությունը[16]: Թեև Հունական ցեղասպանության մեջ չկա «Ապրիլի 24» եզրույթը՝ որպես մտավորական սերուցքի զանգվածային ոչնչացման փորձ, բայց և այնպես քիչ չեն Կոստանդնուպոլի հույն մտավորականների նկատմամբ կիրառված բռնություններն ու անօրինությունները: Մոտ հարյուր հույն մտավորականներ 1915 թ. մարտին Կոստանդնուպոլսից արտաքսվեցին Փոքր Ասիա[17]: Ի տարբերություն արևմտահայ մտավորականության ողբերգությունների վերաբերյալ ստվար ուսումնասիրությունների՝ մինչև օրս հունական պատմագիտության մեջ այս հարցի վերաբերյալ առանձին ուսումնասիրություն չկա, թեև շատ են ականատեսների վկայությունները՝ հույն մտավորականներին հալածելու վերաբերյալ: Դանիացի գրող Ինգա Նալբանդյանի հաղորդմամբ, որ պոլսահայ գիտնական Մարտիրոս Նալբանդանի կինն էր, թուքերը անհիմն ազատում էին աշխատանքից Կոստանդնուպոսլի համալսարանի հույն և հայ պրոֆեսորներին[18]:

Հունական պատմագիտությունը հույների ցեղասպանությունը բաժանում է ժամանակագրական հետևյալ երեք փուլերի. առաջին՝ 1908-14 թթ. այս փուլում՝ 1909 թ. Ադանայում 30000 հայերի հետ կոտորածների զոհ են դարձել նաև 1000 հույներ: Այս փուլում իթթիհաթի հակահունական ծրագիրն իրականացվելու էր ինչպես

[16] Վարդանյան Գ., նշվ. աշխ., էջ 169:

[17] Φωτιάδης Κ., ο. π., σελ. 67.

[18] Bjornlund M., The 1914 cleansing of Aegean Greeks as a case of violent Turkification, Late Ottoman genocides: the dissolution of the Ottoman Empire and Young Turkish population and extermination policies—introduction, Schaller D., Zimmerer J., NY, 2009, p. 46.

տնտեսական, այնպես էլ քաղաքական միջոցառումներով[19]: Այդ օրինակ տնտեսական հալածանքներից էր Զմյուռնիայի հույների նկատմամբ կիրառած տնտեսական «բոյկոտը», որը հույն բնակչության արտագաղթի պատճառ դարձավ: Հույների տնտեսական այս հալածանքները իրենց արձագանքն են գտել «Ժամանակ» թերթում, որտեղ հայերը քննադատում են հակահունական միջոցառումները՝ ցույց տալով, որ դրանք վնասում են կայսրության տնտեսությանը[20]: Տնտեսական հալածանքների արդյունքում 1912-1914 թթ. 400000 հույներ տեղահանվել են Անատոլիայից: Երևույթը համարելով «ակնառու հաջողություն»՝ Ստամբուլի ոստիկանապետ Բեդրի բեյը գտնում է, որ նույն մեթոդը պետք է կիրառել նաև կայսրության մյուս բնակավայրերում[21]:

Թ. Մալկիդեսը, Ի. Խասիոտիսը և Կ. ֆոտիադիսը հայերի ցեղասպանության սկիզբ են համարում 1890-ական թվականները, երբ Կ. Պոլսում, Տրապիզոնում, Բիթլիսում և արևմտահայ այլ բնակավայրերում կոտորվեցին 250 հազար հայեր:

Երկրորդ փուլի ժամանակագրության շուրջ հույն պատմաբանները միակարծիք չեն. Թ. Մալկիդիսի կարծիքով այն տեղի է ունեցել 1915-1916 թթ., երբ հայերի հետ միասին կայսրության արևելյան հատվածներում մեծ քանակությամբ հույներ զոհվեցին: «Երբ հայոց Եղեռնն արդեն ավարտին էր մոտենում, հերթը հասավ հույներին»,– նշում նա՝ հավելելով, որ երիտթուրքերի ու քեմալականների հանցագործությանը զոհ դարձան 1.500.000 հայեր և 1.000.000 հույներ[22]:

Կ. Ֆոտիադիսի կարծիքով հույների ցեղասպանության առաջին փուլն ավարտվել է 1913 թ., իսկ 1913-1914 թթ. Պոնտոսի հույն

[19] Taner A., From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide, London, 2005, p. 145.

[20] «Ժամանակ», Կ. Պոլիս, 1911, 22 հունիսի, թիվ 827:

[21] Racho Donef, The Pontian Genocide: The continuous cycle of violence and massacres, https://www.academia.edu/15335522/, p. 1.

[22] Malkidis T., The parallel crime, p. 66.

բնակչությունը զերծ է մնացել զանգվածային տեղահանություններից ու կոտորածներից, թեև շարունակվում էին հույների նկատմամբ կիրառված տնտեսական հալածանքները: Հույների նկատմամբ առաջին բռնությունները տեղի են ունենում Զմյուռնիայի մոտ գտնվող Ադրամիտում քաղաքում, հետո՝ Պերգամոսում: 1916 թ. դեկտեմբերին սկսվում է Ամիսոսի (Սամսունի) հունաթափումը: Թուրքական բանակը մոխրի է վերածում քաղաքի շրջակայքը. մեծ քանակությամբ հույներ արտաքսվում են Անկարայի վիլայեթ՝ Չորում, Սունգուրլու ուղղությամբ: Հույն պատմաբանների կարծիքների տարբերությունը բացատրվում է նրանով, որ Թ. Մալկիդեսը վերլուծում է կայսրության ողջ տարածքում հույն բնակչության նկատմամբ իրականացրած ոճրագործությունները, իսկ Ֆոտիադիսը առանցքային է համարում միայն Պոնտոսում տեղի ունեցածը:

1914-1916 թթ. հակահունական և հակահայկական գործողությունները հունական պատմագիտության մեջ ընկալվում են որպես մեկ ամբողջական ծրագիր՝ հիմք ընդունելով 1916 թ. նոյեմբերի 26-ին Ամասիայի նահանգապետ Ռաֆեթ բեյի կողմից Ավստրոհունգարիայի հյուպատոսի հաղորդած հետևյալ միտքը. «Մենք պետք է ոչնչացնենք հույներին, ինչպես վարվեցինք հայերի հետ: Ես հույներին կոտորելու համար անհրաժեշտ գումարներ եմ ուղարկել հարակից տարածքներ»[23]: Ի. Խասիոտիսը քննադատում է թուրքական պատմագիտության այն պնդումը, թե իբր հայերն ու հույները հաշվեհարդարի զոհեր դարձան «զանգվածային հանցագործություններ», տեղական ինքնապաշտպանական ուժեր կազմակերպելու և հատկապես հույների՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ մեծ տերություններին աջակցելու համար[24]:

Հույների ցեղասպանության երրորդ փուլն ընդգրկում է 1919-

[23] Ποληχρο՛νη Κ Επεκενιδυ, Οι Διωγμη των ελλη՛νων του Πο՛νου, 1908-1918, Αθη՛να, 1962, σελ. 10.

[24] Τσιρκινίδης Χ., Η Γενοκτονία των Ελλήνων της Ανατολής, www.iellada.gr

1923 թթ., հույների համար ամենացավալի ժամանակաշրջանը[25], երբ 1922 թ. Զմյուռնիայի աղետը վերջ դրեց հունական երբեմնի ծաղկուն գաղթօջախի գոյությանը[26]: Զմյուռնիայի հույն և հայ բնակչության բնաջնջման մանրամասներ են տեղ գտել Մ. Ներսիսյանի «Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թ. ողբերգության մասին» հոդվածում, որտեղ հեղինակը քննադատում է Զմյուռնիայում քրիստոնյաների կոտորածների իրական պատկերն աղավաղող «За рубежом» ամսագրին[27]:

Այսպիսով, հունական պատմագրության կողմից հայերի ցեղասպանության վերաբերյալ կատարած համեմատությունները, որոնք վերաբերում են կոտարածների ընթացքին, հետևանքներին և միջազգային ճանաչման գործընթացին, ինչպես Թ. Մալկիդեսն է նշում, հույների համար մեկ նպատակ ունեն՝ միմյանց հետ համաձայնեցված հասնել ճշմարտության համար մղված պայքարի արդյունքին, կատարված հանցագործությունները չկրկնվելու, մեղավորներին պատժելու համար:

[25] Օ. π., σελ. 62.

[26] Malkidis T., The parallel crime, p. 66.

[27] Ներսիսյան Մ., Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թ. ողբերգության մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1992 թ., N 2-3, էջ 87-92:

Сравнительный анализ Геноцида армян и греков в греческой историографии

Брутян Мария

Резюме

Ключевые слова: *Понт, Османская империя, Фотиадис, геноцидоведение, возмездие, резня, сходства, различия*

Несколько десятилетий Геноцид армян был в интересах армянских и зарубежных ученых и историков. В историографии проводятся параллели между Геноцидом армян и другими немусульманскими меньшинствами в Османской империи, включая Геноцид греков. Сравнения, сделанные армянской историографией, будут более полными, если мы добавим анализ греческой историографии. Сравнительный анализ Геноцида армян и греческого геноцида поможет более глубоко изучить проблему, выявить причины и факты, которые ведут как к преднамеренной, так и к фальсификации истории. Интересно, что греческая историография рассматривает Геноцид армян как неоспоримую реальность, в то время, как существуют некоторые разногласия по некоторым вопросам, связанным с Геноцидом греков.

В греческой историографии существует мнение, что участие греческого и армянского народов в процессе международного признания геноцида было различным. Одна группа греческих историков признает Понтийский геноцид, другая группа Греко-Эллинский геноцид. Говоря о деталях геноцида, греческие историки обнаруживают, что в целом они были похожи: экономические преследования, призыв в армию 16-60-летних мужчин, массовое изгнание населения, исламизация. Сравнения, сделанные греческими историками в отношении Геноцида армян, имеют одну цель для греков – прийти к соглашению о результатах борьбы за правду, не повторять совершенных преступлений, наказать виновных.

Comparative Analysis of the Armenian Genocide and the Greek Genocide in Greek Historiography

Brutyan Maria

Summary

Key words: *Pontus, Ottoman Empire, Fotiadis, Genocide studies, massacres, retribution*

The Armenian Genocide has been in the interest of Armenian and foreign genocide scholars and historians for decades, with parallels to the national minorities of the Armenian Genocide and the Ottoman Empire, including the Greek Genocide. The comparisons made by Armenian historiography will be complete if we add to the comparative analysis of Greek historiography. A comparative analysis of the Armenian Genocide and the Greek genocide will help to study the problem more deeply. Interestingly, Greek historiography views the Armenian Genocide as an undeniable reality, while there are disagreements on some issues related to the Greek Genocide.

In Greek historiography there is an opinion that the participation of the Greek and Armenian peoples in the process of international recognition of the genocide has been different, the terms Pontian genocide and the Greek-Hellenic genocide differ. Coming to the implementation steps of genocides, Greek historians find that they were generally similar: economic persecution, conscription of 16-60 year old men, mass exile of the population, Islamization. Greek historians' comparisons of the Armenian Genocide to the Greeks have one goal: to reach a mutually agreed outcome of the struggle for the truth, not to repeat the crimes committed, to punish the guilty.

Ներկայացվել է 30.09.2019 թ.
Գրախոսվել է 05.11.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Միջնադարյան գրական հուշարձանները հայ-բուլղարական առնչությունների մասին

Խաժակյան Վաչագան

Հանգուցային բառեր՝ *տարեգիր, պատմաբան, ստեղծագործություն, բյուզանդացի, բուլղարացի, հայ, բռնագաղթ, պավլիկյաններ, հերետիկոսություն, կայսր, գաղութ, շփում, բարեկամական հարաբերություններ*

Հայ-բուլղարական հարաբերություններն ունեն պատմական խոր արմատներ: Բազմաթիվ և բազմազան միջնադարյան աղբյուրները հավաստում են պատմական միանման ճակատագիր ունեցող երկու ժողովուրդների փոխշփման մասին: Առանձնահատուկ ուշադրության են արժանի մասնավորապես՝ բյուզանդական և միջնադարյան բուլղարական գրական երկերում հայերի, ինչպես նաև հայ-բուլղարական առնչությունների մասին եղած տվյալները, որոնցից մի քանիսին փորձել ենք անդրադառնալ:

Ըստ 7-րդ դարի հայ մատենագիր Սեբեոսի՝ դեռևս 6-րդ դարի վերջին և 7-րդ դարի սկզբներին բյուզանդական կայսր Մավրիկիոսը (Մորիկ, 582-602թթ.) իր նախորդների նման հայ ժողովրդի նկատմամբ գաղթեցման քաղաքականություն է վարել դեպի Բալկաններ, մասնավորապես՝ Թրակիա և Մակեդոնիա[1]: Դրանով նա նպատակ է հետապնդել մի կողմից ճնշել Հայաստանում ծայր առած ազատագրական և սոցիալական շարժումները, մյուս կողմից՝ օգտագործել տեղափոխված բնակչությանն ավարների, գոթերի և սլավոնների ներխուժումներին հակահարված տալու համար: Ինչպես տեղեկացնում է Սեբեոսը, Մավրիկիոսին հաջողվել է Դանուբ գետի երկու կողմերում բնակեցնել մեծ թվով հայկական զորականների՝ ընտանիքներով հանդերձ:

Ըստ Էության՝ հայ և բուլղարացի ժողովուրդների հնագույն շփումները տեղի են ունեցել Թրակիայում և Մակեդոնիայում՝ Բյուզանդական կայսրության հյուսիսային սահմանների վրա: Առհասարակ, դեպի Բալկաններ հայերի առաջին գաղթի մասին մեզ

[1] Տե՛ս Սեբեոս, Պատմություն, Եր., 2004, էջ 91, 99:

հասած պատմական տեղեկությունները վերաբերում են 5-6-րդ դդ., երբ բյուզանդական կայսրեր Լևոն I-ը (457-474թթ.) և Հուստինիանոս I-ը (527-565թթ.) զգալի թվով հայեր բնակեցրին Թրակիայում և Մակեդոնիայում[2]:

756թ. Թրակիայում հայերի զանգվածային բռնագաղթի մասին պատմում է նաև 8-9-րդ դդ. բյուզանդացի տարեգիր Թեոփանես Խոստովանողն «Ժամանակագրությունում»[3]: Նա նշում է, որ Կոստանդին V (Կոպրոնիմոս, 741-775թթ.) կայսրը, արշավելով Արևելք, Թեոդոսուպոլսից (Էրզրում) և Մելիտենեից (Մալաթիա) մեծ թվով հայ և ասորի գաղթականներ է տեղափոխել Թրակիա:

Հայերի բռնագաղթը դեպի Բալկաններ հատկապես զանգվածային բնույթ է կրել 9-10-րդ դդ.: Այդ ժամանակ գաղթել են հիմնականում պավլիկյանները, որոնք, հաստատվելով Թրակիայում, տարածում էին իրենց ուսմունքը: Բուլղարների մեջ պավլիկյան ուսմունքի արագ տարածման մասին է վկայում 886թ. Հռոմի Նիկողայոս I պապին ուղղված բուլղարական իշխան Բորիս I-ի (852-889թթ.) բազմաթիվ հարցադրումներից մեկը, որի օրոք 865թ. Բուլղարիայում քրիստոնեությունը ընդունվեց որպես պետական կրոն: Դրանցից մեկում նա պապին հարցնում էր. «Հույներն ու հայերը Բուլղարիայում այլ ձևով են մկրտում ու քարոզում: Պետք է լսել նրանց հակասական քարոզները, թե՞ հարկավոր է այլ կերպ վարվել»[4]:

Բուլղարական առաջին գրական հուշարձաններից մեկը, որի մեջ հայկական անուն է հիշատակվում, այսպես կոչված երկրորդ «Համբարլիյան» արձանագրությունն է, որում խոսվում է Բուլղարական I թագավորության (681-1018թթ.) խան Քրումի (802-814թթ.) ռազմական արշավանքների մասին: Քրումը 813թ. նոր գրավված

---

[2] Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1964, էջ 310:

[3] Летопись византийца Феофана. Перевод с греч. В. Оболенского и Ф. Терновского, М., 1884, с. 67-68.

[4] Աթանաս Գրայֆ, Հայերը և պուլկարները, «Պուլկարահայտարեցոյց», Սոֆիա, 1928, էջ 19:

տարածքներից մեկի կառավարիչ է նշանակում բյուզանդական զորավար Վարդին, որի ազգային պատկանելությունը վերոնշյալ արձանագրության մեջ թեև չի նշվում, սակայն ակնհայտ է, որ այդ անձնավորությունն ունեցել է հայկական ծագում[5]:

Բանն այն է, որ «Վարդան», «Վարդ», «Վարդաս» անունները բյուզանդական ազնվականության շրջանում լայնորեն տարածված են եղել 8-10-րդ դդ.: Միջնադարյան գրական աղբյուրներում հատկապես հաճախ են հիշատակվում 9-րդ դարի հայազգի բյուզանդական պետական գործիչ Վարդայի, 10-րդ դարի զորավարներ Վարդան Հայազնի, Վարդ Սիկլարոսի, Վարդաս Փոկասի, կայսր Փիլիպպիկոս Վարդանի (711-713թթ.) անունները: Վերջինիս, ինչպես նաև բյուզանդական հայազգի կայսր Լևոն V Հայի (813-820թթ.) անունները հիշատակվում են 9-րդ դարի բուլղարացի պատմիչ Կոնստանդին Պրեսլավսկու «Ժամանակագրությունում»[6], որն առաջին հին բուլղարերեն ժամանակագրական ստեղծագործությունն է:

Բուլղարական միջնադարյան գրականության հնագույն ինքնատիպ երկերից մեկը սլավոնական լուսավորիչ և գրող Կլիմենտ Օխրիդացու (840-916թթ.) «Կիրիլի ընդարձակ վարքագրությունը» գիրքն է, որը միայն գրական հուշարձան չէ: Նրանում հատուկ տեղ է գրավում 9-րդ դարի վերջի և 10-րդ դարի սկզբի սլավոնական պետությունների և Բյուզանդական կայսրության հասարակական ու պետական իրականության փաստերով հագեցած պատմական ստուգությունը: Այդ վարքագրությունը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հայերի մասին: Պարզվում է, որ սլավոնական լուսավորիչներ և քրիստոնեության քարոզիչներ, եղբայրներ Կիրիլը (Կոստանդին) և Մեֆոդին (Մեթոդիոս) Կոստանդնուպոլսի Մագնավրի բարձրագույն դպրոցում 843-846թթ. աշակերտել են այդ ուսումնական հաստատության հիմնադիր

[5] Ն. Գասապյան, Պուլկարահայ հիշատակարաններ, «Հայրենի տարեցոյց», Պլովդիվ, 1938, էջ 16:

[6] Տե՛ս Литаврин Г. Г., Хроника Константина Преславского. – В сб: Археографический ежегодник за 1965г., М., 1966, с. 47-48.

հայազգի մաթեմատիկոս Լևոնի և եկեղեցական հայտնի գործիչ, աստվածաբան Փոտի մոտ[7]: Վերջինս նպաստել է քրիստոնեության տարածմանը բուլղարացիների մեջ, պայքարել պավլիկյանների դեմ, որի համար դասվել է հունադավան եկեղեցու սրբերի շարքը[8]:

Սլավոնական խոսքի առաջին ջատագովները՝ Կիրիլն ու Մեֆոդին, նաև ծանոթ են եղել հայկական մշակույթին և հայոց եկեղեցու ժամասացության սահմանված կարգին: Անտարակույս, մինչ նման կարևոր հարցով, այս դեպքում՝ սլավոնական այբուբենով զբաղվելը, ըստ լեզվաբան, սլավոնագետ Սամուիլ Բերնշտեյնի՝ Կիրիլն արդեն գիտելիքներ ուներ մայրենի լեզվով գիր և գրականություն ունեցող մի շարք ժողովուրդների, այդ թվում՝ հայերի բանասիրության վերաբերյալ[9]: Կիրիլը, հենվելով հին մշակույթ ու դպրություն ունեցող ժողովուրդների և առաջին հերթին՝ հայերի հեղինակության վրա, արդարացնում է սլավոնական գրերի ստեղծումը. «Մենք շատ ժողովուրդների գիտենք,– գրում է նա,– որոնք Աստծուն փառաբանում են իրենց լեզվով: Դրանք են հայերը, պարսիկները, գոթերը, ավարները, խազարները, եգիպտացիները, ասորիները…»[10]: Այնուհետև Աստվածաշնչի օրինակներով ապացուցում է, որ սլավոնական գրերի ստեղծումը չի կարելի մեղք համարել[11]:

Բուլղարահայ պատմաբան Կ. Ճնկոզյանը իր ուսումնասիրությունում ևս եկել է այն եզրակացության, որ Կիրիլն ու Մեֆոդին իսկապես ծանոթ են եղել հայ գրականությանն ու մշակույթին[12]: Սրանք բավարար չհամարելով՝ բերենք նաև այլ փաստեր՝ հենվելով միջնադարյան մի քանի բուլղարական հիշատակարանների

[7] Климент Охридский. Сборник сочинений., т. 1, София, 1970, с. 39.

[8] Липшиц Е.Э. Византийский ученый Лев Математик: (Из истории византийский культуры в IX в.) //Византийский временник. Т. 2(27). М., 1949, с. 117-118.

[9] Бернштейн С.Б. Константин Философ и Мефодий. М., 1984, с. 32-33.

[10] Святые Кирилл и Мефодий, Вероучители славян, М., 1907, с.220.

[11] Там же, с. 235.

[12] Կ. Ճնկոզյան, Էջեր հայ և բուլղարացի ժողովուրդների դարավոր բարեկամության պատմությունից, «Երևան», Սոֆիա, 1958թ. դեկտեմբերի 19:

նյութերի վրա: Այսպես՝ Կլիմենտ Օխրիդացու «Կիրիլի ընդարձակ վարքագրության» մեջ ասված է, որ Խազարյան առաքելությունը կատարելիս, երբ Կիրիլը տիրապետում էր բազմաթիվ լեզուների, նա եղբոր և մի խումբ աշակերտների հետ «եկավ Կովկասյան լեռներ…, որտեղ մնաց որոշ ժամանակ»[13]: Այդ փաստը մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ նա, լինելով Կովկասում, եղել է նաև հայերի միջավայրում և հնարավորություն է ունեցել մոտիկից ծանոթանալու առաջինը քրիստոնեություն ընդունած հայ ժողովրդի բարքերին, սովորույթներին և լեզվին:

Գոյություն ունեն տարբեր կարծիքներ հին սլավոնական երկու այբուբենների՝ գլագոլիցայի և կիրիլիցայի մասին: Այսպես՝ ուկրաինացի հայտնի լեզվաբան, սլավոնագետ Նիկոլայ Գրունսկին պնդում է, որ գլագոլիցան, որ 10-11-րդ դդ. տարածված է եղել հարավարևմտյան սլավոնների մոտ Բալկանյան թերակղզու արևմտյան մասում և Մորավիայում, կազմվել է հունական, հայկական, ղպտական, լատինական և այլ տառերի օգտագործումով[14]: Նա նույնիսկ նմանություն է գտնում գլագոլիցա *Б*, *И*, *С* և հայկական *Վ*, *Ի* և *Ս* տառերի ձևերի միջև[15]:

Բուլղարիայում 9-12-րդ դդ. ծավալվում են տարաբնույթ հերետիկոսական շարժումներ, որոնցից մի քանիսը, ըստ բուլղարացի պատմաբան Գավրիլ Քացարովի՝ սկիզբ էին առնում Հայաստանից: Այդ իսկ պատճառով բուլղարացիները սերտորեն կապված էին հայերի հետ: Այդ ժամանակաշրջանում Բուլղարիայում և Բալկաններում հայտնի է դառնում այսպես կոչված «Հայկական հերձվածողություն» կրոնափիլիսոփայական ուսմունքը[16]: Այդ հասկացության հետ է կապվում քրիստոնեության քարոզը միաբնակության (մոնոֆիզիտություն) ձևով, ինչպես նաև աստղային պաշտամունքը՝ արևին երկրպագելը: 10-րդ դարիբուլղարացի եկեղեցական

[13] Климент Охридский, указ. соч., с. 52-53:

[14] Грунский Н. К. Очерки по истории разработки синтаксиса славянских языков. СПб, 1911, т.1, вып. 1-2, с. 45.

[15] Там же.

[16] Գ. Քացարով, Պատմական կապեր Պուլկարիո եւ Հայաստանի միջեւ, «Մասիս», Սոֆիա, 1932, էջ 21:

գործիչ և գրող Հովհաննն Եքսարքոսն (Էկզարխ) իր «Վեցօրյակ» ստեղծագործության մեջ արևի պաշտամունքի կողմնակիցների մասին գրել է. «... շատերը կարող են ընկնել մոլորության մեջ և երկնային մարմիններն անվանել Աստված, խոնարհվել դրանց և երկրպագել»[17]: Այն ժամանակ, երբ Հովհան Եքսարքոսը գրում էր իր երկը, Բուլղարիայում պավլիկյան շարժման կենտրոն էր համարվում Թրակիան, որտեղ դեռևս 8-րդ դարում գոյություն են ունեցել հայկական գաղութներ[18]:

Բուլղարիայում պավլիկյանության առաջին ծիլերը երևան են եկել դեռևս 8-րդ դարի կեսերին բյուզանդական կայսր Կոստանդին V-ի գաղութարար քաղաքականության հետևանքով: Պավլիկյանների և թոնդրակեցիների հարկադրական գաղթը՝ Հայաստանից Թրակիա, ինչպես նաև Բուլղարիա, շարունակվել է նաև 10-11-րդ դարերում: Բյուզանդական կայսր Հովհաննես I Ցիմիսխիի (Չմշկիկ, 969-976թթ.) կարգադրությամբ բազմաթիվ հայ պավլիկյաններ բնակություն են հաստատում Ֆիլիպոպոլսի (ներկայիս՝ Պլովդիվ քաղաք) մոտակայքում: Պավլիկյանությունը 10-րդ դարում սկսում է Թրակիայից արագորեն թափանցել Մակեդոնիա՝ շնորհիվ հայ պավլիկյանների, որոնք բնակություն էին հաստատել այդ վայրերում բյուզանդական կայսր Վասիլ II-ի (976-1025թթ.) կարգադրությամբ, որի նպատակն էր ամրացնել կայսրության հյուսիսային սահմաններն ընդդեմ բուլղարացիների[19]:

Ըստ բուլղարացի պատմաբան Դիմիտր Անգելովի՝ հայերը ոչ միայն պավլիկյանություն են տարածել Բուլղարիայում, այլև բարենպաստ պայմաններ են ստեղծել այնտեղ բոգոմիլյան՝ հերետիկոսական և հակաավատատիրական շարժման բռնկման համար[20]: Բյուզանդական լծի դեմ պայքարելիս բուլղարացիներին աջակցում

[17] Иоанн Экзарх, Шестоднев. – В кн.: Памятники средневековой болгарской литературы. М., 1972, с. 218-219.

[18] Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 311:

[19] Տե՛ս Джонатан Харрис. Византия. История исчезнувшей империи, М., 2017, с. 159.

[20] Ангелов Д. Богомильство в Болгарии. М., 1954, с. 58

էին նաև հայերը: Այսպես՝ Պյոտր Դեյյանի 1040թ. և Գեորգի Վոյտեխի 1072թ. գլխավորած բուլղարական հայտնի ապստամբությունների ժամանակ բուլղարացիները գործում էին Թրակիայում գտնվող պավլիկյանների և ամենից առաջ 8-րդ դարում այնտեղ գաղթեցված հայերի հետ[21]:

Բյուզանդիայում և Բուլղարիայում հերետիկոսական շարժման լայն տարածման մասին են վկայում 12-րդ դարի երկրորդ կեսի բուլղարական գրավոր հուշարձանները: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում առավել ուշ շրջանի խմբագրությամբ պահպանված Երկրորդ Բուլղարական թագավորության (1185-1396թթ.) վերջին և ամենահայտնի պատրիարք, գիտնական և գրականագետ Եֆտիմիյ Տիրնովսկու կազմած «Իլարիոն Մեգլինցկու վարքագրությունը»[22]: Այնտեղ մասնավորապես ասվում է, որ եպիսկոպոս Իլարիոնը, տեսնելով, որ տեղի բնակիչներից շատերը վարակված են մանիքեան, այսինքն՝ պավլիկյան հերձվածողությամբ, խիստ անհանգստացել է և պայքար սկսել այդ հերետիկոսության դեմ: Նա կատաղի վեճեր է ունեցել առավել համառ պավլիկյանների հետ: Տևական բանակռիվն ավարտվել է նրանով, որ պավլիկյաններից շատերն իրենց պարտված են ճանաչել: Դրան հաջորդել է նաև վեճը հայ միաբնակների (մոնոֆիզիտներ) հետ, որ ինչպես ասվում է վարքագրության մեջ, շատ համառ էին և համարձակորեն պաշտպանում էին իրենց հայացքները: Վերոնշյալ երկը գրված է վարքագրական ներբողական ոճով: Միջնադարյան գեղարվեստական կաննոների համաձայն՝ գլխավոր հերոսը, տվյալ դեպքում՝ Իլարիոն Մեգլինցկին, հերետիկոսության դեմ ուղղված պայքարն ավարտում է հաջողությամբ և բանավեճում հաղթում է նրանց: Այստեղից բխում է, որ պետք է տարբերություն դնել «պավլիկյանություն» և «հայկական հերետիկոսություն» հասկացությունների միջև:

---

[21] Տե՛ս История Болгарии. Под. ред. П. Н. Третьякова и др., т. 1, М., 1954, с. 115-116.

[22] Евфтимий Тырновский, Житие Илариона Меглинцкого. – В. сб.: Археографический ежегодник за 1962г. М., 1963, с. 37-48.

Միջնադարյան բուլղարական գրական երկերի մեծ մասում «հայերին» կամ «հայկական հերետիկոսներին» համարում են միաբնակներ կամ արևի պաշտամունքի կողմնակիցներ: Այդ իմաստով է նրանց մասին խոսվում նաև բուլղարական թագավոր Բորիլի (1207-1218թթ.) սինոդիկում (հիշատակարանում)[23]:

1211թ. փետրվարին Բորիլը Վելիկո Տիրնովոյում հրավիրում է եկեղեցական ժողով ընդդեմ բոգոմիլների: Այդ ժողովի հետ է կապված նաև բուլղարական միջնադարյան գրականության հայտնի երկերից մեկը՝ «Բորիլովյան սինոդիկը», որի հիմնական տեքստը թարգմանվել է հունարեն «Սինոդիկը ուղղափառության վերածննդում» երկից, որը գրվել է 843թվականին[24]:

Ընդհանրապես Բուլղարիայի պատմության համար առավել արժեքավոր են 14-րդ դարում գրված երկերը՝ հերետիկոսության դեմ ուղղված նզովքները, որոնք կապված են Տիրնովոյի պատրիարք Եֆտիմիյի հետ: «Բորիլովյան սինոդիկի» հենց այդ մասում է խոսվում հայերի մասին, որոնց համարում են հերետիկոսներ. «Երիցս նզովյալ լինեն նրանք,– նշվում է հիշատակարանում,– ովքեր առնչվում են հայկական հավատին, նրանց ծիսակատարություններին ու իմաստակություններին»[25], այսինքն՝ սոփեստություններին:

«Հայկական հերետիկոսության» մասին խոսվում է նաև միջնադարյան այլ գրական հուշարձաններում: Դրանցից մեկի հեղինակը 14-րդ դարի բուլղարացի եկեղեցական գործիչ, գրող և թարգմանիչ Կիպրիանոսն է: Կոստանդնուպոլսի պատրիարք Փիլոթեոսը 1375թ. նրան ուղարկում է Ռուսաստան՝ այնտեղ ուսումնասիրելու միտրոպոլիտ ունենալու ռուս իշխանների պահանջը: 1390թ. նա դառնում է Կիևի, համայն Ռուսիայի և Լիտվիայի միտրոպոլիտ և գահակալում է մինչև 1406 թվականը: 14-րդ դարի այդ գրավոր հուշարձանը խորագրված է. «Կիպրիանոսի՝ Կիևի և համայն Ռուսիայի խոնարհ միտրոպոլիտի պատասխանը մի քանի

[23] Տե՛ս Попруженко М. Г. Синодик царя Борила, Одесса, 1899, с. 61-62.

[24] Там же, с. 60.

[25] Там же, с. 64.

կարևոր գործերի վերաբերյալ»[26]: Դրանում խոսք կա նաև «հայկական հերետիկոսության» հետ կապված հարցերի մասին:

Հայ-բուլղարական կապերի մասին վկայում է նաև երկլեզու հայ-կիրիլյան արձանագրությունը, որը փորագրված է Սերբիայում 13-րդ դարում կառուցված Վիտովնիցի վանքում՝ տեղադրված քարե սալի վրա: Այդ արձանագրությունը երկար ժամանակ համարվել է սերբական: Բուլղարահայ պատմաբան Արա Մարգոսը պատմական և լեզվական փաստերի հիման վրա եկել է այն եզրահանգմանը, որ 1218թ. այդ արձանագրության կիրիլյան տեքստը հին բուլղարերեն է[27]:

Հայերի ու բուլղարացիների միջև միջնադարում գոյություն ունեցած կապերի մասին հիշատակում են նաև բյուզանդական աղբյուրները: Մասնավորապես՝ այդպիսի աղբյուրներ են անհայտ հեղինակների կողմից Բյուզանդական կայսրության միապետների կենսագրությունների մասին գրված «Թեոփանեսի շարունակողը», որտեղ ընդգրկված են 813-961թթ. իրադարձությունները, 11-րդ դ. երկրորդ կեսի ժամանակագիր Հովհաննես Սկիլիցեսի «Համառոտութիւն պատմութեանց» երկը, որտեղ լուսաբանված են 811-1057թթ. դեպքերը, 12-րդ դարի ժամանակագիր և բանաստեղծ, միտրոպոլիտ Կոստանդին Մանասեսի «Սինոփսիս իստորիկե» (Պատմական ակնարկ) գիրքը, որտեղ իրադարձությունների շարադրանքն ընդգրկում է աշխարհի արարումից մինչև 1081թ.: Կարևոր վկայություն է նաև 10-րդ դարի իտալացի պատմաբան, դիվանագետ, եպիսկոպոս Լիուտպրանդ Կրեմոնացու «Անտապոդոսիս» (Հատուցում) պատմական ժամանակագրությունը, որտեղ ներկայացված են 958-962թթ. իրողությունները[28]:

---

[26] Снегаров И. К истории культурных связей между Болгарией и Россией в конце XIV – начале XV в. – В сб.: Международные связи России до XVII века. М., 1961, с. 42.

[27] Ա. Մարգոս, Վիտովնիցի արձանագրության մասին, «Երևան», Սոֆիա, 1960թ., սեպտեմբերի 5:

[28] Տե՛ս Продолжатель Феофана. Жизнеописания византийских царей. СПб, 2009; Վ. Միքայելյան «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Բյուզանդական աղբյուրներ, հ. Գ., Հովհաննես Սկիլիցես» / թարգ.

Բուլղարիայի միջնադարյան պատմությունից հայտնի է, որ բուլղարական որոշ իշխաններ և արքաներ բարեկամական հարաբերութուններ էին հաստատել բյուզանդական հայազգի ազդեցիկ ազնվականների և կայսրերի հետ: Այսպես՝ բուլղարական թագավոր Սիմեոն I-ի (893-927թթ.) երկրորդ կինը հայուհի Մարիան (Մարիամ) էր՝ բուլղարական արքունիքի հայտնի գործիչներից մեկի՝ իշխան Գեորգի (Գրիգոր) Սուրսուբուլի (կամ բուլղ.՝ Սուրսուվուլ) քույրը[29]: Սիմեոն I-ի և Մարիայի երեք որդիներից Պետեր (Պյոտր) I-ը հոր մահից հետո դարձավ Բուլղարիայի թագավոր (927-969թթ.), իսկ նրա քույրը, ըստ Լիուտպրանտ Կրեմոնացու՝ 913թ. ամուսնացավ բյուզանդական հայազգի կայսր Կոստանդին VII Ծիրանածինի (913-920թթ. և 944-959թթ.) հետ[30]:

Ըստ բրիտանացի հայտնի բյուզանդագետ Ստիվեն Ռանսիմենի՝ Գեորգի Սուրսուբուլը Բուլղարիա էր եկել Բյուզանդիայից: Նա Սիմեոն I-ի օրոք Բուլղարական թագավորության առաջին նախարարն էր, իսկ վերջինիս մահից հետո, նրա որդու՝ Պետերի և նրա երկու եղբայրների խնամակալը, Բուլղարիայի փաստացի կառավարիչը (927-928թթ.): Նրա ջանքերով 927թ. բյուզանդական հայազգի կայսր Ռոմանոս I Լակաբենոսի (920-944թթ.) հետ կնքվում է հաշտության պայմանագիր, որով ավարտվում է բյուզադա-բուլղարական 913-927թթ. պատերազմը: Այդ հաշտության պայմանագիրն ամրապնդվում է Պետերի և բյուզանդական կայսեր թոռնուհու Մարիա Լակաբենոսի (նա վերանվանվել է Իրենա, որ նշանակում է «խաղաղություն») ամուսնությամբ: Նրանց որդիներից երկուսը հետագայում դարձան բուլղարական արքաներ՝ Բորիս II-ը (969-977թթ.) և Ռոմանը (977-997թթ.): Պետեր I-ի օրոք Գեորգի Սուրսուբուլը դարձավ Բուլղարիայի դեսպանը բյուզանդական արքու-

---

Բնագրից Հ. Բարթիկյանի: Եր., 1979; Дуйчев И. Хроника Константина Манассии. София, 1980; Лиутпранд Кремонский. Антаподосис (Воздаяния). М., 2006.

[29] Տե՛ս Стивен Рансимен. История первого Болгарского царства. СПб, 2009, с. 177-178.

[30] Агамов А.М. Комитопулы // Династии Европы, 400-2016: Полная генеалогия владетельных домов. М., 2017, с. 69.

նիքում[31]: Ժամանակակիցները նրան բնութագրել են, որպես խոշոր դիվանագետ, որ զգալի դերակատարում է ունեցել Բուլղարիայում դիվանագիտության զարգացման գործում:

Բուլղարիայի միջնադարյան պատմության հետ է սերտորեն առնչվում հայկական ծագում ունեցող Կոմիտոպուլիների (հայ.՝ Կոմսաձագեր) արքայատոհմի անվանումը, որի հիմնադիրը, ըստ բուլղարացի պատմաբան Գ. Քացարովի հայազգի Սամուիլը կամ Սամուելն է[32]: Նրա մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Հովհաննես Սկիլիցեսը, ըստ որի՝ այդ տոհմը սերել է Նիկոլա (Նիկողայոս) կոմիտից, որ հունարեն բառ է, նշանակում է մարզի կառավարիչ, կոմս: Կոմիտոպուլիների իրական անունն անհայտ է, և Կոմիտոպուլի անվանումը տրվել է բյուզանդացի պատմիչների կողմից, որպեսզի դրանով շեշտեն այդ տոհմի ծագումը[33]:

Ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ Սամուիլը Մեծ Հայքի Դերջան գավառից էր[34], որ իր ծնողների հետ տեղափոխվել էր Բյուզանդիա: Մայրը՝ Հռիփսիմեն, ենթադրաբար համարվում է հայոց արքա Աշոտ II Բագրատունու դուստրը: Հաստատվելով Բյուզանդիայում՝ հայրը որոշ ժամանակ անց դարձել էր կայսրության Սերդիկա (Սրեդեց՝ ներկայիս Սոֆիա) տարածաշրջանի կառավարիչ[35]: Նրան հաջողվել է հետագայում ընդարձակել իր տիրույթը՝ բուլղարական այլ հողեր նվաճելով: Կոմիտի մահից հետո այդ տարածքների կառավարիչներ են դարձել նրա չորս որդիները՝ Դավիթը՝ հարավարևմտյան, Մովսեսը՝ հարավարևելյան, Սամուիլը՝ հյուսիսա-

---

[31] Стивен Рансимен, указ. соч., с.182.

[32] Տե՛ս Գ. Քացարով, նշվ. աշխ., էջ 243:

[33] Агамов А.М., указ. соч., с.70.

[34] «Տիեզերական պատմութիւն Ստեփաննոս վարդապետի Տարօնեցւոյ», ծանոթագրությամբ Կարապետ Շահնազարյանցի: Փարիզ, 1859, Գիրք Գ, էջ 236-237:

[35] Adontz Nikoghayos. Samuel l'Armenien, Roi des Bulgares. Bruxelles, Palaisdesacademies, 1938, p. 63; Златарский В. История Болгарского государства в Средние века: в 3-х т., т. 1, История Первого Болгарского царства. Часть II (852-1018), II изд., София, 1971, с. 603.

յին Բուլղարիայում, իսկ Ահարոնը՝ Սրեդեցի տարածաշրջանում: Եղբայրներից Դավիթը և Մովսեսը կյանքից վաղաժամ էին հեռացել, իսկ Սամուիլի և Ահարոնի միջև սկսվել էր հակամարտություն, քանի որ վերջինս վարում էր բյուզանդամետ քաղաքականություն[36]: Ահարոնը 976թ. սպանվում է բուլղարների դեմ Թրակիայում պատերազմելիս, որին եղբայրները բյուզանդական հայազգի կայսր Վասիլ II Բուլղարասպանի (976-1025թթ.) հրամանով մասնակցում էին իրենց զորամասերով:

Ըստ բուլղարահայ պատմաբան Ներսես Գասապյանի՝ այդ զորմասերը գրեթե ամբողջապես եղել են հայկական[37]: Թրակիայում ականատես լինելով տեղացիների նկատմամբ իրականացվող ոճրագործություններին՝ Սամուիլը, ապստամբելով բյուզանդացիների դեմ, անցնում է բուլղարացիների կողմը: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ գերեվարությունից փախուստի դիմած բուլղարական արքայազն Ռոմանն արդեն դարձել էր Բուլղարիայի թագավոր: Ծառայելով բուլղարական բանակում որպես հմուտ զորավար՝ Սամուիլը, կարճ ժամանակում շահելով տեղի ազնվականության և բնակչության վստահությունը, դառնում է թագավորի կառավարչակիցը, մի քանի հաղթանակներ է տանում բյուզանդացիների նկատմամբ, գրավում բուլղարական հյուսիսարևելյան մի շարք տարածքներ և դրանով ընդարձակում է թագավորության սահմանները: Բուլղարական թագավոր Ռոմանի մահից հետո՝ 997թ. նա հռչակվում է Արևմտյան Բուլղարիայի թագավոր՝ դրանով հիմք դնելով Կոմիտոպուլիների արքայատոհմին Բուլղարիայում[38]:

Սամուիլի օրոք Բյուզանդիայից Բուլղարիա են տեղափոխվում հազարավոր հայկական ընտանիքներ, այնտեղ հայտնվում են անգամ հայկական տեղանուններով բնակավայրեր՝ Արմենցո, Արմենիկա, Էրմենցի և այլն, որոնք մինչ օրս էլ պահպանվում են: Սամուիլը վախճանվել է 1014թ.: Հին գրական աղբյուրներում նա

---

[36] Агамов А.М., указ. соч., с. 74.

[37] Ն. Գասապյան, նշվ. աշխ., էջ 53:

[38] Литаврин Г.Г.; Каждан А.П. Очерки истории Византии и южных славян. СПб, 1998, с. 67:

հիշատակվում է որպես «անհաղթ և արդար տիրակալ», «հայրենիքի ու ժողովրդի անմնացորդ նվիրյալ»[39]: Նրա մասին հետագայում գրել են նաև գեղարվեստական ստեղծագործություններ բուլղարացի գրողներ Դիմիտր Տալևը, Անտոն Դոնչևը, Ստեֆան Ցաննը և այլք:

Սամուիլի մահից հետո արևմտաբուլղարական գահին բազմել է նրա որդին՝ Գավրիլ-Ռադոմիրը, որի կառավարումը եղել է կարճաժամկետ: Նա 1015թ. դավադրաբար սպանվել է իր հորեղբայր Ահարոնի որդու՝ Իվան-Վլադիսլավի կողմից, ում կյանքը մի ժամանակ փրկել էր Ռադոմիրը: Իվան-Վլադիսլավը, դառնալով թագավոր, գահակալել է մինչև 1018թ., որով ավարտվել է Կոմիտոպուլիների արքայատահոմը[40]: Հետագայում նրանց ներկայացուցիչներից շատերը կարևոր պաշտոններ են զբաղեցրել նաև Բյուզանդիայում՝ դառնալով զորահրամանատարներ, մարզերի կառավարիչներ և անգամ կայսրուհիներ:

9-րդ դարում Բյուզանդիայում հաստատվում է Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը[41], ինչն արտահայտվում էր նրանով, որ Գրիգորին համարում էին արևելյան ուղղափառ քրիստոնեական մեծ մարտիրոսներից մեկը: Հետագա դարերում Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը տարածվում է նաև Բալկաններում, ամենից շատ՝ Թրակիայում և Մակեդոնիայում, որտեղ բնակչության մեծ մասը հայ պավլիկյաններ էին կամ միաբնակներ: Բացի այդ, հայ-բուլղարական կապերի մասին վկայում են նաև 11-րդ դարի առաջին կեսում Օխրիդի եպիսկոպոս Թեոփիլակի թողած տվյալները և դրանց հիման վրա բուլղարացի գիտնական Յորդան Իվանովի և ֆրանսիացի բյուզանդագետ Գաբրիել Մեյեի ուսումնասիրությունները: Դրանք հավաստի տեղեկություններ են տալիս, որ 12-13-րդ դարերում հայկական գաղթօջախներեն եղել Մգլենում, Դևոլում,

[39] Агамов А.М., указ. соч., с. 82.

[40] Державин Н.С. История Болгарии в 4-х т. Т.2: Болгария времен Первого и Второго царств (679-1393). М.-Л., 1946, с. 37.

[41] Տե՛ս Тальберг Н. История Христианской церкви. М., 1991, с. 46.

Օխրիդում, Բիտոլայում և Ստրումիցայում[42]:

Միջնադարյան Բուլղարիայում սեպտեմբերի 30-ը նշվել է որպես Գրիգոր Լուսավորչի մահվան օր[43]: Նրա վարքը զետեղված է սեպտեմբեր ամսվա հայսմավուրքներում[44]: Այն վարք սրբոց է, որը Բուլղարիայում հայտնվել է հունարեն թարգմանությամբ: Այդ փաստն ապացուցվել է, երբ համեմատության մեջ են դրվել հայկական սկզբնաղբյուրը, հունական խմբագրված տարբերակը և հնագույն բուլղարական պատճենը: Հատկապես Բուլղարիայով է Գրիգոր Լուսավորչի վարքը հասել Ռուսաստան, իսկ Սեբաստիայով՝ արևմտաեվրոպական երկրներ, մասնավորապես՝ Ֆրանսիա և Իտալիա:

Վերոհիշյալ աղբյուրները, անշուշտ, միակը չեն, որոնցում արտացոլված է հայկական թեմատիկան: Այդ հարցի առավել խոր ուսումնասիրությունը, հիրավի, կարող է ավելի հետաքրքիր արդյունքներ տալ քննարկվող դարաշրջանում հայերի և բուլղարացիների միջև եղած շփումների, բարեկամական կապերի և դրանց արտացոլման մասին միջնադարյան գրավոր հուշարձաններում:

[42] «Երևան», Սոֆիա, 1959թ., մայիսի 29:

[43] Գ. Քացարով, նշվ. աշխ., էջ 32:

[44] Նույն տեղում:

Средневековые источники об армяно-болгарских отношениях

Хажакян Вачаган

Резюме

Ключевые слова: *летописец, историк, произведение, византиец, болгарин, армянин, насильственное переселение, павликиане, ересь, император, колония, общение, дружеские отношения*

Между армянским и болгарским народами ещё в раннем средневековье были установлены дружественные отношения. Об этом свидетельствуют средневековые многочисленные письменные памятники, в частности, творения византийских и болгарских авторов, в которых отражена также армянская тематика.

Уже в 8-ом веке на территории Болгарии, во Фракии, существовала армянская колония, а в 997-1014 годах на Западно-Болгарском престоле правил основатель царской династии армянского происхождения Комитопулиев Самуил, в пору правления которого армяно-болгарские отношения стали плотнее, тысячи армянских семей перебрались из Византии в Болгарию.

В данной статье исследуется произведения византийских летописцев Феофана Исповедника (8-9вв.), Иоанна Скилица (11-12вв.), митрополита Константина Манассия (12 в.), итальянского историка, епископа Лиутпранда Кремонского (10 в.), а также всеславянского просветителя Климента Охридского (9-10 в.), болгарских церковных деятелей Константина Преславского (9-10 вв.) и Иоанна Экзарха (10 в.), патриарха Евфимия Тырновского (14 в.), митрополита Киприана (14 в.) и других, в чьих произведениях нашли свое отражение также сведения об армянах и армяно-болгарских связях в средние века.

Medieval Sources on Armenian-Bulgarian Relations

Khazhakyan Vachagan

Summary

Key words: *chronicler, historian, literary works, exile,colony, Paulicians, heresy, emperor, Byzantine, Armenian, Bulgarian, contact, friendly relationships*

Still in the early Middle Ages, Armenians and Bulgarians formed friendly ties which is affirmed by a number of medieval literary monuments; particularly, the works written by Byzantine and Bulgarian authors in which the Armenian theme is also reflected.

Already in the 8th century, an Armenian colony existed in the territory of Bulgaria, in Thrace. From 997-1014, Samuel, the founder of the Cometopuli Dynasty with Armenian origin, ruled Western Bulgaria. During his reign, Armenians and Bulgarians formed closer ties and thousands of Armenian families moved from Byzantium to Bulgaria.

In this article, we study the works of Byzantine chroniclers Theophanes the Confessor (8-9th centuries), John Skylitzes (11-12th centuries), Metropolitan Constantine Manasses (12th century), Italian historian, Bishop Liutprand of Cremona (10th century), as well as an enlightener of Slavs Clement of Ohrid (9-10th centuries), Bulgarian church leaders Constantine of Preslav (9-10th cc.) and John the Exarch (10th century), Patriarch Euthymius of Tarnovo (14th century) and Metropolitan Cyprian (14th century) and others. Information about the Armenians and the Armenian-Bulgarian relations in the Middle Ages are also reflected in the writings of the aforementioned authors.

Ներկայացվել է 30.09.2019 թ.
Գրախոսվել է 22.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Կանանց մասնակցությունը 19-րդ դարի գավառահայ հասարակական ընկերությունների գործունեությանը

Չատինյան Զոյա

Հանգուցային բառեր. *միություն, կրթադաստիարակչական, բարեգործական-խնամակալական, Վան, Կարին, Տրապիզոն, Բաղեշ, Երզնկա, Խարբերդ, Մալաթիա, Այնթապ, Մեբաստիա*

1860թ. մայիսի 24-ին արևմտահայերի «Ազգային սահմանադրության» ընդունումը հնարավորություն ընձեռեց արևմտահայությանը ստեղծել նոր հասարակական ընկերություններ, որոնց հիմնական նպատակը հայ կանանց կրթադաստիարակչական գործն էր, կայսրության հայաշատ քաղաքներում օրիորդաց վարժարաններ բացելը, գործող վարժարաններին գրենական պիտույքներով և ֆինանսական միջոցներով ապահովելը: Եթե սկզբնական շրջանում հասարակական ընկերությունների հիմնադիրները բացառապես տղամարդիկ էին, ապա հետագայում ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել նաև կանայք: Այսպիսի ընկերությունները մեծամասնությամբ ստեղծվեցին մայրաքաղաք Կ. Պոլսում:

Կ. Պոլսից զատ հայ կանանց կողմից հասարակական-մշակութային ընկերություններ ստեղծվեցին նաև Վանում, Կարինում, Տարպիզոնում, Բաղեշում, Երզնկայում, Մալաթիայում, Խարբերդում, Այնթապում, Սեբաստիայում և շրջակա գյուղերում: Այդ ընկերությունների գործունեության բացահայտումը հայ պատմագրության համար կարևոր խնդիր է, քանի որ դրանց վերաբերյալ հիմնարար ուսումնասիրություն չի կատարվել: Դրանց գործունեությանը ժամանակ առ ժամանակ անդրադարձել է պարբերական մամուլը, որի սահմանափակ հրապարակումները հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել հասարակական, կրթական և մշակութային ընկերություններին կանանց մասնակցության մասին: Գավառահայ կանանց կողմից հիմնադրված հասարակական ընկերություններն իրենց գործունեությունն իրականացրել են երկու հիմնական ուղղությամբ՝ կրթադաստիարակչական և խնամակալական-բարեգործական: Նրանց հիմնական

նպատակը գավառներում արդեն բացված օրիորդաց վարժարանների կամ դպրոցների ֆինանսական վիճակի բարելավումն էր և կրթական գործունեության բնագավառային ընդլայնումը: Այս նպատակն էր հետապնդում Վանում «Սանդուխտյան» վարժարանի առաջին աշակերտուհիների կողմից 1890թ. հիմնադրված «Սանուհեաց կրթասէր միութիւն»-ը[1]: Այն նախատեսում էր բարձրացնել վարժարանի սաների կրթության որակը և մտցնել կարուձևի և ձեռագործության խմբակներ: Ընկերության հիմնադիրն ու ատենապետը տիկին Իսկուհի Խրիմյանն էր: «Սանուհեաց կրթասէր միութիւն»-ը 1894թ. Սանդուխտյան վարժարանին է նվիրում երկու թավշապատ բազկաթոռ, մեկ թիկնաթոռ, 10 գրասեղան և աթոռ աշակերտուհիների համար: Տիկին Իսկուհի Խրիմյանը Վանում Եղիսաբեթ և Մարինե Աճեմյանների, Մարգարիտ Պապիկյանի և այլոց հետ հիմնում է նաև գորգագործական արհեստանոց[2]:

Այսօրինակ ընկերություններ ստեղծվեցին նաև Բաղեշում: «Թաղին որբ, աղքատիկ եւ հարուստ» աղջիկների դաստիարակության և կրթության գործը կարգավորելու նպատակով 1867 թ. Բաղեշում «ազգասէր արհեստաւորների» կողմից հիմնվում է «Հռիփսիմեան օրիորդաց» ընկերությունը[3]: Ընկերության ջանքերով վարձված տարածքում ուսյալ Տեր Մովսես քահանա Սարդարյանի ուսուցչապետությամբ թաղամասի աղջիկները գրել ու կարդալ են սովորել և զբաղվել ընթերցանությամբ: Այն աղքատ աղջիկներին և որբերին ապահովում էր համապատասխան դասագրքերով և դպրոցական համազգեստով: 1869թ. սկզբին ընկերությունը ուներ աղջիկների դպրոց, որտեղ հաճախում էին ավելի քան 60 աշակերտ: Դպրոցի ուսուցչապետն էր Տեր Մովսես քահանա Սարդարյանը: Ընկերությունը նախատեսել է Բաղեշում «օրիորդանց վարժարան բանալ»[4]: Բաղեշում հայ կանանց կողմից հիմնված մյուս

[1] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հատոր Բ, 1963, էջ 30:

[2] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ.,էջ 31:

[3] «Մասիս», Կ. Պոլիս, 1867, 4 նոյեմբերի, թիվ 821:

[4] Նույն տեղում:

ընկերությունը «Հայուհեաց ընկերութիւնն» է: Այս ընկերությունը հիմնվել է 1895թ. Հինգ խորան կոչվող եկեղեցու քահանա Գևորգ Մարտիրոսյանի հորդորով: Ընկերության ատենապետ է կարգվում քաղաքային վարչության կողմից քաղաքի մանկաբարձուհի նշանակված Իսկուհի Յութուճյանը: Ընկերությանը կարող էին անդամակցել բոլոր չափահաս և վճարունակ կանայք: Շաբաթական անդամավճար էր սահմանվում 10 փարան[5]: Բաղեշի հայ տիկնայք նախատեսում էին օրիորդների կրթությունը ապահովելու համար վարժարան բացել, որի նպատակով հատուկ Մուշից վարժուհի էին հրավիրել:

1852թ. Տրապիզոնում կազմավորվում է «Գայիանեանց» ընկերությունը, որն իր առաջ խնդիր էր դրել նպաստել նահանգի աղջիկների դաստիարակությանը և այդ նպատակով բացել Գայանեյան վարժարանը[6]: Սակայն ընկերության կազմավորումից մեկ տարի անց սկսվում է Արևելյան (Ղրիմի) պատերազմը, որի տարիներին ընկերությունը անգործության է մատնվում՝ չկարողանալով շարունակել իր հայանպաստ գործը: Այն վերսկսում է իր գործունեությունը 1856թ. հունվարի 1-ին՝ Աբել Վ. Մխիթարյանի ջանքերով: Վերոհիշյալ ընկերությանը տղամարդկանցից զատ կարող էին անդամագրվել նաև կանայք[7]: Ընկերությունը սահմանել էր նաև շաբաթական անդամավճար, որի չափը հայտնի չէ: Վերակազմավորվելուց հետո մինչև տարեվերջ «Գայիանեանց» ընկերությանը անդամագրվել են ավելի քան 500 կանայք և տղամարդիկ: Կանայք տեղեկանալով, որ ընկերությունը նպատակ ունի հայ օրիորդների համար դպրոց բացել, դրան անդամագրվում էին ընտանիքներով: Նրանք բարեխղճորեն վճարում էին ոչ միայն սահմանված շաբաթական անդամավճարը, այլև յուրաքանչյուրն իր հնարավորությունների սահմաններում հավելյալ օգնություն էր ցույց տալիս: 1856 թ. հունիսի 1-ին Տրապիզոնում բացվում է «Գայիանեանց» օրիորդաց վարժարանը՝ ընկերության հոգեբարձուների խորհրդի

[5] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1895, 16 հոկտեմբերի, թիվ 1313:

[6] «Արեւելք», 18 նոյեմբերի 1898, թիվ 3854:

[7] «Մասիս», Կ. Պոլիս, 1856, 1 օգոստոսի, թիվ 236:

նորընտիր անդամներ Աղաջան Աղա Հովհաննիսյանի և ազգասեր գործիչ Մելքոմ Աղա Թյուրքյանի անմիջական հովանավորությամբ: Վարժարանը բացման ժամանակ ուներ 72 աշակերտուհի: «Գայիանեանց» օրիորդաց վարժարանում հոգևոր և աշխարհիկ կրթությունից զատ աշակերտուհիներին սովորեցնում էին նաև ասեղնագործություն և խոհարարություն: Աշխարհիկ կրթության և ասեղնագործության դասավանդման համար պատասխանատու էին «մեր ազգէն բարեպաշտօն կանայք», իսկ կրոնական կրթության համար՝ Չարախափան եկեղեցու քահանա, վարժապետ տեր Համբարձումը[8]: Այն Հայաստանի գավառների մեջ աղջիկների համար բացված առաջին վարժարանն էր[9]:

Տրապիզոնում գործել է նաև «Սանուհեանց» ընկերություն, որի հիմնադրման հստակ տարեթիվը հայտնի չէ: Այս ընկերության գործունեության վերաբերյալ մեզ հասած առաջին տեղեկությունը վերաբերում է 1881թ. նոյեմբերին: Ընկերությունը հիմնադրել են Լուսավորչյան երկսեռ վարժարանի սանուհիները, նույն վարժարանի սաների կողմից 1860-ական թվականներին հիմնադրված «Սանուց» ընկերության նմանությամբ: Երկուսի նպատակն էլ մեկն էր՝ համապատասխան պիտույքներով ապահովել նահանգի դպրոցների աշակերտներին: Ի տարբերություն վերջիններիս, որոնք հիմնականում դպրոցներին տրամադրում էին բնագիտական գործիքներ, աշխարհացույցներ և այլն, «Սանուհեանց» ընկերության անդամները տրամադրում էին ձեռագործ նյութեր: Ընկերությունը նախատեսում էր նաև տարեվերջյան քննաշրջանի լավագույն աշակերտուհիներին պարգևատրել ոսկյա և արծաթյա խաչերով[10]:

Տրապիզոնի իգական վարժարանի սանուհիների համար ձեռագործ վարժուհի վարձելու նպատակով տեղի հոգևոր առաջնորդի հորդորով 1881թ. հունվարի 1-ին հիմնվում է «Հայուհեաց» ընկե-

[8] «Մասիս», 1856, 1 օգոստոսի, թիվ 236:

[9] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, Վիեննա, հատոր Գ, 1969, էջ 40:

[10] Նույն տեղում, էջ 48:

րությունը: Ըստ ընկերության կանոնադրության՝ դրան կարող էր անդամակցել յուրաքանչյուր ոք: Անդամավճար էր սահմանվում ամսական 40 փարան: Նախատեսվում էր կանոնավոր կերպով ամիսը 2 կամ 3 անգամ նիստ գումարել: Ընկերությունը ղեկավարում էր հոգաբարձուների խորհուրդը, որի նախագահն էր Նորին Սրբազնություն Մաթեոս Նազարյանցը, իսկ քարտուղարը՝ Տեր Մեսրոպ քահանան: «Հայուհեաց» ընկերության ատենապետ էր ընտրվել Զմրուխտ Գավուգջյանը, ատենադպիր՝ Իսկուհի Իլմասյանը, գանձապետ՝ Իսկուհի Աղաջանյանը, հավաքիչ՝ Իսկուհի Տետեյանը: Ընկերության կառավարման խորհրդի մյուս անդամներն էին՝ Մարիամ Գասպարյանը, Շողակաթ Միրիջանյանը և Համասփյուռ Կոթպաչյանը[11]: Հոգաբարձուների խորհրդից բացի ընկերությունը ուներ կառավարման ևս երկու մարմին՝ ընդհանուր խորհուրդ և տնօրենների խորհուրդ[12]: «Հայուհեաց» ընկերության հիմնական բյուջեն գոյանում էր անդամների ամսավճարներից, ինչպես նաև ոչ հաճախակի արվող նվիրատվություններից: 1882թ, սկզբին ընկերությունը ուներ 300 անդամ, իսկ ընդհանուր դրամագլուխը անցնում էր 70 լիրայից: Նույն թվականին անհայտ բարերարի կողմից «Հայուհեաց» ընկերությանը նվիրաբերվել է 25 ղուրուշ գումար, որով ընկերությունը գնել է թվով 100 կտորեղեն՝ տեղի օրիորդաց վարժարանի աղջիկների ձեռագործության համար[13]: Արդեն 1882-1884թթ. «Հայուհեաց» ընկերությունը ուներ 500 անդամ[14]: Ընկերությունը դադարեցրել է իր գործունեությունը 1886թ.: Գործունեության դադարեցման պատճառը կառավարման խորհուրդների միջև եղած տարաձայնություններն էին: Բանն այն է, որ ըստ ընկերության կանոնակարգի՝ կարգավորված չէր, թե արդյոք ընդհանուր խորհուրդը ունի լիազորություններ վերահսկելու տնօրենների խորհրդի գործունեությունը կամ հակառակը: Հստակ սահմանված չէր նաև, թե որ դեպքում և որ խորհուրդը

[11] Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., հ. Գ., էջ 49:

[12] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1893, 28 սեպտեմբերի, թիվ 589:

[13] «Փունջ», Կ. Պոլիս, 1882, թիվ 1676:

[14] «Մասիս», Կ. Պոլիս, 1884, 17 փետրվարի, թիվ 3623:

իրավունք ունի ժողով հրավիրել: Այս անորոշությունը տարաձայնությունների և անհամաձայնությունների պատճառ հանդիսացավ: 1885թ. ընկերության անդամները փորձ արեցին նոր կանոնակարգ ընդունել, որը հնարավորություն կտար կարգավորել այդ խնդիրները: Բայց նոր կանոնակարգ չմշակվեց, և որոշ ժամանակ անց ընկերությունը դադարեց գոյություն ունենալ[15]:

1880թ. հունիս-հուլիս ամիսներին Կարինում մասնաճյուղ հիմնեց Կ.Պոլսում 1879թ. կազմավորված «Ազգանուէր Հայուհեանց» ընկերությունը: Մասնաճյուղի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1880թ. հուլիսի 26-ին Կարինի հոգևոր առաջնորդարանի աջակցությամբ[16]: Ընդհուպ մինչև 1908թ. ընկերության ծավալած գործունեության մասին մեզ ոչինչ հայտնի չէ: 1908թ. ժամանակի հայ մամուլից տեղեկանում ենք, որ ընկերությունը վերանվանվել է «Ազգանուէր Հայուհեանց միություն» և ծավալել հայանպաստ բեղմնավոր գործունեություն: Նորակազմ միությունը ղեկավարվում էր միության վարչությունը, որի ատենապետն էր Ե. Տիգրանյանը, իսկ ատենադպիր՝ Ա. Դարբինյանը: Միության ջանքերով օրիորդ Երանուհի Մոմճյանը 1910թ. ընդունվում և անվճար սովորում է Կ. Պոլսի Եսայան վարժարանում՝ ուսումը ավարտելուց հետո Կարինի Հռիփսիմյան վարժարանում ուսուցչություն անելու պայմանով: Թե մինչև երբ է գործել միությունը, հայտնի չէ: 1880թ. դեկտեբերին Կ. Պոլսի «Ազգանուէր Հայուհեանց» ընկերությունը համանուն ընկերություն է հիմնել նաև Երզնկայում: Ընկերության պաշտոնական բացման առիթով Երզնկայի Քրիստինյան վարժարանի մասնաշենքում ընթիք է տրվել: Ընթրիքին ներկա են եղել պատվավոր գերդաստանների տիկնայք և օրիորդները, ինչպես նաև ազնվական ծագում ունեցող երկու իտալուհիներ: Ընթրիքի ժամանակ հանգանակված գումարը ամբողջովին ծախսվել է բարեգործական նպատակներով[17]: Նույն վարժարանի սանուհիները 1879թ. հունիսի 1-ին Կարինում հիմնադրում են «Քրիստինեան

[15] «Հայրենիք», 1893, 28 սեպտեմբերի, թիվ 589:

[16] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., հ. Բ., էջ 87:

[17] Նույն տեղում, էջ 114:

սանուհեանց» միությունը: Ընկերության նպատակը աղքատ աշակերտուհիներին գրենական պիտույքով և համապատասխան համազգեստով ապահովելն էր, ինչպես նաև Քրիստինյան վարժարանում թանգարան բացելը: «Քրիստինեան սանուհեանց» միությունը ղեկավարվում էր Տնօրենների խորհուրդը, որը կազմված էր «երկու ատենապետից, երկու ատենադպիրից, երկու հաշուակալից և մեկ գանձապահից»[18]: «Քրիստինեան սանուհեանց» ընկերության առաջին ատենապետը օրիորդ Նևբրիկ Միքայելյանն էր, երկրորդ ատենապետը՝ օրիորդ Նոյեմի Քաջյանը, առաջին ատենադպիրը՝ օրիորդ Թագուհի Աչգեյանը, երկրորդ ատենադպիրը՝ օրիորդ Շահանդուխտ Գունտախյանը, առաջին հաշվապահը՝ օրիորդ Գայանե Ղազանչյանը, երկրորդ հաշվապահը՝ օրիորդ Սրբուհի Փասփազյանը, իսկ գանձապետը՝ օրիորդ Արշալույս Դանիելյանը[19]: Միության անդամ կարող էին դառնալ բացառապես կանայք: Ընկերության տարեկան անդամավճար էր սահմանվում 1 դահեկանը: 1881թ. վերջին ընկերությունն ուներ 102 անդամ: Նույն թվականին միությունը 13 անանուն բարերարուհիների կողմից տրամադրված օգնության շնորհիվ կարողացել է վարժարանի թվով 20 աշակերտուհիների ապահովել գրենական պիտույքներով և համազգեստով[20]: Միության հետագա գործունեության վերաբերյալ այլ տեղեկություններ հայտնի չեն: Ամենայն հավանականությամբ այն դադարել է գործել 1890-ական թվականին՝ Աբդուլ Համիդի իրականացրած հայության կոտորածների տարիներին:

1884թ. գարնանը Մալաթիայում հայ օրիորդների կողմից հիմնադրվել է «Գայիանեանց» ընկերությունը, որը հայտնի է նաև «Գայիանեանց խնամակալուհիներու ընկերութիւն» անունով: Ընկերության մասին տեղեկությունները խիստ սակավ են, հայտնի է, որ 1884թ. ապրիլին այն արդեն իր հովանավորության տակ էր վերցրել համանուն օրիորդաց վարժարանը[21]:

---

[18] Նույն տեղում, էջ 112:

[19] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1881, թիվ 730:

[20] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., հ. Բ., էջ 112:

[21] Նույն տեղում, էջ 224:

1870-ական թվականներին Խարբերդում և շրջակա գյուղերում ևս գործել են մի քանի «Տիկնանց» ընկերություններ, որոնց գործունեության վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները շատ կցկտուր են: Դրանցից է 1872-1879թթ. Խարբերդում գործած «Հայաստանի կանանց ընկերությունը»: Այն հիմնվել է բողոքական հայ կանանց կողմից՝ նպատակ ունենալով գավառում հայ օրիորդների համար վարժարան հիմնել[22]: Խարբերդի շրջակա գյուղերից Հյուսենիկում 1870-1875թթ. ընկած ժամանակահատվածում հայ բողոքական կանանց կողմից հիմնվել է «Կանանց ընկերություն»[23], որի գործունեության մասին ոչինչ հայտնի չէ: Խարբերդի շրջակա գյուղերից թվով ամենաշատ կանանց ընկերությունները հիմնվել են Չմշկածագում: Դրանցից է Ինչ Բեյ թաղամասում տեղի կանանց և օրիորդների կողմից 1882թ. հունվարի 1-ին հիմնված «Ագապյան» ընկերությունը: 1884թ. ընկերությունը ուներ 50 անդամ: Այն ինչպես համանման ընկերությունները, ղեկավարում էր տնօրենների խորհուրդը: Խորհրդի ատենապետ է ընտրվել Ալթուն Ախիկյանը, ատենադպիր՝ Խաթուն Կյուլեսերյանը, գանձապետ՝ Երիցակին Ճելալյանը: Ընկերությունը ուներ երկու գործակատար՝ Խաչեր Պոյաճյանը և Պահար Ախիկյանը[24]: «Ագապյան» ընկերության հիմնումից մեկ տարի անց՝ 1883թ. նույն թաղամասի տիկնանց կողմից հիմնվել է «Հռիփսիմյան» ընկերությունը՝ նպատակ ունենալով Կ. Պոլսի «Հայուհեանց» ընկերության աջակցությամբ նպաստել տեղի օրիորդների հայրենասիրական դաստիարակությանը[25]: Նույն նպատակն են հետապնդել նաև 1883թ. Ուշբակ թաղամասում տեղի տիկնանց կողմից կազմված «Սանդուխտյան» և «Գայանեանց» ընկերությունները: 1886թ. Խարբերդում հիմնվել է «Սանդխտեան» ընկերությունը, որը 1888թ. հիմնել է համանուն օրիորդաց վարժարանը: Այն սկզբնապես ունեցել է 80 աշակերտուհի: 1889թ. Մամսա գյուղում տեղի դպրոցի կարիքները հոգալու նպատակով մի խումբ

[22] Նույն տեղում, էջ 128:

[23] «Բյուրակն», Կ. Պոլիս, 1883, 16 փետրվարի, թիվ 16, էջ 251:

[24] «Մասիս», Կ. Պոլիս, 1884, թիվ 3725:

[25] Նույն տեղում:

կանայք հիմնել են «Դպրոցասեր կանանց» ընկերությունը: Այն աղքատիկ անդամավճարներից կարողացել է հավաքել 75-80 կտոր ոսկի, որի միայն մի մասն է կարողացել տրամադրել դպրոցին գրասեղաններով ապահովելու համար, քանի որ գումարի մեծ մասը պահ է տվել առանձին անհատների և չի կարողացել վերադարձնել[26]: 1892թ. Հազարի գյուղում տեղի կանանց կողմից հիմնադրվել է «Տիկնանց բարեսիրաց» ընկերությունը՝ նպատակ ունենալով գյուղի աղքատ աշակերտներին գրենական պիտույքներով ապահովել: Ընկերության վարչության անդամներն էին տիկին Ալթուն Սոխիկյանը, տիկին Սրբուհի Ամիրխանյանը, տիկին Սառա Անդրեասյանը և տիկին Տեր-Մարտիրոսյանը: 1897-1898թթ. Խարբերդի Ազգային որբանոցի մեջ գործել է «Տիկնանց գրադարանի» միությունը: Խարբերդի Խուլեվանքի Ազգային որբանոցի հոգաբարձուների խորհրդի տարեկան հաշվետվությունից՝ ուղղված հայոց պատրիարքին, տեղեկանում ենք, որ միությունը 1898թ. «Որբախնամ միութեան» հետ մեկտեղ 1926 դուրուշ կրթաթոշակ է տրամադրել որբանոցի երկու որբուհիների[27]: 1899թ. Կարմիր գյուղում տեղի օրիորդները հիմնել են «Տիկնանց բարեխնամ» ընկերությունը: Թե ինչ ճակատագիր են ունեցել Խարբերդի կանանց այս ընկերությունները, մինչև երբ են գոյատևել, մեզ հայտնի չեն:

Այնթապի ազգային Հայկանուշյան վարժարանի տեսուչ Արմենակ վարժապետ Պաղտասարյանի և Տեր Եղիշե Քիլիսեբյանի նախաձեռնությամբ մի խումբ հայ տիկնայք 1879թ. հիմնում են քաղաքի առաջին կանանց ընկերությունը՝ «Հռիփսիմեանց պարզասիրաց ընկերութիւն» անունով: Ընկերությունը նպատակ ուներ՝ ա) սատարել իգական սեռի դաստիարակությանը, բ) քաղաքի որբերին կրթության տալ, գ) մարդկանց կյանքում պարզություն մտցնել՝ հրաժարվել անհարկի գինարբուքներից, տոն օրերին ֆինանսների մսխումից: Ընկերությունը ղեկավարում էր Խնամակալուհիների խորհուրդը, որի անդամներն էին՝ Ֆերիտ և Խանըմ Լելեկյան քույրերը, Էլմաստ Քյուրքճյանը և Լուսիա Ղազարյանը: 1880թ.

[26] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., հ. Բ., էջ 194:

[27] «Արևելք»,Կ. Պոլիս, 1898, 20 հունվարի, թիվ 3917:

ընկերությունը տեղի Հայկանուշյան վարժարանի 60 սանուհիների կրթության ամբողջ ծախսը վերցրել էր իր վրա, իսկ 1881թ. դեկտեմբերի 30-ին՝ ընկերության անդամների հավելավճարումներից գոյացած գումարով բացել է աղջիկների համար սեփական դպրոց, որի հարկի տակ կրթություն էին ստանում շուրջ 40 աշակերտուհի: Ընկերության հիմնադրման չորրորդ տարելիցի կապակցությամբ այն հանդես է եկել հաշվետվությամբ, ըստ որի՝ 1883թ. ընկերությունը ուներ 250 անդամ, 50 օսմանյան ոսկի դրամագլուխ և հատուկ օրիորդաց դպրոց՝ 60 աշակերտուհիներով: Ընկերության Գործադիր ժողովի անդամ է ընտրվել տիկին Եղսա Նազարեթյանը: Հինգ տարի անց՝ 1888թ., ընկերության անդամների թիվը հասնում էր 300, այն հոգում էր հինգ իգական դպրոցների՝ շուրջ 250 աշակերտուհիների ֆինանսական ծախսերը[28]: «Հռիփսիմեանց պարզասիրաց» ընկերությունը ամեն տարի Ս. Հռիփսիմեին նվիրված օրը ընկերության հիմնադիրների պատվին բարեգործական ընթրիք էր տալիս: Ընթրիքի զարդը, ըստ ավանդույթի, Ս. Հռիփսիմեի դիմանկարն էր, որն ամենայն հավանականությամբ ընկերության հիմնադիր Արմենակ վարժապետի գործն էր: Ընկերությունը որոշակի ընդհատումներով գործել է մինչև 1915թ.:

1879թ. Կ.Պոլսում հիմնված «Ազգանուէր Հայուհեանց» ընկերությունը 1884թ. մայիսի 6-ին Սեբաստիայում հիմնադրում է «Հայուհեանց» ընկերությունը՝ Ն. Տաղավարյան էֆենդու գլխավորությամբ: Սեբաստիայում նոր ընկերության հիմնադրման փորձ Կ. Պոլսի «Ազգանուէր Հայուհեանց»-ը կատարել էր դեռ 1883թ. սկզբին, սակայն չէր հաջողել: «Արևելքը» ընկերության հիմնադրման առնչությամբ գրում է. «Բողոքական միսոնուհիները գիտություն ուսուցանելու պատրվակով այցելում են Սեբաստիայի հայկական տները, սակայն իրականում սրա քողի տակ բողոքականություն են քարոզում: «Ազգանուէր Հայուհեանց» ընկերության նպատակը օր օրի տարածվող բողոքականության դեմն առնելն էր, ազգային օրիորդաց վարժարաններ բացելու և տեղի հայ կանանց

[28] «Արաքս», Ս. Պետերբուրգ, 1888, մայիս, գիրք Բ, էջ 60:

կրթելու ճանապարով»[29]: Ընկերության կառավարման գործադիր ժողովը բաղկացած էր 12 անդամից, որոնք մեծ մասամբ քաղաքի երևելի պարոնների տիկնայք էին: Ընկերությանը կարող էին անդամագրվել և կանայք և տղամարդիկ, սակայն վերջիններս կատարում էին միայն խորհրդակցական գործառույթ: «Ազգանուէր Հայուհեանց» ընկերությունը տարին մեկ անգամ ժողով էր հրավիրում Գործադիր ժողովի նոր կազմ ընտրելու համար: 1885թ. հուլիսի սկզբին ընկերությունը ուներ շուրջ 400 անդամ: Այն գործունեության առաջին իսկ ամիսներին կարողացավ ակնառու արդյունքներ գրանցել, մասնավորապես քաղաքի կենտրոնական թաղամասերում օրիորդաց կրթության ուղղությամբ: Շաբաթական երեք օր հրավիրյալ վարժուհիներն սկզբնական գիտելիքներ էին դասավանդում տեղի հայ օրիորդներին: Տարեվերջին Սեբաստիայում ընկերությունը կրթում էր ավելի քան 500 օրիորդների: Կրթական գործընթացի վերահսկողությունը հանձնված էր ընկերության հիմնադիր և տեսուչ Ն. Տաղավարյանին[30]: Ընկերության մասին վերջին տեղեկությունը վերաբերում է 1891թ.՝ քաղաքի իգական վարժարաններին վարժուհիներով ապահովելուն[31]:

Կանանց կողմից հիմնադրված գավառահայ հասարակական ընկերությունները իրենց ծավալած հայանպաստ գործունեությամբ չէին զիջում Կ. Պոլսի այդօրինակ ընկերություններին: Դրանք բավական արդյունավետ գործունեություն ծավալեցին Օսմանյան կայսրության հայաշատ գավառներում՝ հայ կանանց և աղջիկների կրթության և դաստիարակության ուղղությամբ:

[29] «Արևելք»,Կ. Պոլիս, 1884, թիվ 141:

[30] Հ. Եփրեմ Վ. Պողոսեան, նշվ. աշխ., հ. Բ., էջ 349:

[31] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1891, 18 հոկտեմբերի , թիվ 62:

Участие женщин в деятельности армянских уездных общественных организаций 19 века

Чатинян Зоя

Резюме

***Ключевые слова**: союз, образовательно-воспитательный, благотворительно-попечительский, Ван, Карин, Трапезунд, Багеш, Ерзнка, Харберд, Малатия, Айнтап, Себастия*

Принятие 24-ого мая 1860 года западными армянами «Национальной Конституции» дало им возможность создать новые общественные организации, основной целью которых стало проведение образовательной и воспитательной деятельности среди армянских женщин, открытие гимназии для благородных девиц в городах империи, населенных преимущественно армянами, обеспечение действующих гимназий писчими принадлежностями и финансовыми средствами. Если изначально основателями общественных организаций являлись исключительно мужчины, то впоследствии активной деятельностью занялись и женщины.

Помимо Константинополя армянскими женщинами были созданы общественно-культурные организации в таких городах как: Ван, Карин, Трапизунд, Багеш, Ерзнка, Малатия, Харберд, Айнтап, Себастия, а также в близлежащих селах.

Этими организациями стали: союз «Любительниц образования», союз «Воспитанниц кристинян», общества «Дев-рипсимианок», «Гаянеанок», «Армянок», «Воспитанниц», «Армянок-патриоток», «Общество попечительниц-гаянеанок», «Агапян», «Сандхтян», «Женщин-любительниц школы», «Благосердечных дам», «Женщин-библиотекарей», «Благодушных рипсимеанок».

Общественные организации, созданные уездными армянками, осуществляли свою деятельность в двух направлениях: воспитательно-образовательном и благотворительно-попечительском. Уездные общественные организации, созданные армянскими женщинами во благо армянского народа, не уступали в своей деятельности константинопольским организациям.

Women's Participation in the 19th Century Activities of Armenian Social Companies in Constantinople

Chatinyan Zoya

Summary

Key words: *union, tutorial educational, guardian-charitable, Van, Karin, Trabzon, Baghesh, Erznka, Harput, Malatia, Ayntab, Sebastia*

The adoption of the "National Constitution" of Western Armenians on May 24, 1860 allowed Western Armenians to create new public companies the main purpose of which was the tutorial educational work of Armenian women, opening maidens colleges in the Armenian populated cities of the Empire, providing existing colleges with stationary and financial resources. If in the initial period the founders of public companies were exclusively men, then in the second period women also started active activities.

In addition to Constantinople, Armenian women also created public-cultural companies in Van, Karin, Trabzon, Baghesh, Erznka, Malatia, Harput, Ayntab, Sebastia and surrounding villages. These companies were: "Schoolgirls' educational union", "Christinian schoolgirls' union", "Hripsimyan girls", "Gayanyan", "Armenian women", "Schoolgirls", "Patriotic Armenian women", "Guardians Gayane", "Agapyan", "Sandukhtyan", "School loving women", "Good-natured ladies", "Ladies' library", "Simple Hripsime" companies.

Public companies founded by provincial Armenian women have carried out their activites in two main directions: educational, guardian-charitable. Armenian provincial public companies founded by women didn't yield to such companies in Constantinople by their pro-Armenian activity.

Ներկայացվել է 30.09.2019 թ.
Գրախոսվել է 16.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА

ECONOMICS

Վանաձոր քաղաքի աշխատաշուկայի 2017-2018 թթ. հիմնական ցուցանիշների վերլուծությունը

Անանյան Մարիետա

Հանգուցային բառեր. *աշխատանք, գործազրկություն, գործատու, աշխատանք փնտրողներ, տնտեսություն, տարիքային ցենզ, կրթական ցենզ, մասնագիտություն*

Աշխատաշուկայի վերլուծության հիմնական ցուցանիշներն են աշխատանք փնտրողները՝ ըստ կրթական և տարիքային ցենզի, ըստ գործազրկության տևողության, աշխատանքի տեղավորված-ները, գործատուները, տնտեսության հիմնական և հեռանկարային ճյուղերը:

Վանաձորում աշխատանք փնտրողների թիվը 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել 4514 մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 5,1 %-ով: Գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 97,5 % կամ 4403 մարդ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 6,0 %-ով: Գործազուրկ կանանց թիվը կազմում է գործազուրկների թվի 68,5 %-ը կամ 3016 մարդ:

	01.01.2018 թ. դրությամբ	01.01.2019թ. դրությամբ	Փոփոխություն (%)
Աշխատանք փնտրողների թիվը	4283	4514	5.1
Գործազուրկների թիվը	4139	4403	6.0

Աշխատանք փնտրողների գործազուրկների թվի աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հիմնակա-նում պայմանավորված է նրանով, որ աշխատանք փնտրողներն սկսել են ավելի ակտիվ դիմել Վանաձորի զբաղվածության տա-րածքային կենտրոն՝ զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու և արդյունքում աշխատանքի տեղավորվելու համար:

Ըստ կրթական ցենզի՝ հետբուհական և բարձրագույն կրթու-

թյուն ունեցողների թիվը Վանաձորում կազմում է գործազուրկների թվի 14,9%-ը՝ 656 մարդ, միջին մասնագիտական կրթություն ունեցողներինը 20,5%, որը կազմում է 903 մարդ, նախնական մասնագիտական կրթություն ունեցողներինը 2,1%, որը կազմում է 92 մարդ, 55. 1%՝ 2426 մարդ ընդհանուր միջնակարգ, հիմնական ընդհանուր կրթություն ունեցողներինը 7.4 %՝ 326 մարդ[1] (տրամագիր 1):



Տրամագիր 1

Ըստ կրթության վերլուծությունը ցույց էտալիս, որ գործազուրկների ընդհանուր թվի մեջ մեծ տեսակարար կշիռ ունի ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների թիվը (55,1 %), որը, ըստ մեր դիտարկումների, պայմանավորված է նրանով, որ ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները չունեն մասնագիտություն և որակավորում, որի պատճառով դժվարանում են աշխատանք գտնելու հարցում, չեն կարողանում տեղավորվել աշխատանքի, քանի որ գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերի նկատմամբ պահանջները հիմնականում մասնագիտական են: Այս կատեգորիայի գործազուրկների մրցունակությունը աշխատաշուկայում բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական ուսուցման դասընթացներ, կամ

[1] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

կիրառել «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման» ծրագիրը, կամ աշխատանք փնտրողի մրցունակության բարձրացման զբաղվածության այլ պետական ծրագրեր:



Տրամագիր 2

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ըստ կրթության վերլուծությունը ցույց է տալիս, որ գործազուրկների թվի մեջ տեսակարար կշռով աճման տենդենց է նկատվում բարձրագույն կրթություն ունեցողների թիվը (գործազուրկների թվի բացարձակ թվով 6,6 % աճման մեջ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում բացարձակ թվով աճ է գրանցվել ընդամենը 9,1 %), որը, ըստ մեր դիտարկումների, պայմանավորված է նրանով, որ բարձրագույն կրթություն ունեցողներն սկսել են ավելի ակտիվ դիմել Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոն՝ զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու և արդյունքում աշխատանքի տեղավորվելու համար: Միջին մասնագիտական, արհեստագործական, ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների թիվը գործազուրկների թվի մեջ տեսակարար կշռով էապես չի փոփոխվել (տրամագիր 2):

Ըստ տարիքային ցենզի՝ գործազուրկների թվում 16-29 տարեկանները կազմում են 16.5 %՝ 726 մարդ, 30-34 տարեկանները՝

15.9 % կամ 700 մարդ, 35-44 տարեկանները՝ 32.5 %, կամ 1431 մարդ, 45-54 տարեկանները 19.1 % կամ 841 մարդ, 55-ից բարձր տարիքի անձինք՝ 16.0% կամ 705 մարդ[2]:



Տրամագիր 3

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ գործազուրկների թվի մեջ տեսակարար կշռով նվազման տենդենց է նկատվում 16-29 տարիքի գործազուրկների շրջանում, որը, ըստ մեր դիտարկումների, պայմանավորված է նրանով, որ այս տարիքի աշխատանք փնտրողները ավելի ակտիվ են աշխատաշուկայում, ավելի արագ են կողմնորոշվում աշխատանք փնտրելու հարցում և գտնում համապատասխան աշխատանք: Հարկ է նշել նաև, որ նրանք, ըստ կրթության, կամ կարճաժամկետ ուսուցումների արդյունքում, արդեն հիմնականում ձեռք են բերել որևէ մասնագիտություն և կարողացել են ընդունվել աշխատանքի որևէ գործատուի մոտ:

Գործազուրկների թվի մեջ տեսակարար կշռով աճման տենդենց է նկատվում 30-ից բարձր տարիքի գործազուրկների շրջանում, որը, ըստ մեր դիտարկումների, պայմանավորված է նրանով, որ այս տարիքի գործազուրկները, որևէ գործատուի մոտից ազատվելով աշխատանքից, ավելի ակտիվ են սկսել դիմել զբաղվածության կենտրոն՝ աշխատանք փնտրելու և զբաղվածության պետա-

[2] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

կան ծրագրում ընդգրկվելու համար (տրամագիր 3): Այս կատեգորիայի գործազուրկների մրցունակությունը աշխատաշուկայում բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել վերամասնագիտացման դասընթացներ կամ կիրառել «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման» ծրագիրը:

Ըստ գործազրկության տևողության (տրամագիր 4)՝ մինչև 3 ամիս տևողությամբ գործազուրկների թիվը կազմում է գործազուրկների ընդհանուր թվի 45%-ը, կազմում է 198 մարդ, 4-6 ամիս տևողությամբ գործազուրկների թիվը կազմում է 6,4%՝ 282 մարդ, 7-11 ամիս տևողությամբ գործազուրկների թիվը կազմում է 10,7%՝ 471 մարդ, 1-3 տարի տևողությամբ գործազուրկների թիվը կազմում է 29,8%՝ 1312 մարդ, 3 տարի և ավելի տևողությամբ գործազուրկների թիվը կազմում է 48,6 %՝ 2140 մարդ[3]:



Տրամագիր 4

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ Վանաձորի գործազուրկների վերլուծությունը, ըստ գործազրկության տևողության, արտահայտված տոկոսներով 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, ըստ գործազրկության տևողության, վերլուծությունը ցույց է տա-

[3] Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից:

լիս, որ աճել է 3 տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցողների թիվը, որը, ըստ մեր դիտարկումների, պայմանավորված է նրանով, որ երկար ժամանակ մնալով գործազուրկի կարգավիճակում, կորցրել են իրենց մասնագիտական որակավորումը, որի պատճառով դժվարանում են աշխատանք գտնելու հարցում: Չեն կարողանում տեղավորվել աշխատանքի, քանի որ գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերի նկատմամբ պահանջները հիմնականում մասնագիտական են և պահանջում են համապատասխան որակավորում: Մյուս կողմից այս կարգավիճակի անձինք հիմնականում պարտաճանաչ ներկայանում են զբաղվածության կենտրոնի կողմից նախապես տեղեկացված կանչերին՝ գործազուրկի կարգավիճակում մնալու և պարբերաբար թափուր աշխատատեղերին ծանոթանալու համար: Այս կատեգորիայի գործազուրկների մրցունակությունը աշխատաշուկայում բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մասնագիտական ուսուցման դասընթացներ կամ կիրառել «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման» ծրագիրը:

Աշխատանքի տեղավորվածներ

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ աշխատանքի տեղավորվածների թիվը կազմում է 473 մարդ, որոնցից 343-ը՝ կին, 53-ը՝ ուղեգրով տեղավորված: 2017 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աշխատանքի տեղավորվածների թիվը աճել է 3,7 %-ով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Աշխատանքի տեղավորված գործազուրկների 2017-2018 թթ. համեմատական ցուցանիշները 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ

1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	4
Անտառապահ	*1*
Բանվոր	*3*
2. Արդյունաբերություն	142
Որակի հսկիչ	*5*
Տեխնոլոգ	*2*

Ապրանքագետ	*1*
Վերանայող	*1*
Զևարար	*1*
Կարող բանվորուհի	*110*
Հացթուխ	*4*
Հրուշակագործ	*3*
Արծաթագործ	*8*
Բանվոր	*1*
Այլ	*6*
3. Շինարարություն	19
Բետոնագործ	*1*
Շինարար	*9*
Մոնտաժող	*1*
Բանվոր	*8*
4. Մեծածախ և մանրածախ առևտուր ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	67
Մենեջեր	*3*
Վաճառող	*56*
Գանձապահ	*1*
Առաքիչ	*1*
Վարորդ առաքիչ	*2*
Բանվոր	*4*
5. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	2
Ավտոմեխանիկ	*1*
Վարորդ	*1*
6. Կացություն և հանրային սննդի կազմակերպում	14
Ադմինիստրատոր	*2*
Խոհարար	*2*
Խոհարարի օգնական	*1*
Մատուցող	*5*
Սպասարկող	*1*
Խոհանոցի աշխատող	*2*
Տեխնիկական աշխատող	*1*
7. Տեղեկատվություն և կապ	5

Համակարգչային օպերատոր	*3*
Նամակատար	*1*
Կրպակի վաճառող	*1*
8. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	2
Հաշվետար-գանձապահ	*1*
Հաշվապահ	*1*
9. Կրթություն	46
Դասախոս	*1*
Ռեֆերենտ	*1*
Ուսուցիչ	*30*
Դաստիարակ	*2*
Ծրագրավորող	*3*
Հաշվապահ	*1*
Գործավար	*2*
Տեխնիկական աշխատող	*4*
Բանվոր	*1*
Պահակ	*1*
10. Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	15
Տեսուչ	*1*
1-ի կարգի մասնագետ	*1*
Սոցիալական աշխատող	*2*
Զինվորական ծառայող	*3*
Գործավար	*2*
Տեխնիկական աշխատող	*3*
Պահակ	*3*
11. Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	30
Բժիշկ	*2*
Բուժքույր	*15*
Դեղատան տնօրեն	*1*
Դեղագործ	*4*
Մենեջեր	*1*
Ադմինիստրատոր	*2*

Մատենավար	*2*
Գործավար	*1*
Տեխնիկական աշխատող	*2*
12. Մշակույթ, զվարժություններ և հանգիստ	8
Գործիքավորող	*1*
Պարուսույց	*1*
Դաշնամուրի դաստիար	*1*
Վարորդ	*2*
Տեխնիկական աշխատող	*3*
13. Սպասարկման այլ ծառայություններ	119

2018 թ. իրականացվել են զբաղվածության պետական ծրագրեր 8 ուղղություններով: 53 գործազուրկներ աշխատանքի են տեղավորվել «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման» ծրագրով, 23 գործազուրկներ ներգրավվել են «ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար գործազուրկներին աջակցության տրամադրում» ծրագրում, 6 գործազուրկ երիտասարդ մայրիկների համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում, 19 գործազուրկներ ներգրավվել են «մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» ծրագրում, 52 գործազուրկներ ներգրավվել են «աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուներին այցելության համար դրամական օգնության տրամադրում» ծրագրում, որից 9-ը տեղավորվել են աշխատանքի, 3 գործազուրկներ աշխատանքի են տեղավորվել «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում» ծրագրով, 47 գործազուրկների համար մասնագիտական ուսուցման վերամասնագիտացման ծրագրերի իրականացման հայտեր են ներ-

կայացվել զբաղվածության պետական գործակալություն, սակայն չեն իրականացվել մրցույթներում որևէ գործատուի չհաղթելու պատճառով, իրականացվել է 1 աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցել են 35 գործատուներ և մոտ 2150 աշխատանք փնտրողներ, տոնավաճառին ներկայացված էր 343 առկա և 211 սպասվելիք թափուր աշխատատեղեր: 2018 թ. գործազուրկի կարգավիճակը դադարեցված և հաշվառումից դուրս եկած աշխատանք փնտրողների թիվը կազմում է 650 մարդ:

Աղյուսակ 1

Հաշվառումից հանելու պատճառը	**Ընդամենը 9 ամսում**	**հոկտեմբեր**	**նոյեմբեր**	**դեկտեմբեր**	**Ընդամենը 1-ին կիսամյակ**
Ընդամենը որոնցից	650	23	35	20	728
Աշխատանքի տեղավորված	80	4	12	5	101
Անհարգելի պատճառով 2 անգամ չներկայացած	13	4	4	6	127
Երկրորդ անգամ աշխատանքի առաջարկից հրաժարված	32	0	0	0	32
Այլ բնակավայր տեղափոխված	0	0	0	0	0
Կենսաթոշակի անցած	40	6	5	3	54
Մահացած	7	1	0	1	9
Ներկայացրել է սխալ տեղեկություններ	270	6	0	0	276
Այլ	108	2	14	5	129

2019 թ. հունվարի 1-ի դրությամբ անհարգելի պատճառով 2 անգամ Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի կողմից նախապես տեղեկացված կանչերին չներկայացած գործազուրկների թիվը 127 է, որոնց գործազուրկի իրավիճակները դադարեցվել են: Չներկայանալը հիմնականում պայմանավորված է զբաղվածության կենտրոնի աշխատանք փնտրողի հիմնական բնակության վայրից հեռու գտնվելու (զբաղվածության կենտրոնը գտնվում է Վանաձոր քաղաքի կենտրոնում և բացի Վանաձորի բնակչությունից սպասարկում է նաև Գուգարքի տարածաշրջանի 21 համայնքների բնակիչներին), ընտանեկան, անձնական, առողջական և այլ պատճառներով:

Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնում հաշվառված գործազուրկների մեջ հիմնականում գերակշռում են հետևյալ մասնագիտություններով անձինք՝ մանկավարժներ, տնտեսագետներ, ճարտարագետներ, բանասերներ, կառավարիչ-մենեջերներ, իրավագետներ և այլն:

Իսկ գործատուների կողմից ստացվող թափուր աշխատատեղերի թվաքանակում գերակշռում են՝ կարի տեխնոլոգ, կարող բանվոր, մատուցող, վաճառող, բուժքույր, դեղագործ, դեղագետ և այլ մասնագիտություններով աշխատուժի պահանջարկը:

Գործատուներ

Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնի սպասարկման տարածքում գործատուների թիվը 2970 է, որոնցից 1460-ի հետ կապ է հաստատվել կենտրոնի կողմից, իսկ 1364-ի հետ (125 պետական և 1239 ոչ պետական) կենտրոնը համագործակցում է: Հիմնականում գերակշռում են կարի արտադրության, կաթի վերամշակման, սննդի արտադրության, սպասարկման, առողջության պահպանման, առևտրի և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում գործող գործատուները: Խոշոր գործատուներից են «Գլորիա» ՍՊԸ-ն, «Սարտոն» ՍՊԸ-ն, «Դարբբագս» ՍՊԸ-ն և այլն:

2018 թ. չորրորդ եռամսյակում թափուր աշխատատեղերի հայտեր են ներկայացրել 48 գործատուներ (2 պետական և 46 ոչ պետական) հետևյալ ոլորտներից՝ արդյունաբերություն, առևտուր,

փոխադրամիջոցներ, կացություն և հանրային սնունդ, կրթություն, առողջապահություն, սպասարկման այլ ծառայություններ:

Գործատուների կողմից թափուր աշխատատեղերի առաջարկ է արվել հետևյալ մասնագիտություններով՝ բուժքույր, դեղագործ, վաճառող, ծրագրավորող, արծաթագործ, կարի տեխնոլոգ, կարող բանվոր, մատուցող, վարսահարդար, մատնահարդար, գանձապահ, մենեջեր, ծրագրավորող և այլն:

Արագ համալրվում են հիմնականում բուժքույր, դեղագործ, վաճառող, ծրագրավորող, արծաթագործ մասնագիտություններով թափուր աշխատատեղերը: Այս մասնագիտություններով աշխատատեղերը արագ համալրվում են թե՛ զբաղվածության պետական ծրագրերով և թե՛ առանց ծրագրերի:

Երկար ժամանակ չեն համալրվում հիմնականում կարի արտադրության ոլորտի թափուր աշխատատեղերը՝ աշխատավարձի ցածր լինելու պատճառով, և կաթի վերամշակման ոլորտի թափուր աշխատատեղերը՝ համապատասխան մասնագետներ չլինելու պատճառով:

2018 թ. ստեղծվել է կարկտապաշտպան ցանցերի արտադրության ձեռնարկությունը, ինչպես նաև մեքենայի գազաբալոնների արտադրության ձեռնարկությունը, որտեղ կլինեն նոր թափուր աշխատատեղեր՝ մեքենաների գազաբալոնների արտադրության (խառատներ, ֆրեզերագործներ, պլաստմասե բալոնների պատրաստման մասնագետներ) բնագավառում, 2019 թ. այս արտադրությունը կընդլայնվի, և նախատեսվում է, որ կսկսվի մարդատար ավտոմեքենաների արտադրություն:

2019 թ. կընդլայնվի նաև կարի արտադրության բնագավառում գործող «Սասստեքս» ՍՊԸ-ն, և կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Վանաձոր քաղաքում գործում են կաթի վերամշակման, զովացուցիչ ըմպելիքների, շինարարական նյութերի արտադրություններ, որոնք հիմնականում սպառում են ներքին պահանջարկի մի մասը միայն: Նշված ոլորտներից մեծ պոտենցիալ ունի հատկապես գյուղատնտեսական մթերքների վերամշակման ոլորտը, ինչը պայմանավորված է քաղաքին մոտ գտնվող գյուղական համայնքների առկայությամբ:

Վանաձորում գործում են մի շարք ընկերություններ, որոնց արտադրանքը արտահանվում է երկրի սահմաններից դուրս (դրանք հիմնականում կարի ֆաբրիկաններն են, որոնք կատարում են եվրոպական ֆիրմաների պատվերներ):

Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոնում հաշվառված են 12 միգրանտներ: Ըստ կրթական ցենզի՝ բարձրագույն կրթություն ունի 1 անձ, միջին մասնագիտական կրթություն՝ 3 անձ, 6 անձ՝ միջնակարգ կրթությամբ, 2 անձ՝ հիմնական-ընդհանուր: Ըստ տարիքային ցենզի՝ 25-30 տարեկանները՝ 2 անձ, 31-35 տարեկան՝ 1 անձ, 36-45 տարեկանները՝ 3 անձ, 45-55 տարեկանները՝ 5 անձ, 55-ից բարձր՝ 1 անձ:

Տնտեսության հիմնական ու հեռանկարային ճյուղերը

Վանաձորի պատմության, ռեսուրսների, տնտեսական հնարավորությունների, մրցակցային առավելությունների ու ներուժի ուսումնասիրությունը հանգեցնում է այն մտքին, որ Վանաձորում տնտեսությունը կարող է զարգանալ՝ հենվելով փոքր և միջին ձեռներեցության վրա:

Ներկայումս Վանաձորում աշխատում են երեք կարի ֆաբրիկաներ, որոնք հիմնականում կատարում են եվրոպական և ամերիկյան ֆիրմաների պատվերները: Այս ոլորտը պետական ուղղորդված և երկարաժամկետ քաղաքականության դեպքում մեծ պոտենցիալ ունի զարգանալու և գերակա ճյուղ համարվելու:

Վանաձորը հայտնի է իր առողջարանով: Մեղմ կլիման ու գեղատեսիլ բնությունը ապահովում են տարեկան առնվազն 10000 մարդու հոսքը Վանաձոր՝ ամռան ամիսներին: Առողջարանային գործունեությունը կրում էր սեզոնային բնույթ, սակայն 2018 թ. հունիսից սկսեց գործել շուրջօրյա: Այս ոլորտը նույնպես համարվում է պոտենցիալ գերակա ճյուղ, քանզի Վանաձորի «Արմենիա» առողջարանային համալիրի բազայի վրա հնարավորություն կա ընդլայնելու ծառայությունների բազան և սպասարկման մակարդակի բարձրացմամբ, ու ճիշտ մարկետինգային քաղաքականությամբ իրատեսական հիմքեր կան ոլորտը էականորեն զարգացնելու:

Վանաձորի քաղաքային համայնքը կարևորում է առողջարանային ոլորտի զարգացումը (Վանաձոր համայնքի ռազմավարա-

կան ծրագիր 2012-2022 թթ.) և դրա պլատֆորմի վրա նաև տուրիզմի զարգացման հեռանկարները: Այս ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարության մշակման խնդիրը առաջնային է:

Տեքստիլ արդյունաբերություն

Վանաձորում գործող չորս կարի ֆաբրիկաները («Սարտոն», «Բազում», «Գլորիա», «Սասստեքս») գործում են մասնակիորեն՝ կատարելով արևմտյան ընկերությունների պատվերները: Վանաձորում վերջին տարիներին ձևավորվեցին նաև մի քանի փոքր արտադրամասեր, որոնք աշխատում են հիմնականում տեղական շուկայի համար: Վերջիններիս արտադրանքը վաճառվում է Երևանի, Վանաձորի և այլ քաղաքների շուկաներում և տոնավաճառներում: Վանաձորում գործող կարի ֆաբրիկաները հիմնականում կարողանում են կազմակերպել արտադրական և մատակարարման գործընթացը: Այժմ Վանաձորի տեքստիլի ոլորտում ընդգրկված են ավելի քան 1500 աշխատողներ, ինչը բավականին լուրջ թիվ է Վանաձորի համար:

Գործող փոքր արտադրությունները, անհատ դերձակները, որոնք աշխատում են տեղական շուկայի համար, հակված են բավարարել միջին որակի և էժան գին ունեցող պահանջարկը: Վերջիններիս կողմից արտադրած տաբատները, շրջազգեստները մեծամասամբ իրացվում են տոնավաճառներում և այլ շուկաներում:

Զբոսաշրջություն

Վանաձորը գտնվում է Երևանից դեպի Հայաստանի հյուսիս և Վրաստան տանող ճանապարհին, ինչը բարձրացնում է Վանաձորի գրավչությունը՝ որպես տարանցիկ կետ: Վանաձորի անմիջական հարևանությամբ են գտնվում մի շարք պատմամշակութային բարձրարժեք հուշարձաններ, որոնք ընդգրկված են Հայաստան այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների բազմաթիվ տուր-փաթեթների մեջ: Առանձնապես ուշագրավ են Սանահինի ու Հաղպատի վանական համալիրները (ընդգրկված են UNESCO-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում), Օձունի համալիրը, Ախթալայի վանական համալիրն ու բերդը, Լոռի բերդի և Տաշիրի բերդի ավերակները, Դսեղի Ս. Գրիգոր Բարձրաքաշ վանքը և այլն: Ներկայումս օտարերկրյա զբոսաշրջիկների գրեթե ոչ մի խումբ

Հայաստան այցելելիս չի հանգրվանում Վանաձորում՝ համապատասխան հյուրանոցային պայմանների և համապատասխան որակի սպասարկման բացակայության պատճառով:

Վանաձորում նկատելիորեն զարգանում է մասնավոր առողջապահությունը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս զարգացնել նաև առողջապահական տուրիզմը: Սա բավականին գրավիչ է նաև այն պատճառով, որ ստոմատոլոգիայում իրատեսական է որակի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին՝ ապահովելով մրցունակ գներ:

Գրականություն

1. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ. Շուկայական տնտեսության հիմունքները, Երևան, 2002:
2. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալության Վանաձորի զբաղվածություն տարածքային կենտրոն, 2017:
3. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալություն Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոն, 2018:

Анализ основных показателей трудового рынка города Ванадзора 2017-2018 гг.

Ананян Мариэтта

Резюме

***Ключевые слова**: работа, безработица, работодатель, желающие трудоустроиться, экономика, возрастной ценз, образовательный ценз, специальность*

Исследование и анализ трудового рынка являются приоритетными направлениями в государственной политике любой страны.

Проблемы занятости и безработицы наиболее актуальны прежде всего в регионах РА, что является следствием неравномерного экономического развития периферии.

В научной статье с целью изучения проблемы занятости в Ванадзоре был осуществлен анализ основных показателей трудового рынка города в 2017-2018 гг., исходя из образовательного и возрастного ценза желающих трудоустроиться, продолжительности пребывания без работы, перспектив развития разных отраслей экономики. Нами был проведен также мониторинг среди устроившихся на работу и работодателей. Были изучены государственные программы занятости, осуществленные по восьми направлениям в 2018 году, благодаря которым трудоустроились 212 безработных. Исследование ресурсов, экономических возможностей, конкурентных преимуществ и потенциала города Ванадзора позволило сделать вывод, что экономика может здесь развиваться, опираясь только на малый и средний бизнес.

Analysis on Vanadzor City Labour Market Basic Indicators of 2017-2018

Ananyan Marietta

Summary

Key words: *labour, unemployment, employer, job seeker, economy, age criteria, educational qualification, specialty*

The survey and analysis of any labour market is one of the country's state policy directions.

Lobour and unemployment issues are present especially in regions, which are the result of these regions unequal economy development.

In order to highlight the labour issues in Vanadzor city we have carried out analysis of Vanadzor's labour market (from 2017 to 2018) basic indicators: according to educational and age criteria, according to the educational of the unemployment, according to the number of unemployed people and according to the basic and perspective branches of economy.

We have student the state employment profess realized in 8 directions as a result of which 212 unemployed people got jobs.

The survey of Vanadzor city resources, its economic possibilities, competitive advantages and potentials make us come to the conclusion that economy here can be developed based on small and middle entrepreneurships.

Ներկայացվել է 18.06.2019 թ.
Գրախոսվել է 13.09.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ФИЛОСОФИЯ

PHILOSOPHY

Ազատական մշակույթի ինստիտուտային համակարգի սոցիոմշակութային գործառույթները

Գրիգորյան Աննա

Հանգուցային բառեր. *սոցիալական համակարգ, նորմատիվ համակարգ, բաց հասարակություն, բարոյական արժեք, ազգային մշակույթ*

Հետխորհրդային հասարակությունների սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոխակերպումների առաջին փուլում իշխում էր այն համոզմունքը, թե ազատականության ու ժողովրդավարության ինստիտուտային համակարգի ստեղծումն արդեն իսկ անհրաժեշտ ու բավարար պայման է ժողովրդավարական կարգ ու համապատասխան սոցիոմշակույթ ստեղծելու համար: Այլ կերպ ասած՝ գերագնահատվում էին սոցիալական հարաբերությունները կոորդինացնող և կարգավորող ինստիտուտների դերն ու նշանակությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կյանքի կազմակերպման ու համակեցության կանոնակարգման ազատական մշակույթն ունի ինստիտուտային համակարգ (շուկայական, քաղաքական, սոցիալական), որի օգնությամբ սոցիալական հարաբերությունները նորմավորվում ու կանոնակարգվում են, անհրաժեշտ է հանգամանորեն քննարկել ինստիտուտների սոցիոմշակույթային գործառույթները:

Մասնագիտական գրականության մեջ հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքի մասին չկա միասնական մոտեցում: Սոցիոլոգիայում ինստիտուտը բնութագրվում է՝ որպես վարքի ստանդարտեցված մոդելի և կանոնների հաստատված կարգ, որպես պատմականորեն ձևավորված և ամրագրված, կայուն և ինքնավերարտադրվող սոցիալական փոխհարաբերությունների տեսակ, որի օգնությամբ կարգավորվում են տարբեր սոցիալական դերերի հարաբերությունները: Բ. Մալինովսկին, իսկ հետագայում նաև Տ. Պարսոնսը ինստիտուտների բնույթը դիտում էին որպես հասարակության աստիճանական փոփոխության գործառնական

եղանակ, որպես կոլեկտիվ կյանքի ընդհանուր պայման:

Ազատականության և ինստիտուցիոնալիզմի խոշորագույն տեսաբան Դ. Նորթը ինստիտուտը դիտարկում է որպես ձևական (օրենքներ, սահմանադրություն) և ոչ ձևական (սովորույթներ, պայմանագրեր և այլն) նորմերի ամբողջություն, որը գործունեության որոշակի շրջանակներում կառուցում ու կարգավորում է մարդկանց փոխհարաբերությունները: Ընդ որում, ինչպես նկատում է Դ. Նորթը. «….կազմակերպական գործոնները (տնտեսական, քաղաքական ու սոցիալական) ավելի կարևոր դեր են խաղում, քան տեխնիկականը, քանի որ դրանք հարուցում են այնպիսի ինստիտուցիոնալ փոփոխություններ, որոնք իրենց հերթին, մեծապես ազդում են տնտեսական զարգացման վրա» [1, 6-7]:

Ասվածից հետևում է, որ սոցիալական համակարգի գործունեության կարգավորման ներքին մեխանիզմները չեն սահմանափակվում միայն ձևայնացված ինստիտուտային կառույցներով, քանի որ սոցիալական համակեցության հորիզոնական կապերը և կյանքի կանոնակարգման սոցիոմշակութային ոլորտները չունեն միանշանակ ինստիտուտային քաղաքական լուծում և որպես կանոն ձգտում են սահմանազատվել պետական քաղաքականության ազդեցությունից: Մշակույթի անհարկի քաղաքականացումը չի կարող ստեղծել հուսալի կարգավորվածություն, եթե այդ քաղաքականությունը չի բխում նաև տվյալ համակարգի սոցիոմշակութային առանձնահատկություններից:

Ասվածի ուսանելի օրինակ կարող է ծառայել խորհրդային հասարակության փորձը: Ինչպես հայտնի է, խորհրդային քաղաքական համակարգը փորձեց իր ինստիտուտային կառուցվածքին ու գաղափարախոսությանը համապատասխան վերափոխել մեկ պետության մեջ համախմբված տարբեր ազգերի ու ժողովուրդների համակեցության մշակույթները՝ ստեղծելով մեկ միասնական խորհրդային ժողովուրդ և խորհրդային մշակույթ: Մշակութային հեղափոխությունը դիտելով որպես սոցիալիզմի կառուցման կարևոր պայման՝ խորհրդային իշխանությունները փորձեցին քա-

ղաքական-ինստիտուցիոնալ մակարդակից արմատական փոխակերպումները տարածել նաև սոցիոմշակութային կյանքի վրա՝ տարբեր ավանդույթներ, դավանանք, լեզու, կենցաղ, կենսափորձ ու պատմական տարբեր ճակատագրեր ունեցող ազգերին ու ժողովուրդներին պարտադրելով համակեցության միասնական սոցիոմշակույթ:

Սակայն սա չի նշանակում, որ կյանքի սոցիոմշակութային ոլորտը չի ենթարկվում ձևայնացման ու ինստիտուտային կարգավորման: Ինչպես արդեն նշվեց, ինստիտուտը ձևական և ոչ ձևական նորմերի ամբողջություն է, որից ձևական նորմերն ամրագրված են օրենքի իրավունքով, իսկ ոչ ձևական նորմերը՝ սովորույթի իրավունքով: Այսինքն՝ դրանք իրարից տարբերվում են գործառնական նշանակությամբ և գործադրման խստությամբ: Այս իմաստով բարոյական և արժեքային նորմերը ևս յուրատեսակ ինստիտուտներ են, որոնց ակուքում ընկած են պատմական, դավանանքի, մշակույթի հիման վրա ձևավորված և փորձով հիմնավորված որոշակի սահմանափակումներ: Ինչպես տնտեսական ու քաղաքական, այնպես էլ սոցիոմշակութային ինստիտուտները ներհասարակական համագործակցության ու համաձայնության համար անհրաժեշտ միջավայրի ձևավորման նպատակով ստեղծված վարքագծի կանոններ են: Այդ կանոնների բովանդակությունը ձևավորվում է տվյալ հասարակության սոցիոմշակութային արժեքների համատեքստում:

Այս տեսակետից եթե սոցիալական ինստիտուտները դիտարկենք որպես փոխադարձ համաձայնության հիման վրա ձևավորված վարքի կարգավորման նորմատիվ համակարգ, ապա այդ համակարգի բովանդակությունը պայմանավորված կլինի սոցիոմշակութային մի շարք արժեքների ընդհանուր ուղղվածությունից [2, 141-144]:

Առաջին՝ հասարակական հարաբերությունների կարգավորման ինստիտուտային համակարգի բնույթն ու բովանդակությունը մեծապես պայմանավորված են տվյալ համակեցության զարգաց-

ման պատմական առանձնահատկություններից: Յուրաքանչյուր ազգային հասարակություն նաև յուրահատուկ սոցիոմշակութային համակարգ է, որի արժեքային բովանդակությունը պայմանավորված է աշխարհագրական միջավայրի, պատմական գործընթացների, ազգային իդեալների, մշակույթի, բարոյականության, կրոնի ու համանման այլ նորմերի առանձնահատկություններով: Հայ ժողովրդի պարագայում, օրինակ, մի կողմից պետականության բացակայության կրկնվող պարբերականությունը, իսկ մյուս կողմից՝ արտաքին ազդեցություններին դիմակայելու և հավաքականությունը պահպանելու գերխնդիրը՝ էապես ազդել են ներազգային հարաբերությունների ինստիտուտային կարգավորման բովանդակության վրա: Մասնավորապես, աշխարհագրական կտրվածության, տնտեսական–քաղաքական միասնական դաշտի բացակայության, մասամբ նաև էթնիկ փոքրաքանակության պատճառով հայ ժողովրդի ներազգային կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործում վճռորոշ նշանակություն է ունեցել ազգակցական կապերի ինստիտուտը [3, 30-31]:

Երկրորդ՝ հասարակական հարաբերությունների կարգավորման նորմատիվ համակարգի գործառնական արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե տվյալ սոցիալական համակարգը որքանով է համախմբված ընդհանրական շահերի շուրջ:

Այս իմաստով ազատական մշակույթի տարածումը առաջին հերթին նպաստեց մարդկանց միջև մշակութային համասեռության և հորիզոնական կապերի ձևավորմանը, ինչն իր հերթին նպաստեց սոցիալական-ընդհանրական շահերի ձևավորմանը: Այս հանգամանքը խիստ կարևոր է, քանի որ ինստիտուցիոնալ կարգավորման արդյունավետությունը բարձր է հատկապես այն հասարակություններում, ուր թեև գործում է մասնավոր շահի սկզբունքով գործող տնտեսական շուկան, բայց քաղաքական համակարգի շնորհիվ ձևավորվել են նաև հասարակական տարբեր խավերի շահերի ընդհանրություն և հավասարակշռություն:

Երրորդ՝ հասարակական հարաբերությունների ինստիտուտային կարգավորման արդյունավետության կարևոր պայմաններից մեկն էլ մրցակցող անհատների վարքագծի ընդհանուր կանոնների առկայությունն է: Սա կարևոր հանգամանք է, քանի որ սոցիալական ցանկացած համակարգի կարգավորվածության գլխավոր պայմաններից մեկը մարդկանց գործողությունների կանխատեսելիությունն է:

Ժամանակակից հասարակության միջուկն անհատականությունն է: Այն ձևավորվեց նորարարության և ժողովրդավարացման գործընթացների խաչմերուկում: Այս ամենի հետևանքով ժամանակակից է դառնում ոչ միայն հասարակությունը, այլև մարդը: Փոխակերպվում է ոչ միայն հասարակությունը, այլև մարդը: Այդ իմաստով փոխակերպումները (մոդեռնիզացիան) կարելի է դիտարկել՝ որպես սոցիալական նոր համակարգին համապատասխան մարդկանց նույնականության փոփոխությունն ապահովող ինստիտուտների, հարաբերությունների, նորմերի ու արժեքների ձևավորման գործընթաց: Ասածից հետևում է, որ համակարգային փոխակերպումները, որի հետևանքով հասարակությունը ենթարկվում է նորարարության, ընդգրկում են կյանքի բոլոր ոլորտները: Սոցիալական ոլորտում ձևավորվում են նոր ինստիտուտներ, նորմեր ու սովորույթներ, քաղաքական ոլորտում ձևավորվում են իշխանության կազմակերպման նոր եղանակ, մշակութային ոլորտում՝ նոր արժեքներ ու կարծրատիպեր, տնտեսական ոլորտում՝ նոր սկզբունքով գործառնող շուկա և այլն: Հարկ է նկատել, որ նշված ոլորտներից յուրաքանչյուրը փոխակերպումների ընթացքում տարաբնույթ դրսևորումներ կարող է ստանալ, ինչը նշանակում է, որ ավանդականից ժամանակակից հասարակության անցումը չունի նախապես կանխորոշված ելք: Սա իր հերթին նշանակում է, որ պատմության զարգացումը միագիծ չէ, թեև մոդեռնիզացիան ունի նաև տիպական գծեր ու օրինաչափություններ, որոնք ընդհանուր են արդի բոլոր հասարակությունների համար:

Ավանդականից ազատական-ժողովրդավարական սոցիոմշա-

կութային համակարգին անցնելու և տնտեսական, քաղաքական ու մշակութային արմատական փոխակերպումների նախադրյալներ են հանդիսանում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորումը, շուկայական տնտեսությունը և դրանց հիման վրա համընդհանուր բարեկեցության հասարակության ձևավորումը: Անհատական մակարդակում ազատական-ժողովրդավարական նախագիծը ենթադրում է նոր հնարավորությունների, նոր կապերի ու սոցիալական նոր տիպի խառնվածքի ձևավորում:

Հասարակության ազատականության տիպական հատկանիշներից մեկը փոխակերպելու, արտաքին և ներքին փոփոխություններին արագ արձանագրելու, մշտապես շարժուն լինելու կարողությունն է:

Եթե տնտեսական ոլորտում ազատականությունը դրսևորվում է շուկայական հարաբերությունների ձևով, ապա պետականության ու քաղաքականության մեջ այն դրսևորվում է ժողովրդավարական գործընթացների ձևով: Այս իմաստով բաց հասարակությանը բնորոշ կյանքի կազմակերպման մշակույթի մեջ առանձնահատուկ տեղ ունի քաղաքացիական հասարակության ինստիտուտային համակարգը: Ազատականության ինքնակազմակերպման ու վերարտադրության տեսակետից քաղաքացիական հասարակության նորմատիվ համակարգը շուկայական հարաբերությունների կարգավորման, տնտեսական ու քաղաքական իշխանությունների տարանջատման սկզբունքի պահպանման, հասարակության ու պետության միջև գործընկերային հարաբերությունների հարստացման ու պահպանման կարևոր գրավականն է:

Տնտեսական ու քաղաքական վարքի նորմատիվ համակարգերը մշակույթի համատեքստում սոցիալական, տնտեսական ու քաղաքական շահերի համագոյակցման, փոխըմբռնման ու կոնֆլիկտների հաղթահարման առավել ժողովրդավարական մեխանիզմներ են: Այլ կերպ ասած՝ համերաշխության, արդարության, ազատության և նմանատիպ այլ խնդիրներն այն իմաստով են դառնում քաղաքականություն, որ ինստիտուցիոնալ կարգավո-

րումներն ընթանում են համակարգաստեղծ գործոնների սոցիոմշակութային բովանդակության շրջանակներում:

Հասարակական հարաբերությունների կարգավորման ինստիտուտային մակարդակի կարևորագույն գործառույթը և վերջնական նպատակը Սահմանադրական կարգի շրջանակներում ազատության և արդարության պահպանումն է: Ավելին, ինստիտուտների դերը կարևորվում է նաև այն պատճառով, որ լինելով պատմամշակութային կառույցներ՝ նրանք ոչ միայն ծառայում են հասարակական հարաբերությունների կայունությանն ու հուսալիությանը, այլև նպաստում հասարակության փոփոխություններին ու փոխակերպումներին:

Ինստիտուտների գործառնական դերի գնահատման այս մոտեցումից իսկ երևում է, որ առաջին՝ նախապես կանխորոշված արժեքային բովանդակություն ունեցող ինստիտուտները՝ որպես նորմատիվ համակարգեր, մարդկային բարդ և հակասական փոխհարաբերությունների կարգավորման հարցում անփոխարինելի են, երկրորդ՝ ինստիտուտները չեն կարող փոխարինել անհատական բարոյականությանը, բայց կարող են փոխարինել ու հստակեցնել մարդկանց բարոյական վարքի շրջանակները: Օրինակ՝ պետաիրավական ինստիտուտների դերը հենց այն է, որ բացառի անարդարությունների ու չարաշահումների հնարավորությունները՝ դրանով իսկ պայմաններ ստեղծելով բարոյական վարքի դրսևորման համար, երրորդ՝ ինքնին ինստիտուտները չեն կարող բարձրացնել մարդկանց բարեկեցությունը, բայց հանդես գալով որպես տվյալ սոցիալ տնտեսական ու քաղաքական կարգի «բարոյական ծրագիր»՝ կանխորոշում են տվյալ հասարակության ժողովրդավարության աստիճանը, չորրորդ՝ ինստիտուտների կարևոր գործառույթներից մեկն էլ այն է, որ կարգավորման սոցիոմշակութային ու բարոյական արժեքներին տալիս են ռացիոնալ բնույթ, մշակում երկխոսության «քաղաքական լեզու», հինգերորդ՝ ինստիտուտների բարոյական որակները ձեռք են բերում համահասարակական իմաստ, քանի որ հասարակական հարաբերությունների -

կարգավորման իրենց գործառույթը կատարելիս ելնում են ոչ թե բարոյականության անձնական ըմբռնումներից, այլ քաղաքացիական ծառայողի սկզբունքից՝ ազնվություն, պարտականություն, արդարություն, համերաշխություն և այլն:

Դժվար չէ նկատել, որ ինստիտուտային կարգավորման պաշտոնական բարոյականությունը սոցիոմշակութային այն համակարգն է, որով որոշվում է տվյալ սոցիալ-քաղաքական կարգի ժողովրդավարության լինել-չլինելը: Եվ դա պատահական չէ, քանի որ քաղաքական ինստիտուտները մի կողմից հանդիսանում են հասարակական հարաբերությունների ու նորմերի տրամաբանական շարունակությունն ու դրանց ամրագրման ձևեր, մյուս կողմից ներմուծում են կարգավորող ու կայունացնող նոր սկզբունքներ, որոնք բնութագրում են տվյալ հասարակության սոցիալ-քաղաքական կարգի բնույթն ու բովանդակությունը [4, 13]:

Ազատական-ժողովրդավարական հասարակությունների նախորդ ողջ պատմությունը ցույց է տալիս, որ այդ համակարգում չափավոր բարեփոխումների միջոցով սոցիոմշակութային որոշակիության պահպանման հնարավորությունները շատ մեծ են: Ժամանակակից հասարակություններում տեխնիկական առաջընթացն ստեղծել է կյանքի կազմակերպման սոցիոմշակութային, տնտեսական ու քաղաքական այնպիսի ճկուն մեխանիզմներ, որոնք կարողանում են համակարգի հակամարտ ուժերին հաշտեցնել և բացառել համակարգի այլընտրանքային զարգացման հնարավորությունները: Պատահական չէ, որ չիրագործվեցին սոցիալիստական համաշխարհային հեղափոխության հաղթանակի մարքսիստական կանխատեսումները: Ինդուստրիալ-ազատական հասարակության ձևավորման ու զարգացման առաջին շրջանում Կ. Մարքսը մշակեց կոմունիստական հասարակության՝ որպես կապիտալիզմի այլընտրանքի, առաջին տեսական հայեցակարգը, որի իրագործման առաքելությունը դրված էր պրոլետարիատի վրա: Բայց ներքին աստիճանական փոխակերպումների շնորհիվ ինդուստրիալ հասարակությունն ստեղծեց այնպիսի պայմաններ,

որ ինստիտուտային կայունության պահպանումը դարձավ հասարակության բոլոր խավերի մտահոգությունը: Փաստորեն շուկայական տնտեսությունը և տեխնոլոգիական կառույցներին բնորոշ ռացիոնալացումը վերաճեց նաև սոցիալ-քաղաքական ու մշակութային ռացիոնալության, ինչը թեև ազատական-ժողովրդավարական հասարակությանը հաղորդեց որոշակի կայունություն և սոցիալական այլընտրանքներին դիմադրելու կարողություն, բայց հասարակության կյանքը դարձրեց ամբողջատիրական, ապասոցիալական:

Ինքնին հասկանալի է, որ ինդուստրիալ-ազատական հասարակության կենսամակարդակի անշեղ աճի պայմաններում համակարգի ինստիտուտային կարգին չենթարկվելը կարող է թվալ խելահեղություն, առավել ևս, որ անկայունությունը կարող է բացասաբար անդրադառնալ բարեկեցության վրա: Առավել ևս, որ տեխնոլոգիական գործընթացների մեքենայացումն ու ստանդարտացումն անհատին հնարավորություն կտան իր ողջ էներգիան ծախսել ազատ ու ինքնիշխան կյանքի կազմակերպման վրա: Սակայն այս մշակույթի ներքին հակասականությունը այն է, որ մի կողմից ունի տեխնոլոգիական ռացիոնալության միտում, իսկ մյուս կողմից փորձում է այդ միտումը սահմանափակել գործող ինստիտուտների շրջանակներում:

Գրականություն

1. Норм. Д., Институты, институционнальные изменения и функционирование экономики, М., 1997.
2. Աղաջանյան Հ., Պետություն և տնտեսություն, Երևան, Տնտեսագետ, 2003:
3. Հարությունյան Էդ., Ազգային ինքնուրույն և կյանքի մշակույթ, Երևան, 2004:
4. Apter D. E., introductionto Political Analyses, Cambridge, 1977.

Социокультурные функции институционной системы либеральной культуры

Григорян Анна

Резюме

Ключевые слова: *социальная система, нормативная система, открытое общество, нравственные ценности, национальная культура*

Учитывая то обстоятельство, что в организационной и симбиотической регламентации жизни либеральная культура имеет определенную институционную систему (рыночную, политическую, социальную), с помощью которой происходит нормирование и регулирование социальных отношений, в статье содержится развернутое исследование социокультурных функций институтов.

Крупнейший теоретик либерализма и институционализма Д. Норт рассматривает институты как совокупность формальных (законы, конституция) и неформальных (традиции, договоры и т.д.) норм, которые в определенных рамках деятельности структурируют и регулируют взаимоотношения между людьми. Таким образом, формальные нормы закреплены законодательным правом, а неформальные нормы – традиционным правом, которые отличаются друг от друга функциональным значением и исполнительной строгостью. В этом смысле нравственные и аксиологические нормы также предстают как своеобразные институты, в истоках которых лежат определенные ограничения, сформированные на основе истории, религии, культуры и доказанные эмпирическим способом. Как экономические и политические, так и социокультурные институты являются правилами поведения, созданными для формирования необходимой среды в рамках внутриобщественного взаимодействия и конвенционализма. Содержание этих правил формируется в контексте социокультурных ценностей данного общества. Оценка функциональной роли институтов позволяет сделать вывод, что они, будучи нормативными системами, являются незаменимыми в регулировании сложных и противоречивых человеческих взаимоотношений.

Socio-Cultural Functions of the Institutional System of the Liberal Culture

Grigoryan Anna

Summary

Key words: *social system, normative system, open society, moral value, national culture*

Taking into consideration the fact that the liberal culture of the life organization and coexistence regulation has some institutional system (i.e. political, social and consumer) by which social relations are being normalized and regulated, this article deeply analyses socio-cultural institutional functions.

D. North, an outstanding theorist of liberalism and institutionalism, considers an institute as a complex of formal (i.e., rules, the Constitution) and not formal (traditions, agreements, etc.) norms, which manages and regulates human relationships in the sphere of concrete actions. By other words, formal norms have a usage in the legal laws, and the not formal norms are actual in traditions. The difference between them is penetrated in their practical meaning and execution toughness. In this sense, moral and valuable norms are specific institutes in the inception of which are some restrictions raised and experience-based by the state, culture and rights.

Both economic, political and socio-cultural institutions are behavioral rules created for the formation of necessary environment for the sake of an achievement of intra social cooperation and consent. The content of those rules is formulated in the context of socio-cultural values. The approach of an appraisal of practical role of institutes may serve for the conclusion according to which as normative systems they are unchangeable in the issue of a regulation of humans' complicated and controversial relationships.

Ներկայացվել է 30.09.2019 թ.
Գրախոսվել է 01.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Մտակեցվածքի կառուցվածքային պատկերն ըստ զարգացման փուլերի

Հարությունյան Անի

Հանգուցային բառեր. *գոյաձևում, պարզունակ, հավաքական պատկերացումներ, մտային ընդունիչներ, քաղաքակիրթ, ավանդապաշտական հասարակական մոդելներ*

Ժամանակին դեռևս անտիկ փիլիսոփա Արիստոտելը, իսկ հետագայում նաև Օ.Կոնտն էր պնդում, որ մարդու ու մարդկության երկսայրության մեջ շեշտադրումը պետք կատարել մարդկության միջոցով՝ մարդուն հետազոտելու եղանակի օգտագործմամբ, այլ ոչ թե հակառակը: Բանական էակի՝ որպես այդպիսին կերտվելու գործընթացում օտարի դերակատարման դրույթը կարելի է հանդիպել նաև Ա.Ֆերգյուսոնի մոտ, երբ ամեն մի մարդու պատմության մասին խոսելիս նա դրա գոյաձևումը նկարագրում էր լոկ որպես մտքերի հոսքի ու հույզերի այնպիսի դրսևորում, որոնց նկատմամբ նա անձնային տիրապետում էր ձեռք բերում իր տոհմի/ցեղի հետ հարաբերմամբ պայմանավորված, և ըստ այդմ, «այդ թեմային վերաբերող յուրաքանչյուր հետազոտություն [այս.՝ մարդու պատմությունը, հեղ.] պետք է իրականացնել ամբողջապես վերցված հասարակությունների և ոչ թե հատուկ անձերի միջոցով» [6, 34]: Այս մեջբերմամբ վեր է հանվում մարդու էվոլյուցիոն գործընթացում մտածական ունակությունների կուտակողականության հաստատունը ու դրա ձևավորման, կիրառման հնարավոր ձևերը:

Անհատի մտակեցվածքի[1] զարգացման էությունը բացահայտելուն ուղղված են եղել շատ մտածողների տեսական ու գործնական հետազոտություններ, որոնց մի մասի պարագայում ակնհայտ տարաբաժան է անցկացվում քաղաքակրթության ներկայացուցիչ

[1] Նշյալ եզրը սահմանվում է՝ որպես «անհատի կողմից աշխարհը որոշակի կերպ ընկալելուն ծառայող նախատրամադրվածությունների ու մտադրությունների ամբողջություն». տե՛ս Новая философская энциклопедия: в 4 т. М., 2001, Т. 2, էջ 525:

այժմեական մարդու ու պարզունակ մարդու միջև՝ փորձելով հասկանալ, արդյոք իրենց միջև կան մտակեցվածքային տարբերություններ, թե ոչ, և եթե կան, արդյոք դրանց բնույթը քանակական է, թե որակական։ Ոչ նույնական մեկնություն է երբեմն տրվում նաև անհատական ու հավաքական (կոլեկտիվ) մտակեցվածքներին։ Իմացաբանական մեկնակետից թեմատիկ ուսումնասիրությունները, պետք է նկատել, բավականին շփոթեցնող են։ Փիլիսոփաները, մշակութաբանները մտորել են. արդյոք մտակեցվածքը անփոփոխ էություն է, թե այն այլազան է նախորդ դարերում ապրված մարդու մտակեցվածքից։ Ինչպիսի՞ն է այսօրվա մարդու մտակեցվածքը, և ինչո՞ւ է այդպիսին ու արդյոք այն նույնական չէ պարզունակ մարդու մտակեցվածքի հետ։ Նմանօրինակ հարցադրումների սպառման միջոցին կիրառվել են, գլխավորապես, չորս տերմին՝ «պարզունակ կամ պրիմիտիվ», «անհատական», «հավաքական կամ կոլեկտիվ», «ժամանակակից կամ քաղաքակիրթ»։ Ելնելով ձևական տրամաբանությունից հայտնի դասային/սեռային բաժանման սկզբունքից ու մեր առջև դրված խնդրից առ մտակեցվածի զարգացման փուլերի վերլուծություն՝ հարաբերակցումը հարկավոր է կառուցարկել մտակեցվածքի «պարզունակ – ժամանակակից» ու «անհատական – հավաքական» զույգերով։ Ինչպես կնկատվի ստորև, պրիմիտիվ տեսակն իր «փրկության օղակը» հաճախ տեսնում է հավաքական մտակեցվածքի ծավալում և հակառակը, իսկ անհատականը՝ զարգացման երկրորդ փուլում՝ քաղաքակիրթ մտակեցվածքում[2]։

Յուրաքանչյուր անհատ, անցնելով իր կենսաբանական տեսակով պատճառավորված, սոցիալականացման ու շրջակա միջա-

[2] Այլ կերպ ասած, եթե ճշմարիտ է կարծել, որ «ժամանակակից»-ը մտակեցվածքի զարգացման փուլ է, ստացվում է, որ այն պարունակում է մեկ կառուցվածքային մակարդակ, այն է՝ անհատական։ Եվ համապատասխանաբար, եթե ճշմարիտ է կարծել, որ պարզունակն էլ է զարգացման փուլ՝ այսինքն առաջինը, ստացվեց, որ դա իր մեջ տեղավորում է կառուցվածքային մակարդակներից երկրորդը՝ հավաքականը։

վայրի հետ ու դրա մեջ ձուլման գործընթաց, դառնում է պարտադրված ժառանգության կրողը, որն իրենից այլևս անբաժան է: Չծայրահեղացնելով անձի «անզօրության» դրվագը՝ իր լինելիության դարափուլի և սոցիալական իրականության ամբողջական արտատպման մոդելում՝ պետք է զուգահեռաբար ընդգծել, որ անձնավորության ինքնատիպ, ոչ կախյալ, արարչագործական սկզբունքը չի իրականացվել ու չի էլ կարող երբևէ պատկերանելի դառնալ պատմական ու սոցիալական համատեքստից կտրված: Մարդը ազդվում է դրանցից, ու այդ ազդեցությունը առաջին հերթին իր հետքն է դնում մտակեցվածքի վրա:

Պարզունակ մտակեցվածքի քննության նախերգանքը հնչում է տոհմացեղային, նախնադարյան հասարակարգից, երբ թվում է, թե գոյության պահպանության միակ եղանակը համակեցության մեջ ու դրա հետ ապրելն էր: Համատարած համաստվածության պայմաններում, երբ առկա էր իրականի ու թվացյալի, հասանելի ու անհասանելի աշխարհի, նյութական ու ոչ նյութական ոլորտների չտարբերակվածություն, միակ հնարավորն էր համարվում այն, ինչ տրված է, ուղղակիորեն կա: Սա գուցե ոչ այլ ինչ է, քան մարդու ու շրջակայքի անմիջական հարաբերակցվածության տարր, մի երևույթ, որի միակ իրական լինելը պրիմիտիվ մտակեցվածքով մարդկանց համար այնքան արմատացած է եղել, որ իրենց ապրելու հավաստումն են տեսել հանրույթի ու արտաքին միջավայրի հետ ամբողջական ձուլման մեջ: Խոսքն այստեղ ոչ այնքան կամ ոչ միայն ցեղի «առաջնորդի» վարքի ամբողջական կրկնօրինակումն է կամ կուրորեն դրան հետևելը, այլ հատկապես հույզերի գերակայության նկատմամբ նրանց աներկբա, սառնասիրտ հնազանդությունը, «ընդհանուր սկզբի» հետ միասնական դառնալու տենչը [2, 28]: Սոցիալական հարթակում պարզունակ մտակեցվածքով մարդն ինքնիրացումն ընկալում էր՝ առաջին հերթին իր հանրույթին պատկան լինելով: Իսկ պատկանելությունը դրսևորվում էր իռացիոնալ ապրումների և տարբեր զգացմունքների ուղղակի և անվերապահ կրմամբ, փոխանցմամբ ու աքսիոմատիկ ընդունմամբ:

Մերօրյա պատկերացումներով պարզունակ մտակեցվածք ունեցող մարդը գտնվում էր դիցական աշխարհում, որն էլ մարդու մտածողությանը հաղորդում էր հավաքական ծագումնաբանության դրոշմ: Իր տեսլականում ամենևին կարիք չկար բացատրություն տալ, թե ինչ է պատահում առօրյայում, ինչու է մարդը վախենում ինքն իր ստվերից: Անգամ բնության երևույթների հաջորդականության քննարկումն էր ըմբռնվում անխոս. եթե դա կատարվում էր, ուրեմն այդպես էր պետք: Այս միանշանակ պատճառականության սկզբունքը, որի դրսևորման շրջանակները, ըստ էության, ընդգրկում են գրեթե երկու հազարամյակ, բոլոր հնարավոր եղանակներով զրկում է պարզունակ մտակեցվածքը տրամաբանությունից ու դրան բնորոշ օրենքների նկատմամբ հետևողականությունից: Համակեցության կազմակերպման հարցում բնության օրենքներն ու մարդու կենսաբանական բնութագրիչներն օժտված էին անհավանական գերակա ուժով, երբ «մարդը կարող է ծնվել ժայռից, քարերը կարող են խոսել, կրակը կարող է չբոցկլտալ, մահացած մարդիկ կարող են ողջ լինել և այլն» [2, 363]:

Պարզունակ ու ժամանակակից մտակեցվածքների մասին վերլուծության մեջ անհամատեղելիություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ առաջինը համարվի հետամնաց, իսկ երկրորդը՝ քաղաքակիրթ: Եթե դրանք քննվեն անհամաչափ երկու հարթակների՝ միմյանց հետ բախման պարագայում, ապա այդպես էլ կստացվի: Հենց «մտակեցվածք» եզրը, որը նախընտրում էր օգտագործել Լ.Բրուլը, ու դրա «պարզունակ կամ պրիմիտիվ» որոշիչը հավաքական պատկերացումների միջոցով ներթափանցող քննության ենթարկելիս այն համեմատվում է ու ըստ արդյունքի՝ նաև հակադրում ոչ թե քաղաքակիրթ մարդու հավաքական, այսինքն՝ արդեն տեղին է նշել, սոցիալական պատկերացումների հետ, այլ աշխարհի յուրացման գիտական ասպարեզի հետ: Ու դրա համատեքստում արձանագրվում է պրիմիտիվ ու ժամանակակից մտակեցվածքների միջև առկա արմատական տարբերությունը ու միմյանց հետ որևէ կերպ կապակից չլինելը: Տրամաբանական հա-

կասականության անորսալիության դրույթը ևս տիպական կարող ենք համարել հավաքական պատկերացումներով ապրող մարդկանց համար: Ֆիզիկական ու մտային հեռազգացության՝ տելեպատիայի[3] որակավորումը, արթուն ու քնատ հոգեկան վիճակների համահավասար իրական լինելը կարող ենք համարել դրա վառ օրինակները: Առհասարակ ցանկացած իրի ու երևույթի մեջ նախնադարյան մարդիկ մտովի ներառում են անբացատրելի, թաքուն «խայծ» պարունակող տարրեր, բայց ոչ թե համարելով դրանք իմացությանը ենթակա մարտահրավերներ, այլ չիմացության շղարշի բնականոն մասնիկներ:

Մտակեցվածքի էվոլյուցիայի առաջին էտապում «երևույթ ու էություն» երկբևեռությունը՝ որպես դիալեկտիկայի դասական զույգ կատեգորիաներից մեկը[4], առկա չէ իր գոյության հիմնավորվածության բացակայության պատճառով: Պարզունակ միտք ունեցող մարդը դրանց միջև չի տեսնում իրարամերժություն, ընդհակառակը, դրանք կա՛մ սերտորեն կապված են միմյանց հետ, կա՛մ այնքան մոտ են, որ նույնացվում են:

Առաջին հայացքից հուզականության կամ իռացիոնալիզմի դիրքերից օբյեկտիվ իրականության (որն այդքան էլ իրենց համար օբյեկտիվ չէր, քանի որ մարդն ինքը ճանաչող սուբյեկտ չէր), կամ այլ կերպ ասած, շրջակայքի հետ հարաբերակցվածության բովանդակությունը համընկնումներ ունի «կոլեկտիվ անգիտակցական»

[3] Առաջին անգամ բառը շրջանառության մեջ է դրվել 1882 թվականին Ֆրեդերիկ Մայերսի կողմից:

[4] Փիլիսոփայության մեջ այս կատեգորիալ զույգը պետք է ըմբռնել որպես ուսումնասիրվող օբյեկտի յուրացման հարաբերական խորքայնության մակարդակներ: Առաջին դեպքում դա արտաքին կողմն է, տեսանելին, իսկ երկրորդի դեպքում՝ տվյալ առարկայի ներքին հատկանիշները. այս զույգի մասին խոսել են անտիկ շրջանում Դեմոկրիտեսը, Պլատոնը, առավել բանական բացատրության հեղինակն Արիստոտելն է (Aristotle Categories in Aristotle's Categories and De Interpretatione (tr. Ackrill J.L. Clarendon Press, Oxford, 1963) Ch. 4), իսկ Նոր ժամանակներում՝ Գ.Հեգելը ու Կ.Մարքսը:

բառակապակցության բովանդակության հետ: Եվ ըստ ամենայնի այն կարող է տեղի ունենալ, եթե մենք ուշադրություն դարձնենք Կ.Յունգի և ոչ թե Զ.Ֆրեյդի կողմից գիտական հարթակ մուտքագրված ու դրան իմաստ հաղորդած «անգիտակցական» բառի իմացական կողմին: Հոգեվերլուծության հիմնադրի տեսության մեջ այն որևէ կերպ չի բացատրում հասարակության նախնական մոդելների (համակեցությունների, տոհմերի, ցեղերի) շրջանում ներբեռնված նորմերին ու սկզբունքներին մարդու անվերապահ հավատարմությունը, այլ հակառակը, այս եզրն ամենուր ընդգծում էր անհատականի և ոչ թե խմբայինի ունեցած վճռական դերն ու նշանակությունը՝ արձանագրելով անգամ խմբայինից ամեն տեսակի «փախուստ»: Իսկ յունգյան կոլեկտիվ անգիտակացկանն առասպելական կամ արքետիպերի պարունակմամբ այլաբանորեն մեզ հուշում է բոլոր ժամանակշրջաններում ապրող մարդու մտակեցվածքում առկա դիցականի տարրի մասին, որը, ինչպես գիտենք, զուրկ չէ տրամաբանական բնույթի ընդհանրացումներ ու վերլուծություններ կատարելու ներուժից [3, 171]: Կոլեկտիվ անգիտակցականն ըմբռնելով որպես հուզական տարր ամփոփող մտակեցվածքի մաս՝ մենք մոտենում ենք «պարզունակ ու ժամանակակից մարդու մտահայեցողական կառուցվածքներում ստորադասի ու գերակայի փոխառնչություն» բացակայության դրույթին: Որպես ևս մեկ ապացույց՝ հիշատարկում է երկու մտակեցվածքներին բնորոշ բնական լեզուն՝ անվանելով այն առասպելի տեսակ, տեղեկատվության պահպանման, փոխանցման ամենակատարելագործված միջոց: Չնկատելով դրանցում որակական տարբերություններ՝ ինքն առավել էական է համարում ուշադրությունը բևեռել անձի՝ որպես համակարգի կառուցվածքաբանական լինելության ու հարաբերությունների քառսային համախմբության վրա [4, 245-250]: Մտակեցվածքի որակական բնույթի կայուն ստատիկ կեցվածքը, հավանաբար, նախա- ու քաղաքակրթական երկու կաղապարների մեջ ներկայացել է լոկ դրսևորման ձևի փոփոխմամբ: Փաստորեն, արդարամտորեն հարկ է փաստել, որ Լևի Ստրոսն արմատապես

շրջում է բրուլյան մոտեցումը՝ խնդրի առարկայի մասին։ Եթե իր համար պրիմիտիվ մտակեցվածքը փոփոխման չի ենթարկվել, ապա Բրուլի համար այն ոչ միայն կրել է փոփոխություններ, այլև առաջ է բերել մտակեցվածքի գոյության գոյաբանական հակասական ակունքներ՝ մի դեպքում զգայականություն, իսկ մյուս դեպքում՝ ռացիոնալություն։

Ժամանակակից մարդու մտակեցվածքում նկատելի է զգացմունքային դաշտի երկիմաստություն, որի եղելության դերը մտակեցվածքի առաջացմանը բացատրություն տալն է։ Մի դեպքում հուզականությունը միավորում է մարդկանց, դառնում նրանց միջև կապող օղակ, իսկ մյուս դեպքում այն մեր նախորդ սերունդներից ժառանգորդության սկզբունքով փոխանցվածն է։ Այս կապակցությամբ Լ.Ֆևրը այլաբանորեն նշում է. «որքան գտածոներ կարող է հայտնաբերել մարդկային մտքերի հնագիտությունը բառերի փոփոխման այն հաջորդականության մեջ, որը մեր գիտակցության նախադրյալն է... Մահացածները դեռևս պահպանում են իշխանությունը մեզ՝ այսօրեականներիս վրա» [5, 44]։ Պահպանվում է, ըստ էության, մեր նախնիների նախապատվելի բաղձանքն առ «պապերը իրենց թոռներին այնպիսի ապագա են ցանկանում, ինչպիսին իրենց անցյալն էր» [1, 31]։

Պրիմիտիվ մտակեցվածքն ինքնուրույնությունից զուրկ, համակեցության տեսլականը լիարժեքորեն կիսող, իրադարձություններին միասեռ հայացք նետող դիցական աշխարհայացքի նախատիպ է։ Եվ այն այդպես էլ չէր գրանցի առաջընթաց, եթե մարդուն չսկսեր հետաքրքրել իր անձը։ Ինքնաճանաչման առաջքաշմամբ կարևոր է դառնում նաև անկախ, չթելադրված օրենքների, սկզբունքների լուսաբանում՝ իրենից դուրս գտնվող ու իր լինելով չպայմանավորված իրականության վերաբերյալ։

Վերլուծության այս հատվածի համար ամփոփիչ դրույթները հետևյալն են.

▪ Մտակեցվածքի զարգացման փուլերից առաջինն իր առջև չի դրել շրջապատող աշխարհի բացահայտման, կառուցվածքային

շերտավորման խնդիր, իսկ ահա այսօր դժվար է գտնել մի բանական էակի, որ չփորձի գոնե մեկ անգամ օբյեկտիվ իրականության այս կամ այն կողմի քննադատ հայացք նետելուց կամ իր լինելը շրջակա աշխարհի հետ ու առավել ևս սոցիումի այս կամ այն խմբի գոյության հետ պատճառավորել։

▪ Պարզունակ մտակեցվածքը զգայուն չէ փորձի կուտակման նկատմամբ, ինչը չի կարելի ասել ժամանակակից կամ քաղաքակիրթ մտակեցվածքի մասին։ Քանի որ չի եղել սուբյեկտի, այս.՝ մարդու կողմից օբյեկտի ուսումնասիրման անհրաժեշտություն, ինչը ոչ քաղաքակիրթ մարդկանց մտածողության մեջ խառնաշփոթի առաջացման գլխավոր պատճառն է, կարիք չի եղել նաև հասկանալու, արդյոք պետք չէ ամբարել մարդու «ներանձնայինից» դուրս եղածի մասին տեղեկատվություն կամ գիտելիք՝ այն քննության ենթարկելու նկատառումներով։ Մտակեցվածքի ոլորտում թե՛ նախնադարյան, թե՛ ժամանակակից մարդու մոտ առկա է կոլեկտիվ անգիտակցական (առասպելական մտածողության դրսևորումներ կամ արքետիպեր)։

▪ Նախնադարյան մարդու «պարզունակ» մտակեցվածքը չունի տրամաբանական ընդհանրացումներ իրականացնելու շնորհք, իսկ ներկայում ապրող էակի մտակեցվածքն օժտված է դրանով։

Իսկ ի՞նչ տեղի կունենա, երբ մտակեցվածքը ստանձնի ոչ թե օբյեկտի, այլ սուբյեկտի դեր։ Ի՞նչ կարող է բացահայտվել, եթե փորձենք հասարակության կայացումը մեկնաբանել մտակեցվածքի միջոցով։ Նույն զգացմունքների ու դրանց համատատասխան վարքագծի մոդելների ամբողջական կրկնությունը, ըստ Ա.Վալլոնի, ձևավորում են ինքնակազմակերպման ու ինքնակարգավորման մի սխեմա, որի բնույթը սոցիալականն է. «հույզերը վարակիչ են» [5, 111]։ Հեղինակավոր ազգագրագետների ու մշակութաբանների կատարած ուսումնասիրություններն իսկապես փաստում են, որ նախնադարյան համայնապատկերում տարբեր ծեսերի, արարողակարգերի իկատարածման ու ավանդույթների պահպանման ընթացքը ցուցադրում է դիմախաղի, կեցվածքի ու քայլքի միջոցով

նույնական զգացումների ու հոգեկան ապրումների առաջացման խորհուրդը։ Այս իմաստով զգալն ու մտածելը համարվում են համանման երևույթներ։ Ըստ այսմ, կոնկրետ իրավիճակում հանրույթի անդամների հուզական նույնականացման առաջանցիկության միտմամբ ձևակերտվում է կենսունակ երևույթների նկատմամբ արձագանքման ու վարվելակերպի սկզբունքների, վերաբերմունքի նախագիծ, որն էլ դարեդար պահպանում է իր կենսահիմաստային նշանակությունը մարդկության պատմության մեջ սերունդների հերթափոխում ունեցած իր կայուն տեղի շնորհիվ։

Տարբեր դարաշրջաններում ապրող մարդու մտակեցվածքների փոխադարձ ազդեցության հանգամանքի լուսաբանման մեջ վերհանելով տարբեր պատճառներ, այնուամենայնիվ, պետք է ընդունել հետևյալը թե՛ պարզունակ, թե՛ քաղաքակիրթ մարդու մտակեցվածքում վճռաբեկ է տարածաժամանակային համատեքստը հասարակական այն միջավայրի հետ միասին, որում նա ապրում է։ Իսկ թե որքանով է գոյաբանորեն մարդու մտակեցվածքը «միջնորդավորված», հիրավի, հարաբերականորեն պայմանավորված է նրա արքետիպային անցյալով։

Հիրավի, մենք չենք կարող չընդունել այս երկու մտակեցվածքների միջև զգալի տարազանության նկատառումը, քանզի դրանցից յուրաքանչյուրն, ի բնէ, կապ ունի իր հասարակական սերուցքի հետ։ Ավանդապաշտական հասարակական մոդելներում կենսաշխարհի բնույթն է ծառայության մատուցումը, և ըստ դրա՝ անձը պարտավոր է իր մտակեցվածքի տեսական ու գործառական շարժառիթները ազուցավորել ուրիշին, ով էլ իր հերթին է ենթակա այլոց կողմից մուտքագրված կանոնների օգտագործման ազդանշանի կրման պարտադրությանը։ Ի հեճուկս դրան՝ ազատականության դրոշմանիշ ունեցող հասարակության լեյտմոտիվն է «զվարճանալը, սպառելն ու հաճույք ստանալը, և այստեղ կեցության «ինչպիսին» լինելը կանխորոշված է «կարող ես ինքդ ընտրել» պարզ ու միևնույն ժամանակ պատասխանատվության բեռի փոխանցման տեսակետից բարդ, ծանրաքաշ հոետորաբանությամբ։

Ընդ որում՝ ի նկատի է առնվում հասցեատիրոջ մտահայեցողության զարկման թե՛ մետաֆիզիկական, թե՛ բարոյական և թե՛ սոցիալական ասպանդակները։ Եվ այսպիսով, այժմեական մտակեցվածքի կերտման հորձանուտը ներգրավում է ինքնաստեղծ իրողություններ ու գործիքակազմ և ոչ ամենևին անցյալահաճո ծաղկաքաղով ամփոփ կաղապար։

Երիցս ասվում է, թե արդիականության բազմաժանր պահանջներին համապատասխան մտային ընդունիչներ գտնելն ու դրանք գործարկելը որևէ բարդություն չի ենթադրում, քանի որ այսօր մենք ապրում ենք հարմարավետության, տեղեկատվական հասանելիության ու անգամ դրա ամենուր հետապնդման պայմաններում։ Բայց այսօրվա մարդու մտակեցվածքի ուսապարկը քանիցս ծանր է իր հետնորդների կրած բեռից։ Ինտելեկտուալ ցանցի հյուսման համար մեզ պետք է բովանդակային լցոնում ու արտահայտման գործիքներ։ Առաջինը, որը մտակեցվածքն է, մարդու ծնվելուն պես, նրան է հրամցնում գիտակցությանը ոչ հոժարակամորեն «բաժին հասած» նախաբնիկ մասնիկներ։ Իսկ հանրային կյանքի կազմակերպումն առանց գաղափարախոսության նախահենքի, որպիսին օբյեկտիվորեն գոյություն ունեցող այս չափումն է, դեռևս ոչ մի մտավորական ձևագոյացման փորձ չի կատարել։

Ըստ ամենայնի, մտակեցվածքի լինելությունը չի կարող պահպանվել, եթե մենք նրան զրկենք հեռանկարում «ինչպիսին պետք է լինի» բարոյագիտական հարցադրման առկախումից։ Բայց կենսահաստատ է նաև այն, որ կյանքի ճարտարակերտման և կազմավորման յուրաքանչյուր նախաձեռնություն անպայմանորեն ունենում է մետաֆիզիկական կոդ, որի գերակա իմաստը տվյալ ժամանակափուլում համակեցության ներսում մարդ բանականի ընկալման, ապրմանու հասկացման համայնապատկերի ուրվագծումն է, այն կողմնորոշման հաջորդականությունը, որը մեկնարկային է գործառական վարքագծի կանխորոշման համար։

Պարզունակ մտակեցվածքի ենթարկվածության ախտանիշն ինքնակործան ուժով այլևս չկա։ Իր պարկուճում թերատ այդ նա-

խամտածվածությանն ի հակընդդեմ՝ խոչընդոտներն այսօր ենթակա են վերացման և ոչ թե անտեսման, պարզապես տրվածն առանց ընտրության՝ դատապարտված ըմբոստության ու ընդվզման, դոգմատիկ հավատն առանց անձնօգուտ շահի՝ հիմնահատակ քայքայման և կազմալուծման: Ահա այսպիսին է ժամանակակից մտակեցվածքի թելադրանքը. այն համահունչ է խելացնոր սլացքին, որի անունն է «հետմարդկային ապագա»[7, 129]:

Գրականություն

1. Հարությունյան Է. Ա. Մարդկային կեցության այլակերպումները/Հարությունյան Է. Ա.: Եր., ԵՊՀ հրատ., 2018, 188 էջ:
2. Бруль Л., Сверхъестественное в первобытном мышлении. — М., Педагогика-Пресс, 1994, 608 с.
3. Клод Леви-Стросс, Первобытное мышление / Пер., вступ. ст. и прим. А. Б. Островского. М., Республика, 1994, 384 с.
4. Клод Леви-Стросс, Структурная антропология/ Пер. с франц. под ред. и прим. Вяч. Вс. Иванова, М., 1985, 536 с.
5. Февр Л., Бои за историю, Изд-во Наука, М., 1991, 635 с.
6. Фергюсон А. Опыт истории гражданского общества/Пер. с англ. под ред. М.А.Абрамова., М., 2000, 392 с.
7. Фукуяма Ф., Наше постчеловеческое будущее: Последствия биотехнологической революции/ Пер. с англ. М.Б. Левина, М., Изд-во Люкс, 2004, 188 с.

Структурный образ ментальности согласно этапам ее развития

Арутюнян Ани

Резюме

Ключевые слова: *существование, первобытный, коллективные представления, ментальные рецепторы, цивилизованный, традиционные социальные модели.*

В статье рассматриваются две содержательные характеристики ментальности, сформировавшиеся вследствие своего эволюционного развития. Говоря о сущности первой из них, а именно первобытной или примитивной ментальности, нужно заметить, что она осуществлялась в рамках принятой модели человеческой жизни. В период доисторического существования человечества индивид считался живым только в том случае, если он своим поведением, разумом и чувствами был полностью ассимилирован с сообществом. При таком мышлении человек не придавал важности накоплению своего личностного опыта и знаний, поскольку он не осознавал своего собственного бытия без других. В отличие от примитивного типа, ментальность современного человека моделируется с точки зрения стандартов, предложенных ему в современных условиях глобализации. Если в прошлом община считалась ответственной за плоды мышления человека и последствия его самоактуализации, то сегодня, человек является героем всего того, что он сделал сам. Сейчас человек строит свой разум не по содержанию, значению или даже социальной целостности, а по тенденции развлечения, потребления и получения материального наслаждения, которое, по сути, имеет отношение только к этому человеку и следовательно, является преходящим.

В конечном итоге сравнительный анализ этих типов ментальности также выявляет логику ролей чувствования и разума и, что наиболее важно, их взаимозависимости как исторического доказательства обоюдного существования.

The Structural Scheme of Mentality According to Its Evolutionary Stages

Harutyunyan Ani

Summary

Key words: *existence, primitive, collective representations, mental receptors, civil, traditional social models*

The article discusses two substantial characteristics of mentality, which formed as a result of its evolutionary development. The first one, namely, primitive mentality, was performed within the framework of the accepted model of human life. In that prehistoric period of mankind, an individual was considered living only if he was assimilated with the community by his behaviour, mind and feelings. With such thinking, a person didn't give a rush for the accumulation of experience and knowledge, since he didn't realize own being without others. Unlike that, the mentality of modern man is modelled from standards proposed to him in actual conditions of globalization. If in past the community was considered responsible for the human thought outcome and consequences of its self-realization, today a person is the hero of everything that he did himself. Now he thinks not on content, value or even social integrity, but the trend of entertainment, consumption, and receipt of material pleasure, which relates only to him and, therefore, is transient.

After all, this comparative analysis reveals the logic of roles of sensation and reason and, most importantly, that interdependence as historical evidence of mutual existence.

Ներկայացվել է 08.10.2019 թ.
Գրախոսվել է 21.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

«Մշակութաբանություն» առարկայի սահմանումները տեսական-մեթոդաբանական դիտարկումների շրջանակում (դասախոսական տեքստ)

Հովհաննիսյան Միլվա

Հանգուցային բառեր՝ *մշակույթ, սոցիալ-պատմական փորձ, սահմանումների բազմազանություն*

Անվանումից արդեն ենթադրվում է, որ մշակութաբանության ուսումնասիրության առարկան մշակույթն է: Հետևապես մշակութաբաններին ամենից առաջ հետաքրքրել է «մշակույթ» հասկացության իմաստային որոնումների խնդիրը: Ընդհանուր տեսակետն այն է, որ մշակույթը հավաքական հասկացություն է, ընդգրկում է հասարակական կյանքի, հասարակական գիտակցության գրեթե բոլոր ոլորտները: Եվ պատահական չէ, որ մշակութաբանական հարցերը քննվել են թե՛ սոցիոլոգիական, թե՛ քաղաքագիտական, թե՛ հոգեբանական, թե՛ պատմագիտական և թե՛ փիլիսոփայական գիտությունների շրջանակներում: Ավելին, մշակութային խնդիրները այսօր հետաքրքրում են նաև այնպիսի բնական գիտությունների, ինչպիսիք են բիոսոցիոլոգիան և էթոլոգիան:

Սակայն նշված բոլոր գիտություններին մշակույթը հետաքրքրել է միայն իրենց առարկայի առանձնահատուկ բնույթի, պահանջների, ճանաչողական մեթոդների և կատեգորիալ հասկացությունների շրջանակում, (հետաքրքրել է մշակույթի միայն որոշակի ոլորտ, որոշակի ձև): Մինչդեռ մշակութաբանությունը՝ որպես գրտություն, վերլուծում, տարբերակում, համադրում է մշակույթի մասին էմպիրիկ և տեսական հնարավոր բոլոր գիտելիքները՝ փորձելով ստեղծել «մշակույթ» (cultura) երևույթի ամբողջական նկարագիրը: Այստեղ, իհարկե, չի կարելի անտեսել առանձնապես փիլիսոփայության դերը, որն իր հիմնարար սկզբունքներով մշակութաբանություն առարկայի համար ունի ոչ միայն գիտատեսական, այլև մեթոդաբանական նշանակություն: Հենց փիլիսոփայությունն է առաջադրում այն խնդիրերն և նպատակները, որոնց շնորհիվ մշակութաբանությունը կարողանում է տեսնել, քննել աշխարհի ամբողջական պատկերը՝ աշխարհի միասնակա-

նությունը՝ իր բազմազանության մեջ: Պատահական չէ, որ դեռևս Դավիթ Անհաղթը փիլիսոփայությունը անվանում է «գոյերի գիտություն» [1, 35]: Իրավացի է և այն մոտեցումը, ըստ որի դժվար է միանշանակ սահմանագիծ դնել մշակույթի փիլիսոփայության և մշակութաբանության միջև: Ցիցերոնի դիտումով «մշակույթը հենց մարդու հոգու փիլիսոփայությունն է»:

Իհարկե, մշակույթ (culture) բառը ժամանակակից նշանակությամբ (որպես ինքնուրույն հասկացություն) գործածվել է միայն 17-րդ դարում՝ գերմանացի Սամուել Պուտենդորֆի գործերում (1632-1694): Սակայն այս հասկացության իմաստային որոնումներն սկսել են շատ ավելի վաղ ժամանակներից և շարունակվում են մինչև այսօր: Ինչպես ասում են, անվանումը նոր է, իսկ պատմությունը՝ հին: Առօրյա պատկերացմամբ կուլտուրան նույնացվում է կրթությանը, դաստիարակությանը, ինտելեկտին և այլն: Հաճախ ենք հանդիպում «խոսքի մշակույթ», «զգացմունքների մշակույթ», «վարքագծի մշակույթ», «հաղորդակցման մշակույթ», «աշխատանքի մշակույթ», «հանգստի մշակույթ» և նմանատիպ շատ այլ հասկացությունների, որոնք գործածվում են գրեթե այն բոլոր դեպքերում, երբ փորձում ենք գնահատել այս կամ այն իրավիճակը, երևույթը՝ իր դրական իմաստով (Գուրևիչ Պ. Ս.): Խոսում ենք նաև տարբեր պետությունների քաղաքական մշակույթի, պատմական տիպերի, ազգային մշակույթների առանձնահատկությունների շուրջ: Սակայն ի տարբերություն էմպիրիկ ըմբռնումների, որոնք վերաբերում են մշակույթի երևութական, արտաքին կողմին, «մշակույթ» հասկացության գիտական մեկնությունը փորձում է պարզել այն ներքին պատճառները, որոնք ծնում են մշակույթ: Փորձում է գտնել այն հարցերի պատասխանները, թե ինչու և ինչպես է մարդը դարձել մշակութային էակ, ինչպիսի ձեռքբերումների է հասել, և իհարկե, ինչպիսի պատմական հեռանկար կարող է ուրվագծել մշակույթը մարդու և մարդկության կյանքում:

Ընդհանրացնելով մշակույթը բնորոշող ամենատարածված մեկնություններ՝ կարելի է այն դիտել որպես մարդու նյութական և հոգևոր գործունեության եղանակ և արդյունք, ուրիշ խոսքով, մշակույթ է այն ամենը, ինչը պատրաստի չի տրվում բնությունից, այլ

ստեղծում է մարդը իր ձեռքի և բանականության շնորհիվ:

Նշված մոտեցումը թերևս կարելի է ընդունել որպես ելակետային և կողմնորոշիչ, քանի որ ինչպես արդեն նշվեց, մշակութային աշխարհը հենց մարդու կողմից վերամշակված բնությունն է: «Մարդը մշակույթի միջոցով բացահայտում և վերափոխում է աշխարհը և իրեն» [7, 19]:

Մշակութային աշխարհը՝ որպես ամբողջական և բազմաբնույթ երևույթ, հանդես է գալիս միայն մարդկային հասարակությունում: «Մշակույթը իր ողջ պատմության ընթացքում պայքար է մղում մարդու կենսաբանական բնույթի դեմ, փորձում է հաղթահարել նրա մեջ զուտ կենսաբանականը՝ հանուն սոցիալական նախասկզբի» [5, 91]: Կենդանին սահմանափակվում է իր զգայական ընկալումների աշխարհով, որը նրա վարքագիծը հանգեցնում է արտաքին ազդակների անմիջական հակազդեցությանը: Մինչդեռ մարդն իր ակտիվ, նպատակադիր գործունեությամբ ստեղծում է խորհրդանիշերի բազմաշերտ տարածություն, որը հենց մշակութային տարածությունն է [3, 30-31]: Ելնելով նշվածից՝ մշակույթը կարելի է անվանել սոցիալականացված միջավայր:

Խնդիրն այն է, որ դեռևս չի հաջողվում գտնել «մշակույթ» երևույթի ողջ բովանդակությունը արտացոլող բնորոշում:

Չի հաջողվում այն պատճառով, որ «մշակույթ» հասկացությունը ինքնին բազմիմաստ է և բազմաբովանդակ: Բավական է միայն ասել, որ այն բովանդակում է մարդու ողջ գործունեությունը՝ իր բոլոր դրսևորումներով և հարաբերության ձևերով:

Մշակութայինի՝ որպես բնականից տարբերվող միջավայրի մասին պատկերացումների հանդիպում ենք նաև դիցաբանական ավանդազրույցներում:

Դիցերի աշխարհը հենց իրականից դուրս անսահման ստեղծագործական, հնարովի տարածքն էր: Դեռևս նախասկզբնական հասարակությունում մարմնամասերի գունազարդումը, բնական ձևերի, գույների դեֆորմացումը, կրելով միստիկ բնույթ, խնդիր ուներ մարդուն «տեղափոխել» բնականից զատ՝ ուրիշ մի աշխարհ, ինչ-որ իդեալական միջավայր, որը, որքան էլ իր նշանակությամբ սիմվոլիկ, օգնում էր նրան բնության դեմ դաժան պայքարում,

օգնում էր հաղթահարել միջավայրի վախեցնող խորհրդավորությունը: Այդ էին հաստատում նաև զոհաբերություններով ուղեկցվող ծիսակատարությունները, շուրջպարերը՝ որսի գնալուց առաջ և իրավիճակային տարբեր պահանջներով պայմանավորված՝ վայրի կենդանիների, բնության այլևայլ երևույթների նմանակումները, կոլեկտիվ կենսափորձի արդյունքում ձևավորված այլևայլ սովորույթները: Արդյունքում մարդը փորձում էր ճանաչել ոչ միայն բնությունը, այլև ինքն իրեն: Այս առումով թերևս կարելի է ասել, որքան մարդն է ստեղծել մշակույթ՝ աշխարհը վերակերտելու համար, այնքան էլ մշակույթն է ստեղծել մարդուն՝ նրանում թաքնված ուժերը բացահայտելու համար:

Անտիկ հունահռոմեական դարաշրջանում արդեն մարդ – բնություն հարաբերությունը նոր սահմաններ է նվաճում՝ մարդ – տիեզերք միասնության՝ միկրո և մակրո աշխարհների, տիեզերական կարգ ու կանոնի շրջանակում: «Սակայն հույն մտածողներին մշակույթը հետաքրքրում էր որպես զուտ բնականը հաղթահարելու պայման, բարոյականը (զուտ մարդկայինը) և բնականը հակադրվում էին որպես երկու հակասական եզրեր [4, 6]: Եվ դրանով էլ հենց հույները իմաստավորում էին իրենց առավելությունը դեռևս մշակութային աշխարհ չմտած բարբարոսների նկատմամբ:

Հենց անտիկ հույն մշակույթը ժամանակակից աշխարհին պարգևեց Պրոմեթևսի, Ապոլոնի, Դիոնիսոսի և շատ ուրիշ աստվածությունների ու հերոսների մասին պատմող առասպելներ, որոնք այնուհետև դարձան բազմաբնույթ մշակութային ավանդույթների սիմվոլներ (Պ.Ս. Գուրևիչ): Այսպիսով, մշակութային աշխարհը հույների համար ձևավորվում է մի կողմից վերամշակելով, մյուս կողմից՝ հակադրվելով բնությանը: Ատոմիստ փիլիսոփա Դեմոկրիտը այն անվանում էր 2-րդ բնություն: Ըստ Դեմոկրիտի՝ բնությունը մեր ամենամեծ ուսուցիչն է. մարդը երգել սովորել է երգող թռչուններից՝ սոխակից, կարապից, իր համար կացարաններ է կառուցել՝ հետևելով կենդանիներին: Մարդը ստեղծել է մշակույթ, ծառայեցրել իր պահանջներին՝ նմանօրինակելով բնությանը [4, 6]:

Այնուհետև Արիստոտելը ևս բնությանը նմանօրինակումը (mumecuca) առանձնացնում է՝ որպես ստեղծագործական սկիզբ:

Սակայն անհրաժեշտ էր ոչ միայն նմանակելով ճանաչել բնության ուժերը, այլև վերափոխել դրանք՝ մարդու պահաջներին և հետաքրքրություններին համապատասխան: Վերափոխման կենսական պահանջը, բնական է, առաջին հերթին պիտի կապվեր նյութական պայմաններին, իսկ այդպիսին կարող էր լինել առաջին հերթին հողի մշակումը: Ուստի պատահական չէ, որ իմաստային առումով սկզբնական շրջանում կուլտուրա և կուլտիվացիա (հողի մշակում, վերամշակում, փխրեցում) հասկացությունները նույնացվում էին: Այսինքն հոգևոր կողմը դեռևս չէր դիտվում մշակութային երևույթ:

Չնայած հույն պետական գործիչ և գրող Մարկոս Պորցիոս Կատոնի դիտողության՝ հողի խնամքը ևս առաձնահատուկ հոգեկան նվիրում և տրամադրվածություն է պահանջում, պահանջում է ոչ միայն ձեռքի, այլև «հոգու հմտություն»: Այնուհետև արդեն հռոմեացի փիլիսոփա, հռետոր Ցիցերոնը պիտի նկատեր, որ մարդ մնալու համար մեր հոգին ևս ունի մշակման կարիք, որով պետք է զբաղվի փիլիսոփայությունը և հռետորիկան (ճարտասանությունը): Ցիցերոնը, իհարկե, առանձնապես նկատի ուներ մարդու բարոյական բնույթի կարևորումը:

«Եթե բարությունն ու կարեկցանքը դեռևս պահպանվել է մարդու հոգում, ուրեմն աշխարհը դեռ անվտանգ է, իսկ եթե մեր միտքն ու հոգին քարացել են դաժանության վարակով, ավելի լավ է ապրել վայրի գազանների ընկերակցությամբ, քան մարդկանց»,– հայտարարել է Ցիցերոնը իր պաշտպանական ճառերից մեկում: Հռոմեացի մտածողի դիտողությամբ, ինչպես հողը չի կարող առանց մշակման բարիք տալ, այնպես էլ մարդու հոգին և միտքը:

Սակայն հայտնի է, որ մինչև Ցիցերոնը հույն փիլիսոփաները արդեն խոսում էին «միտքը մտքով մշակելու» անհրաժեշտության մասին (չմոռանանք, որ Ցիցերոնը ևս կրթություն է ստացել աթենական դպրոցում և եղել է Պլատոնի ամենասիրելի աշակերտներից): Իսկ ահա պյութագորականների համոզմամբ, ինչպես մարմինը, հոգին նույնպես կարող է ախտահարվել տարբեր հիվանդություններով՝ ինչպիսիք են չարությունը, փառասիրությունը, դաժանությունը, նախանձը, վրեժխնդրութունը և այլն: Եվ ինչպես Պյու-

թագորասը (որին մեծ հեղինակության համար ուղղակի ասում էին՝ Ինքը) այնպես էլ նրա դպրոցում ուսանող սաները «հոգու մաքրագործման» միջոց էին դիտում պոեզիան և առանձնապես երաժշտությունը, որը ունի ոչ միայն դաստիարակող, այլև բժշկող հատկություն: Չմոռանանք, որ հունական «պայդեյան» ևս լինելով համապարփակ կրթության համակարգ՝ խնդիր ուներ մարդուն վերակերտել, թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր նոր կարողություններով: Այն համոզմամբ, որ ինչպես մարմինը ֆիզիկական վարժանքներով կարող է կրկնապատկել իր ուժերը, այնպես էլ միտքը «մշակվելով» կարող է ձեռք բերել նոր զորություն, նվաճել իմացական նոր սահմաններ: Հատկանշական է, որ ամենաարժեքավորը հույների համար հենց իմաստնությունն էր (Sophia). «Գիտելիք հանուն գիտելիքի»: Ավելին՝ Սոկրատեսի համոզմամբ՝ գիտելիքի պակասը կարող է դառնալ նաև մարդու ոչ առաքինի վարքի պայման: Նորից հիշատակելով Ցիցերոնին՝ նկատենք, որ նրա դիտումով կուլտուրան ոչ թե արվեստի և գրականության զարգացումն է, այլ կյանքի առանձնահատուկ կազմակերպումը, որտեղ մարդու հոգևոր վիճակն ու պետության ընդհանուր հետաքրքրությունները թեև հակասական, բայց անբաժանելի միասնություն են: Այս բնորոշմամբ, թերևս, հռոմեացի մտածողը փորձում է հասկանալ մշակույթը նրա քաղաքական իմաստից ելնելով: Ավելին նա գտնում է, որ միայն Հռոմը և նրա պետական կարգը կարող են լինել մշակույթի օրինակ:

Հունա-հռոմեական, բարբարոս ցեղերի և առավելապես քրիստոնեական սկզբունքների հիմքով ձևավորվեց միջնադարյան մշակույթը, (իհարկե դեռ պատկերացում չկար, որ քրիստոնեությունը կդառնա եվրոպական նոր քաղաքակրթության հիմքը) որում առավելապես կարևորվում էր խոսքի դերը, բառի իմաստային նշանակության ըմբռնումը: Մշակույթը կոչված էր խոնարհման և թողության խնդրանքով մարդուն հասու դարձնել աստվածային խոսքի իմաստնությանը: Փրկել անտիկ մշակույթում նրա աղավաղված, «փչացած» հոգին:

Հոգ պետք է տանել միայն անմահ հոգու մասին, իսկ մարմինը անցողիկ է՝ «չարիքի պատյան»: Հետևապես անցողիկի մասին գի-

տելիքը նունյնպես անցողիկ է: Վերածնության դարաշրջանում ևս տեղի ունեցան մշակույթի իմաստային մեկնության, հիմնարար սկզբունքների շուրջ մի շարք քննարկումներ, որոնք ամենից առաջ հանգում էին մշակույթի հիմնական սուբյեկտի՝ մարդու խնդրին: Մարդու, որն արդեն ուզում էր ոչ միայն հավատալ, այլև իմանալ: Սակայն մշակույթի սահմանման խնդիրը տեսական հետևողական ուսումնասիրությունների է արժանանում առանձնապես լուսավորության դարաշրջանում: Այսպես՝ 18-րդ դարում «կուլտուրա» ասելով՝ հասկանում էին հոգևոր կյանքի կատարելագործում, կրթություն, դաստիարակություն, որոնց միջոցով կարելի էր բուժել հասարակական կյանքի արատները: Այս բնորոշմամբ ընդգծվում էր, որ մարդը միայն իր բանականության շնորհիվ կարող էր ստեղծել մշակույթ՝ «Բանականության թագագավորությամբ հասնել ազատության թագավորության» կարգախոսով: Ավելի ուշ պիտի հնչեր նաև հեգելյան բանաձևը. «Այն ինչ բանական է, իրական է»:

Լուսավորիչները մշակութային հարցերը քննում էին որպես սոցիալական երևույթ՝ հայտարարելով, որ մշակույթի չափանիշը հասարակական հարաբերություններում արդարության և հավասարության հաստատումն է:

19-20-րդ դդ. մշակութաբանական մեկնություններում արդեն մշակույթը նույնացվում է քաղաքակրթությանը՝ նրանում կարևորելով հասարակության ինտելեկտուալ, առավելապես իրավական գիտակցության խնդիրները: Իսկ ահա ավստրիացի մշակութաբան Կ.Լորենցը մշակույթը սահմանում է՝ որպես ժողովրդական ծիսակարգերի, բարքերի, վարքագծի նորմերի և ավանդույթների համակարգ, որի խնդիրն է մեղմել մարդկային ագրեսիան: Նա պաշտպանում էր մշակույթի սահմանման էթոլոգիական ուղղությունը (ըստ որի՝ մարդու վարքագիծը պետք է ուսումնասիրել, որպես կենդանու մի տեսակի): Ֆրեյդը նույնպես համոզված էր, որ մշակույթն ստեղծվել է՝ զսպելու մարդկային կրքերն ու բնազդները:

«Մշակույթը մարդկային գործունեության առանձնահատկությունն է, այն ինչ մարդուն բնորոշում է որպես տեսակի»,– գրում է ֆրանսիացի մշակութաբան Ժակ Մարի Բենուան: Յ.Գուրևիչը ևս գտնում է, որ մշակույթը մարդու կողմից «վերստեղծված» բնու-

թյունն է, որի միջոցով նա հաստատվում է որպես մարդ:

Այսինքն՝ մարդը հենց «մշկութային մարդն է», չի եղել, չկա զուտ «բնական մարդ», որքան էլ մշակույթի աղբյուրը, նյութը, գործունեության տեղը բնությունն է:

Ա.Ի. Օսիպովի բնորոշմամբ «Մշակույթը մարդու հոգևոր և նյութական ստեղծագործության հանրագումարն է»: Այս սահմանման բովանդակությունից ևս պետք է հասկանալ, որ բնության մեջ մշակույթ չկա, որ մշակույթ է այն ամենը, ինչ ստեղծվել է մարդու շնորհիվ: «Մշակույթը տվյալ հասարակության կենսափորձն է՝ պայմանավորված սոցիալ-պատմական ժամանակաշրջանի պահանջներով» (Հայդեգեր): Նշված բնորոշման մեջ արդեն կարևորվում է մշակույթի պատմական բովանդակությունը: Այն, որ մշակույթը անընդհատ կարող է փոփոխել պատմական բազմաբնույթ իրադարձությունների, հետաքրքրությունների թելադրանքով:

Էվոլյուցիոն ազգագրական դպրոցի ներկայացուցիչների համար (Սպենսեր, Մորգան, Թեյլոր) պատմությունը ենթակա է այնպիսի օրենքների, որոնք գործում են նաև բնության մեջ, և այս առումով պատմական և բնագիտական գիտությունների ուսումնասիրության մեթոդները նույնական են:

Հիշյալ մեկնությամբ թերևս փորձ էր արվում հիմնավորել մշակույթների փոխադարձ կապի և միասնական սկզբի գաղափարը, որի արդյունքում առաջադրվեց այն մոտեցումը, ըստ որի մարդկության ողջ անցած պատմությունը կարելի է բաժանել 3 մեծ պատմաշրջանների՝ վայրենության, բարբարոսության և քաղաքակրթայինի:

Իսկ ահա անգլիացի սոցիոլոգ, էթնոլոգ, (ազգությամբ լեհ) Վ.Կ. Մալինովսկու (1884-1942) համար մշակույթը ծագել է որոշակի միջավայրի հարմարվելու անհրաժեշտ պահանջից: Այս առումով մշակույթը դիվում է՝ որպես «ադապտացիոն» հաղորդակցման համակարգ: Իոհան Հայզենգը «Խաղացող մարդը» աշխատությունում կառուցում է մշակույթի ծագման խաղային տեսության ամբողջական հայեցակարգ, որում խաղը մշակույթի ձևավորման նախապայմանն է: Ըստ Հայզենգի՝ խաղը ավելի հին է, քան մշակույթը, այն պայմանավորել է հասարակական կյանքի բոլոր

ոլորտները: Այսպես՝ «խաղի կանոնների» պահանջը ենթադրում է բարոյական որոշակի պայմանավորվածություններ, իրավունքը իր խաղային բովանդակությամբ կարգավորում է մարդկանց միջև հարաբերությունները, մաքուր խաղ էին նաև պաշտամունքային ծեսերի ընթացքում կատարվող պարը և երաժշտությունը: Հետևությունն այն է, որ ճշմարիտ մշակույթը չի կարող գոյություն ունենալ առանց խաղային բովանդակության՝ մինչև միջավայրի մշակումը իր պահանջներին համապատասխանեցնելը, մարդը այն կառուցել է խաղային երևակայության մեջ: Խաղը մեզ ուղեկցում է կյանքի կարևոր բոլոր իրադարձություններում՝ պահանջելով, որ դրանք կատարվեն որոշակի կանոնների համաձայն:

Ամերիկացի նշանավոր մշակութաբան սիմվոլիստական դպրոցի հիմնադիր, Լ.Ուայթը (1900-1975) մշակույթը անվանվում է «սիմվոլատ»:

Ասենք նաև, որ Լեսլի Ուայթը առաջինը օգտագործեց «մշակութաբանություն» գիտական տերմինը: Առաջինը մշակութաբանությունը դիտեց՝ որպես մշակույթի մասին գիտություն: Ուայթը հրատարակեց երեք աշխատություններ՝ «Գիտություն և մշակույթ» (1949), «Մշակույթների էվոլյուցիա» (1959) և «Մշակույթի հասկացությունը» (1973), որոնցում նա փորձեց բացահայտել և հիմնավորել մշակութաբանության տարբերությունը մյուս գիտություններից: Նրա համոզմամբ «մակույթ» հասկացության մեկնության շրջանակում միայն ամենից լավ կարելի է բացահայտել մարդու և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունը: Ուայթը նշում է, որ ի տարբերություն կենդանու՝ միայն մարդուն է հատուկ փոխանցել իր փորձը, որն իրականացվում է հենց սիմվոլիկ ձևերի միջոցով:

Ելնելով հիշյալ և շատ այլ հիմնավորումներից՝ կարելի է հետևել, որ ժամանակակից մշակութաբանական մեկնություններում «մշակույթ» հասկացությունը հիմնականում բնութագրվում է հետևյալ մոտեցումներով.

1. արժեքաբանական
2. սիմվոլիստական
3. էթոլոգիական

Արժեքաբանական մոտեցման տեսանկյունով՝ հենց արժեքների ընդհանուր համակարգում կարելի է հասկանալ մշակույթի բազմաբնույթ էությունը: Այս մոտեցման համաձայն՝ արժեքը պետք է դիտել որպես որոշակի մշակույթում ձևավորված և ընդունված համընդհանուր նորմ: Փարսոնսը նշում է, որ արժեքը պատկերացում է ցանկալիի մասին, և մշակութային կյանքը առանց արժեքների հնարավոր չէ: Մշակութային բոլոր ձեռքբերումները ոչինչ են առանց արժեքային նշանակության: Մարդը աշխարհը յուրացնում է հենց որոշակի արժեքների տեսանկյունից: Արժեքը իր ուտիլիտար և միաժամանակ աբստրակտ նշանակությամբ պատկերում է մարդկանց միջև հարաբերությունների որոշակի տիպ: Ենթադրում է այնպիսի հարաբերություն, որը չի օտարում մարդուն բնությունից, հասարակությունից, մյուս մարդկանցից, ինքն իրենից, այլ ընդհակառակը՝ իր կոնկրետ և հեռանկարային պահանջների շրջանակում միավորում է մարդուն և հանրույթին: Արժեքները կրում են ընդհանուր և վերացական բնույթ, սահմանում են չափորոշիչներ, որոնց օգնությամբ գնահատվում են իրերը, իրականության տարբեր երևույթները, մարդկանց ծրագրերն ու արարքները: Ավելին, օգնում են մարդուն՝ ընդունելու այս կամ այն որոշումը: Բավական է միայն նշել, որ մշակույթը հենց հանդես է գալիս՝ որպես նյութական և հոգևոր արժեքների ամբողջություն: Այս առումով համամարդկային արժեքները իմաստավորում են մարդկային ցեղի միասնականությունը: Արժեքը ենթադրում է առարկայի, երևույթի նշանակությունը մարդու կյանքում՝ դրական իմաստով:

Սիմվոլիստական մոտեցումը կարծես նույնացնում է «մարդ» և «մշակույթ» հասկացությունները: Սիմվոլները մարդու մտածողությանը տալիս են առանձնահատուկ հնարավորություն: Մշակույթը հենց մարդու ընդունակությունն է՝ սիմվոլացնել աշխարհը՝ նկատում է Լ.Ուայթը:

Սիմվոլներ չկան բնության մեջ. դրանք ծնվում եմ մարդկային մտքից: Քանի որ «Մարդը ամենից առաջ սիմվոլիկ էակ է, ապրում է նոր, իր կողմից ստեղծված սիմվոլիկ աշխարհում»,– գրում է նաև Է.Կասսիրերը: Եվ մշակութային նոր դրսևորումները ամրագրում և

առավել մեծացնում են այդ ցանցը: Մինչդեռ հայտնի է, որ սիմվոլը չի կարող մինչև վերջ լինել ռացիոնալ, մինչև վերջ տարբերակված՝ հետևում է նա: Իհարկե, սիմվոլը բազմանշանակ է, այն ոչ այնքան նշան է, որքան նշանակություն: Նշանը պատասխանում է այն հարցին, թե ինչ է սա, սիմվոլը՝ ինչի համար, ինչ նպատակով: Կասսիրերը գտնում է, որ մշակույթի ծագման սիմվոլիստական տեսությունը առավել լավ պատկերացում է տալիս անտրոպոգենեզի մասին: «Մարդն ունի սիմվոլներ ստեղծելու և սիմվոլներ սպառելու կարողություն…» [2, 278]:

Էթոլոգիական տեսության մեկնությամբ մշակույթը այս կամ այն էթնոսի հավատալիքների, սովորույթների, նորմերի մասին գիտելիքների համակարգ է: Այսպես՝ ռուս մշակութաբան Դանիլովսկու համար չկա պատմություն ընդհանրապես: Կան միայն պատմա-մշակութային առանձին տիպեր, որոնք ունեն իրենց զարգացման փուլերը (ծնունդ, մանկություն, պատանեկություն, հասունություն, ծերություն և մարում) և աշխարհընկալման առանձնահատկություններ:

Դանիլովսկու համոզմամբ, թեև պատմա-մշակութային տիպերը չունեն ընդհանուր հիմք, բայց և կարող են կրել փոխադաձ ազդեցություններ:

Եվ չնայած մշակութաբանության՝ որպես սոցիալ-հումանիտար գիտության առարկայի սահմանման շուրջ կան և այսօր էլ ձևավորվում են նորանոր մոտեցումներ, այնուհանդերձ, արդեն հիշյալ մեկնությունների շրջանակում կարելի է հետևել.

1. Մշակույթը մարդու նպակադիր գործունեություն է և գործունեության արդյունքը, քանի որ հենց գործունեության մեջ է մարդը ճանաչում իրեն և գիտակցում իր հնարավորությունների սահմանները: Նպատակադիր գործունեությունը կապվում է նաև կյանքի իմաստի և հենց մադու նշանակության հետ: «Ամեն դարաշրջան տալիս է նոր հնարավորություններ, նոր միջոցներ մադու նպատակների և ծրագրերի իրականացման համար» (Ն. Բերդյան):

2. Մշակույթը եղել է, կա և կլինի այնտեղ, որտեղ կա մարդկային հասարակություն: Այսինքն հենց մշակույթն է ստեղծել հասարակություն: Մշակույթը կարող էր ստեղծվել միայն մյուս մարդ-

կանց հետ հարաբերության արդյունքում, «մշակույթը հարաբերություն է» (Մ. Հայդեգեր)։ «Մշակույթը աշխարհի և մարդկանց հետ հարաբերության ձև է» [2, 319]։

3. Մշակույթը արտահայտում է մարդկային կեցության ողջ խորությունն ու անչափելիությունը, որով էլ հենց պայմանավորվում է նրա բազմաբովանդակ, բազմաբնույթ և անպարփակ էությունը։ Սակայն մշակույթը կարելի է սահմանել՝ իբրև անհատական պահանջների զոհաբերում՝ հանուն խմբի, խավի, հասարակության [5, 91]։ Ֆլիերը նկատում է, որ սոցիալական առաջընթացի հիմնական շարժիչը ոչ թե տարբեր քաղաքակրթությունների և ժողովուրդների մրցակցությունն է, ոչ թե հակասությունը տարբեր սոցիալական դասերի միջև, ինչպես կարծում են էվոլուցիոներները, այլ անհատ-հասարակություն շահերի բախումը։ Յուրաքանչյուր դարաշրջանում անհատը փորձում է ազատվել իրեն թելադրվող մշակութային սահմանափակումներից և հասարակության ճնշող կանոններից։

4. «Մշակույթ» երևույթը սկիզբ է դրվել մարդկային կենսափորձի կուտակման և պահպանման արդյունքում։ Կենդանին չունի փորձի կուտակման, ժառանգորդման հնարավորություն։ «Կենդանին իր կենսագործունեությամբ նույնական է բնության հետ» (Գուրևիչ)։

5. Վերափոխելով աշխարհը՝ մենք ևս վերափոխվում ենք՝ դառնալով մեր իսկ ստեղծած մշակույթի կրիչը (Է.Մարգարյան)։

Ողջ շարադրանքից ելնելով՝ մեր դիտողությամբ կարելի է կառուցել մշակութաբանության՝ որպես ինքնուրույն գիտության, քիչ թե շատ ընդունելի սահմանում։

Մշակութաբանությունը գիտություն է մշակույթի՝ նրա դրսևորման ձևերի ծագման և զարգացման համընդհանուր օրինաչափությունների մասին։ Մշակութաբանությունը խնդիր ունի ուսումնասիրել մշակույթը՝ որպես մարդկության սոցիալ-պատմական, պրակտիկ-հոգևոր փորձ՝ հիմնավորված սովորույթներով, ավանդույթներով, նորմերով և օրենքներով։

Հ. Գ.

Ծանոթանալու նպատակով պատերազմի ժամանակ

Ուինսթոն Չերչիլին են ներկայացնում երկրի բյուջեն: Թերթելով փաստաթուղթը՝ Չերչիլը, հոնքերը վեր բարձրացնելով, տարակուսած հարցնում է.

– Իսկ որտե՞ղ են մշակույթի համար նախատեսված միջոցները…

– Սը՛ր, բայց չէ՞ որ հիմա պատերազմ է,– հետևում է պատասխանը:

– Եթե մշակույթ չկա, ապա այդ դեպքում մենք ինչի՞ համար ենք պատերազմում…,– իր հերթին տարակուսում է Չերչիլը:

Գրականություն

1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Փիլիսոփայության սահմանումները, «Սովետական գրող», Երևան, 1980:
2. Բալայան Ա., Փիլիսոփայություն, դասախոսությունների համառոտագրեր, «Զանգակ», 2012, 351 էջ:
3. Սարգսյան Ա.Հ., Մշակույթի տեսություն, «Տնտեսագետ» Երևան, 2003:
4. Введение в культурологию. Учебное пособие, 2-е изд., М., «ВЛАДОС», 1995, 35 с.
6. Личность, культура, общесто, 2009, Т. 11. Выпуск 1. NN 46-47. Флиер А.Я., Неизбежна ли культура?/ О границах социальной полезности культуры/.
7. Флиер А.Я., Вектор культурной эволюции//Обсерватория культуры, 2011, N5.
8. Воп. философии, К. Свасян, Ченовек как творение и творец культуры, 1987, N6.

Определения предмета “Культурология” в рамках теоретико-методологических наблюдений

Оганесян Сильва

Резюме

Ключевые слова: *культура, социально-исторический опыт, разнообразие определений*

В данной статье отмечается, что, в отличие от частных наук, исследующих культуру, предметом интереса которых являлась определенная ее сфера, форма, культурология анализирует, дифференцирует, сопоставляет все возможные эмпирические и теоретические знания, пытаясь создать обобщенное описание такого явления как /cuitura/ культура. Культурология исследует культуру в качестве социально-исторического опыта, в результате которого человек познает не только природу, скрытые в ней силы, а самого себя, свои возможности. Автор статьи, совершая исторический экскурс, замечает, что представления о культурном, как отличающемся от естественного, встречаются уже в мифологических сказаниях. А в греко-римский период соотношение человек-природа получает новое определение – единство человека и вселенной в рамках микро- и макромиров, космического распорядка. В средние века тщательно исследовалась мудрость слова, в особенности божественного слова. “Нужно заботиться только о бессмертной душе, а тело недолговечно, не нуждается в исследовании”. Предположение заключалось в том, что знание о преходящем тоже преходящее знание. В период Возрождения также имел место ряд обсуждений, касающихся основных принципов культуры, которые, в первую очередь, сводятся к проблеме человека – основного субъекта культуры, человека, который уже хотел не только верить, но и познавать. Однако проблема определения культуры удостаивается последовательных изысканий особенно в период Просвещения.

Так, в 18-ом веке под культурой понималось усовершенствование духовной жизни, образование, воспитание, благодаря которым можно было “излечить” пороки общественной жизни, с тем, что “только с царством разума можно достичь царства свободы”. В культурологических заметках 19-20 вв. культура отождествляется с цивилизацией, придается важность интеллектуальным проблемам, в особенности, проблемам правового сознания общества.

Автор данной статьи, выделяя и комментируя этиологические, символистические и ценностные рассуждения о культуре, пытается представить свое определение науки “культурология”.

Итак, культурология – наука о культуре, о всеобщих закономерностях происхождения и развития форм ее проявления. Задачей культурологии является исследование культуры в качестве социально-исторического, практически-духовного опыта человечества, обоснованного обычаями, традициями, нормами и законами.

Definitions of the Subject "Culturology" in the Framework of Theoretical-Methodological Observations

Hovhannisyan Silva

Summary

Key words: *culture, social-historical experience, variety of definitions*

The article states that, unlike the private sciences that study "culture", which are interested only in a particular area and particular form of culture, culturology analyzes, distinguishes, combines all possible empirical and theoretical knowledge about culture in an attempt to create the full description of the phenomenon called "culture" (cuitura).

Culturology studies culture as a socio-historical experience, in the result of which a person recognizes not only nature, its hidden powers, but also himself, his possibilities. Taking a historical tour, the author notices that we come across notions about medium, different from natural, still in mythological narratives. And in the Greco-Roman era, human-nature relation achieves new borders within the framework of human-universe unity, the micro and macro worlds, the cosmic order. In the Middle Ages, the wisdom of the speech, and especially of the divine speech, was already being carefully examined. "One must take care only of the immortal soul, and the body is transient, there is no need to study it". The assumption is that the knowledge of the transient is also transient". During the Renaissance, too, there were a number of discussions on the basic principles of culture, which first of all led to the problem of the main subject of culture - the problem of a man: the problem of the man who already wanted not only to believe but also to know. However, the problem of defining culture undergoes consistent theoretical studies particularly in the age of enlightenment.

Thus: In the 18th century, by culture, they understood the improvement of spiritual life, education, upbringing, due to which the vices of public life could be "cured", with the motto that only "with the kingdom of intellection the kingdom of liberty can be attained":

In the cultural interpretations of the 19th and 20th centuries, culture is already identified with civilization, highlighting the issues of intellectual, mostly the problems of legal consciousness of the society. Separating and commenting on the etological, symbolistic, and value interpretations of culture in the article above, the author also attempts to present his formulation of the science called "culturology".

Hence:

Culturology is the science about culture, the universal regularities of the origin and development of its ways of manifestation. Culturology has the task to study culture as a social-historical, practical-spiritual experience of mankind grounded in customs, traditions, norms, and laws.

Ներկայացվել է 07.10.2019 թ.
Գրախոսվել է 21.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА

PEDAGOGY AND METHODOLOGY

Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ուսուցումը տարրական դասարաններում

Անտոնյան Աննա

Հանգուցային բառեր՝ *դասագիրք, բանաստեղծ, մանկական ստեղծագործություն, անձնավորում, հեքիաթ, պատմվածք, բանաստեղծություն, մայրենի լեզու, ազգային մտածողություն:*

Դեպի ժողովուրդը, դեպի բնությո՛ւնը, հայո՛ց գրողներ....
Հովհաննես Թումանյան
«Կյանք և գրականություն»

Հ. Թումանյանի «բանաստեղծությունների ոգին» [2, 87] շրջում է Մայրենիի դասագրքերում աշունից գարուն՝ ճանապարհին հանդիպելով լավ ու վատ ընկերների՝ քամուն, արևին, տերևին, նապաստակին, ծաղիկներին, սուտասանին, պոչատ աղվեսին, երեք արջերին, կաքավին, «աշխարհի բանի» մասին մտածող թռչունին և այլոց:

Առաջին դասարանում Հ. Թումանյանի ստեղծագործություններից «Այբբենարանում» ներկայացվում է «Ծիտը» հեքիաթը [4, 40], որտեղ հիմնական ուշադրությունը դարձնում ենք աշխատասիրության դաստիարակմանը: Այնուհետև «Մայրենիի» ուսուցման շրջանակներում կարդում ենք «Դպրոցի ճամփան» [4], «Գրիչ» [5, 12], «Մարտ» [5, 16], «Ուլիկը» [5, 58] ստեղծագործությունները՝ որպես մայրենի լեզվի գեղարվեստական օրինակներ, որոնցում պատկերվում է «ազգային ժողովրդակցությունը»՝ որպես լուռ մտածմունքի ու երազի լեզու [2, 168]:

90-ական թթ. նամակներում Հ. Թումանյանը, գրողներին անվանելով «տարօրինակ մարդիկ», նշում է, որ իրենք մարդիկ են, որոնց «խոսեցնում են» [2, 86]: Իրենք ուզեն-չուզեն խոսում են այն, ինչն ազդում ու ներշնչում է իրենց: Ուստի քննելով մարդկային էությունը՝ նա պատվիրում է մարդկանց. «Մի՛ լինիր ուրագի պես՝ Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, Այլ եղի՛ր աղոցի պես՝ Մեկ դեպի քեզ, մեկ դեպի մեզ» [6, 11], որպեսզի մարդիկ լավը լինեն, բանաստեղծներն էլ լավը տեսնեն ու լավի մասին ստեղծագործեն:

Թումանյանական այս խրատը ուսուցանվում է երկրորդ դասարանում՝ «Արան ու Շարան» պատմվածքի ընթերցանության շրջանակներում, որտեղ աշակերտներին են ներկայացվում հետևյալ հարցադրումները. «*Ինչո՞ւ պետք է լինել ադոցի նման, այլ ոչ թե ուրագի: Ինչպիսի՞ն էր Արան՝ ուրագի՞, թե՞ ադոցի նման*», որոնց աշակերտները պատասխանում են զուգադրման եղանակով. «Զուգադրությունները հզոր միջոցներ են, որոնք աշակերտներին օգնում են հասկանալ, ընկալել նոր նյութը և գաղափարները: Դրանք միաժամանակ նպաստում են, որ աշակերտները կարողանան կապակցել նոր նյութը ծանոթ հասկացությունների հետ» [3, 82]:

Հ. Թումանյանի մանկական ստեղծագործությունները «ամենաանկեղծ արտահայտություններ են», որոնք գրված են «սրտի անկեղծությամբ, հոգու ազնվությամբ, կարեկցությամբ, ինքնարժանապատվության գիտակցությամբ» [2, 88]: Տարրական դասարաններում գնահատելով հատկապես «ինքնարժանապատվության գիտակցությունը»՝ աշակերտներին այդ տեսանկյունից ենք ուսուցանում «Սուտասանը» [6, 84], «Պոչատ աղվեսը» [6, 88] հեքիաթները: Աշակերտների առջև բացելով գյուղացու կերպարի էությունը՝ նրան ներկայացնում ենք որպես մի մարդ, որ մինչ թագավորի հայտարարության օրը անտեսված էր, մերժված և ապրում էր իր դառը քրտինքով: Բայց երբ ստեղծվեց հնարավորություն, բացահայտվեց նրա ինքնարժանապատվության գիտակցությունը, և նա համարձակվեց ներկայանալ թագավորին ու հաղթել նրան: Նույն մտածողությամբ է օժտված նաև «Պոչատ աղվեսի» հերոսը: Արժանապատիվ աղվեսը չէր կարող առանց պոչի գնալ ընկերների մոտ և վաստակել «պոչատ» մականունը, ուստի իր կատարած սխալն արդարացնելու համար պետք է աշխատի ու աշխատանքով «ապաշխարի», հետ վերցնի իր պոչը և նոր միայն գնա ընկերների մոտ: «Պոչատ աղվեսը» հեքիաթում կարևորում ենք կալվորի կերպարը, որը, մարմնավորելով մարդկային բնությունը, սիրում է ընկածին [2, 105] ու օգնում է նրան:

«Ստի տոպրակի բերանը բաց է» առածի բովանդակությունը բացահայտվում է «Սուտլիկ որսկանը» [7, 139] հեքիաթի ուսուցման շրջանակներում:

Հ. Թումանյանը «Կյանք և գրականություն» [2, 89] հոդվածում լեզուն համարում է «մարդու իմացականության անոթը, մարդկանց մտքերի միջնորդը, որը պետք է մատչելի լինի հասարակությանը և ընդունակ սնուցելու ամեն մեկին» [2, 97]: Հ. Թումանյանի մանկական բանաստեղծություններում անձնավորման պատկերավորման միջոցով են բացահայտվում նաև բնության երևույթները, որոնց էությունը ներկայացվում է նրանց լեզվով: «Տերևաթափ» բանաստեղծության մեջ անձնավորվում է քամին՝ դիմելով տերևներին. «Ա՛յ փոքրիկներ, ա՛յ սիրուններ, Աշուն եկավ, մոտ է ձմեռ, Ի՞նչ եք դողում ծառի ծերին: Ոսկի, դեղին, վառ ծիրանի Գույներ հագե՛ք խայտաբղետ Ու ճյուղերից ձեր մայրենի Եկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...» [6, 23]:

«Մի բաց նամակ ամենքին» [6, 75] բանաստեղծության մեջ էլ մի խումբ թռչունների անունից Ծիտիկ Ճնճղուկյանը նամակ է գրում բարի մարդկանց՝ ներկայացնելով իրենց ձմռան ապրուստը ու խնդրելով օգնություն, այստեղ մենք կարևորում ենք փոխադարձ օգնության հանգամանքը, քանի որ ճնճղուկները խոստանում են, որ գարնանն էլ իրենք կօգնեն մարդկանց՝ թրթուրներից, ճիճուներից ու որդերից մաքրելով նրանց այգիները, պարտեզներն ու արտերը և ամենակարևորը. «Մենք ձեզ համար կերգենք զվարթ»:

Մանկական բանաստեղծություններում, մասնավորապես «Ծաղիկներ» [6, 79] բանաստեղծության մեջ, անձնավորում գեղարվեստական պատկերավորման միջոցով արևը պատասխանում է մանուկների «Ո՞ւր գնացին ծաղիկները» հարցադրմանը՝ ծաղիկներին անվանելով մանուկներ. «Ելե՛ք, իմ մանուկներ»:

Նույն անձնավորման եղանակի բացահայտումով ենք ուսուցանում նաև «Իրիկուն» [6, 83] բանաստեղծությունը, որտեղ անձնավորվում են արևը, տերևը, թռչնակը, նապաստակը: Անձնավորմանը զուգահեռ այստեղ ուսուցանում ենք նաև բառերի կապակցելիության մասին մի քանի դիտարկումներ. առանձնացնելով «Արևը երևում է», «Տերևը սվսվում է», «Թռչնակը ծլվլում է», «Նապաստակը վազ է տալիս», «Որսորդը ման է գալիս» արտահայտությունները՝ աշակերտներին հանձնարարում ենք կազմել համառոտ նախադասություններ, որոնց մեջ առարկան բնութագրվում է համապատաս-

խան գործողությամբ: Բնութագրելով բնության երևույթները՝ աշակերտների համար պարզ է դառնում. «Լուսնի գաղափարն ու կյանքը կապված է գիշերի հետ» [2, 104], որը մենակ, անքուն մնալով, «քեֆ է անում երկնքում»: Բանաստեղծության զուգադիր նկարում, սակայն, մենակ լուսինը չէ անքուն: Անքուն են նաև գող ոզնիները, որոնք տանում են քնած որսորդի հրացանը:

Թումանյան հեղինակի համար կարևոր է մայրենի լեզվով, ոճով ու ոգով երգելը, ինչպես արել են Վ. Շեքսպիրը, Ա. Պուշկինը, Մ. Լերմոնտովը [2, 100]: Ու հենց այդ ժողովրդախոսակցական, պարզ լեզվով էլ նա աշակերտներին է ներկայացնում աշխարհի ամենաբարդ հարցը. «....աշխարհը ինչի՞ց է շինված» «Թռչունի մտածմունքը» [6, 144] բանաստեղծության մեջ: Այս դասը աշակերտներին ենք ներկայացնում նախագծման մեթոդով՝ սովորեցնելով ամբողջ կյանքում սովորելու արվեստը [3, 189]: Հարցադրումը պատկերավոր կերպով նկարելով պատի թերթին՝ աշակերտներին հանձնարարում ենք պատասխանել հարցին ամբողջ տարվա ընթացքում, որի արդյունքում որպես կանոն կարդում ենք ամենատարբեր ու հետաքրքիր պատասխաններ, ինչպես՝ ըստ աշակերտների՝ աշխարհը կառուցված է երկրներից, քաղաքներից, գյուղերից, արևից, անտառներից, քարերից, հողից, երկնքից, տներից և այլն:

«Բանաստեղծությունը կյանքի արտահայտությունն է, կամ ավելի լավ է ասել, ինքը կյանքն է» գաղափարախոսությամբ ենք ուսուցանում «Աշուն» բանաստեղծությունը [6, 22].

Դեղնած դաշտերին իջել է աշուն,
Անտառը կրկին ներկել է նախշուն:
Պաղ-պաղ մեգի հետ փչում է քամին,
Փչում է տանում տերևը դեղին:
Տխուր հանդերից մարդն ու անասուն
Քաշվում են կամաց իրենց տունն ու բուն:

Բանաստեղծության զուգադիր նկարում պատկերված է գյուղաշխարհ. նախրապանը գույնզգույն սարերից էշով գյուղ է իջել՝ իր հետ բերելով նաև անասուններին: Այստեղ հատկապես ուշադրություն ենք դարձնում գյուղի ավերակ եկեղեցուն, որի պահպանումն ու մաքրությունը պիտի լինի յուրաքանչյուր քաղա-

քացու սրբազան պարտականությունը, քանի որ այդպիսով է ձևավորվում սեր դեպի հայրենիքը, որից էլ բխում է «սեր դեպի մարդկությունը» [2, 106]: Համեմատելով բանաստեղծության և նկարի պատկերավորման միջոցները՝ հանգում ենք թումանյանական եզրակացության. «Բանաստեղծության մեջ կյանքն ավելի կյանք է, քան թե իրականության մեջ» [2, 100]:

Հ. Թումանյանի ստեղծագործություններն ուսուցանվում են իր իսկ ներկայացրած մեթոդաբանությամբ. «Համեմատության միջոցով կարելի է ընդհանուրը մասնավորելով բացատրել» [2, 106]:

«Բարև՛, ի՛նչ սառն են ձեռքերդ, ձմե՛ռ» թեման սկսվում է Գեղամ Սարյանի «Փափուկ ձյուն» [6, 74] բանաստեղծությամբ և ավարտվում է Հ. Թումանյանի «Ծաղիկներ» [6, 79] բանաստեղծությամբ: Թեմայի ամփոփման շրջանակներում հանձնարարում ենք կատարել համեմատություն երկու բանաստեղծությունների միջև՝ կիրառելով «Զուգադրության աղյուսակ» [3, 82] մեթոդաբանությունը:

Հ. Թումանյանի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ կարևորվում է նաև «պարզ ու հասկանալի լեզվով» խոսելու ու գրելու գաղտնիքը, որը ըստ էության «գրականության գաղտնիքն է» [2, 111]: Հ. Թումանյանը երբեք չի մոռանում մայրենի բարբառի մեծ նշանակությունը և այն գործածում է որպես բանաստեղծության հարազատ կենսատու հոսանք՝ ազգային դրոշմը, ոգին ու ոճը պահպանելու նպատակով: Այս ամենի լավագույն արտահայտությունն է «Կաքավի գովքը» բանաստեղծությունը [6, 108], որի երաժշտության հեղինակն էլ Կոմիտասն է, որ փորձում էր հավաքել ազգային ժողովրդական երգերն ու եղանակները և նրանցից կազմել ազգային երգ ու երաժշտություն, ինչպես և Թումանյանը բանաստեղծագործությանը «հաստատ ազգային դրոշմ ու հիմք տալու համար» հիմնվում էր ժողովրդի կենդանի լեզվի, նրա ոգու ու օրենքների վրա [2, 166]: Այսպիսով ներդաշնակվում են «ազգային երաժշտության» [2, 160] ու բանաստեղծության տարրերը, որ կազմակերպված ազգ լինելու կարևոր նախապայմաններից էր համարում Հ. Թումանյանը: Բանաստեղծության մեջ հետաքրքիր են արևմտահայերենին բնորոշ լեզվական ձևերի կիրառությունները՝

ե-ով բացառականները (ամպերեն, սարեն, ծերեն, ծաղիկներեն), կ-ով ներկան (քնես կելնես, կշորորաս), գրաբարատիպ անցյալ կատարյալը (բերավ) և այլն, որոնց բացատրությունները աշակերտներին ներկայացնում ենք արևելահայերենին զուգադրելու եղանակով:

Տարրական դասարաններում աշակերտները ճանաչում են նաև թարգմանիչ Թումանյանին: Կատարելով «ճաշակով ընտրություն՝ Թումանյանը հայերեն է փոխադրել բազմաթիվ արտասահմանյան հեքիաթներ, որոնցից տարրական դասարաններում ուսուցանվում է Լև Տոլստոյի հեղինակած «Երեք արջի հեքիաթը» [6, 91]: Բանաստեղծության թարգմանության մասին ասված Հ. Թումանյանի խոսքը դյուրությամբ կարող ենք վերագրել նաև հեքիաթներին, քանի որ սրանք նույնպես պետք է ունենան «առանձին համ ու հոտ, շունչ ու ոճ»: Թումանյանի թարգմանած հեքիաթներում նույնպես պահպանված է «բնագրային բուրմունքը», քանի որ նա ուներ էն «ինչքա՛ն շնորհքը» և ամենակարևորը «ինչքա՛ն սերը», որ ոչ միայն հեքիաթի հարազատ ձևը ցույց տար, այլև ինքնուրույն բուրմունք հաղորդեր [2, 152]:

Երրորդ դասարանում թումանյանական դասերն սկսվում են «Ամենից լավ տունը» բանաստեղծության ընթերցանությամբ, որի համար գրքի հեղինակները որպես նշանաբան են ընտրել Հ. Թումանյանի «Կարոտից է առաջ գալիս ամեն բարձր բան» արտահայտությունը [7, 15], իսկ որպես եզրակացություն՝ «Օտարության մեջ ապրողի հացը դառն է, ջուրը՝ թույն», «Օտար տեղ ապրողի համար մի օրը մի՛ տարի է» առածները:

«Բա՛ց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ» թեմայի շրջանակներում բացահայտվում են բնության գաղտնիքները: Այստեղ աշակերտները կարդում են «Գետակը» բանաստեղծությունը [7, 42], որտեղ անձնավորված բնության երևույթի մասին խոսելիս հիշում ենք 2-րդ դասարանում անցած այն բանաստեղծությունները, որոնցում անձնավորվել էին բնության տարբեր երևույթները:

Հայկական ժողովրդական էպոսի մշակման մասին Հ. Թումանյանը գրել է. «Սասունցի Դավիթը» ես շատ թեթև եմ գրել, օգտվելով [ժողովրդական նյութից], երեխաների համար» [2, 135]: Առաջին և

երկրորդ դասարաններում էպոսից մեջբերված հատվածները վերապատմումներ են՝ կատարված գրքի հեղինակների կողմից, իսկ երրորդ դասարանում արդեն ներկայացվում է Հ. Թումանյանի մշակումը, որի համար իբրև բնաբան է ընտրված Հ. Թումանյանի նշանավոր հետևյալ խոսքը. «Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային էպոսի մեջ» [2, 86]: Այստեղ առաջարկում ենք հերոսների կերպարների բացահայտումը կատարել թումանյանական հետևյալ մեկնաբանությամբ. «....առասպելների աշխարհից դուրս եկել մեր առաջ, ու մենք հանդիստես ենք էս հսկաների կռվին: Եվ տեսեք թե ինչքա՛ն հարազատ են գծված ու բնորոշված սրանցից ամեն մինը» [2, 149]: Ծանոթանալով էպոսի հերոսներից Սասունցի Դավթի և Ձենով Օհանի հետ՝ նրանց հավելյալ տեղեկություններ ենք հաղորդում շարունակության մասին՝ հատկապես անդրադառնալով Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի հակադիր կերպարներին և նրանց կռվին, Դավթի հաղթանակին, որին բնորոշ է. «Ժողովուրդների էպոսներն առհասարակ վերջանում են խաղաղության սրբազան խոսքով» [2, 150] թումանյանական եզրակացությունը:

Հ. Թումանյանի հեքիաթներն իրենց բովանդակությամբ ու լեզվով առնված են ժողովրդից, քանի որ դրանցով հեղինակը խոսում է ժողովրդի հետ [2, 132], ինչպես՝ «Կացին ախպեր» հեքիաթը, որի շրջանակներում աշակերտներին են ուսուցանվում կացինին՝ որպես գործիքի վերագրվող գործողությունները, այնուհետև առաջարկվում է թվարկել և գրել այլ գործիքների, սարքերի անուններ, որոնք կարողանում են աշակերտներն օգտագործել, այնուհետև գրել դրանց կատարած գործողությունները ցույց տվող բառերը [2, 118]:

Էպոսային դասերը շրջում են Թումանյանի հրապարակախոսության մեջ «Ֆրանգմենտներ լեզվի մասին» հաղորդումների մեջ Հ. Թումանյանը հանճարի ուժով բացահայտում է հայոց լեզվի ու «Սասունցի Դավիթ» էպոսի միջև եղած կապը. «Հայոց լեզուն Սասունցի Դավթի հոր զենքն ու զրահն է, որ աչքից գցել ու սնդուկում փակել է անշնորհք, թշվառական հորեղբայրը: Սասունցի Դավթի հոր նժույգն է, որ առանց խնամքի փակել է կեղտոտ ախոռում հավերի թառի տակ, մինչև էդ զենքն ու զրահով չզինավառվի հայ

ժողովուրդը, մինչև էդ նժույգը չհեծնի – կմնա սրա նրա դռանը խեղճ ծառա» [2, 167]:

Հ. Թումանյանի կենսագրության մասին գիտելիքներն ամփոփվում են 4-րդ դասարանում: Նրա արձանի մոտ անցկացվող դասի շրջանակներում ուսուցիչն աշակերտներին է ներկայացնում կենսագրական տեղեկություններ՝ հիշելով նրա բանաստեղծությունները, պատմվածքները և հեքիաթները, քառյակները [1, 7]: «Ուզո՞ւմ ես իմանալ ավելին» վերնագրի տակ ներկայացվում է Անդրանիկ Զորավարի և Հ. Թումանյանի մասին պատմությունը [1, 11]: Իբրև դասի եզրակացություն ներկայացվում է «Թումանյանը մեր բոլորի սրտում է, և դա հրաշք է: Ահա թե ինչու են նրան կոչում Ամենայն հայոց բանաստեղծ» արտահայտությունը, որին մենք որպես կանոն հավելում ենք Թումանյանի հետևյալ խոսքերը. «Ազնիվն ու գեղեցիկը ընդարձակ տարածություն է, ազնիվն ու գեղեցիկը ազատ, մաքուր օդն է, ազնիվն ու գեղեցիկը առողջությունն է, կայտառ, ազատ զարգացած մարմինն է, ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է, որ հազար ու մի ոճերով ու ձևերով է խոսում, որ հազարավոր տարիների ընթացքում հավաքել է հազարավոր գանձարաններից ու պահել, զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել, որ ամբողջովին հոգի է ու հոգեբանություն, պատկեր, շունչ է ու զգացմունք» [2, 167]:

4-րդ դասարանում Հ. Թումանյանի հեղինակած ստեղծագործություններից կարդում ենք «Քաջ Նազար» հեքիաթը՝ կարևորելով վերնագրի նշանակությունը. «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ ապրում էր Վախը: Եվ ապրում էր մի «քաջ» մարդու սրտում, որի անունն էր Նազար»: Հեքիաթի ուսուցման շրջանակներում աշակերտներին են ներկայացվում Հ. Թումանյանի հետևյալ խոսքերը. «Կցանկանայի, որ դուք ավելի բախտավոր լինեք և ավելի բարձր ու մեծ, քան մենք ենք եղել» [2, 129]:

Թումանյանական խրատներով անցկացվող դասերն աշակերտների համար բացահայտում են, «թե ինչ բան է ինքը հանճարը ըստ էության», որի մահկանացու աճյունի և միշտ անմահ հոգու առջև իր նման երկյուղածությամբ գլուխ ենք խոնարհում այսօր, քանի որ նա իր սիրելի Շեքսպիրի նման «շարունակում է վարել

պատերազմներից ամենից մեծն ու սրբազանը՝ անվերջ նվաճելով մարդակային սրտերը՝ արդարության, գեղեցկության ու ճշմարտության միջոցով անվերջ ընդարձակելով բանաստեղծության պայծառ տիրապետության սահմանները» [2, 155]:

Հ. Թումանայնի բանաստեղծությունները ազնիվ ու գեղեցիկ են, որոնք լի են մաքուր օդով, ուստի դրանցից առողջություն է բխում, որին բնորոշ է կայտառ լինելը. «ազնիվն ու գեղեցիկը կենդանի ժողովրդի կենդանի լեզուն է» [2, 167], որ հազար ու մի ձևերով խոսում է բանաստեղծության ու հեքիաթի միջոցով, որոնք տարիների ընթացքում հավաքվել են հազարավոր գանձարաններից, ու զարգացրել, ճոխացրել, գեղեցկացրել է հեղինակը՝ դարձնելով ամբողջովին հոգի ու հոգեբանություն, պատկեր, շունչ ու զգացմունք:

Հ. Թումանյանի ստեղծագործությունների հաջորդական ու կապակցված ուսուցումը քննելով հեղինակային դիտարկումների միջոցով՝ նորովի ենք բացահայտում ժամանակակից կառուցողական կրթության մի շարք դիտարկումներ, որոնք խթանում են աշակերտների ստեղծագործական մտածողությունը:

Գրականություն

1. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., Մայրենի 4, Երևան, «Մակմիլան» հրատարակչություն, 2009:
2. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, «Հայպետհրատ» հրատարակչություն, 1959:
3. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա. և այլք, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2004:
4. Սարգսյան Վ., Այբբենարան, Երևան, «Մանմար» հրատարակչություն, 2010:
5. Սարգսյան Վ., Մայրենի 1, Երևան, «Մակմիլան» հրատարակչություն, 2009:
6. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., Մայրենի 2, Երևան, «Մանմար» հրատարակաչություն, 2010:

Обучение произведениям Ованеса Туманяна в начальных классах

Антонян Анна

Резюме

Ключевые слова: *учебник, поэт, детская литература, персонификация, сказка, рассказ, стихотворение, родной язык, национальный менталитет*

Детская литература Ованеса Туманяна состоит из «самых откровенных выражений», написанных «с искренним сердцем, честностью души, сочувствием и сознанием собственного достоинства». Поэтому Ованес Туманян - самый читаемый автор в начальных классах.

Авторы статьи представляют различные методы преподавания произведений Ованеса Туманяна, используя его наставления и советы. Опыт работы доказал, что они невероятно своевременны даже сегодня.

Произведения Туманяна учат дружбе, заботливости, любви к природе и, самое главное, любви к нашему родному языку. В своей статье «Жизнь и литература» Туманян рассматривает язык как «сосуд для познания человека и посредник в мыслях людей, который должен быть доступным для общества и способным питать каждого человека».

Рассматривая произведения О. Туманяна как произведения искусства, мы придаем особое значение использованию метафор и образных средств, которые использованы для выявления явлений природы.

Стихи Туманяна благородны, красивы и полны свежим воздухом, поэтому они излучают здоровье. «Благородство и красота в живом языке живых людей» говорят языком поэзии и сказок, за годы накопленных из тысячи сокровищниц. Они были разработаны, обогащены и украшены автором, который вложил в них душу и чувства.

Teaching Hovhannes Tumanyan's Works in Elementary Classes

Antonyan Anna

Summary

Key words: *textbooks: poetry, children's literature, personification, fairy tale, story, poem, native language, national mentality*

Hovhannes Tumanyan's literature for children comprises of "the most salient expressions" written "with sincerity of heart, honesty of soul, sympathy and self-consciousness". Therefore, Hovhannes Tumanyan is the most read author in elementary school.

The authors of the article present different methods of teaching Hovhannes Tumanyan's works, using his precepts and advice. Experience has proven that they are incredibly timely even today.

Tumanyan's works teach "self-consciousness", friendship, solicitude, love for nature and, most importantly, love for our mother tongue. In his article "Life and Literature", H. Tumanyan views language as "a vessel for human cognition and a mediator for people's thoughts that should be accessible to the public and capable of nourishing every single person".

When viewing H. Tumanyan's works as pieces of art, we attach special importance to the use of metaphors and figurative imagery that are used by the author to reveal phenomena of nature.

H. Tumanyan's poems are honest, beautiful and full of fresh air, so they emanate healthiness, which is characterized by liveliness. "Nobleness and beauty lie in living people's living language" that speaks in a thousand ways through poetry and fairy tales accumulated over thousands of treasuries over years. They were developed, enriched and beautified by the author, who turned them into soul and psyche, image, breath and feeling.

Ներկայացվել է 14.05.2019 թ.
Գրախոսվել է 24.05.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

“Перевернутый класс” как модель активного обучения

Аракелян Анна

***Ключевые слова**: видеолекция, традиционная лекция, смешанное обучение, мотивация, взаимодействие, саморегуляция*

В условиях глобализации и виртуализации жизнедеятельности общества появилась необходимость внедрения новых методов и подходов обучения, которые отвечали бы потребностям сегодняшних студентов, были бы направлены на пересмотрение, перепостроение существующих педагогических и методических парадигм, и в какой-то мере изменили бы роль преподавателя. В течение длительного исторического периода, несмотря на разные культуры и методы обучения, преподавание в университетах проводилось приблизительно на одинаковом уровне. В качестве основного метода преподавания считалась традиционная лекция с участием профессора или «мудрецом на сцене» (Кинг, 1999), передающим знания студентам. Тем не менее, за последние десятилетия университетское образование вообще и, в частности, методы проведения традиционных лекций подверглись резкой критике. Основные замечания были направлены на то, что студенты оставались пассивными во время традиционных лекций из-за отсутствия механизмов, обеспечивающих интеллектуальное взаимодействие с материалом преподавания. Внимание студента быстро ослабевало, так как темп проводимых лекций не был адаптирован для всех учащихся; традиционные лекции и требования к ним не соответствовали уровню обучения студентов навыкам более высокого порядка, таким как применение и анализ (Cashin, 1985; Bonwell, 1996; Huxham, 2005; Young, Robinson, & Alberts, 2009).

Однако, несмотря на всестороннюю критику, традиционная лекция продолжает выступать в качестве доминирующей дидактической стратегии в высшем образовании (Roehl, Reddy, & Shannon, 2013).

Хотя различные исследователи и преподаватели отстаивают такой способ проведения лекции в качестве основного в преподавании, тем не менее одновременно с этим они выделяют такие формы проведения лекций, которые основаны на философии активного обучения, в основном связанного с использованием новых технологий.

Именно на этом фоне и в значительной степени в результате достижений в области образовательных технологий наблюдается рост “давления” на высшее образование, что и привело к формированию гибких смешанных стратегий обучения, ориентированных на студента (Betihavas, Bridgman, Kornhaber & Cross, 2015). На этом этапе выделяется модель “Перевернутого Класса”, которая является одной из форм смешанного обучения.

Термин «перевернутый класс» был впервые употреблен в 2007 году, когда два учителя химии средней школы в США Д. Бергман и А. Сэмс вместо напечатанного материала стали раздавать своим учащимся видеоуроки, по которым можно было изучить дома новый учебный материал. Школа, в которой работали Бергман и Сэмс, находилась в сельской местности; ученики часто пропускали занятия. Чтобы сэкономить свое время и не проводить дополнительных уроков с отсутствующими, учителям пришла в голову мысль записывать свои уроки на видео. Таким образом, ученики, пропустившие урок, могли посмотреть видеозапись этого урока дома в удобное для них время. Ученики с воодушевлением восприняли предлагавшийся им подход самостоятельного изучения материала занятий. Более того, видеоуроки стали пересматривать и те, кто был на занятии, особенно в период подготовки к экзаменам. По словам Бергмана и Сэмса в результате эксперимента существенно снизилось количество неуспевающих учеников. Успех видеоуроков послужил импульсом для дальнейшей разработки и экспериментальной апробации данной идеи.

Судя по лежащей в основе этого метода теории и проведенным эмпирическим исследованиям, “перевернутая модель классной

комнаты", кажется, решает несколько проблем, связанных с традиционными способами проведения лекций и прокладывает путь к стратегиям активного обучения, более эффективного использования урочного времени для вовлечения студентов в более высокие уровни таксономии Блума, такие как применение, анализ и синтез (Krathwohl, 2002).

В основе модели "перевернутой классной комнаты"лежит идея о том, что традиционное обучение "перевернуто" в том смысле, что то, что обычно проделывается в классе, "переворачивается" или меняется местами с тем, что обычно делают ученики вне урока. Таким образом, вместо того, чтобы слушать лекцию в аудитории, а затем дома работать над решением поставленных задач, студенты читают предложенную преподавателем литературу по теме и усваивают материал данной лекции с помощью видеороликов дома, а в аудитории, под руководством преподавателя участвуют в решении, анализе и обсуждении возникших проблем.

Рассматривая и анализируя образовательные стандарты, можно отметить достаточно большое количество часов, отведенных на самостоятельную работу студентов. Однако практика показывает, что студенты, особенно с низким уровнем подготовки и успеваемости, проявляют неумение и нежелание систематически и самостоятельно выполнять домашние задания. В этом контексте особенно подчеркивается целесообразность использования перевернутого обучения, которая предусматривает значительное увеличение объема самостоятельной работы студентов, что в свою очередь требует высокой мотивации, самостоятельности, саморегуляции, а также применения междисциплинарных знаний и навыков.

Существует много ложных представлений о том, что же на самом деле представляет "перевернутая классная комната", каковы механизмы ее функционирования, и каково влияние этой модели на повышение мотивации студентов в частности и процесс обучения в целом. М. Лебрен, один из авторов книги «Перевернутая педагогика», пишет, что перевернутое обучение по сути не является новым

методом, а скорее представляет собой новый образ мышления, целью которого является оптимизация аудиторной работы со студентами благодаря внеаудиторной деятельности, направленной на углубленное изучение предмета [2].

Некоторые полагают, что в "перевернутой классной комнате" студент проводит все время перед экраном компьютера: студенты работают без упорядоченной схемы урока, видеоматериалы заменяют преподавателя, студенты работают изолированно, или что "перевернутый класс" – это онлайн-курс.

Другие полагают, что эффективный "перевернутый класс" – это то время, которое, как правило, тратится на чтение лекций, используется для занятий в аудитории, дискуссий, решения проблем и групповых проектов. Наиболее значимое обучение в "перевернутом классе" происходит в результате эффективного использования дополнительного времени урока (Такер 2012). Учащиеся становятся более активными в аудитории, используя время, выделенное на усвоение содержания лекций, на выполнение широкого спектра заданий (Crouch & Mazur, 2001). Бишоп и Верлегер (Bishop and Verleger (2013)) утверждали, что организованная классная комната является образовательной техникой, которая состоит из двух важных компонентов: (1) использование компьютерных технологий, таких как видео-лекции, и (2) участие в интерактивных обучающих мероприятиях.

Кроме того, занятия должны включать четыре основных компонента для того, чтобы иметь право называться Flipped Classroom (Flipped Learning Network [FLN], 2014). Во-первых, преподаватели должны уметь гибко преобразовывать учебную среду и время, учитывая индивидуальные и групповые ожидания и требования. Во-вторых, преподаватели должны тщательно обучать содержанию материала, применяя подход, ориентированный на учащихся, предоставлять широкие возможности для обучения и организовывать мероприятия, отражающие определенную культуру обучения для конкретных групп учащихся. В-третьих, преподаватели должны

регулярно отслеживать уровень сложности содержания учебного материала и предложений, сделанных студентами, а также их успехи. Наконец, учитель должен быть профессиональным педагогом, чтобы постоянно следить за уровнем образования своих студентов в процессе их обучения, находиться на обратной связи с ними и оценивать результаты учащихся.

Исследования соответствующей литературы, а также практическое внедрение вышеуказанной модели показывают, что видеоматериалы часто используются в качестве средства обучения вне аудитории, в то время как интерактивные задания, в которых участвуют учащиеся, используются во время учебных занятий (Basal, 2015; Graziano, 2017; Herreid & Schiller, 2013). Активное участие учащихся в процессе обучения и обучение, ориентированное на учащихся, может быть обеспечено с помощью видеороликов, которые поддерживают внимание учащихся и позволяют им сосредоточиться на контенте (Herreid & Schiller, 2013).

Использование вышеуказанных технологий способствует развитию прикладной учебной деятельности, которая акцентирует взаимодействие учителя и аудитории, применение практических знаний, а также использование предоставленных возможностей для повышения эффективности обучения и мышления высшего порядка (Wiginton, 2013).

Другими словами, принципиально важно, чтобы инструкторы применяли стратегии активного обучения, чтобы позволить учащимся управлять своими обязанностями, саморегуляцией и процессом обучения (Wiginton, 2013).

Основополагающим принципом модели “Перевернутого Класса” является обеспечение лучшего понимания и консолидации содержания усваимого материала, который учащиеся изучают вне урока под руководством преподавателей (Herreid & Schiller, 2013). Сконцентрировавшись на темах, слушая лекции или просматривая видеоролики вне аудитории, студенты усваивают их с помощью практических приложений и взаимодействуют с преподавателем в

классе. Домашнее задание при непосредственном обучении может принимать форму видеоролика, статьи, книги, презентации, раздаточного материала или их сочетаний друг с другом.

Сторонники модели "перевернутой классной комнаты" перечисляют многочисленные преимущества инвертирования преподавания и обучения в сфере высшего образования в соответствии с перевернутой моделью аудитории: это позволяет студентам учиться, учитывая индивидуальный темп работы, стимулирует студентов к активному изучению лекционного материала, освобождает реальное время для более эффективной, творческой и активной учебной деятельности. Преподаватели получают широкие возможности для взаимодействия и оценивания уровня обучения студентов, а студенты берут на себя ответственность за контроль и качество своего обучения (Gilboy, Heinerichs, & Pazzaglia, 2015; Betihavas et al., 2015).

Проведя параллель между традиционным преподаванием и перевернутым обучением, можно отметить, что в традиционной модели знание уже в структурированном, готовом виде передается студентам, а в перевернутом требует активного участия студента в его нахождении, осмыслении, переработке для дальнейшего практического использования. Сам факт активного участия стимулирует интерес к изучаемому предмету, провоцирует студента к самостоятельному мышлению, расширению границ познания предмета.

Кардинально меняется также роль преподавателя. Преподаватель становится консультантом, организатором различных видов деятельности студента, фасилитатором при формировании определенных компетенций, руководителем и куратором работ, одним словом менеджером урока.

Однако, даже при явной поддержке модели "перевернутого класса" в вузах, нельзя не отметить одно из серьезных препятствий внедрения данной модели в действительность. В первую очередь речь идет о колоссальной дополнительной нагрузке для преподавателей. Для подготовки качественных видеоматериалов преподава-

тель должен не только обработать значительное количество информации, но и красиво и качественно ее оформить. Часто возникают трудности из-за нехватки достаточных знаний и опыта в области применения информационных технологий. Второе препятствие связано с техническим оснащением вуза. Для “перевернутого” обучения необходимо соответствующее техническое оснащение всех аудиторий, а также личного информационного пространства педагога и студентов, наличие постоянного доступа в интернет, но даже в этом случае никто не застрахован от «сбоев» в работе техники.

Наконец, нельзя забывать об учащихся, у которых, при возникновении вопросов, нет возможности непосредственно задавать их учителю. Непонимание курсового материаламожет привести к снижению мотивации и пассивности во время урока.

С моделью “Перевернутого Класса” мне, как автору статьи, посчастливилось познакомиться в Линчепингском университете Швеции, когда в рамках проекта Erazmus Printel были организованы курсы повышения квалификации, направленные на внедрение методов активного обучения и перехода на смешанное обучение. Целью проекта было проведение соответствующих курсов в вузах-участниках и выявление результатов проекта.

Во время 5 дневного тренинга участники познакомились с идеологией активного обучения, с основными подходами и стратегией внедрения данного обучения в вузах. Участникам была предоставлена возможность на определенном курсе рассмотреть перспективы использования модели “Перевернутого Класса”, осуществить соответствующие изменения на конкретном уроке, выявить сильные и слабые стороны. В рамках проекта также была представлена модель “ABCdesign”, практическое осуществление которой вызвало бурю противоречивых эмоций.

Надо отметить, что согласно результатам опросов и проведенной обратной связи, педагоги-участники, а позднее и студенты, в целом, оценили модель “Перевернутого Класса” положительно. Студенты подчеркнули ценность обучения с использованием ви-

деоматериалов, возможность учиться в индивидуальном темпе, гибкость и мобильность, которую обеспечивают доступные видеолекции, а также то, что обучение становится легче и эффективнее в рамках ”перевернутого класса”. Для учащихся наиболее “увлекательной” была возможность спокойно просматривать и прослушивать задание, делать паузу в любом месте или повторять нужный фрагмент в видео. Сам факт, что отсутствующие студенты могут познакомиться с материалом урока и на равне с остальными принимать участие в разработке, обсуждении и решении поставленных задач, вызвал волну положительных эмоций.

В целом, результаты показали, что при использовании активного обучения при помощи модели“Перевернутого Класса” повышение эффективности урока связано с: 1) доступностью видеолекций (способность размышлять и учиться в индивидуальном темпе); 2) более значимые практико-ориентированные и контролируемые преподавателем занятия.

Однако наряду с многочисленными плюсами, самым большим минусом участники посчитали нехватку соответсвенно оснащенных аудиторий, низкий уровень мотивации со стороны учащихся, а иногда и преподавателей, неспособность большинства студентов учиться в индивидуальном формате.

Хотя эта модель направлена на удовлетворение потребностей и желаний учащихся 21-го века и предлагает современные решения текущих педагогических проблем, крайне важно проводить более глубокие исследования для изучения эффективности модели. Несмотря на теории, исследования и практические занятия, не существует достаточного количества количественных и качественных исследований относительно влияния этой новой модели обучения на академическуюуспеваемость студентов, их саморегуляцию.

В качестве заключительного замечания, учитывая неэффективность традиционной формы проведения лекций для удержания внимания студентов, можно предположить, что “перевернутая модель классной комнаты”, наряду с другими современными моде-

лями, предлагает многообещающие способы для вовлечения студентов в более эффективное, поддерживающее, мотивирующее и активное обучение, особенно для студентов с низким уровнем успеваемости и студентов.

Тем не менее, результаты следует рассматривать в свете ограничений этого исследования. Одним из таких ограничений является отсутствие контрольной группы, которая ограничивает внешнюю достоверность результатов.

Еще одно ограничение связано с тем, что большинство опрошенных студентов ранее не сталкивались с изменениями в аудитории, таким образом, результаты могут частично отражать влияние нового подхода на обучение и преподавание. Следует также отметить, что все результаты, связанные с улучшением уровня и эффективности обучения, основаны на самооценке восприятия учащихся, а не на независимых критериях.

Дальнейшие исследования, касающиеся результатов применения метода “перевернутой классной комнаты” должны учитывать эти ограничения и, в частности, исследовать ту степень, при которой фактическая успеваемость учащихся зависит или не зависит от подхода к методу “перевернутой классной комнаты”, выходящего за рамки исключительно восприятия учащихся.

Литература

1. Bishop J.L., Verleger M.A. The flipped classroom: a survey of the research // Atlanta: ASEE National Conference Proceedings, 2013.
2. Bergmann J., Sams A. Flip your classroom: reach every student in every class every day // Washington, DC: International Society for Technology in Education, 2012.
3. Dumont A., Berthiaume D. La pédagogieinversée. Enseignerautrementdans le supérieur avec la classeinversée. – De BoeckSupérieurs.a., 2016, p. 235.
4. Hung, H. (2015). Flipping the classroom for English language learners to foster active learning. Computer Assissted Language Learning, 28(1), pp. 81–96.
5. King, A. (1993). From sage on the stage to guide on the side. College teaching, 41(1), pp. 30–35.
6. Young, M. S., Robinson, S., & Alberts, P. (2009). Students pay attention! Combating the vigilance decrement to improve learning during lectures. ActiveLearninginHigherEducation, 10(1), pp. 41–55.
7. Серегина Е. А. Реализация технологии «Перевернутый класс» с помощью инструментов Веб 2.0 при изучении нового материала по дисциплине «Иностранный язык» [Электронный ресурс]. URL: http://www.gramota.net/ materials/2/2017/3-1/60.html (дата обращения: 15.07.2017).
8. Точилкина К. Б. Использование технологии «Перевернутого обучения» на занятиях по иностранному языку. Практический опыт. [Электронный ресурс]. URL: http://euroasia-science.ru/ pedagogicheskie-nauki/ispolzovanie-texnologii-perevyornutogoobucheniya-na-zanyatiyax-po-inostrannomu-yazyku-prakticheskij-opyt (дата обращения: 12.05.2017).

Շրջված լսարանը՝ որպես ակտիվ ուսուցման մոդել

Առաքելյան Աննա

Ամփոփում

Հանգուցային բառեր. *տեսադասախոսություն, ավանդական դասախոսություն, համակցված ուսուցում, մոտիվացիա, փոխգործակցություն, ինքնակարգավորում, դասին կատարվող աշխատանք*

Դասավանդման ժամանակակից մեթոդների մշակումը բացատրվում է այն փաստով, որ ուսանողները պասիվ են ավանդական դասախոսությունների ընթացքում՝ դասին մտավոր և ակտիվ ներգրավվածությունն ապահովող մեխանիզմների թերի լինելու պատճառով: Արդյունքում նկատվում է ուսանողների ուշադրության անկում, մոտիվացիայի պակաս, անտարբերություն և դասերից բացակայություն:

Շրջված լսարանում, ինչպես անվանումն է ենթադրում, դասախոսությունն ու տնային աշխատանքը փոխում են իրենց տեղերը, այսինքն՝ տնային առաջադրանքները կատարվում են դասարանում, իսկ դասի ժամանակ ուղղակիորեն տրված հրահանգները հանձնարարվում են որպես տնային աշխատանք՝ տեսադասախոսությունների, ընթերցանության և մի շարք այլ առաջադրանքների միջոցով:

Շրջված լսարանի մոդելը հիմնված է այն գաղափարի վրա, որ լսարանում դասախոսությունը լսելու և այնուհետև մի շարք առաջադրանքների վրա տանը աշխատելու փոխարեն ուսանողները կարդում են դասընթացի գրականությունը և սովորում դասախոսական նյութը՝ օգտագործելով տեսանյութեր, իսկ լսարանում՝ ուսուցչի ղեկավարությամբ մասնակցում խնդիրների լուծմանը, վերլուծություններին և քննարկումներին: Շրջված լսարանի մոդելը ժամանակակից այլ մոդելների հետ միասին առաջարկում է խոստումնալից եղանակներ՝ հատկապես ցածր առաջադիմություն ցուցաբերող ուսանողներին ներգրավելու առավել արդյունավետ, խրախուսող, մոտիվացնող և ակտիվ ուսուցման գործընթացի մեջ:

The Flipped Classroom as a Model of Active Learning

Arakelyan Anna

Key words: *video-lecture, traditional lecture, blended learning, motivation, interaction, self-regulation, activity*

The formation of modern methods of teaching is explained by the fact that students are passive in traditional lectures due to the lack of mechanisms that ensure intellectual and active engagement in the lesson. As a result, we can notice recession of students' attention, lack of motivation, indifference and absence from classes.

A flipped classroom, as its name suggests, is a class where the lecture and homework have been reversed, that is tasks normally completed at home are worked on in the classroom, and the direct instruction at class time is given as homework through video lectures, reading assignments, or some other direct instructions.

The model of the Flipped Classroom is based on the idea that instead of listening to the lecture in the classroom, and then working on a set of tasks at home, students read course literature and learn lecture material using video at home, and in the classroom, under the guidance of a teacher, participate in problem solving, analysis and discussion. The Flipped Classroom model, along with other modern models offers promising ways to engage students especially with low level of achievement in more effective, supportive, motivating and active learning.

Opinions in the education community regarding the Flipped Classroom are mixed. Some educators consider the Flipped Classroom to be the future standard of educational technique, while others still are in need of concrete evidence. Although this model is aimed at meeting the needs and desires of 21st century students and offers modern solutions to current pedagogical problems, it is extremely important to conduct more in-depth studies to study the effectiveness of the Flipped Classroom model. Despite theories, studies, and practical exercises, there are not enough quantitative and qualitative studies regarding the impact of this new model of learning on students' academic performance, their self-regulation.

Ներկայացվել է 24.09.2019 թ.
Գրախոսվել է 18.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

Դարձվածքների ուսուցումը որպես աշակերտների բառապաշարի հարստացման միջոց

Խաչատրյան Հասմիկ

Հանգուցային բառեր. *պատկերավոր խոսք, մարդկության կենսափորձ, կենսափիլիսոփայություն, վերաբերմունքի արտահայտություն, արտահայտչամիջոց, խոսքի պատկերավոր բաղադրիչ*

Հայերենի անսպառ արտահայտչական հնարավորությունների շարքում իրենց առանձնահատուկ տեղն ու դերն ունեն դարձվածքները, որովհետև խոսքի գեղեցկության համար կարևոր նշանակություն ունեն ոչ միայն խոսքի մաքրությունը, այլ նաև նրա հարստությունն ու պատկերավորությունը, իսկ հնամյա մեր լեզուն ունի այնքան հարուստ բառագանձ, բառարմատներ ու բառաձևեր, բազմազան բառակապակցություններ և այլն, որոնք լայն հնարավորություն են ստեղծում պատկերավոր ներկայացնելու ցանկացած երևույթ, իրադարձություն, հոգեկան ապրումներ ու հասարակական տարբեր հարաբերություններ: Աշակերտներին սովորեցնելով դարձվածքները կիրառել իրենց խոսքում՝ նրանց մեջ ձևավորում ենք ասելիքն առավել տպավորիչ և պատկերավոր ձևակերպելու և ներկայացնելու կարողություն: Դարձվածքների կիրառումը խոսքում օգնում է լիովին խոսակցին փոխանցել մեր հույզերն ու ապրումները:

Դպրոցում դարձվածքների ուսուցումը գերազանցապես նպատակ ունի հարստացնելու աշակերտների բառապաշարը պատկերավոր արտահայտչամիջոցներով, ինչպես նաև, ծանոթացնելով դարձվածքների առաջացման պատմությանը, սովորողներին տեղեկություններ հաղորդելու հայերենի բարբառների, ժողովրդական բանահյուսության, ավանդույթների, առասպելների վերաբերյալ: Իր նախապատրաստական զրույցում ուսուցիչը աշակերտներին պետք է բացատրի, որ դարձվածքները ժողովրդական մտածողության արդյունք են ու թեև առաջացել են խոսակցական լեզվում, սակայն ներթափանցել են գրական լեզու՝ հարստացնելով այն պատկերավոր խոսքի միավորներով: Դարձվածքների առաջացման հիմքում մարդու կենսափորձն է, կենսափիլիսոփայությունը,

բնության երևույթների ճանաչումն ու կենդանիների վարքագծին տեղյակ լինելը: Օրինակ՝ մարդն իր փորձով համոզվել է, որ ձուկը հեշտ է բռնվում գլխից, և առաջացել է *ձուկը գլխից բռնել* դարձվածքը[1], որը նշանակում է «հիմնականից սկսել, մտածված վարվել», կամ համոզվելով, որ երկաթը տաք ավելի հեշտ է ենթարկվում փոփոխությունների՝ փոխաբերաբար այն կիրառվել է խոսքում, և առաջացել է *երկաթը տաք-տաք են ծեծում* դարձվածքը: Դարձվածքները խոսքի մեջ չեն առաջացել հենց այնպես. դրանք ունեն իրենց նախապատմությունը և թեև առաջացել են անհատների կողմից, սակայն ժամանակի ընթացքում ընդհանրացել են՝ դառնալով ընդհանուրի սեփականությունը: Պ. Բեդիրյանը գրում է. «….Դ-ների առաջացման անսպառ աղբյուրը հենց ինքը՝ կենդանի ընդհանուր լեզուն է՝ իր կիրառության բոլոր ոլորտներով…. Տնտեսագիտություն, գիտություն ու տեխնիկա, քաղաքական աշխատանք ու կենցաղ, ռադիո, հեռուստատեսություն ու մամուլ, գրականություն ու արվեստ, ինքնուրույն ստեղծագործություն ու թարգմանություն, մեր ժողովրդի հատվածների, ինչպես նաև ժողովուրդների՝ օրեցօր ավելի ու ավելի սերտացող շփումներ, արդիականություն ու պատմություն,– ահա այն «ջրանցքերը», որոնցով «առու-առու, վտակ-վտակ» գալիս ընդհանուր գետն են հորդացնում Դ-ները» [2, 49-50]: Այս ճանապարհով ստեղծված դարձվածքներ են՝ *վերքը բանալ, ժամանակը վերքը կբուժի, լեթարգիական քուն, ընդհանուր հայտարարի բերել, հակադարձ համեմատական, կծիկը քանդել, վարագույրները բացել, թղթի վրա մնալ, Ամերիկա հայտնագործել, ապուրը եփել, ախորժակն ուտելիս է բացվում, առաջին ջութակ, արեգակի վրա գծեր կան, իններորդ ալիք, երկաթը տաք-տաք ծեծել, լակոնական պատասխան, եկա, տեսա, հաղթեցի, վիճակը հանված է, լուկուլլոսյան խնջույք, խելքից պատուհաս, ազգային ջոջեր, աչքդ թեքեցիր՝ բանիդ տերը չես, Դոն Ժուան, ծանր հրետանի և այլն:* Դարձվածքների ծագումը

[1] Այսուհետ բերված բոլոր դարձվածքների համար աղբյուր է հանդիսացել Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը՝ Ա.Մ. Սուքիասյանի և Ս. Ա. Գալստյանի հեղինակությամբ, Ե., 1975, 614 էջ:

բացատրելիս ուսուցչի կողմից տրվում են տարբեր գիտելիքներ, լրացուցիչ տեղեկություններ՝ ընդլայնելով աշակերտների մտահորիզոնը, խթանելով նրանց հետաքրքրասիրությունն ու ընթերցելու ցանկությունը: Օրինակ՝ անդրադառնալով հունական դիցաբանությունից մեզ հասած դարձվածքներին՝ *աքիլլեսյան գարշապար, գորդյան հանգույց, դամոկլյան սուր, դանայան տակառ, սիզիփոսյան աշխատանք* և այլն՝ ուսուցիչը ներկայացնում է դրանց նախապատմությունը՝ հարստացնելով նրանց գիտելիքները հունական առասպելաբանությունից կամ բացատրելով, որ կան դարձվածքներ, որոնք լեզվի մեջ են թափանցել տարբեր գրական ստեղծագործություններից, ինչպես՝ *Անբան Հուռի, մեծապատիվ մուրացկաններ, տեր Թոդիկի դպրոց, վերջին մոհիկան, լինել, թե չլինել, կոտրած տաշտակի առաջ կանգնել* և այլն, ուսուցիչը ոչ միայն համառոտ անդրադառնում է այդ ստեղծագործությունների բովանդակությանը և ծանոթացնում դասական ստեղծագործություններին, այլ միաժամանակ իր խոսքով կարող է խթանել նրանց ընթերցասիրությունը:

Հնարավորության սահմաններում ուսուցիչը պետք է հարստացնի աշակերտների բառապաշարը, նրանց մեջ ձևավորի դարձվածքները ճիշտ ու դիպուկ կիրառելու կարողություն: Աշակերտները պետք է սովորեն, որ իրենց ասելիքը ներկայացնելու համար կարևոր է ոչ թե բառերի քանակը, այլ բառի, արտահայտության տեղին, դիպուկ գործածությունը, և հենց այստեղ էլ օգնության են գալիս դարձվածքները՝ որպես ասելիքի պատկերավոր ներկայացման բաղադրիչներ: Դարձվածքների կիրառմամբ մարդն իր վերաբերմունքն է դրսևորում առարկաների, երևույթների և իրադարձությունների նկատմամբ: Երբ ցանկանում ես բացասական վերաբերմունք արտահայտել որևէ մեկի նկատմամբ, օգնության են գալիս *օձ* բառով կազմված դարձվածքները՝ *օձի կծած, օձին նայի, օձը կաատկի, օձություն անել* և այլն, դրական վերաբերմունքի ժամանակ կիրառում ենք՝ *աղ ու հացով մարդ, աղա մարդ, անունով մարդ, աշխարհի չարն ու բարին ճանաչող, գլուխն աշխատող, աշխարհ տեսած* և այլ դարձվածքներ: Կարելի է ասել, որ դարձվածքներն իմաստավորված են դրական կամ բացասական

երանգով, և կիրառելով այս կամ այն դարձվածքը՝ մեր խոսքն ու վերաբերմունքը դրսևորում ենք առավել պատկերավոր ու դիպուկ, առավել հուզարտահայտչական երանգով: Մեր խոսքում դարձվածքների միջոցով արտահայտում ենք սեր (*գլխիդ մեռնեմ, աչքի լույս, գլխի վրա տեղ ունենալ, աչքի լույսի պես պահել, տան ճրագ*), հարգանք (*կարծիքի հետ հաշվի նստել, բարև բռնած կանգնել, գլխի կամ աչքի վրա գալ*), հիացմունք (*բերանը բաց մնալ, աչքը շոյել, սիրտը հավանել, աչքին հաճելի, սրտին դուր գալ, սրտին նստել*), ատելություն (*աչքից գցել, աչքի գրող, աչքի փուշ դառնալ, Աստծո պատիժ*), արհամարհանք (*դուռը երեսին ծածկել, երեսից գցել, երես դարձնել, եղունգին չարժենալ, երեսին չնայել*), զայրույթ (*երեսին շպրտել, աչքերից կայծեր թափվել, աչքերն արյունով լցվել, աչքերով կայծակել*):

Բառապաշարի հարստացման աշխատանքներում մեծ նշանակություն ունի ժողովրդական դարձվածքների ուսուցումը, որին հիմնավորապես անդրադառնում են 6-րդ դասարանում [2,73], սակայն դեռևս տարրական դասարաններից՝ դասագրքի նյութերն անցնելիս և արտադասարանային ընթերցանության ժամանակ, աշակերտները ծանոթանում են բազմաթիվ դարձվածքների, որոնց ուղիղ և փոխաբերական իմաստները մշտապես բացատրվում են ուսուցչի կողմից և կիրառվում խոսքի մեջ:

«Մայրենի 6» դասագրքում ընդգրկված է Մ. Գալշոյանի «Կռունկ» պատմվածքը: Կարդալով այն՝ մենք հանդիպում ենք հետևյալ հատվածին. «Կռունկի հոգնած ու բեկված թևերից, երկար վիզ ու կտուցից կաթկթում էր նրա կաղկղան և տակնուվրա անում պանդուխտի հոգին. կաղկղան խոսում էր պանդուխտի հոգու հետ. կաղկղայի մեջ ախ կար, հեռավոր ու տաք մի երկրի հուշ ու կարոտ, կորցրած երամին գտնելու հուսահատ փորձ» [2,172]: Այս հատվածում հեղինակը կիրառել է *հոգին տակնուվրա անել, խոսել հոգու հետ* դարձվածքները, որոնց միջոցով կարողացել է առավել տպավորիչ ու պատկերավոր ներկայացնել պանդուխտ հոգու ցավը: Փորձենք *հոգին տակնուվրա անել* դարձվածքը փոխարինել սովորական *հուզել, ազդել* բառերով. արդյո՞ք կունենանք այն նույն տպավորությունը, ինչ դարձվածքի կիրառման դեպքում, չէ՞ որ այդ

դարձվածքի կիրառմամբ հեղինակը փորձել է ընթերցողին փոխանցել հոգեկան այն ցավն ու կարոտը, որ զգում է իր երամից ետ մնացած կռունկը: Կամ *խոսել հոգու հետ* դարձվածքի շնորհիվ որքան խորությամբ ենք պատկերացնում կարոտի ու հույսի այն զգացողությունը, որ իր երգով փորձում էր ունկնդրին հաղորդել Կոմիտասը: Իսկ եթե դասանյութն անցնելիս աշակերտներն ունկնդիր լինեն նաև Կոմիտասի կատարմամբ հնչող «Կռունկ» երգին, ապա ուսուցիչն առավել համոզված կարող է լինել, որ կարողացել է ասելիքը տեղ հասցնել իր սաներին, հատկապես եթե նյութն ամփոփի Կոմիտասի՝ «Եվ նա չպետք է լաց լիներ… տխրությունը պետք է ուժեղ լինի, առնական» խոսքերով [2, 174]: Ուսուցիչը այս դասի մեջ կիրառված դարձվածքների միջոցով կարող է բացատրել, թե դարձվածքները որքան պատկերավոր ու ազդեցիկ են, որ դրանք մեր խոսքի «ոգին են, համն ու հոտը», մեր հոգու բառերը և չի կարելի թերագնահատել դրանց կիրառությունը մեր խոսքում, որովհետև դրանք լիարժեք արտահայտում են մեր ապրումներն ու հույզերը:

Դարձվածքների ուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար մեր կողմից ստորև ներկայացվում են առաջադրանքների մի քանի տարբերակներ, որոնք, կարծում ենք, արդյունավետ կլինեն դարձվածքների յուրացման գործընթացում:

1. Դարձվածքների ուսուցումը կարելի է սկսել զննական եղանակով. աշակերտներին ցույց տալով ժողովրդական մի քանի դարձվածքների բառացի (ոչ դարձվածային իմաստով) նկարազարդումներ[2] (դրանք բավականին կաշխուժացնեն աշակերտներին)՝ կառաջարկենք գտնել, թե ո՞ր դարձվածքն է պատկերված, ի՞նչ է այն նշանակում, աշակերտներին կառաջարկենք ասել դարձվածքին հոմանիշ մեկ այլ դարձվածք, այնուհետև կնշեն նկարչի «սխալները»:

[2] Նկարազարդման աշխատանքները կատարել են ՎՊՀ-ի «Կերպարվեստ» մասնագիտության 2019-20 ուստարվա 1-ին կուրսի ուսանողները:

Նկար 1



2. Կազմում ենք քարտեր՝ տարբեր դարձվածքների նկարներով, առանձին քարտերի վրա գրում դարձվածքներ: Խմբային աշխատանքի միջոցով աշակերտներին հանձնարարում ենք միացնել համապատասխան նկարն ու դարձվածքը, այնուհետև դրանցով կազմել նախադասություններ: Հաղթում է աշխատանքն առաջինն ավարտած խումբը:

3. Կազմում ենք խաչբառ, որոնք պետք է լուծել դարձվածքների բաց թողած բառերով կամ տրված դարձվածքն արտահայտելով մեկ բառով:



Հորիզոնական

1. Բաց ձեռք ունեցող
2. Ականջին …… անել
4. Մորփեոսի գիրկն ընկնել
6. Գրպանը կարած
7. …. չտեսած՝ բոբիկանալ
9. Բախտի …. շրջվել

Ուղղահայաց

3. Գրպանում մկներ խաղալ
5. Յոթերորդ երկնքում սավառնել
8. …. դուդուկի տակ պարել
10. …. բուժել

4. Հետաքրքիր առաջադրանք կլինի կապակցված խոսք ստեղծելու հանձնարարությունը՝ դարձվածքների կիրառմամբ, հատկապես եթե կապակցված խոսքը կառուցվի սիրած կենդանու կամ որևէ առարկայի վերաբերյալ: Բնագիրն առավել հետաքրքիր ներկայացնելու և իրենց արարքներին գնահատական տալու կարողությունների զարգացման համար ցանկալի է հանձնարարել, որ խոսքը կառուցվի «տվյալ առարկայի կամ կենդանու անունից», նրանք ներկայացնեն, թե ինչպե՞ս են անցկացնում առօրյան իրենց տիրոջ հետ, ի՞նչ են սիրում, ի՞նչ հարաբերություններ ունեն և այլն՝ գնահատականը տալով դարձվածքների միջոցով: Նմանատիպ հանձնարարության շնորհիվ կարող ենք զարգացնել աշակերտների երևակայությունը, ստեղծագործելու կարողությունը, նաև մտորելով իրենց արարքների, վերաբերմունքի մասին՝ աշակերտները կսովորեն գնահատել սեփական վարքագիծը: Այս եղանակով միանգամից կլուծենք և՛ աշակերտների բարոյական դաստիարակության, և՛ երևակայության, միտքը զարգացնելու խնդիրները՝ ձևավորելով սեփական վարքագիծն ու բնավորությունը քննելու կարողություն: Յուրաքանչյուր ուսուցիչ աշակերտներին պետք է ուղղորդի՝ երևակայելու, ստեղծելու այն ամենը, ինչը երջանիկ կդարձնի իրեն, իր երևակայությամբ երեխան կարող է ստեղծել այն աշխարհը, որտեղ ուզում է ապրել: Այս եղանակով աշակերտներին դուրս կբերենք միայն գիտելիքների շրջանակներում կաղապարված մտածելու նեղ շրջանից, կընդլայնենք նրանց սահմանափակ մտածողությունը և երևակայության շնորհիվ նրանց կհանենք դեպի գունազարդ իրականություն, մի նոր աշխարհ, որտեղ նրանք կարող են պատկերացնել ամեն ինչ, կարող են հավատալ անգամ հրաշքների, որոնք ոգեշնչում են մարդուն, դրական լիցքեր հաղորդում: Մարդը որքան երջանիկ կարող է զգալ իրեն, եթե կյանքում հանդիպող ամեն մի փոքրիկ ու հասարակ բաների մեջ կարողանա հրաշք տեսնել. այսպիսով աշակերտներին սովորեցնում ենք տեսնել ու վայելել այն, ինչ ունի, բավարարվել ունեցածով, երջանկություն գտնել ունեցածի մեջ…

5. Դարձվածքների արտահայտչականությունն ու պատկերավորությունն ընդգծելու նպատակով դասարանում գրում են մի պատմություն՝ կազմված «չոր ու ցամաք» նախադասություններից, ապա այն հարստացնում դարձվածքներով: Այնուհետև ընթերցելով երկու տարբերակները՝ կատարում ենք համեմատություն, որի արդյունքում էլ աշակերտների համար ավելի պարզ է դառնում, թե որ պատմությունն է առավել մեծ ազդեցություն և տպավորություն թողնում ունկնդրի վրա, առաջացնում պատկերի իրական զգացողություն:

6. Աշակերտների մեջ դարձվածքների կիրառման հմտություն ձևավորելու համար կարելի է առաջարկել կազմել երկխոսություն՝ կազմված հիմնականում դարձվածքներից: Երկխոսությունը կարող է լինել հեղինակի և ընթերցողի միջև, գրական հերոսների միջև, ընթերցողի և հերոսի միջև և այլն: Այն կարող է առնչակից լինել անցնելիք նյութի հետ, կարող է լինել նաև դասից դուրս:

Աշակերտներին որպես տնային առաջադրանք կարող ենք հանձնարարել.

1. Բառարանից օգտվելով դուրս գրել այնպիսի դարձվածքներ, որոնք ցույց են տալիս. ա. հարուստ լինելու կամ չլինելու, իրեն շռայլություն թույլ տալու կամ չտալու հանգամանք (լորդի տղա, Կուտուզովի թոռ, գեներալ Կուտուզովի տղա, Մանթաշովի տղա և այլն), բ. արտաքին և ներքին հակասություն (գառան մորթի հագած, հրեշտակի կերպարանքով, բազեի թևերով զարդարված սագ և այլն), գ. ավելորդություն կամ անհնարինություն (սայլի 5-րդ անիվ, ժիլետի թև, ավազի վրա գրել, սառույցի վրա գրել և այլն):

2. Խմբային աշխատանքի եղանակով խմբերին հանձնարարել բառարանից օգտվելով գրել դարձվածքներ, որոնք առաջացել են.

ա. **գյուղատնտեսությունից, կենցաղից**՝ խոփը քարին առնել, պարարտ հող ստեղծել, նույն ծառի պտուղ, եզան պես աշխատել, խմորը շատ ջուր վերցնել, չորս պատի մեջ փակվել, հացի մեջ աղ չլինել, հետևից կարմիր խնձոր ուղարկել, մի տեղ տիտիկ չանել,

պահմտոցի խաղալ և այլն, բ. **գեղարվեստական ստեղծագործություններից, ժողովրդական բանահյուսությունից, առածներից, ասացվածքներից՝** ձախորդ փանոս, բանը հասավ դիվանբաշուն, բախտդ սիրեմ, քաջ Նազար, ճիտին պարտք, քաղաքավարության վնասները, վերջին մոհիկան, Նեսոյի քարաբաղնիս, առյուծի բաժին, կախարդական գավազանով և այլն, գ. **երաժշտությունից, կերպարվեստից՝** ձայնը կես տոն բարձրացնել, առաջին ջութակ, հեռվից եկող թմբուկի ձայն, մեկի դուդուկի տակ պարել, հին երգը երգել, նույն երգը երգել, գույները խտացնել, մուգ գույներով ներկայացնել, մեծ կտավ և այլն, դ. **կինոարվեստ և թատրոն՝** դեր չխաղալ, գլխավոր դերակատար, դիտողի դերում լինել, դիմակը դեն նետել, կուլիսների ետևում, բեմից հեռանալ, ինչ-որ բանի թատերաբեմ դառնալ և այլն, ե. **տարբեր գիտություններից՝** հավասարվել զրոյի, ընդհանուր հայտարարի բերել, փակագծերը բացել, հավասարության նշան դնել, տորիչելյան դատարկություն, վերջակետ դնել, փակագծերը բացել, մեծատառով գրել և այլն, զ. **ռազմական արվեստ և մարզական կյանք՝** զենքերը ցած դնել, առաջին դիրքերում, սվիններով դիմավորել, ծանր հրետանի, սրերը խաչաձևել, խաղից դուրս գալ, ձիու քայլ և այլն, է. **Աստվածաշնչից և առասպելներից՝** արգելված պտուղ, աստծո գառ, բաբելոնյան աշտարակաշինություն, աքիլլեսյան գարշապար, ավգյան ախոռ, դամոկլյան սուր, գորդյան հանգույց և այլն:

Դարձվածքները դուրս գրելուց հետո յուրաքանչյուր խումբ պետք է նկարի դուրս գրված դարձվածքներից մեկը՝ գեղեցիկ ու պատկերավոր լուծումներով: Կարելի է նաև դարձվածքներից մեկը դարձնել վերնագիր և գրել կապակցված խոսք: Նմանատիպ հանձնարարության շնորհիվ ոչ միայն կհարստանա աշակերտների բառապաշարը, այլ նաև միջառարկայական կապի միջոցով կզարգանա աշակերտների երևակայությունը, պատկերավոր մտածողությունը, ստեղծագործելու կարողությունը:

Այսպիսով՝ դարձվածքների ուսուցման միջոցով հնարավոր է

հարստացնել աշակերտների բառապաշարն ու զարգացնել խոսքը՝ այն դարձնելով առավել գեղեցիկ, դիպուկ ու պատկերավոր, ձևավորել ասելիքն առավել արտահայտիչ ներկայացնելու կարողություն, բացի դրանից, ծանոթանալով դարձվածքներին՝ սովորողները ձեռք կբերեն տարբեր տեղեկություններ և գիտելիքներ, կծանոթանան հայ և օտար մշակույթին ու առասպելներին, պատմական անցքերին ու իրադարձություններին, ինչը կնպաստի նրանց մտահորիզոնի ընդլայնմանը, կխթանի նրանց ընթերցասիրությունն ու հետաքրքրասիրությունը դեպի հայ և օտար մշակույթը, կծանոթանան ազգային սովորույթներին ու ծեսերին:

Գրականություն

1. Բեդիրյան Պ.Ս., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973, 230 էջ:
2. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, Երևան, 2016., 240 էջ:
3. Սուքիասյանի Ա.Մ., Գալստյան Ս. Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, 614 էջ:

Обучение фразеологизмам как средство обогащения словарного запаса учеников

Хачатрян Асмик

Резюме

Ключевые слова: *образная речь, жизненный опыт, философия жизни, выражение отношения, выразительные средства, компонент образной речи*

Среди многочисленных выразительных средств армянского языка фразеологизмы занимают особое место и роль, потому что красивая и выразительная речь зависит не только от чистоты речи, но и от ее богатства и образности. Фразеологизмы – результат мышления людей. Появившись в устной речи, они вошли в литературный язык, обогатив его образно-выразительными средствами. Фразеологизмы помогают нам выражать наши чувства и эмоции, наше негативное и позитивное отношение к вещам, явлениям и событиям. Эти стабильные фразы позволяют выразить наш подход к любому явлению более коротким, но более точным способом.

Обучение народным фразеологизмам имеет большое значение в обогащении словарного запаса учащихся, поскольку они не только дополняют словарный запас учащихся, но и помогают им знакомиться с человеческим опытом и философией жизни.

Изучая фразеологизмы, учащиеся получают информацию и знания, а также знакомятся с армянской и мировой культурой и мифами, историческими событиями, с национальными традициями и обычаями разных народов, что также расширяет их кругозор, стимулирует их любовь к чтению и интерес к армянской и зарубежной культурам.

Teaching Idioms as a Means of Enriching Students' Vocabulary

Khachatryan Hasmik

Summary

Key words: *figurative speech, human experience, life philosophy, attitude expression, expressive means, figurative speech component*

Among the plentiful expressive abilities of the Armenian language, idioms have a special place and role, because beautiful and expressive speech depends not only on the purity of speech, but also its richness and imagery. Phrasal words are the result of people's thinking. Emerging in spoken speech, they have entered the literary language, enriching it with figurative expressive means. Idioms help us to express our feelings and emotions, our negative and positive attitude towards things, phenomena and events. These stable phrases enable us to express our approach to any phenomenon in a briefer but more accurate way.

Teaching folk idioms is of great importance in the process of enriching students' vocabulary, since they not only complement students' vocabulary, but also help students get to know the human experience and philosophy of life.

By learning idioms, learners acquire information and knowledge, as well as get acquainted with Armenian and world culture and fables, historical occurrences and events, which also expands their thinking, stimulates their love of reading and interest in Armenian and foreign cultures. Students learn about the customs and traditions of different nations.

.

Ներկայացվել է 09.10.2019 թ.
Գրախոսվել է 17.10.2019 թ.
Ընդունվել է տպագրության 12.11.2019 թ.

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անանյան Մարիետա – դասախոս, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Անտոնյան Աննա –ուսուցչուհի, Նոյեմբերյանի №2 հիմնական դպրոց

Առաքելյան Աննա – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Բրուտյան Մարիա – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Գրիգորյան Աննա – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Դանիելյան Տարոն – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Խաժակյան Վաչագան – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Խաչատրյան Գուրգեն – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Խաչատրյան Հասմիկ – հայցորդ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Համբարձումյան Նաիրա – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ավագ գիտաշխատող

Հարությունյան Անի – դասախոս, Երևանի պետական համալսարան

Հովիվյան Գայանե – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Հովհաննիսյան Սիլվա – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ղուկասյան Շողիկ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Մովսիսյան Ֆելիքս – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Չատինյան Զոյա – հայցորդ, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

КРАТКИЕ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ СТАТЕЙ

Амбарцумян Наира – кандидат филологических наук, доцент, старший сотрудник НАН РА

Ананян Мариэтта – преподаватель, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Антонян Анна – учительница, Ноемберянская основная школа № 2

Аракелян Анна – кандидат педагогических наук, доцент, Ванадзорский государственный университет

Арутюнян Ани – преподаватель, Ереванский государственный университет

Брутян Мария – кандидат исторических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Григорян Анна – кандидат философских наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Гукасян Шогик – кандидат филологических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Даниелян Тарон – кандидат филологических наук, доцент, Ванадзорский государственный университетимени О. Туманяна

Мовсисян Феликс – доктор исторических наук, профессор, Ванадзорский государственный университетимени О. Туманяна

Овивян Гаяне –кандидат филологических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Оганесян Сильва – кандидат философских наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Хажакян Вачаган – кандидат исторических наук, доцент, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Хачатрян Асмик – соискатель, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Хачатрян Гурген – доктор филологических наук, профессор, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

Чатинян Зоя – соискатель, Ванадзорский государственный университет имени О. Туманяна

BRIEF INFORMATION ABOUT THE AUTHORS OF THE ARTICLES

Ananyan Marietta – Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Antonyan Anna – A teacher, Noyemberyan Basic School №2

Arakelyan Anna – Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Brutyan Maria – Candidate of Historical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Chatinyan Zoya – An applicant, Vanadzor State University named after H. Toumanyan

Danielyan Taron – Candidate of Philological Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Ghukasyan Shoghik – Candidate of Philological Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Grigoryan Anna – Candidate of Philosophical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Hambardzumyan Naira - Candidate of Philological Sciences, Associate Professor, Senior Scientific Worker at NAS RA

Harutyunyan Ani – Professor, Yerevan State University

Hovhannisyan Silva – Candidate of Philosophical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Hovivyan Gayane - Candidate of Philological Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Khachatryan Gourgen – Doctor of Philological Sciences, Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Khachatryan Hasmik – An applicant, Vanadzor State University named after H. Toumanyan

Khazhakyan Vachagan – Candidate of Historical Sciences, Associate Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

Movsisyan Feliks – Doctor of Historical Sciences, Professor, Vanadzor State University named after H. Toumanyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խաչատրյան Գուրգեն
Նվազափաղաքշական ձևույթներով կազմությունները հայրեններում 8

Ղուկասյան Շողիկ
Գրաբարի խոնարհման համակարգի զարգացումները
10-րդ դարի գրականության մեջ.....27

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դանիելյան Տարոն
Գովազդի և գովազդային գործունեության քննադատությունը
«Մշակ» լրագրում (1893 – 1918 թթ.) 43

Համբարձումյան Նաիրա
Մուշեղ Իշխանը արձակագիր և դրամատուրգ 55

Հովիվյան Գայանե
Ֆանտաստիկ հոգեբանություն.....68

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բրուտյան Մարիա
Հայոց մեծ եղեռնի և հույների ցեղասպանության համեմատական
վերլուծությունը հունական պատմագրությունում.....82

Խաժակյան Վաչագան
Միջնադարյան գրական հուշարձանները
հայ-բուլղարական առնչությունների մասին.....95

Չատինյան Զոյա
Կանանց մասնակցությունը 19-րդ դարի գավառահայ հասարակական
ընկերությունների գործունեությանը 111

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանյան Մարիետա
Վանաձոր քաղաքի աշխատաշուկայի 2017-2018 թթ. հիմնական ցուցանիշների վերլուծությունը.....125

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Գրիգորյան Աննա
Ազատական մշակույթի ինստիտուտային համակարգի սոցիոմշակութային գործառույթները 143

Հարությունյան Անի
Մտակեցվածքի կառուցվածքային պատկերն ըստ զարգացման փուլերի.....154

Հովհաննիսյան Սիլվա
«Մշակութաբանություն» առարկայի սահմանումները տեսական-մեթոդաբանական դիտարկումների շրջանակում (դասախոսական տեքստ).....167

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

Անտոնյան Աննա
Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների ուսուցումը տարրական դասարաններում.....183

Առաքելյան Աննա
Շրջված լսարանը՝ որպես ակտիվ ուսուցման մոդել.....194

Խաչատրյան Հասմիկ
Դարձվածքների ուսուցումը որպես աշակերտների բառապաշարի հարստացման միջոց.....206

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....219

СОДЕРЖАНИЕ

ЯЗЫКОЗНАНИЕ

Хачатрян Гурген
Уменьшительно-ласкательные морфемы в айренах.....8

Гукасян Шогик
Развитие системы спряжения в грабаре в литературе X века.....27

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

Даниелян Тарон
Критика рекламы и рекламной деятельности
в газете «Мшак» (1893-1918 гг.).....43

Амбарцумян Наира
Мушег Ишхан – прозаик и драматург 55

Овивян Гаяне
Фантастическая психология.....68

ИСТОРИЯ

Брутян Мария
Сравнительный анализ Геноцида армян и
греков в греческой историографии.....82

Хажакян Вачаган
Средневековые источники об армяно-болгарских отношениях 95

Чатинян Зоя
Участие женщин в деятельности
армянских уездных общественных организаций 19 века 111

ЭКОНОМИКА

Ананян Мариэтта
Анализ основных показателей трудового рынка
города Ванадзора 2017-2018 гг.....125

ФИЛОСОФИЯ

Григорян Анна
Социокультурные функции институционной системы
либеральной культуры 143

Арутюнян Ани
Структурный образ ментальности согласно этапам ее развития.....154

Оганесян Сильва
Определения предмета “Культурология”
в рамках теоретико-методологических наблюдений 167

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА

Антонян Анна
Обучение произведениям Ованеса Туманяна в начальных классах.....183

Аракелян Анна
“Перевернутый класс” как модель активного обучения.....194

Хачатрян Асмик
Обучение фразеологизмам как средство обогащения
словарного запаса учеников.....206

КРАТКИЕ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ СТАТЕЙ.....220

CONTENTS

LINGUISTICS

Khachatryan Gourgen
Diminutive-Morpheme Formations in "Hayrenner" 8

Ghukasyan Shoghik
Development of Declension in Grabar in the 10th Century Literature.....27

LITERARY STUDIES

Danielyan Taron
The Criticism of Advertising and Advertising Activity
in the Newspaper "Mshak" (1893 – 1918).....43

Hambardzumyan Naira
Musheg Ishkhan as a Novelist and Playwright.....55

Hovivyan Gayane
Fantastic Psychology.....68

HISTORY

Brutyan Maria
Comparative Analysis of the Armenian Genocide
and the Greek Genocide in Greek Historiography.....82

Khazhakyan Vachagan
Medieval Sources on Armenian-Bulgarian Relations.....95

Chatinyan Zoya
Women's Participation in the 19th Century Activities
of Armenian Social Companies in Constantinople.....111

ECONOMICS

Ananyan Marietta
Analysis on Vanadzor City Labour Market Basic Indicators of 2017-2018.....125

PHILOSOPHY

Grigoryan Anna
Socio-Cultural Functions of the Institutional System
of the Liberal Culture.....143

Harutyunyan Ani
The Structural Scheme of Mentality According to Its Evolutionary Stages.....154

Hovhannisyan Silva
Definitions of the Subject "Culturology" in the Framework
of Theoretical-Methodological Observations 167

PEDAGOGY AND METHODOLOGY

Antonyan Anna
Teaching Hovhannes Tumanyan's Works in Elementary Classes.....183

Arakelyan Anna
The Flipped Classroom as a Model of Active Learning 194

Khachatryan Hasmik
Teaching Idioms as a Means of Enriching Students' Vocabulary 206

BRIEF INFORMATION ABOUT THE AUTHORS OF THE ARTICLES.....221

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածները տպագրվում են հայերենով, ռուսերենով կամ անգլերենով: Հոդվածը պետք է ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով: Համակարգչային շարվածքը. Microsoft Office Word 2007 ծրագրով, A4 չափսի թղթի վրա, լուսանցքները վերևից (Top)՝ 20 մմ, ներքևից (Bottom)՝ 25 մմ, ձախից (Left)՝ 30 մմ, աջից (Right)՝ 10 մմ: Տառատեսակը՝ Unicode (Sylfaen), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը (Line spacing)՝ 1.5, պարբերությունը (First line)՝ 0,75 սմ: Չօգտագործել մեկից ավելի տառաբացատ: Աղյուսակները, նկարները, գրաֆիկական պատկերները պետք է ունենան համարակալում, վերնագրային բացատրություն՝ 10 տառաչափով, հաստ, թեք (Bold, Italic): Դրանց բարձրությունը չգերազանցի 170 մմ, լայնությունը՝ 110 մմ: Աղյուսակների տեքստը պետք է լինի 10 տառաչափով: Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները ներկայացվում են Microsoft Equation, թեք (Italic), իսկ հիմնականները՝ առանձին տողով, մեջտեղում, կարող են համարակալվել նույն տողի աջ անկյունում՝ կոր () փակագծերի մեջ: Այն հոդվածների համար, որոնք պարունակում են սիմվոլներ և Sylfaen տառատեսակի մեջ չկան, պարտադիր է նաև այդ սիմվոլների էլեկտրոնային ֆոնտը: Առաջին էջի վերևում, մեջտեղում տրվում է վերնագիրը (Bold), առանց գլխատառերի: Հաջորդ տողում՝ աջից, ազգանուն, անուն (Bold, Italic): Հաջորդ տողում գրել՝ «Հանգուցային բառեր.» արտահայտությունը և 6-8 հանգուցային բառեր կամ բառակապակցություն: Հանգուցային բառերի շարքում չեն ներառվում վերնագրում արդեն իսկ նշված բառերը: Տեքստում հղումները տրվում են կամ ուղղանկյուն փակագծերում [], կամ էջի ներքևում՝ հերթական համարակալմամբ: Իսկ ծանոթագրությունները տրվում են միայն էջի ներքևում՝ հերթական համարակալմամբ: Տեքստի վերջում գրվում է «Գրականություն» բառը (Bold) առանց գլխատառերի: Հաջորդ տողից՝ գրականության ցանկը՝ այբբենական կարգով համարակալված: Գրականության ցանկին հաջորդում են ամփոփումները՝ երկու լեզուներով, որոնք իրենց բովանդակությամբ և հան-

գուցային բառերով պետք է լինեն նույնական և բաղկացած լինեն 150-200 բառից: Գրվում է հոդվածի վերնագիրը, հաջորդ տողում՝ ազգանուն, անունը (ձևավորումը՝ ըստ բնագրային հոդվածի), և առանձին տողերով՝ «Ամփոփում» բառը՝ համապատասխան լեզվով, առանց գլխատառերի, հանգուցային բառերը, ամփոփման տեքստը: Ամփոփումները չպետք է պարունակեն հապավումներ, հղումներ և մեջբերումներ: Ամփոփումները պետք է հոդվածի մասին պատկերացում տան հոդվածից առանձին և արտացոլեն հոդվածի բովանդակությունը: Հոդվածի առավելագույն ծավալը 12 էջ է, նվազագույնը՝ ա) 4 էջ՝ ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, տեխնիկական գիտությունների համար, բ) 6 էջ՝ հումանիտար և հասարակագիտական գիտությունների համար, գ) 8 էջ՝ ուսումնամեթոդական աշխատանքների համար: Հոդվածի ծավալի՝ առաջադրված չափանիշներին չհամապատասխանելու դեպքում տպագրության վերաբերյալ որոշումը կայացնում է խմբագրական խորհուրդը: Հոդվածի ծավալի մեջ չեն ներառվում երկու լեզվով ամփոփումները և գրականության, աղբյուրների, համառոտագրությունների ցանկերը:

Մեր հասցեն՝ ՀՀ, 2001, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36
Հեռ.՝ (+374 322) 20917
Կայքէջ՝ www.vsu.am
էլ. փոստ՝ info@vsu.am
Պատասխանատու քարտուղար՝
poghosyanalbert@mail.ru

К СВЕДЕНИЮ

Статьи публикуются на армянском, русском или английском языках. Статью необходимо представить в бумажном и электронном вариантах. Компьютерное оформление: Файл Microsoft Office Word 2007. Размер бумаги А4. Поля: сверху – 20 мм, снизу – 25 мм, слева – 30 мм, справа – 10 мм. Шрифт – Unicode (Sylfaen). Размер – 12 pt. Междустрочный интервал – 1,5. Абзац – 0,75 см. Не использовать больше одного пробела. Таблицы, рисунки, графические изображения должны иметь нумерацию, поясняющее заглавие (10 pt, полужирный шрифт, курсив – Bold, Italic). Размеры графического материала: ширина – не более 110 мм, высота – не более 170 мм, размер текста на рисунках – 10 pt. Формулы и математические выражения представляются в формате Microsoft Equation, курсивом, а основные отдельной строкой, в центре, могут быть пронумерованы в правом углу той же строки в круглых () скобках. Для тех статей, которые содержат символы, не значащиеся в шрифте Sylfaen, необходимо представить электронный фонт символов. На первой странице по центру указывается заголовок (Bold), заглавные буквы по необходимости не употреблять. На следующей строке – фамилия, имя (Bold, Italic). Через строку написать словосочетание «Ключевые слова:» и 6-8 ключевых слов или словосочетаний. Ссылки на литературу в тексте указываются в квадратных скобках - []. Примечания даются в конце страницы с возрастающей нумерацией. В конце текста пишется слово «Литература» (Bold) без заглавных букв. Со следующей строки – список литературы с возрастающей нумерацией. После списка литературы представляются резюме на двух языках. Содержание резюме и ключевые слова на двух языках должны быть идентичными и состоять из не менее 150-200 слов. Сначала указывается заглавие статьи, на следующей строке – фамилия и имя автора (оформление по оригинальной статье),

затем отдельными строками слово «Резюме» на соответствующем языке, заглавными буквами, после этого – ключевые слова и текст резюме. Объем статьи: а) 4-6 страниц для физико-математических, естественных, технических наук; б) 6-8 страниц для гуманитарных и общественных наук; в) 8-10 страниц для учебно-методических работ. Объем статьи не включает резюме на двух языках, списки литературы, источников и примечаний. Статьи будут опубликованы только после прохождения экспертизы и проверки на плагиат.

Наш адрес: РА, 2001, г. Ванадзор, ул. Тиграна Меца 36
Тел: (+374 322) 20917
Веб-сайт: www.vsu.am
Эл. почта: info@vsu.am
Ответственный секретарь:
poghosyanalbert@mail.ru

ACKNOWLEDGEMENT

The articles are published in Armenian, Russian or English. The articles should be submitted in paper and electronic versions.Computer Layout: Formatting: MS World 2007, page layout - A4, margins - 2 cm from the top; 2,5 cm from the bottom; 3.0 cm from the left; 1,0 cm from the right. Font- Unicode (Sylfaen); Font size- 12pt; line spacing (interval) – 1.5, First line- 0,75 cm. No double space. Diagrams, pictures and graphic should be enumerated, the text font size on them should be 10 pt, Bold, Italic, the picture size no bigger than 110 X 170 mm. The font size of the diagrams should be 10pt. Equations and mathematical expressions are presented in Microsoft Equation, Italic, the main ones – on a separate line, in the centre and can be enumerated in the right hand corner of the same line in round brackets (). The articles containing symbols which are not available in Sylfaen font, should be provided with the electronic font of those symbols. The title of the article should be in Bold, at the top of page 1, in the centre, without uppercase letters. The author's surname and name on the next line, in Bold, Italic. The next line should have the phrase: Key words and 6-8 key words or expressions. The references in the text should be in square brackets []. Notes should be at the bottom of the page, enumerated in order of increasing. At the end of the text - "Bibliography" in Bold, without uppercase letters. The list of used literature from the next line` enumerated in alphabetical order. Bibliography is followed by summary in two languages, which should be identical in their contents and key words and consist of at least 150-200 words. The title of the summary, surname and name of the author in the next line, the word "Summary" in the corresponding language, in uppercase letters, the key words and the summary text on separate lines. The size of the article: 4-6 pages for physicomathematical, natural and technical sciences a) 6-8 pages for

humanities and social sciences, b) 8-10 pages for teaching and methodological articles. The summary in two languages, lists of bibliography, sources and abbreviations are not included in the size of the article.

Our address: PA, 2001, Vanadzor, 36 Tigran Mets Str.
Tel: (+374 322) 20917
Website: www.vsu.am
E-mail: info@vsu.am
Secretary-in-Charge:
poghosyanalbert@mail.ru

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Պրակ Ա

2

**(Հումանիտար և հասարակական գիտություններ,
դրանց դասավանդման մեթոդիկա)**

Երևան – 2019
«Միսմա» ՍՊԸ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА

НАУЧНЫЕ ВЕДОМОСТИ

ВАНАДЗОРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Выпуск А

2

**(Гуманитарные и общественные науки,
методика их преподавания)**

Ереван – 2019
ООО «Мисма»

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TOUMANYAN

SCIENTIFIC PROCEEDINGS OF

VANADZOR STATE UNIVERSITY

Issue A

2

(Humanities and Social Sciences, Their Teaching Methodology)

Yerevan – 2019
"Misma" LTD

Համակարգչային ձևավորումը՝ *Աշխեն Գալստյանի*
Սրբագումը՝ *Լիլիթ Պետրոսյանի, Անահիտ Լոռեցյանի, Նազիկ Ավագյանի*

Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60 X 84 1/16
Ծավալը՝ 15 մամուլ
Տպաքանակը՝ 100

Տպագրվել է «Միսմա» ՍՊԸ-ում
Երևան – 2019

Компьютерное оформление – *Ашхен Галстян*
Корректура – *Лилит Петросян, Анаит Лорецян, Назик Авагян*

Бумага – офсетная
Размер – 60 X 84 1/16
Объем – 15 печатных листов
Тираж – 100 экземпляров

Издано в ООО «Мисма»
Ереван – 2019

Computer Design: *by Ashkhen Galstyan*
Proofreading: *by Lilit Petrosyan, Anahit Loretsyan, Nazik Avagyan*

Offset Paper
Size: 60 X 84 1/16
Amounted to 15 Press
Print Run: 100

Printed in “Misma” LTD
Yerevan – 2019

www.vsu.am